

**Պետական ծախսերի  
և ֆինանսական  
հաշվետվողականության  
(ՊԾՖՀ) գնահատում, 2013թ.**

**Հայաստանի Հանրապետություն  
(Կենտրոնական կառավարություն)**

*2014թ. մայիսի 11-ը*

---

*Սույն ՊԾՖՀ-ի ինքնագնահատումը  
կատարվել է Ֆինանսների  
նախարարության, Վերահսկիչ պալատի  
և Ազգային ժողովի 6 նշանակված  
գնահատող թիմերի կողմից*

---

**ԱՐԺՈՒՅԹ ԵՎ ՓՈԽԱՐԺԵՔՆԵՐ**

Արժույթի միավոր = Հայաստանի Հանրապետության դրամ (ՀՀԴ)  
€1 = ՀՀԴ 537.60 (2013թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ)

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՍԿԱԼ ՏԱՐԻ (ՖՏ)**

Հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը

**ՊԾՖՀ-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ**

ՖՏ 2010, ՖՏ 2011, ՖՏ 2012

## Շնորհակալական խոսք

Հայաստանի Հանրապետության (կենտրոնական կառավարության) պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության (ՊԾՖՀ) գնահատման 2013 թվականի հաշվետվության մշակումը մեկ տարուց ավելի տևած բարդ գործընթաց էր, որում բազմաբնույթ դերակատարումներով ներգրավված էին ՀՀ պետական կառավարման տարբեր մարմինների՝ ՀՀ ֆինանսների նախարարության գլխավորությամբ, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ վերահսկիչ պալատի, ինչպես նաև Հայաստանի պետական ֆինանսների կառավարման ոլորտում առավել ակտիվություն ունեցող զարգացման գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչները:

Նշված հաշվետվության կազմման գործընթացի հաջող ավարտը հնարավոր չէր լինի առանց ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Պավել Սաֆարյանի անձնական ներգրավվածության ու գնահատման աշխատանքների ընդհանուր ղեկավարման, ով նաև ուղղորդել է գնահատման ընթացքում տարբեր կողմերի միջև ի հայտ եկած տարաձայնությունների լուծումները գտնելիս: Պավել Սաֆարյանը համակարգել է գնահատման վերահսկող խմբի աշխատանքները, որի կազմում ներգրավված են եղել նաև Հայաստանում ԵՄ-ի պատվիրակության, Համաշխարհային բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության ներկայացուցիչները:

Գնահատման ընթացքում ամենօրյա հաղորդակցությունն ու աշխատանքների կորդինացումը ինչպես տարբեր գնահատող թիմերի, այնպես էլ ներգրավված անկախ փորձագետների, զարգացման գործընկերների ու ՊԾՖՀ քարտուղարության միջև եղել է արդյունավետ ու ջերմ գործընկերական մթնոլորտում, որի հիմնական պատասխանատուն գնահատման ղեկավար ՀՀ ֆինանսների նախարարության Պետական ներքին ֆինանսական հսկողության ու պետական գնումների մեթոդաբանության վարչության պետ Մակար Ղամբարյանն էր:

Գնահատման աշխատանքները կազմակերպվել են ինքնագնահատման եղանակով, իսկ գնահատման ենթակա ցուցանիշները՝ բաժանվել 6 խմբի, որոնց համապատասխան էլ ձևավորվել են 6 գնահատող թիմեր, որոնց ղեկավարների արդյունավետ աշխատանքի շնորհիվ թիմերին հաջողվել է կարճ ժամանակահատվածում հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունն ու իրականացնել գնահատում: Գնահատման թիմերի ղեկավարներն են եղել՝ Գայանե Զարգարյանը (գնահատող թիմ 1), Դավիթ Համբարձումյանը (գնահատող թիմ 2), Մակար Ղամբարյանը (գնահատող թիմ 3), Արման Պողոսյանը (գնահատող թիմ 4), Գագիկ Բարսեղյանը (գնահատող թիմ 5), Կարեն Առուստամյանը (գնահատող թիմ 6):

Գնահատման աշխատանքների նպատակադրման, նախագծման, իսկ այնուհետև և իրականացման ողջ ընթացքում իրենց գործուն ու անընդհատ աջակցությունն են ցուցաբերել Հայաստանում ԵՄ-ի պատվիրակությունը

ու Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը: Մասնավորապես, Հայաստանում ԵՄ-ի պատվիրակության օժանդակությամբ ներգրավվել է «Ecorys» միջազգային խորհրդատվական կազմակերպությունը (Պիտեր Ֆեյերմանը՝ թիմի ղեկավար/գլխավոր օժանդակող, Կորինա Սերտանը ու Արամ Հովհաննիսյանը)՝ գնահատման աշխատանքներին աջակցելու նպատակով, իսկ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության օժանդակությամբ՝ գնահատող թիմերին ինքնագնահատման ամբողջ ժամանակահատվածում մշտական իրենց մեծ աջակցությունը ցուցաբերած տեղացի փորձագետները (Վահան Սիրունյանը ու Սուրեն Պողոսյանը): Բացի այդ, Հայաստանում ԵՄ-ի պատվիրակության և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից աջակցություն է տրամադրվել թարգմանչական, տպագրության ու իրազեկման միջոցառման կազմակերպման աշխատանքներին:

Արժանահիշատակ է Ալեքսանդրո Ջանոտայի (Հայաստանում ԵՄ-ի պատվիրակություն) ու Դավիդ Ֆրանցրեբի և Վարսենիկ Մնացականյանի (Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն) անձնական ներգրավվածությունը ՊԾՖՀ հաշվետվության պատրաստման ողջ ընթացքում: Զարգացման գործընկերների աշխատանքների կոորդինացումն ու վերջիններիս միասնական դիրքորոշման ներկայացումը ՀՀ ֆինանսների նախարարություն համակարգվել է Ալեքսանդրո Ջանոտայի կողմից, իսկ մասնագիտական ու կազմակերպչական հարցերում մշտական իրենց մեծ օժանդակությունն են ցուցաբերել Դավիդ Ֆրանցրեբը և Վարսենիկ Մնացականյանը:

Գնահատման գործընթացում իրենց մասնակցությունն են ունեցել Արման Վաթյանը և Գարիկ Սերգեյանը (Համաշխարհային բանկ), ԵՄ ԴԵՎԿՈ 3-րդ ստորաբաժանման (բյուջետային աջակցություն և պետական ֆինանսական կառավարում) աշխատակիցները, Տերեսա Դարան Սանչեսը (ԱՄՀ), Մարկ Դեյվիսը (ՎՋԵԲ), Դեյվիդ Դոուլը (ԱԶԲ), Յուպ Վրոյիկը (ՍԻԳՄԱ), Ֆիլ Սինթթինը ու Հելենա Ռամոսը (ՊԾՖՀ-ի քարտուղարություն)՝ հաշվետվության նախնական ու վերջնական տարբերակների ուսումնասիրման միջոցով:

Շնորհակալություն ենք հայտնում Հայաստանի Հանրապետության պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության գնահատման 2013 թվականի հաշվետվության մշակման գործընթացում ներգրավված անձանց և կազմակերպություններին և բարձր ենք գնահատում այդ մասնակցությունը՝ գնահատման որակի ապահովման գործընթացը ՊԾՖՀ քարտուղարության պահանջներին համապատասխան իրականացնելու և որպես արդյունք այն «PEFA CHECK» որակի նշանին արժանանալու գործում:

<b>ՀՀ ֆինանսների նախարարություն</b>	<b>Հայաստանում ԵՄ-ի պատվիրակություն</b>	<b>Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)</b>	<b>Համաշխարհային բանկ, Եվրոպայի և Հարավային Ասիայի տարածաշրջան</b>
-------------------------------------	---	---	--

## Ողջույնի խոսք

Հայաստանի Հանրապետության պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների ընթացքի, համակարգի շարունակական և անաչառ գնահատման անհրաժեշտությունից ելնելով՝ Ֆինանսների նախարարության համակարգմամբ 2-րդ անգամ իրականացվել են Հայաստանի Հանրապետության պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության (ՊԾՖՀ) գնահատման աշխատանքներ:



Առաջին անգամ նման գնահատում իրականացվել է 2008 թվականին: Այս ՊԾՖՀ գնահատման հաշվետվությունը, ինչպես և նախորդը, պատրաստվել է ինքնագնահատման մեթոդով:

Աշխատանքներն իրականացվել են Ֆինանսների նախարարության, Վերահսկիչ պալատի և Ազգային ժողովի 6 նշանակված գնահատման թիմերի կողմից: Ինքնագնահատման թիմերին աջակցելու և կատարված աշխատանքները ստուգաճշտելու նպատակով ներգրավվել են նաև ոլորտում ակտիվ մասնակցություն ունեցող միջազգային կազմակերպություններ՝ ԵՄ, ԳՄՀԸ, ՀԲ, ինչը հնարավորություն է ստեղծել ապահովել առավել ճշգրիտ և անաչառ հաշվետվության կազմումը: Վերջինիս մասին է վկայում նաև իրականացված աշխատանքի վերաբերյալ Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության քարտուղարության կողմից որակի երաշխավորման հավաստիացման (PEFA CHECK) տրամադրումը:

Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության այս գնահատումը միտված է ներկայացնելու առաջին գնահատումից ի վեր ՀՀ-ում պետական ֆինանսական կառավարման (ՊՖԿ) համակարգում տեղի ունեցած զարգացումներն ու փոփոխությունները: Հաշվետվությունը վկայում է այն մասին, որ ՊՖԿ համակարգում իրականացվող շարունակական բարեփոխումները նպաստում են համակարգի արդյունավետության բարելավմանը, իսկ ֆինանսական հսկողությունները շարունակում են մնալ ուժեղ: Այդ մասին է վկայում 31 ցուցանիշներից 11-ի գծով արձանագրված առաջընթացը: Հիմնական բարելավումներն արձանագրվել են բյուջեի իրատեսականության, թափանցիկության, բյուջեի կատարման, ինչպես նաև որոշ չափով ՏՏ համակարգերի հզորացման շնորհիվ:

Այս գնահատման աշխատանքը նախ և առաջ կարևոր կառավարման գործիք է պետական ֆինանսների կառավարման համակարգի հետագա բարեփոխումների ռազմավարության և դրա թիրախների վերանայման ու ճշգրտման համար: Բացի այդ, այն Հայաստանում առկա ՊՖԿ համակարգի վերաբերյալ անաչառ և հավաստի տեղեկատվություն է տրա-

մադրում բոլոր շահագրգիռ կողմերին՝ հասարակությանը, պետական կառավարման համակարգին, միջազգային կառույցներին և զարգացման գործընկերներին:

Այս հաշվետվության արդյունքները հիմք են հանդիսանալու 2010-2020թթ. Պետական ֆինանսների կառավարման համակարգում բարեփոխումների ռազմավարության ու աշխատանքների պլանի հստակեցման ու հետագա գործողությունների պլանի մշակման համար: Բացի այդ, ներկայիս գնահատականը հնարավորություն է տալիս նվազեցնել ՊՖԿ համակարգի տարբեր հատվածների ցուցանիշների միջև առկա տարբերությունը և հստակեցնել հետագա աշխատանքների առավել առաջնահերթ ուղղությունները:

### **Պավել Սաֆարյան**

ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ, Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության գնահատման վերահսկող թիմի ղեկավար

## Հապավումներ և կրճատ անվանումներ

<b>ԱԶԲ</b>	Ասիական զարգացման բանկ
<b>ՏՖ</b>	Տարեկան ֆինանսական հաշվետվություն
<b>ՀՀՀՀՀՍ</b>	Հայաստանի հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներ
<b>ԼՊՄ</b>	Լիազորված պետական մարմին
<b>ԳԹ</b>	Գնահատող թիմ
<b>ՀՀ ԿԲ</b>	Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ
<b>ՔԾ</b>	Քաղաքացիական ծառայության խորհուրդ
<b>ՀՓ</b>	Հայեցակարգային փաստաթուղթ
<b>ՎՊ</b>	Վերահսկիչ պալատ
<b>ՓԲԸ</b>	Փակ բաժնետիրական ընկերություն
<b>ՔՀԿ</b>	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
<b>ԶԳ</b>	Զարգացման գործընկեր
<b>ԱԲԿ</b>	Արտաբյուջետային կազմակերպություն
<b>ՎԶԵԲ</b>	Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ
<b>ԵՆԲ</b>	Եվրոպական ներդրումային բանկ
<b>ԵՄ</b>	Եվրոպական Միություն
<b>ՖԿՏ</b>	Ֆինանսական վերահսկողության տեսչություն
<b>ՖԿՎ</b>	Ֆինանսական կառավարում և վերահսկողություն
<b>ԳՖ</b>	Գլխավոր ֆասիլիտատոր
<b>ԿՖԿՏՀ</b>	Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգ
<b>ԿՖՎ</b>	Կառավարության ֆինանսական վիճակագրություն
<b>ԳՄՀԸ</b>	Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն/ Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ)
<b>ՆԱ</b>	Ներքին աուդիտ
<b>ԱՄՀ</b>	Արժույթի միջազգային հիմնադրամ
<b>ՀՀՀՀՄՍ</b>	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ
<b>ՏՏ</b>	Տեղեկատվական տեխնոլոգիա
<b>ԿԲՄ</b>	Kreditanstalt für Wiederaufbau/Գերմանական կառավարության զարգացման բանկ
<b>ՏԳԲ</b>	Տեղական զանձապետական բաժին

<b>ՏՖՔՀ</b>	Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունների հուշագիր
<b>ՖՆ</b>	Ֆինանսների նախարարություն
<b>ՏԿՆ</b>	Տարածքային կառավարման նախարարություն
<b>ՄԺԾԾ</b>	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
<b>ԱԺ</b>	Ազգային ժողով
<b>ՀԿ</b>	Հասարակական կազմակերպություն
<b>ՎԹ</b>	Վերահսկող թիմ
<b>ԳԲԽ</b>	Գնումների բողոքարկման խորհուրդ
<b>ՊԾՖԿ</b>	Պետական ծախսեր և ֆինանսական հաշվետվողականություն
<b>ՊՖԿ</b>	Պետական ֆինանսական կառավարում
<b>ՊՖԿՌ</b>	Պետական ֆինանսական կառավարման ռազմավարություն
<b>ԿՑ</b>	Կատարողականի ցուցանիշ
<b>ԾԻԳ</b>	Ծրագրի իրականացման գրասենյակ
<b>ԱԿՍ</b>	Անձնակազմի կառավարման ստորաբաժանում
<b>ԳԱԿ</b>	Գնումների աջակցման կենտրոն
<b>ՀՀ</b>	Հայաստանի Հանրապետություն
<b>ՀՀ ԿԱ</b>	Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր
<b>ԳԶ</b>	Գնահատման չափանիշ
<b>ՊԱԳ</b>	Պետական առողջապահական գործակալություն
<b>ՓՄԶ</b>	Փոքր և միջին ձեռնարկություններ
<b>ՊՈԱԿ</b>	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
<b>ԹԻ</b>	Թրանսփարենսի Ինթերնեշնլ
<b>ՀՎՀՀ</b>	Հարկ վճարողի հաշվառման համար
<b>ԳԳՕ</b>	Գանձապետական գործառնական օր
<b>ԳԿՀ</b>	Գանձապետական միասնական հաշիվ
<b>ՄԱԿԶԾ</b>	Միացյալ Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
<b>ԱՄՆ ՄԶԳ</b>	Ամերիկայի միացյալ նահանգների միջազգային զարգացման գործակալություն
<b>ԱԱՀ</b>	Ավելացված արժեքի հարկ
<b>ԱՀԿ</b>	Առևտրի համաշխարհային կազմակերպություն
<b>ԱՊՀ</b>	Անկախ պետությունների համագործակցության միություն



## Բովանդակության ցանկ

Շնորհակալական խոսք .....	3
Ողջույնի խոսք .....	5
Հապավումներ և կրճատ անվանումներ .....	7
Բովանդակության ցանկ .....	9
<b>ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏՈՒՄ</b> .....	10
<b>1. Ներածություն</b> .....	42
1.1. Նպատակ .....	42
1.2. Կազմակերպումը և հաշվետվության կազմման գործընթացը .....	43
1.3. Գնահատման շրջանակը .....	47
<b>2. Հայաստան. ընդհանուր տեղեկատվություն</b> .....	48
2.1. Տնտեսական և հարկաբյուջետային տեղեկատվություն .....	48
2.2. ՊՖԿ իրավական և ինստիտուցիոնալ դաշտը .....	52
2.3. ՊՖԿ-ի բարեփոխումների հիմնական մարտահրավերները .....	59
<b>3. ՊՖԿ համակարգերի, գործընթացների և կառույցների գնահատում</b> .....	62
3.1. Ներածություն .....	62
3.2. Բյուջեի արժանահավատությունը .....	64
3.3. Համակողմանիությունը և թափանցիկությունը .....	78
3.4. Քաղաքականության վրա հիմնված բյուջետավորումը .....	101
3.5. Բյուջեի կատարողականի կանխատեսելիությունն ու վերահսկումը .....	111
3.6. Հաշվապահություն, գրանցումներ և հաշվետվությունների ներկայացում .....	184
3.7. Արտաքին վերահսկողություն և օրենսդրի կողմից իրականացվող ուսումնասիրում .....	197
3.8. Դոնորների գործելակերպերը .....	221
<b>4. Կառավարության բարեփոխումների գործընթացը</b> .....	230
4.1. Վերջերս իրականացված և ընթացիկ բարեփոխումները .....	230
4.2. Բարեփոխումների պլանավորմանը և իրականացմանն աջակցող ինստիտուցիոնալ գործոնները .....	238
<b>Հավելված Ա. Բյուջեի կատարողականի աղյուսակներ</b> .....	240
<b>Հավելված Բ. Տվյալներ «D-1»-ի վերաբերյալ</b> .....	242
<b>Հավելված Գ. Փաստաթղթերի ցանկ</b> .....	243
<b>Հավելված Դ. ՖՆ-ի կազմակերպչական կառուցվածքը</b> .....	252
<b>Հավելված Ե. Որակի երաշխավորման մեխանիզմը (ՊԾՖՀ-ի ստուգում)</b> .....	253

## ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### (i) ՊՖԿ-ի կատարողականի միասնական գնահատում

#### Ամփոփում

ՊՖԿ-ի համակարգում արձանագրվել է բաժր կատարողական (գնահատվում է առնվազն «B») 28 կատարողական ցուցանիշներից («ԿՑ») 16-ի մասով: Հատկապես բարձր է եղել 1-17 ցուցանիշների կատարողականը: ՊԾՖՀ-ի գնահատականները բարելավվել են ինը ցուցանիշներում (չհաշված դոնորների գործելակերպերի երկու ցուցանիշների բարելավումը)՝ արտացոլելով 2008թ. ի վեր ՊՖԿ բարեփոխումների իրականացման նշանակալից առաջընթացը:

31 ցուցանիշներից 13-ի գնահատականը «A» է, 8-ինը՝ «B» կամ «B+», 5-ինը՝ «C» կամ «C+», 5-ինը՝ «D» կամ «D+»: Այսպիսով, գնահատականների համարյա կեսը «A» է, իսկ երկու երրորդը՝ «A», «B+» կամ «B»: 11 ցուցանիշների գնահատականները բարելավվել են՝ արտացոլելով 2008թ. ի վեր ՊՖԿ բարեփոխումներում արձանագրված նշանակալից առաջընթացը: 5 ցուցանիշների 5 չափումների գնահատականները բարելավվել են, թեև համապատասխան ցուցանիշների ընդհանուր գնահատականները մնացել են անփոփոխ (ԿՑ-12, ԿՑ-14, ԿՑ-15, ԿՑ-20, ԿՑ-25): Բարելավման միտում (նշված վերընթաց սլաքով) ունի 3 ցուցանիշ (ԿՑ-21, ԿՑ-24, ԿՑ-26): Գնահատման մեթոդաբանության փոփոխման պատճառով հնարավոր չի եղել գնահատել 2 ցուցանիշների (ԿՑ-2, ԿՑ-19) կատարողականի փոփոխությունը:

Հիմնական բարելավումները արձանագրվել են բյուջեի արժանահավատության (ծախսերի և եկամուտների կատարողական), թափանցիկության (միջկառավարական ֆիսկալ հարաբերություններ և գնումներ), եկամուտների վարչարարություն («ԿՑ 13-14»), դրամական միջոցների կառավարման («ԿՑ 17»), ներքին աուդիտի («ԿՑ 21»), հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների («ԿՑ 22-24») և արտաքին աուդիտի բնագավառներում (ԿՑ-26): Առավել արդյունավետ և համապարփակ են դրամական միջոցների կառավարումը, հաշվետվությունները և հաշվապահական հաշվառումը՝ պայմանավորված 2010թ. «Treasury Client» համակարգի ներդրմամբ: Նշված համակարգի շրջանակում պետական մարմինները կարող են կատարել իրենց բյուջեները անմիջականորեն Գանձապետարանի ՏՏ համակարգի («Գանձապետական գործառնական օր», («ԳԳՕ»)) միջոցով, մինչդեռ նախկինում դա արվում էր տեղական գանձապետական բաժինների (ՏԳԲ-ներ) միջոցով: Բարելավումներ են տեղի ունեցել ինչպես «ԳԳՕ» համակարգի պարբերական արդիականացումների, այնպես էլ գանձապետարանի միջոցով զարգացման գործընկերների

(29-ներ) կողմից շրջանառվող ֆինանսական միջոցների ծավալների աճի շնորհիվ: Հաշվետվությունների առումով մեծանում է գնումների համակարգի թափանցիկությունը, և հատկապես վերջին 12 ամիսներին սրան է նպաստել էլ-կառավարման համակարգի ներդրումը:

**Հիմնական չափում (i), Բյուջեի արժանահավաքություն («ԿՑ 1-4»).** Բյուջետային փաստացի ցուցանիշները ողջամտորեն մոտ են հաստատված բյուջեներին ինչպես հանրագումարային, այնպես էլ մանրամասնեցված տվյալների առումով: Ծախսային ապառքներն իրենցից խնդիր չեն ներկայացնում՝ ի շնորհիվ ծախսային պարտավորությունների ուժեղ կատարողականի: Բյուջեի կապիտալ ծախսերի թերակատարումը, ընդհանուր առմամբ, դարձել է նվազ խնդրահարույց, թեև դեռևս արձանագրվում են ուշացումներ: Խնդիրներից մեկը հարկային պարտավորությունների որոշ մասը կանխավ կատարելու ուղղությամբ Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) կողմից օրինապահ հարկ վճարողների վրա գործադրված ճնշումն է: Թեպետ կարելի է ասել, որ մի քանի տարի առաջ տիրող իրավիճակի համեմատ խնդիրը նվազ մտահոգիչ է, բայց, այնուամենայնիվ, ՀՀ Կառավարությունը ընդունում է, որ նման վարքագիծը կարող է բացասաբար ազդել տնտեսվարողների շահութաբերության վրա: Ինչպես նշվում է ստորև, այս հարցի կարգավորումը ամրագրված է ԱՄՀ-ի հետ վերջերս ձեռք բերած համաձայնագրում:

Արժանահավատությունը գնահատվում է զուտ ֆինանսական տեսանկյունից և քիչ բան է ենթադրում ծախսերի էֆեկտիվության և արդյունավետության մասին, որոնց հետ կապված թերությունները, ինչպես նշվում է ստորև, արտացոլված են այլ չափումներում:

**Հիմնական չափում (ii), Բյուջեի համապարփակություն և թափանցիկություն («ԿՑ 5-10»).** Համապարփակության և թափանցիկության ցուցանիշների գնահատականը մեծամասամբ բարձր է: Ընդ որում, հիմնական բարելավումն արձանագրվել է ՏԻՄ-երի գործունեության մասին հաշվետվությունների մասով (ԿՑ-8, չափում iii): Ներկայումս Տարածքային կառավարման նախարարությունը (ՏԿՆ) հնարավորություն ունի միասնական տարեկան հաշվետվության (նաև՝ եռամսյակային հաշվետվությունների) տեսքով համախմբելու բոլոր համայնքների հարկաբյուջետային գործառնությունները, իսկ ՖՆ-ն՝ ներառելու վերը հաշվետվության ազդեցացված տվյալները տարեկան պետական բյուջեի կատարման հաշվետվությունում: Չափում (iii)-ի գնահատականը «D»-ից դարձել է «A», և սրա շնորհիվ բարձրացել է ընդհանուր գնահատականը՝ «B»-ից դառնալով «A»: Սա պայմանավորված է 2012թ. կենտրոնական կառավարության գանձապետական համակարգի և ՏԻՄ-երի ֆինանսական կառավարման համակարգերի միջև կապի ապահովմամբ, որին օժանդակել է 2009թ. ՏԻՄ-երում «ԿՖՎ 2001»-ի բյուջետային դասակարգման ներդրումը:

Հիմնական հարցերը առնչվում են բյուջեին սպառնացող այն հնարավոր ռիսկերին, որոնք կապված են ՊՈԱԿ-ների, փակ բաժնետիրական

ընկերությունների (ՓԲԸ-ներ) արտաբյուջետային գործառնությունների և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հետ: «ԿՑ-9»-ի գնահատականը «D+» է, այսինքն՝ 2008թ. ՊԾՖՀ-ի գնահատման համեմատ կատարողականը մնացել է անփոփոխ: Ինչպես նշվում է «ԿՑ-7» ցուցանիշին վերաբերող մասում (արտաբյուջետային գործառնությունների (ԱԲԳ) հաշվետվություններ), ՊՈԱԿ-ները և ՓԲԸ-ները պարբերաբար կազմում և իրենց վերադաս լիազոր մարմիններին ու Ֆինանսների նախարարությանն են ներկայացնում իրենց եկամուտների ու ծախսերի, ինչպես նաև ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններ: 2013թ. սկզբին ԶԳ-ների աջակցությամբ ՖՆ-ի կողմից մշակվել է ՊՈԱԿ-ների ֆիդուցիար հսկողության նոր համակարգ, որի իրականացումը դեռևս փորձնական փուլում է: Ինչևէ, օրենքով չի պահանջվում ՊՈԱԿ-ների ֆինանսական հաշիվների աուդիտ: Կառավարության կողմից նշված ԱԲԳ-ների ֆինանսական դիրքի դիտանցումը բավարար չէ անաչառ աուդիտորների կողմից նրանց հաշիվների աուդիտին փոխարինելու համար:

Վարչական խիստ հսկողությունները, փոխառու միջոցներ ներգրավելու հնարավորության օրենսդրորեն նախատեսված սահմանափակումը և պետական կառավարման մարմիններից նրանց ուղղվող վերահսկելի ֆինանսավորման նշանակալի ծավալները որոշ չափով սահմանափակում են ՏԻՄ-երի գործունեության հետ կապված ֆիսկալ ռիսկը, բայց հստակ ֆինանսական մոնիտորինգն ամբողջական չէ և նույնիսկ չի ընդգրկում նրանց ֆինանսական դիրքը: 2002թ. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով նախատեսվում է արտաքին աուդիտների իրականացման հնարավորությունը, բայց, հիմնականում կարողությունների սահմանափակության պատճառով այն դեռևս լայնորեն չի կիրառվում: Ֆորմալ արտաքին աուդիտները կտային ռիսկի առավել հիմնավոր գնահատման հնարավորություն: Բացառություն է Երևանի քաղաքապետարանը, որը 2008թ. դեկտեմբերից գործում է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի ներքո: Նշված օրենքի համաձայն, քաղաքապետարանը պարտավոր է ապահովել իր տարեկան հաշիվների աուդիտը: Երևանի ծախսերը կազմում են համայնքային մարմինների ընդհանուր ծախսերի 60 տոկոսը:

**Հիմնական չափում (iii), Քաղաքականության վրա հիմնվող բյուջե-փավորում (ԿՑ 11-12).** Տարեկան բյուջեների կազմման գործընթացները շարունակում են մնալ ուժեղ («ԿՑ-11»-ի «A» գնահատական և 2008թ., և 2013թ. ՊԾՖՀ-ներում), և ՄԺԾԾ-ի միջոցով ապահովվում է նրանց միջնաժամկետ ուղղվածությունը («ԿՑ-12»-ի ընդհանուր «B» գնահատական երկու ՊԾՖՀ-ներում): Ոլորտային ռազմավարությունների ծախսերի գնահատականի և ֆիսկալ իրատեսության վերաբերյալ չափում (iii)-ի գնահատականը բարելավվել է՝ «C»-ից դառնալով «B»՝ արտացոլելով ապագայում բյուջետավորման միջնաժամկետ հեռանկարի ամրապնդումը: Կապիտալ ներդրումներով պայմանավորված ապագա ընթացիկ ծախսերի

առաջանցիկ հաշվարկների ներառման վերաբերյալ չափում (iv)-ի գնահատականը, ինչն է, շարունակում է ցածր լինել:

Այնուամենայնիվ, էֆեկտիվությանը և արդյունավետությանը աջակցելու տեսանկյունից բյուջեի կազմման գործընթացները բարելավման կարիք ունեն: ՊՖԿՌ-ի համաձայն, ավելի մեծ ուշադրություն է դարձվում որակին, իսկ 2013թ. ապրիլին «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքում արված փոփոխության արդյունքում ապահովվել է 2014 թվականից սկսած ծրագրային բյուջետավորման ֆորմալ ներդրման իրավական հիմքը: Սրան նախորդել է ծրագրային բյուջետավորման ոչ ֆորմալ կիրառման ժամանակաշրջանը, երբ 2010թ. սկսած տարեկան բյուջեի նախագիծը Ազգային ժողով է ներկայացվել ինչպես ըստ հողվածների, այնպես էլ ծրագրային ձևաչափով: Կայահանջվի մի քանի տարի, մինչև ծրագրային բյուջետավորումը ամբողջապես կփոխարինի ավանդական ձևաչափին, քանի որ ԾԲ-ի և բյուջետային շրջափոփի այլ հարցերից ելնելով՝ անհրաժեշտ կլինի ճշգրտումներ կատարել հաշվային պլանում: Ծրագրային բյուջետավորումը մեծապես կնպաստի ՄԺԾԾ-ի նշանակության բարձրացմանը:

***Հիմնական չափում (iv), կանխարեսելիությունը և հսկողությունը բյուջեի կարարման գործընթացում***

***Եկամուտների վարչարարությունը (ԿՑ 13-15)***

Որոշ առաջընթաց է արձանագրվել եկամուտների վարչարարության ուժեղացման ուղղությամբ: «ԿՑ-13»-ի կատարողականը բարելավվել է հարկ վճարողների սպասարկման բարելավման, հարկային հարցերով գանգատարկման անկախ խորհրդի ստեղծման միջոցով: Կատարողականը բարելավվել է նաև «ԿՑ-14»-ի չափում (iii)-ի մասով՝ շնորհիվ ռիսկերի վրա հիմնվող հարկային ստուգումների վրա արվող ավելի մեծ շեշտադրման: 2011թ. «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման շնորհիվ հարկային հաշվետվությունների տվյալների մշակումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով և ապահովվում է հարկային հաշիվների տվյալների ավտոմատ մշակումը, որի արդյունքում բարձրացել է եկամուտների վարչարարության համակարգի արդյունավետությունը: Անմիջական օգուտներից մեկը հարկային ապառքների մոնիտորինգի բարելավումն է, որը հնարավորություն է տվել ճիշտ գնահատել հարկային ապառքների հավաքագրմանը վերաբերող «ԿՑ-15» ցուցանիշը: «ԿՑ-15»-ի «D+» գնահատականը հիմնականում պայմանավորված է փոքրաթիվ խոշոր ընկերություններին բաժին ընկնող հարկային ապառքների հավաքագրման հետ կապված դժվարություններով:

Դեռևս առկա են մարտահրավերներ՝ կապված հարկային օրենսդրությամբ նախատեսվող հայեցողական մոտեցումների կիրառման մակարդակի նվազեցման («ԿՑ-13»), գրանցման ու հայտարարագրման առումով հարկային օրենքների հետ համապատասխանության ապահովման («ԿՑ-

14») տեսանկյունից: Էական խնդիր է հարկային պարտավորությունների մի մասը կանխավ վճարելու ուղղությամբ Պետական եկամուտների կոմիտեի կողմից օրինապահ հարկ վճարողների վրա գործադրված ճնշումը, որի մասին նշել են նաև ՊԾՖՀ-ի գնահատող թիմի հետ հանդիպած քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ԲՀԿ-ներ)՝ համակարգի թափանցիկության և արդյունավետության առնչությամբ իրենց մտահոգություններն արտահայտելիս: 2008թ. գնահատմանը հաջորդող ժամանակաշրջանում նման ճնշումները ինչ-որ չափով նվազել են, այնուամենայնիվ, այն արտացոլվել է 2014թ. փետրվարին «երկարաձգված ֆինանսավորման վարկի» ծրագրի առնչությամբ ԱՄՀ-ին հղված ՀՀ Կառավարության Մտադրությունների նամակում (ծրագիրը հաստատվել է ԱՄՀ-ի կողմից 2014թ. մարտի 7-ին): Նախապայմաններից մեկը հարկային վարչարարության համակարգի հետագա բարեփոխումն է՝ ուղղված օրինապահ հարկատուների թիրախավորման փոխարեն հարկային խախտումների կրճատմանը:

ԶԳ-ների (ԱՄՀ, Համաշխարհային բանկ, ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ իրականացվող ընթացիկ և պլանավորված աշխատանքներն ուղղված են հարկային վարչարարության վերոնշյալ մնացած հարցերի կարգավորմանը:

### ***Բյուջեի կապարում և դրամական միջոցների / պարտքի կառավարում (ԿՑ 16-17)***

Բյուջեի կատարման համար միջոցների հասանելիության կանխատեսելիությունը շարունակում է մնալ բարձր («ԿՑ-16»-ի բոլոր 3 չափումների գնահատականը մնացել է անփոփոխ՝ «A»): Բյուջեի կատարման գործընթացների արդյունավետությունը բարձրացել է 2010թ. «Treasury Client» համակարգի ներդրման շնորհիվ: Հիմնական բարելավումն այն է, որ ԶԳ-ները գնալով ավելի լայնորեն են կիրառում գանձապետական համակարգը: Մասնավորապես, 2011 թվականից սկսած նախագծերի ու ծրագրերի ծախսերի գնալով աճող մասը ԶԳ-ների կողմից ֆինանսավորվում են գանձապետական միասնական հաշվի (ԳՄՀ) համակարգի միջոցով Գանձապետարանի կողմից վերահսկվող՝ ԾԻԳ-երի բանկային հաշիվներով, մինչդեռ նախկինում ֆինանսավորման միջոցներն ավանդադրվում են վերը համակարգից դուրս հաշիվներում: Ուստի, «ԿՑ-17»-ի չափում (ii)-ի գնահատականը «B»-ից դարձել է «A», որը թույլ է տվել բարձրացնել ընդհանուր գնահատականը («B+»-ից՝ «A»): Պարտքի կառավարման կատարողականը մնում է ուժեղ, որի մասին է վկայում 2013թ. սեպտեմբերին եվրոպարտատմանի հաջող թողարկումը:

### ***Ներքին հսկողություններ (ԿՑ 18-21)***

Վերահսկիչ պալատը և ՖՆ-ի Ֆինանսական վերահսկողության տեսչությունը (ինչպես նաև ԶԳ-ները) համարում են, որ աշխատավարձերի նկատմամբ հսկողությունը (ԿՑ-18) համեմատաբար ուժեղ է ներքին հսկողության

որոշ այլ համակարգերի համեմատ: Այդուհանդերձ, աշխատավարձերի վճարացուցակների և անձնակազմի վերաբերյալ գրանցումների համադրման ժամանակին լինելու և հաճախականության վերաբերյալ չափում (i)-ի «D» գնահատականը և անձնակազմի վերաբերյալ գրանցումների և տեղեկատվական բազայում փոփոխությունների նկատմամբ հսկողության հուսալիության մասին չափում (iii)-ի «C» գնահատականը վկայում են աշխատավարձերի համակարգում հնարավոր ռիսկի առկայության մասին: Առկա ցանկացած անհամապատասխանություն կարող է բացահայտվել փաստացի («ex post») համադրման միջոցով, որը թերևս ժամանակատար կլինի, քանի որ անձնակազմի վերաբերյալ գրանցումների և աշխատավարձի վճարացուցակների միջև կապերն ավտոմատացված չեն:

Վերջին տարիներին գնումների համակարգը («ԿՑ-19») էապես բարեփոխվել է՝ նպատակ ունենալով ապահովել «արժեք փողի դիմաց» սկզբունքով միջոցների խնայողաբար և նպատակային օգտագործումը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի փոփոխության (2010թ.) արդյունքում գնումների համար պատասխանատվությունն ապակենտրոնացվել է դեպի ճյուղային նախարարություններ, ՖՆ-ի կազմում ստեղծվել է Գնումների աջակցման կենտրոն (ԳԱԿ), որը հանդես է գալիս որպես խորհրդատվական մարմին, ինչպես նաև ձևավորվել է Գնումների բողոքարկման խորհուրդը (ԳԲԽ): Որոշ ԶԳ-ներ գտնում են, որ ԳԲԽ-ի անկախության աստիճանը վիճարկելի է, քանի որ ԳԱԿ-ը հանդես է գալիս որպես վերջինիս քարտուղարություն: Ավելին, թեև ԳԲԽ-ի կազմում ներառված են ներկայացուցիչներ մասնավոր հատվածից, սակայն նրանք ներկայացնում են ՀԿ-ների, այլ ոչ՝ ձեռնարկատիրական հատվածը: Եվ ճյուղային նախարարությունների, և ԳԱԿ-ի կարողությունների սահմանափակությունը ակնհայտորեն խոչընդոտում է էֆեկտիվության առումով ապակենտրոնացման տված օգուտների իրագործմանը:

Վերջին տարում մեծապես աճել է գնումների համակարգի թափանցիկությունը, որին նպաստել են ՏՏ ոլորտում արձանագրված զարգացումները (թափանցիկության վերաբերյալ չափում (iii)-ի գնահատականը «B» է): Մեծապես աճել է հանրության համար գնումների մասին տեղեկատվության հասանելիությունը, ստեղծվել է էլեկտրոնային գնումների համակարգը: Էլեկտրոնային մրցույթների անցկացմանը սկզբնական փուլում խոչընդոտել են տեխնիկական խնդիրները, սակայն 2014թ. սկզբից համակարգը սկսել է գործել:

Փաստերը վկայում են այն մասին, որ մեկ աղբյուրից գնումները դեռևս զգալիորեն տարածված են: Մեկ աղբյուրից կատարվող գնումների ծավալի մասին տեղեկատվության ձեռքբերումը խնդրահարույց է, ինչը մասամբ պայմանավորված է գնումների ոլորտում պարտականությունների ապակենտրոնացմամբ: Այսպիսով, չափում (ii)-ը գնահատվել է «D», որի արդյունքում ընդհանուր գնահատականը դարձել է «B»:

Ծախսային պարտավորությունների նկատմամբ հսկողությունը («ԿՑ-20», i) բարելավվել է՝ «B»-ից դառնալով «A», շնորհիվ (i) 2010թ. «Client-

Treasury» համակարգի ներդրման (որի արդյունքում պետական մարմինները կարող են ձևակերպել վճարումները անմիջապես «Գանձապետական գործառնական օր» («ԳԳՕ») ծրագրային համակարգի միջոցով, առանց տեղական գանձապետական բաժինների (ՏԳԲ) միջամտության), (ii) «ԳԳՕ» համակարգի պարբերական արդիականացման, և (iii) դրա ծածկույթում գնալով ավելի մեծ թվով ԾԻԳ-երի ներառման:

Իր տարեկան հաշվետվություններում Վերահսկիչ պալատն անդրադառնում է ոչ աշխատավարձային ծախսերի (այդ թվում գնումների) նկատմամբ ներքին հսկողության այլ համակարգերի հետ անհամապատասխանության դեպքերին (չափում (iii)) որոնց արդյունքում մեծանում է ոչ արդյունավետ ծախսերի ռիսկը: Չափումներ (ii)-ի և (iii)-ի գնահատականները մնացել են անփոփոխ՝ «C», որի արդյունքում ընդհանուր գնահատականը մնացել է անփոփոխ «C+»:

2012թ. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո ներքին աուդիտի գործառույթը («ԿՏ-21») դեռևս գտնվում է իր զարգացման փուլում: 2008թ. ՊԾՖՀ-ից հետո արձանագրվել է զգալի առաջընթաց. ընդհանուր գնահատականը «D+»-ից դարձել է «C»: Նման բարձրացումը պայմանավորված է ներքին աուդիտի ծածկույթի և որակի վերաբերյալ չափում (i)-ի և աուդիտի բացահայտումների առնչությամբ ղեկավարության պատասխան գործողությունների վերաբերյալ չափում (iii)-ի կատարողականի բարելավմամբ:

ՆԱ-ի գործառույթի զարգացումը հանդիսանում է Պետական ներքին ֆինանսական հսկողության (ՊՆՖՀ) ռազմավարության անբաժանելի մասը (քննության է առնվում ստորև կետ (iii)-ում), որի համաձայն, ծառայությունների ծախսարդյունավետ մատուցման վրա կոնկրետանալու նպատակով անհրաժեշտ է իրականացնել կառավարման ապակենտրոնացում: Սահմանվել են ներքին աուդիտի ստանդարտներն ու ինստիտուցիոնալ միավորները: ՆԱ-ի գործառույթն ուղղակիորեն հաշվետու է կազմակերպության ղեկավարին, և սրա շնորհիվ ապահովվում է ՆԱ-ի գործառական անկախությունը: 2013թ. հունվարին ներդրվել է ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգը: Պետական մարմինների մեծ մասում ստեղծվել է ներքին աուդիտի ստորաբաժանում: Մշակվել և հաստատվել են ներքին աուդիտի մասնագիտական ստանդարտներն ու ներքին աուդիտի ձեռնարկները, որոնք հիմնվում են Ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից սահմանված ստանդարտների վրա: Ներ են դրվել որակի երաշխավորման համակարգեր, թեև 2012 (2013թ.) արդյունքներով դրանք գործում են ընդամենը 7(36) պետական մարմիններում: Պետական մարմիններում դեռևս ձևավորվում են ներքին աուդիտի կոմիտեներ:

**Հիմնական չափում (v), հաշվապահական հաշվառում և հաշվեպվություններ (ԿՏ 22-25).** Գանձապետական ՏՏ համակարգի միջոցով Գանձապետարանի կողմից կառավարվող հաշիվների համադրումները կա-



տարվում են հաճախակիորեն և ժամանակին («ԿՑ-22»): Բանկային հաշիվների համադրման մասին չափում (i)-ի կատարողականը բարելավվել է, քանի որ 2012 թվականից ԳՄՀ-ում են արտացոլվում զարգացման գործընկերների ֆինանսավորմամբ իրականացվող նախագծերի/ծրագրերի գործարքները: Ընդհանուր գնահատականը բարձրացել է՝ «B+»-ից դառնալով «A»:

«ԿՑ-23» ցուցանիշի կատարողականը բարելավվել է՝ «C»-ից դառնալով «A»՝ պայմանավորված նրանով, որ ներկայումս կազմվում և հրապարակվում են ՊՈԱԿ-ի կարգավիճակ ունեցող դպրոցների մուտքերի և ելքերի մասին հաշվետվությունները:

Բյուջեի կատարման միջանկյալ հաշվետվությունները («ԿՑ-24») արդյունավետորեն գեներացվում են Գանձապետարանի ՏՏ համակարգի միջոցով: «B+» ընդհանուր գնահատականը մնացել է նույնը, բայց տվյալների որակը (չափում (iii)) բարելավվում է («B»-ից՝ («B▲»))՝ հիմնականում պայմանավորված «Client Treasury» համակարգի ներդրմամբ և դրանում ԶԳ-ների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի ու նախագծերի ֆինանսական հոսքերի ներառմամբ:

Հաշվապահական ժամանակակից ստանդարտների բացակայությունը խոչընդոտում է աուդիտի ենթակա իմաստալից ֆինանսական հաշվետվությունների կազմմանը («ԿՑ-25» ցուցանիշի չափում (i)-ի գնահատականը՝ «C»): Դեռևս կիրառվում են խորհրդային տարիներին ընդունված ստանդարտները: Հաշվետվությունները հիմնականում արտացոլում են եկամուտների ու ծախսերի կատարողականը, ՀՀ Կառավարության բանկային հաշիվների մնացորդների և դրանց փոփոխությունների մասին տեղեկատվությունը: Դրանք չեն կազմվում հաշվապահական հաշվետվությունների տեսքով, որոնք ցույց են տալիս մի կողմից, եկամուտների ու ծախսերի հոսքերի, իսկ մյուս կողմից, ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների փոփոխությունների միջև կապը: Գանձապետարանի ՏՏ համակարգը գլխավորապես կենտրոնացած է բյուջեի կատարման հսկողությունների, այլ ոչ՝ հաշվառման վրա և ակնհայտորեն իր պարամետրերով նախատեսված չէ հաշվապահական հաշվետվությունների գեներացման համար:

Ի լրումն Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին (ՀՀՀՀՄՍ) համահունչ ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներ (ՀՀՀՀՍ) ներդնելու իր մտադրությամբ, Կառավարությունը քննության է առնում ֆինանսական կառավարման համակարգի շրջանակի ընդլայնման հարցը, որպեսզի, ի թիվս այլ գործառույթների, ապահովվի ֆինանսական հաշվապահական արժանահավատ հաշվետվությունների ժամանակին գեներացումը: ՖՆՊՀ-ի նոր ռազմավարության (տես ստորև կետ (iii)-ը) հետ մեկտեղ սա կապահովի դրամի դիմաց արժեքի համար ղեկավարության հաշվետվողականությունը և նպատակների իրագործումը: ՀՀՀՀՍ-ների ներդրման համար կպա-

հանջվի որոշակի ժամանակ, քանի որ անհրաժեշտ կլինի պետական մարմիններում ներդնել հաշվապահական նոր ստանդարտները:

**Հիմնական չափում (vi), Արդարին ուսումնասիրություն (ԿՑ 26-28).** Արտաքին աուդիտի գործառնություն կատարողականը բարելավվել է և շարունակում է բարելավվել՝ աուդիտի շրջանակի և բնույթի ամրապնդման ուղղությամբ Վերահսկիչ պալատի կողմից իրականացվող բարեփոխումների միջոցով: Ակնկալվում է, որ բարեփոխումները կշարունակվեն՝ հիմնվելով ՎՊ-ի նախատեսվող նոր ռազմավարական ծրագրի վրա: Ընդհանուր գնահատականը բարձրացել է՝ «D+»-ից դառնալով «C+▲»: Չափում (i)-ի կատարողականի բարելավումը գլխավորապես պայմանավորված է նրանով, որ «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքով (գործում է 2007 թվականից) նախատեսվում է Վերահսկիչ պալատի անկախության ավելի բարձր աստիճան: Մասնավորապես, Վերահսկիչ պալատն (ՎՊ) այլևս Ազգային ժողովի ենթակայության տակ չէ, սակայն ՎՊ-ն դեռևս չի համապատասխանում «INTOSAI»-ի անկախության ստանդարտին (օր.՝ ՎՊ-ի աշխատակիցները հանդիսանում են քաղաքացիական ծառայողներ, իսկ ՀՀ կառավարությունը կարող է փոփոխել ՎՊ-ի բյուջեի նախագիծը նախքան այն ԱԺ ներկայացնելը): ՎՊ-ն ակնկալում է, որ օրենքը կվերանայվի՝ նախատեսելով ՎՊ-ի անկախության ավելի բարձր աստիճան:

Ինչ վերաբերում է չափում (iii)-ի կատարողականին, ապա աուդիտի բացահայտումների առնչությամբ ղեկավարության արձագանքը բարելավվում է թափանցիկության աստիճանի բարձրացման, ՎՊ-ի առաջարկությունների հրապարակման և ճյուղային նախարարությունների կողմից իրականացվելիք պատասխան գործողությունների առումով: Սակայն նշված գործողությունների իրականացումը փաստող ապացույցները դեռևս սահմանափակ են: Սահմանված ժամկետներում ՎՊ-ի կողմից ԱԺ հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ չափում (ii)-ի կատարողականը մնացել է անփոփոխ, բայց փոխվել է գնահատման առարկան. ՎՊ-ի տարեկան հաշվետվության փոխարեն քննության է առնվում ՎՊ-ի եզրակացությունը ՀՀ կառավարության կողմից կազմվող բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ: Հարկ է նշել, որ ՎՊ-ի տարեկան հաշվետվություններն անդրադարձել են ՊՖԿ-ին առնչվող կոնկրետ հարցերին, ընդգրկել են մեկից ավելի տարիներ և չեն կենտրոնացել կոնկրետ ճյուղային նախարարությունների կամ ոլորտների վրա:

Օրենսդիրի կողմից տարեկան բյուջեի մասին օրենքների ուսումնասիրման որակի («ԿՑ-27») ընդհանուր գնահատականը մնացել է անփոփոխ՝ «C+»: Առաջին 3 չափումների գնահատականը մնացել է նույնը՝ «A»: Սա վկայում է այն մասին, որ ուսումնասիրման գործընթացը լավ է իրականացվում: «A» գնահատականների պահպանումը չի վերհանում ուսումնասիրման որակի այն բարելավումը, որը տեղի է ունեցել 2014թ. բյուջեն ծրագրային ձևաչափով, ինչպես նաև ըստ հողվածների Ազգային ժողով (ԱԺ) ներկայացնելու արդյունքում: Այժմ ԱԺ պատգամավորները կարող են ավելի արդյունավետորեն ուսումնասիրել բյուջեները՝ գնահատելով, թե

առաջարկվող բյուջեները որքանով են համահունչ պետական քաղաքականության նպատակներին: Չափում (iv)-ի առումով օրենսդրությունը շարունակում է նախատեսել թույլ սահմանափակումներ տարվա ընթացքում, առանց ԱԺ-ի նախնական հավանության, Կառավարության կողմից բյուջեում փոփոխություններ կատարելու ծավալի նկատմամբ, քանի որ իրավական դաշտը թույլ է տալիս Կառավարությանը լրացուցիչ եկամուտների սահմաններում մեծացնել բյուջեի ընդհանուր ծախսերն առանց ԱԺ-ի նախնական հավանության:

Օրենսդիրի կողմից ՎՊ-ի աուդիտորական հաշվետվությունների ուսումնասիրման որակը («ԿՑ-28»), ընդհանուր առմամբ, լավ է (երկու ՊԾՖՀ-ներում էլ չափումներ (i)-ը և (ii)-ը գնահատվել են «A»), բայց ընդհանուր կատարողականի վրա բացասաբար է անդրադառնում այն, որ աուդիտի բացահայտումների ուսումնասիրումից հետո ԱԺ պատգամավորների կողմից արվող առաջարկները չունեն պարտադիր կատարման ուժ: «D+» գնահատված ընդհանուր կատարողականը մնացել է անփոփոխ: ՀՀ Սահմանադրությամբ չի սահմանվում ՎՊ-ի հաշվետվությունների հիման վրա ԱԺ-ի կողմից առաջարկությունների ներկայացման ֆորմալ պահանջներ: ՎՊ-ի հաշվետվություններում նշվող հարցերի լուծման առնչությամբ ԱԺ կողմից վերջին 12 ամիսներին պաշտոնական առաջարկություններ չեն ներկայացվել Կառավարությանը:

**(ii) ՊՖԿ-ի թույլ կողմերի ազդեցության գնահատում**

ՊՖԿ համակարգերի թույլ կողմերը կարող են բացասաբար անդրադառնալ բյուջետային վերջնական արդյունքների վրա երեք մակարդակում՝ ընդհանուր ֆիսկալ կարգապահություն, միջոցների ռազմավարական բաշխում և ծառայությունների ծախսարդյունավետ մատուցում: Հայաստանի դեպքում կարելի է ասել, որ թույլ կողմերը գլխավորապես արտացոլված են երկրորդ և երրորդ մակարդակում. ընդհանուր ֆիսկալ կարգապահությունը ապահովվում է (այդ մասին նշվում է Բաժին 2-ում համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցության մեղմացման ուղղությամբ Հայաստանի հաջող քայլերի առնչությամբ): Տարեկան բյուջեի կազմման գործընթացի կատարողականը կիրառվող ընթացակարգերի տեսանկյունից լավ է («ԿՑ-11»-ի բոլոր չափումները գնահատվել են «A»), բայց միջնաժամկետ հեռանկարում բյուջետային միջոցների հատկացման առումով ռազմավարական տեղաբաշխումների ամբողջական գործընթացը (իր բնույթով ծառայությունների մատուցումը ընդգրկում է միջնաժամկետ հորիզոն) դեռևս չի ներդրվել (ցածր գնահատականներ չափումներ (iii)-ի և (iv)-ի համար): ՄԺԾԾ-ի շրջանակում ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ տարվող ընթացիկ աշխատանքները կօգնեն հզորացնելու ռազմավարական տեղաբաշխումների գործընթացը:

Ծառայությունների մատուցման որակի վրա ՊՖԿ-ի գործող համակարգերի ունեցած հիմնական ազդեցությունը կարող է դրսևորվել «ԿՑ 18-20» ցուցանիշներին նվիրված մասերում նշվող ներքին հսկողության համակարգի թերությունների (օր.՝ գնման ոչ մրցակցային ձևերի կիրառում)

պատճառով անհրաժեշտից ավելի բարձր ծախսերով ծառայությունների մատուցման տեսքով: Անուղղակի ազդեցությունները հետևյալն են.

- Բյուջետավորման մեջ միջնաժամկետ հեռանկարի զարգացման անբավարար աստիճանը ևս հանգեցնում է ծառայությունների մատուցման ծախսարդյունավետ ծրագրերին ուղղվածության («ԿՑ 11-12») անբավարար աստիճանին:
- Եկամուտների վարչարարության և կանխատեսման («ԿՑ 3, 11-13») հետ կապված թերությունները հանգեցնում են ծառայությունների ֆինանսավորման համար հասանելի եկամուտների նվազմանը:
- ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների, և որոշ չափով նաև ՏԻՄ-երի գործունեության մոնիտորինգի («ԿՑ-9») անբավարար լինելու պատճառով առաջացող անսպասելի ֆիսկալ ցնցումները ևս կարող են նպաստել ծառայությունների ֆինանսավորման համար հասանելի եկամուտների նվազմանը:
- Աուդիտի ենթակա տարեկան ֆինանսական հաշվետվություններ կազմելու ունակության բացակայությունը սահմանափակում է հանրության հնարավորությունը տեղեկանալու ծախսերի մասին հաշվետվությունների արժանահավատության և ծածկույթի համապարփակության մասին («ԿՑ 25»):
- Վերահսկիչ պալատի կողմից կատարողականի աուդիտների իրականացման գրեթե բացակայությունը վկայում է, որ դեռևս գոյություն չունեն մատուցվող հանրային ծառայությունների ծախսարդյունավետության (այսինքն՝ դրամի դիմաց արժեքի ապահովման) գնահատման անկախ մեխանիզմներ:
- ՊՖԿ և պետական կառավարման բարեփոխումների իրականացման քսան տարուց հետո էլ ՀՀ Կառավարությունում դեռևս գործում է կենտրոնացված կառավարման համակարգը, և սրա արդյունքում անբավարար ուշադրություն է դարձվում ծախսարդյունավետ եղանակով հանրային ծառայությունների մատուցման վրա: Այս հարցը պետք է կարգավորվի ինչպես ՊՆՖՀ-ի ռազմավարության (ստորև (iii)), այնպես էլ ծրագրային բյուջետավորման ներդրման միջոցով:

**(iii) Բարեփոխումների ծրագրման և իրականացման հեռանկարներ**

Կառավարությունը դեռևս իրականացնում է Պետական ֆինանսական կառավարման ռազմավարության (ՊՖԿՌ) 1-ին փուլը, որը նախաձեռնվել է 2010թ. վերջին, և այս աշխատանքներում ֆինանսների նախարարությունը կատարում է առաջատար ինստիտուցիոնալ կառույցի դերը: Ռազմավարությունը բաղկացած է երեք փուլից և կավարտվի 2020 թվականին: Վերջնական նպատակն է ծախսերի էֆեկտիվ, արդյունավետ ու թափանցիկ համակարգի ապահովումը: Առաջին փուլը, որն ավարտվում է 2014թ., նպատակ է հետապնդում ավարտել հիմնական համակարգե-

րի հսկողության մեխանիզմների հզորացման աշխատանքները և նախապատրաստվել երկրորդ փուլին, որն, իր հերթին, ուղղված կլինի հանրային ծառայությունների մատուցման համար կառավարչական պարտականությունների կատարելագործման միջոցով էֆեկտիվության բարձրացմանը: Առաջին փուլի գործողությունների ծրագրով նախատեսված աշխատանքները դեռևս իրականացվում են:

ՊՆՖՀ-ի նոր ռազմավարությունը, որն ինքնին ՊՖԿՌ-ի բաղադրիչներից մեկն է, կատարի առաջին փուլի իրականացմանը: Ռազմավարության համաձայն, կառավարումը պետք է «ապակենտրոնացվի» այն առումով, որ ստորին օղակների ղեկավարներին կտրվի ճկունություն կառավարելու ծախսերը՝ ելնելով աստիճանաբար ներդրվող ծրագրային բյուջետավորմանը համապատասխան պետական ծախսերի որակը բարձրացնելու շահից: Գործող համակարգում կառավարումը խիստ կենտրոնացած է ճյուղային նախարարությունների ստորակարգության վերին օղակում: Ճկունության հնարավորության ընդլայնումը զուգակցվում է հաշվետվողականության պահանջներով: Ճյուղային նախարարություններում ներքին աուդիտի գործառույթի կայանալուց հետո ՆԱ-ի ստորաբաժանումները կկարողանան մոնիտորինգի ենթարկել հաշվետվողականությանն աջակցող ներքին հսկողության համակարգերի հուսալիությունը: Ընդ որում, ՊՆՖՀ-ի այլ բաղադրիչները չիրականացնելու դեպքում ներքին աուդիտի գործառույթի օգտակարությունը կնվազի:

ՊՆՖՀ-ի ռազմավարության կարևոր բաղադրիչներից մեկը կառավարչական հաշվետվողականության վրա հիմնվող՝ ֆինանսական կառավարման և հսկողության (ՖԿՀ) համակարգի ստեղծումն է: Վերջինս դեռևս չի ներդրվել, քանի որ դեռ չի ընդունվել համապատասխան օրենսդրությունը (ՖԿՀ-ի մասին օրենքը):

Ցանկացած երկրում քաղաքատնտեսագիտական և ինստիտուցիոնալ / մարդկային ռեսուրսների սահմանափակության հետ կապված գործոնները կարող են խոչընդոտել ՊՖԿ բարեփոխումների ծրագրերի իրականացմանը, և այս առումով Հայաստանը բացառություն չէ:

Զարգացման գործընկերների (ԶԳ-ներ) գործելակերպերը (ԿՑ-7 (ii) և D1-D3) առհասարակ աջակցում են համապարփակությանը և թափանցիկությանը: «ԿՑ-7(ii)»-ի և «D1-D2»-ի առումով կատարողականը հիմնականում մնացել է անփոփոխ: ԶԳ-ների կողմից ազգային համակարգերի կիրառման («D-3») կատարողականը էապես բարելավվել է՝ պայմանավորված բյուջետային աջակցության տեսքով տրամադրվող օգնության մասնաբաժնի աճով, երկրի ֆինանսական հաշվետվությունների և գանձապետական համակարգերի ընդլայնված կիրառմամբ (ինչպես նշվում է ԿՑ 17, 22 և 24 ցուցանիշներին նվիրված մասերում) և ԶԳ-ների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում ու նախագծերում արտաքին աուդիտի համակարգի կիրառման ընդլայնմամբ: ԶԳ-ները դեռևս չեն կիրառում պետական գնումների համակարգերը:

**2008թ. և 2013թ. ՊԾՖՀ կատարողական ցուցանիշների ամփոփ գնահատականները 1/, 2/, 3/**

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<b>Ա. ԲՅՈՒՋԵԻ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ</b>			
ԿՑ-1. Ընդհանուր ծախսերի կատարողական (Մ1)	<b>B</b>	<b>A</b>	<p><b>Կատարողականը բարելավվել է:</b></p> <p>Սա մասամբ պայմանավորված է եկամուտների և ծախսերի առավել իրատեսական պլանավորմամբ:</p>
<p>ԿՑ-2.</p> <p>Ծախսային կազմի փոփոխություն (Մ1)</p> <p>(i) Կազմի փոփոխության շեղում</p> <p>(ii) Չբաշխված ծախսեր</p>	<p><b>«NA»</b></p> <p>(հին մեթոդաբանությամբ՝ «A»)</p>	<p><b>B+</b></p> <p><b>(i) B</b></p> <p><b>(ii) A</b></p> <p>(վերանայված մեթոդաբանությամբ)</p>	<p><b>Մեթոդաբանությունը փոխվել է:</b></p> <p>Ուստի, հնարավոր չէ գնահատել կատարողականի փոփոխությունը: Տարբերությունը պայմանավորված է հավելյալ եկամուտների հաշվին որոշ մարմինների ֆինանսավորման աճով (2010թ.) և գլխավորապես ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից որոշ մարմիններին տրամադրված ֆինանսավորմամբ:</p>
ԿՑ-3. Ներքին եկամուտների կատարողական (Մ1)	<p><b>B</b></p> <p>(վերանայված մեթոդաբանությամբ, «A»՝ հին մեթոդաբանությամբ)</p>	<p><b>A</b></p> <p>(վերանայված մեթոդաբանությամբ)</p>	<p><b>Կատարողականը բարելավվել է:</b></p> <p>Սա մասամբ պայմանավորված է եկամուտների կանխատեսման և վարչարարության բարելավմամբ և օրենսդրական փոփոխություններով:</p>

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<p>ԿՑ-4. Ծախսային ապառքների ծավալ (Մ1)</p> <p>(i) Ապառքների ծավալ</p> <p>(ii) Մոնիտորինգի համակարգ</p>	<p><b>A</b></p> <p>(«B+»՝ նախորդ շրջանակում)</p> <p>(i) <b>A</b></p> <p>(ii) <b>A</b></p> <p>(«B»՝ նախորդ շրջանակում)</p>	<p><b>A</b></p> <p>(i) <b>A</b></p> <p>(ii) <b>A</b></p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b></p> <p>Վերջին տաս տարիներին արձանագրվել է ծախսային ապառքների համարյա գրոյական մակարդակ՝ ի շնորհիվ եկամուտների լավ կատարողականի և անփոփոխ օրենսդրության վրա հիմնվող ծախսերի հսկողության համակարգի: Գանձապետական համակարգի կողմից գեներացված թիվ 254 հաշվետվության միջոցով մոնիտորինգի են ենթարկվում ծախսային պարտավորությունները, կանխավճարները, հաշիվ-ապրանքագրերը և վճարումները, և ապառքներն արտացոլում են նշված երեք գումարների զուտ մեծությունը:</p> <p>ՊՈԱԿ-ների ապառքները հաշվի չեն առնվել 2013թ. գնահատականում, բայց ներառվել են 2008թ. գնահատման ծածկույթում, մինչդեռ դա ճիշտ քայլ չէր: Ուստի, չափում (ii)-ի գնահատականը ուղղվել է՝ դառնալով <b>A</b>:</p>
<p><b>Բ. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԸՆԴԳՐԿՈՒՆ ՀԱՐՑԵՐ.</b> <b>Համապարփակություն և թափանցիկություն</b></p>			
<p>ԿՑ-5.</p> <p>Բյուջեի դասակարգում (Մ1)</p>	<p><b>A</b></p>	<p><b>A</b></p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b></p> <p>Բյուջեները կազմվում և կատարվում են, ինչպես նաև բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունները կազմվում են «ԿՖՎ-2001» գործառական, տնտեսագիտական և գերատեսչական դասակարգման հիման վրա:</p> <p>2008թ. ՊԾՖՀ գնահատումից ի վեր բյուջետային ծախսերը պետական բյուջեի նախագծով ներկայացվում են նաև ծրագրային ձևաչափով:</p>

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<p>ԿՅ-6. Բյուջեի փաստաթղթավորում (Մ1)</p>	<p>A</p>	<p>A</p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Տեղեկատվության ինը հենանիշներից յոթն ապահովվում են: 2008թ. ՊԾՖՀ գնահատումից ի վեր Ազգային ժողովին տրամադրվող տեղեկատվության կառուցվածքի, ծավալների ու բովանդակության հիմնական փոփոխությունները ներառում են վերլուծությունների որակի, ինչպես նաև ծրագրային դասակարգման ու կատարողական ցուցանիշների ներկայացման ուղղությամբ բարելավումները:</p>
<p>ԿՅ-7 Հաշվետվություններում չարտացոլված կառավարության գործառնությունների ծավալ (Մ1) (i) Ներքին (ii) Արտաքին</p>	<p><b>B+</b> (նախորդ շրջանակում՝ A) (i) B (նախորդ շրջանակում՝ A) (ii) A</p>	<p><b>B+</b> (i) B (ii) A</p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Հաշվետվություններում չարտացոլված ԱԲԿ-ների ներքին ծախսերը 2012թ. կազմել են ընդհանուր պետական ծախսերի 4.5%-ը: ԶԳ-ների կողմից ֆինանսավորվող նախագծերի մեծ մասի (բացառությամբ բնեղենով արտահայտված օգնություն ստացողների) վերաբերյալ տեղեկատվությունը արտացոլվում է բյուջեի փաստաթղթերում և բյուջեի կատարման մասին հաշվետվություններում: . 2008թ. ՊԾՖՀ-ում չափում (i)-ի գնահատականը A-ից վերանայվել է B-ի: 2008թ. ՊԾՖՀ-ում ՊՈԱԿ-ների գործառնությունները դասակարգվել են որպես ՀՀ պետական բյուջեում ներառված կազմակերպությունների գործառնություններ, բայց իրականում դրանք կենտրոնական կառավարության ԱԲԳ-ներ են: <i>Գ-2 (i). Հաշվետվություններում չարտացոլված ԱԲԿ-ների ներքին ծախսերը կազմում են ընդհանուր ծախսերի 1-5 տոկոսը:</i></p>



ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<p>ԿՑ-8. Միջկառավարական ֆիսկալ հարաբերությունների թափանցիկություն (Մ2)</p> <p>(i) Ֆինանսական տրանսֆերտների համակարգերի թափանցիկությունը</p> <p>(ii) Ֆինանսական տրանսֆերտների մասին տեղեկատվության ժամկետայնությունը</p> <p>(iii) Բյուջեների կատարման հաշվետվությունների կազմումը</p>	<p><b>B</b></p> <p>(i) A</p> <p>(ii) A</p> <p>(iv) D</p>	<p><b>A</b></p> <p>(i) A</p> <p>(ii) A</p> <p>(iii) A</p>	<p><b>Կատարողականը բարելավվել է:</b></p> <p>Չափում (iii)-ի իմաստով կատարողականը բարելավվել է՝ պայմանավորված ՏԻՄ-երի եռամսյակային և տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմմամբ և պետական բյուջեի կատարման հաշվետվությունում դրանց ներառմամբ:</p> <p>Սա արդյունք է 2012թ. կենտրոնական կառավարության գանձապետական համակարգի և ՏԻՄ-երի ֆինանսական կառավարման համակարգերի միջև կապի ապահովման, որին օժանդակել է 2009թ. ՏԻՄ-երում «ԿՖՎ 2001»-ի բյուջետային դասակարգման ներդրումը:</p>
<p>ԿՑ-9. Ընդհանուր ֆիսկալ դիսկի վերահսկում (Մ1)</p> <p>(i) Կենտրոնական կառավարության մարմիններ</p> <p>(ii) Տեղական ինքնակառավարման մարմիններ</p>	<p><b>D+</b></p> <p>(i) C</p> <p>(ii) D</p>	<p><b>D+</b></p> <p>(i) C</p> <p>(ii) D</p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b></p> <p>(i) Թեև ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների նկատմամբ Կառավարության կողմից իրականացվող վերահսկողությունը բարելավվել է, սակայն ֆինանսական հաշվետվությունները դեռևս չեն ենթարկվում արտաքին աուդիտի, բացառությամբ մասնակի և հատվածային իրականացվող աուդիտի դեպքերի: (ii) Համայնքների ֆինանսական վիճակի մոնիտորինգը դեռևս ամբողջական չէ, և հիմնական բացառությունը Երևանի քաղաքապետարանն է, որ, 2008թ. ընդունված օրենքի համաձայն, պարտավոր է ապահովել իր տարեկան հաշիվների արտաքին աուդիտը:</p> <p>Գ-2 (i). <i>Խոշոր մարմինների մեծ մասը ներկայացնում են իրենց ֆինանսական հաշվետվությունները կենտրոնական կառավարությանը, բայց համախմբված ուսումնասիրություն չի կատարվում:</i></p> <p>Գ-2 (ii). <i>Տարեկան մոնիտորինգը դեռևս ամբողջական չէ:</i></p>

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-10. Ֆիսկալ տեղեկատվության մատչելիությունը հանրությանը (Մ1)	A	A	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Տեղեկատվության նշված 6 տարրերից 5-ը հասանելի է հանրությանը: Որոշ տարրերի վերաբերյալ տեղեկատվության ծավալը աճում է:
<b>Գ. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԲՈԼՈՐԱՇՐՋԱՆ</b>			
<b>Գ (i) Քաղաքականության վրա հիմնվող բյուջետավորում</b>			
ԿՑ-11. Բյուջեի կազմում (Մ2) (i) Բյուջետային ժամանակացույց (ii) Բյուջեի կազմման ուղեցույցներ (iii) Բյուջեի ժամանակին հաստատում	A (i) A (ii) A (iii) A	A (i) A (ii) A (iii) A	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Գնահատման չափանիշների առումով կատարողականը մնացել է անփոփոխ, բայց ՄԺԾԾ-ի հայտերի որակը բարելավվել է (բոլոր 3 չափումների գնահատականը «A» է):
ԿՑ-12. Մեկից ավելի տարիների բյուջետային հեռանկար (Մ2) (i) Մեկից ավելի տարիների կտրվածքով կատարվող կանխատեսումներ (ii) Պարտքի կայունության վերլուծություն (iii) Ոլորտային ռազմավարություններ իրենց ծախսային գնահատականներով (iv) Կապիտալ ներդրումների նախահաշիվների և ծախսերի հեռանկարային գնահատականների միջև փոխադարձ կապ	B (i) A (ii) A (iii) D (iv) C	B (i) A (ii) A (iii) C (iv) C	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Ընդհանուր առմամբ, կատարողականը մնացել է անփոփոխ, բայց այն բարելավվել է ոլորտային ռազմավարական ծրագրերի ծախսային գնահատականների և ֆինանսական իրատեսության վերաբերյալ չափում (iii)-ի առումով: Գ2 (iii). Ընդհանուր առաջնային ծախսերի մինչև 25 փոկոսը կազմող ոլորտների համար գոյություն ունեն ծախսային գնահատման ենթարկված ռազմավարություններ: Գ2 (iv). Ընթացիկ ծախսերի ազդեցությունը արտացոլված է բյուջետային կանխադեռումներում միայն մի քանի (բայց ոչ՝ կարևոր) դեպքերում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<b>Գ (ii) Բյուջեի կատարողականի կանխատեսելիություն և վերահսկում</b>			
<i>Եկամուտների վարչարարություն</i>			
<p>ԿՑ-13. Հարկ վճարողների պարտականությունների և պարտավորությունների թափանցիկությունը (U2)</p> <p>(i) Հարկային պարտավորությունների հստակությունը</p> <p>(ii) Տեղեկատվության հասանելիություն հարկ վճարողների համարը</p> <p>(iii) Հարկային գանգատարկման մեխանիզմը</p>	<p><b>C+</b></p> <p>(i) B</p> <p>(ii) C</p> <p>(iii) C</p>	<p><b>B+</b></p> <p>(i) B</p> <p>(ii) A</p> <p>(iii) B</p>	<p><b>Կատարողականը բարելավվել է:</b></p> <p>Կատարողականը բարելավվել է հարկ վճարողների սպասարկման (չափում (ii)) և հարկային գանգատարկման գործընթացի (չափում (iii)) առումով, ի շնորհիվ 2010թ. միջգերատեսչական գանգատարկման խորհրդի ստեղծման: Հարկային օրենսդրությունը դեռևս պարունակում է հայեցողական մոտեցումներ նախատեսող որոշ դրույթներ:</p> <p>Գ-2 (i). <i>Հարկերի մեծ մասի վերաբերյալ օրենսդրությունը և ընթացակարգերը հստակ են, իսկ համապատասխան պետական մարմինների հայեցողական իրավասությունները՝ բավականին սահմանափակ:</i></p> <p>Գ-2 (iii). <i>Գործում է հարկային գանգատարկման թափանցիկ համակարգ, բայց դեռևս չափ վաղ է գնահատվել նրա արդյունավետությունը:</i></p>
<p>ԿՑ-14. Հարկ վճարողների գրանցման և հարկերի հաշվարկման արդյունավետությունը (U2)</p> <p>(i) Հսկողությունները</p> <p>(ii) Պատժամիջոցների արդյունավետությունը</p> <p>(iii) Հարկային ստուգումները</p>	<p><b>B</b></p> <p>(i) B</p> <p>(ii) B</p> <p>(iii) C</p>	<p><b>B</b></p> <p>(i) B</p> <p>(ii) B</p> <p>(iii) B</p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b></p> <p>Կատարողականը բարելավվել է չափում (iii)-ի առումով՝ ի շնորհիվ դիսկերի վրա հիմնվող հարկային ստուգումների համակարգի հաջող ներդրման և կիրառության:</p> <p>Գ-2 (i). <i>Հարկ վճարողները գրանցվում են ամբողջական տեղեկատվական բազայի համակարգում, որն ապահովված է պետական այլ մարմինների հետ որոշակի կապերով:</i></p> <p>Գ-2 (ii). <i>Խախտումների համար պատժամիջոցներն առկա են, բայց միշտ չէ, որ դրանք արդյունավետ են:</i></p> <p>Գ-2 (iii). <i>Հարկային ստուգումները կառավարվում են փաստաթղթավորված պլանի համաձայն՝ հստակ սահմանված ռիսկային չափանիշների հիման վրա:</i></p>

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<p>ԿՑ-15. Հարկային վճարումների հավաքագրման արդյունավետությունը (Մ1)</p> <p>(i) Հարկային ապառքների հավաքագրման մակարդակը</p> <p>(ii) Եկամուտների փոխանցումը ՖՆ-ին</p> <p>(iii) Հաշիվների համադրումը</p>	<p><b>D+</b> (վերանայվել է B-ից)</p> <p>(i) D (վերանայվել է B-ից)</p> <p>(ii) A</p> <p>(iii) D</p> <p>(վերանայվել է A-ից)</p>	<p><b>D+</b></p> <p>(i) D</p> <p>(ii) A</p> <p>(iii) A</p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b></p> <p>2010-2012թթ. տարեվերջի դրությամբ հարկային ապառքների կուտակային ծավալը կազմել է ընդհանուր հարկային հավաքագրումների 13%-ից 17%-ը: Ապառքները հիմնականում բաժին են ընկնում ընդամենը 30 կազմակերպությունների, և չնայած պարտքերի վերականգնման ուղղությամբ ՊԵԿ-ի ջանքերին, հավաքագրման տեմպը շատ դանդաղ է:</p> <p>ՊԵԿ-ը հնարավորություն ունի էլեկտրոնային եղանակով հաշվառել հարկային ապառքները 2011թ. վերջին ներդրված «Հարկատու 3» էլ-կառավարման համակարգի միջոցով: Սրա արդյունքում չափում (iii)-ի գնահատականը կտրուկ բարձրացել է:</p> <p>ՊԵԿ-ը վերանայել է 2008թ. ՊԾՖՀ-ում տրված գնահատականը՝ սահմանելով այն D+, քանի որ այդ ժամանակ «Հարկատու 3» էլ-կառավարման համակարգը դեռևս ներդրված չէր:</p> <p>ԳԶ (i). Վերջին տարում պարտքի հավաքագրման մակարդակը 60%-ից ցածր է, իսկ հարկային ապառքների ընդհանուր գումարը՝ նշանակալից (ընդհանուր հավաքագրումների ավելի քան 2%-ը):</p>

ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<b>Բյուջեի կապարում և դրամական միջոցների / պարտքի կառավարում</b>			
<p>ԿՑ-16. Ծախսային պարտավորությունների ստանձնման համար դրամական միջոցների հասանելիության կանխատեսելիություն (U1)</p> <p>(i) Դրամական հոսքերի կանխատեսում</p> <p>(ii) Ծախսային պարտավորությունների ժամանակային հորիզոնները</p> <p>(iii) Ճշգրտումներ բյուջետային հատկացումներում</p>	<p><b>A</b></p> <p>(i) A</p> <p>(ii) A</p> <p>(iii) A</p>	<p><b>A</b></p> <p>(i) A</p> <p>(ii) A</p> <p>(iii) A</p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b></p>
<p>ԿՑ-17. Դրամական միջոցների մագորդների, պարտքի և երաշխիքների հաշվառում և կառավարում (U2)</p> <p>(i) Պարտքի փվյալների հաշվառում և ներկայացում հաշվեփոխություններում</p> <p>(ii) Կառավարության դրամական մագորդների համախմբում,</p> <p>(iii) Վարկային պայմանագրերի կնքում և երաշխիքների տրամադրում</p>	<p><b>B+</b></p> <p>(վերանայվել է A-ից)</p> <p>(i) A</p> <p>(ii) B</p> <p>(վերանայվել է A-ից)</p> <p>(iii) A</p>	<p><b>A</b></p> <p>(i) A</p> <p>(ii) A</p> <p>(iii) A</p>	<p><b>Կատարողականը բարելավվել է:</b></p> <p>Կատարողականը բարելավվել է գարգացման գործընկերների կողմից իրականացվող նախագծերի / ծրագրերի բանկային հաշիվները գանձապետական միասնական հաշվում ներառելու միջոցով:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում չափում (ii)-ի «A» գնահատականը վերանայվել է «B», քանի որ այդ ժամանակ ծրագրերի/ նախագծերի ծախսերի ֆինանսավորման նպատակով բացված ՁԳ-ների որոշ հաշիվներ ներառված չէին գանձապետական միասնական հաշվում (ԳՄՀ):</p>

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<b>Ներքին հսկողություններ</b>			
<p>ԿՑ-18.</p> <p>Աշխատավարձերի նկատմամբ հսկողության արդյունավետություն (Մ1)</p> <p>(i) Անձնակազմի գրանցումների և աշխատավարձերի վճարացուցակների տվյալների համադրումը</p> <p>(ii) Անձնակազմի գրանցումների և աշխատավարձերի վճարացուցակների փոփոխությունների ժամանակին լինելը</p> <p>(iii) Անձնակազմի գրանցումների և աշխատավարձերի վճարացուցակների փոփոխությունների նկատմամբ հսկողության մեխանիզմները</p> <p>(iv) Վարձատրության համակարգի աուդիտների առկայությունը</p>	<p><b>D+</b></p> <p>(վերանայվել է B+-ից)</p> <p>(i) D</p> <p>(վերանայվել է «A»-ից)</p> <p>(ii) B</p> <p>(վերանայվել է «A»-ից)</p> <p>(iii) C</p> <p>(վերանայվել է B-ից)</p> <p>(iv) C (վերանայվել է «B»-ից)</p>	<p><b>D+</b></p> <p>(i) D</p> <p>(ii) B</p> <p>(iii) C</p> <p>(iv) C</p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b></p> <p>«D+» գնահատականը բացատրվում է պետական մարմիններում աշխատավարձերի վճարացուցակների և անձնակազմի գրանցումների միջև ժամանակին կատարվող համադրման բացակայությամբ (չափում (i)): Դա գլխավորապես պայմանավորված է նրանով, որ դրանց միջև ավտոմատացված կապերի բացակայության պատճառով համադրման գործընթացը դառնում է շատ ժամանակատար:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում տրված «A» գնահատականը ճիշտ չէր, քանզի այդ ժամանակ համադրումներ չէին կատարվում: Այլ չափումների գնահատականները ևս իջեցվել են, որոնց պատճառները ներկայացված են սույն աղյուսակին հաջորդող աղյուսակում:</p> <p>Գ-2 (i). Աշխատավարձերի վճարացուցակների ամբողջականության վրա միանգամայն բացասաբար է անդրադառնում հասարիքացուցակի, անձնակազմի գրանցումների և աշխատավարձերի վճարացուցակների համադրման բացակայությունը:</p> <p>Գ-2 (ii) «B» գնահատականի համար անձնակազմի գրանցումներում և աշխատավարձի վճարացուցակներում պահանջվող փոփոխությունների թարմացումները կարող են տրեղ ունենալ մինչև 3 ամիս ուշացումով, սակայն դրանք անդրադառնում են փոփոխությունների միայն փոքր մասի վրա: Հեղուկարձ ճշգրտումները հազվադեպ են:</p> <p>Գ-2 (iii). Հսկողության մեխանիզմներն առկա են, բայց համարժեք չեն տվյալների լիարժեք ամբողջականությունն ապահովելու համար:</p> <p>Գ-2 (iv). վերջին 3 տարիներին իրականացվել են վարձատրության համակարգի մասնակի աուդիտներ կամ անձնակազմի հեղուկացումներ:</p>

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<p>ԿՑ-19. Թափանցիկությունը, մրցակցությունը և բողոքարկման մեխանիզմները գնումների համակարգում (Մ2)</p> <p>(i) Իրավական և օրենսդրական կարգավորման դաշտը</p> <p>(ii) Գնումների մրցակցային ձևերի կիրառումը</p> <p>(iii) Գնումների մասին տեղեկատվության հասանելիությունը հանրության համար</p> <p>(iv) Գնումների բողոքարկման անկախ վարչական համակարգի առկայությունը</p>	<p><b>Համադրելի չէ</b> (նոր մեթոդաբանությունը 3-ի փոխարեն կիրառում է 4 ցուցանիշը) («A» հին մեթոդաբանությամբ.)</p>	<p><b>B</b></p> <p>(i) A</p> <p>(ii) D</p> <p>(iii) B</p> <p>(iv) A</p>	<p><b>Մեթոդաբանությունը փոխվել է:</b></p> <p>«Գնումների մասին» նոր օրենքի ընդունումը (i), էլ-գնումների կայքի գործարկումը (ii) և Գնումների բողոքարկման խորհրդի ստեղծումը (iv) վկայում են գնումների համակարգի թափանցիկության բարելավման մասին:</p> <p>Հատուկ կամ բացառիկ իրավունքների հիման վրա գնումների ոչ մրցակցային ձևերի կիրառման դեպքերի թիվը բարձր է (արժեքային արտահայտությամբ՝ 66% - 2011թ., 72% - 2012թ.):</p> <p>Գ-2 (ii). Գնահատման համար անհրաժեշտ հուսալի տվյալները հասանելի չեն:</p> <p>Գ-2 (iii). Հանրությանը հասանելի են տեղեկատվության 4 փարրերից առնվազն 3-ը (օր. գնումների պլաններ), որոնք ներկայացնում են գնումների 75%-ը (արժեքային արտահայտությամբ):</p>

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<p>ԿՑ-20. Ոչ աշխատավարձային ծախսերի նկատմամբ ներքին հսկողության արդյունավետությունը (Մ1)</p> <p>(i) Ծախսային պարտավորությունների նկատմամբ հսկողությունները</p> <p>(ii) Ներքին այլ հսկողությունների ըմբռնումը</p> <p>(iii) Ներքին հսկողությունների հետ համապատասխանությունը</p>	<p><b>C+</b></p> <p>(i) B</p> <p><i>(վերանայվել է «A»-ից)</i></p> <p>(ii) C</p> <p>(iii) C</p> <p><i>(վերանայվել է «A»-ից)</i></p>	<p><b>C+</b></p> <p>(i) A</p> <p>(ii) C</p> <p>(iii) C</p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b></p> <p>Ընդհանուր կատարողականը մնացել է անփոփոխ՝ ներքին հսկողությունների (բացառությամբ ծախսային պարտավորությունների նկատմամբ հսկողության (i)) մասին ըմբռնման ու դրանց կիրառման (ii և iii) առումով առկա թերությունների պատճառով: Վերջիններիս արդյունավետությունը բարձրացել է 2010թ. «Client-Treasury» համակարգի ներդրման, իսկ այնուհետև՝ նշված համակարգի և «Գանձապետական գործառնական օր» ծրագրային համակարգի միջև կապի ապահովման, ինչպես նաև «Client-Treasury» համակարգի ծածկույթում ԾԻԳ-երի ներառման շնորհիվ:</p> <p>Բարելավումը վկայում է այն մասին, որ 2008թ. ՊԾՖՀ-ում տրված «A» գնահատականը չափազանց բարձր է, հիմնականում այն պատճառով, որ ԾԻԳ-երի ծախսերը դրանում չեն արտացոլվում: Գնահատականը վերանայվել է «B»-ի: 2008թ. ՊԾՖՀ-ում չափում (iii)-ի գնահատականը վերանայվել է C-ի:</p> <p><i>Գ-2 (ii). Ներքին հսկողության այլ կանոնները և ընթացակարգերը բաղկացած են մի խումբ կանոններից, որոնք ըմբռնվում են դրանք ուղղակիորեն կիրառող անձանց կողմից: Հնարավոր է, որ որոշ կանոններ և ընթացակարգեր ավելորդ լինեն:</i></p> <p><i>Գ-2 (iii). գործարքների գերակշիռ մասում պահպանվում է կանոնների հետ համապատասխանությունը, բայց պարզեցված ընթացակարգերի չհիմնավորված կիրառումը լուրջ մտահոգության պետիք է պայլիս:</i></p>



ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<p>ԿՑ-21.</p> <p>Ներքին աուդիտի արդյունավետությունը (Մ1)</p> <p>(i) Ծածկույթը և որակը</p> <p>(ii) Հաշվետվությունների հաճախականությունը և տարածումը</p> <p>(iii) Ներքին աուդիտի բացահայտումներին ղեկավարության արձագանքի աստիճանը</p>	<p><b>D+</b></p> <p>(i) D</p> <p>(ii) C</p> <p>(iii) D</p> <p><i>(վերանայվել է «B»-ից)</i></p>	<p><b>C ▲</b></p> <p>(i) C</p> <p>(ii) C</p> <p>(iii) <b>C▲</b></p>	<p><b>Կատարողականը բարելավվել է:</b></p> <p>Չափումներ (i)-ի և (iii)-ի կատարողականը բարելավվել է՝ պայմանավորված 2012թ. համակարգերին միտված ՆԱ-ի ժամանակակից գործառույթի ներդրմամբ և ղեկավարության կողմից իրականացվող հետաուդիտային հսկողության բարելավմամբ: Չափում (ii)-ի տեսանկյունից Ֆինանսների նախարարությունը պարբերաբար չի ստանում առանձին աուդիտների արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ, քանի որ աուդիտի նոր տեղեկատվական համակարգը շահագործվում է միայն մասնակիորեն: 2008թ. ՊԾՖՀ-ի դրությամբ այն ստանում էր նման հաշվետվություններ, բայց այդ ժամանակ ՆԱ-ի համակարգը նվազ զարգացած էր:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում չափում (iii)-ի գնահատականը վերանայվել է «D»-ի, քանի որ համակարգերին միտված և գործառնական առումով անկախ ՆԱ-ի գործառույթ այդ ժամանակ ղեռնս ներդրված չէր:</p> <p><i>Գ-2 (i). Գործառույթը ներդրված է առնվազն ամենակարևոր պետական մարմիններում, որպես ներքին աուդիտը կատարում է համակարգերի որոշ ուսումնասիրումներ, բայց հնարավոր է, որ ՆԱ-ը չհամապատասխանի մասնագիտական ստանդարտներին:</i></p> <p><i>Գ-2 (ii). Հաշվետվություններ են ներկայացվում պետական մարմինների մեծ մասի համար, բայց հնարավոր է, որ դրանք չներկայացվեն ՖՆ-ին և աուդիտի գերագույն մարմնին:</i></p> <p><i>Գ-2 (iii). Բազմաթիվ ղեկավարների կողմից ձեռնարկվում են բավականին համարժեք գործողություններ, բայց հաճախ՝ ուշացումով:</i></p>

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<b>Գ (iii) Հաշվապահություն, գրանցումներ և հաշվետվությունների ներկայացում</b>			
<p>ԿՑ-22.</p> <p>Հաշիվների համադրման պարբերականությունը և ժամանակին լինելը (Մ2)</p> <p>(i) Բանկային համադրում</p> <p>(ii) Ժամանակավոր հաշիվների և կանխավճարների համադրում և հաշվանցում</p>	<p><b>B+</b></p> <p>(վերանայվել է «A»-ից)</p> <p>(i) B</p> <p>(վերանայվել է «A»-ից)</p> <p>(ii) A</p>	<p><b>A</b></p> <p>(i) A</p> <p>(ii) A</p>	<p><b>Կատարողականը բարելավվել է:</b></p> <p>Կատարողականը բարելավվել է (i)-ի տեսանկյունից, քանի որ 2012 թվականից ԳՄՀ-ում են արտացոլվում օտարերկրյա ֆինանսավորմամբ ԾԻԳ-երի միջոցով իրականացվող նախագծերի/ ծրագրերի բոլոր գործարքները:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում չափում (i)-ի գնահատականը վերանայվել է «B»-ի, քանի որ այդ ժամանակ ԾԻԳ-երի գործարքները ներառված չէին ԳՄՀ-ում:</p>
<p>ԿՑ-23.</p> <p>Ծառայություններ մատուցող միավորների կողմից ստացված միջոցների մասին տեղեկատվության հասանելիություն (Մ1)</p>	<p>C</p>	<p>A</p>	<p><b>Կատարողականը բարելավվել է:</b></p> <p>Կատարողականը բարելավվել է ՊՈԱԿ-ի կարգավիճակ ունեցող դպրոցների կողմից պետական բյուջեից ստացվող ու ծախսվող միջոցների մասին հաշվետվությունների կազմման և հրապարակման արդյունքում:</p>
<p>ԿՑ-24.</p> <p>Տարվա ընթացքում կազմվող բյուջեի կատարման հաշվետվությունների որակը և ժամանակին լինելը (Մ1)</p> <p>(i) Հաշվետվությունների շրջանակը</p> <p>(ii) Հաշվետվությունների ժամանակին լինելը</p> <p>(iii) Տեղեկատվության որակը</p>	<p><b>B+</b></p> <p>(վերանայվել է «C+»-ից)</p> <p>(i) A</p> <p>(ii) B</p> <p>(iii) B</p> <p>(վերանայվել է «C»-ից)</p>	<p><b>B+</b></p> <p>(i) A</p> <p>(ii) B</p> <p>(iii) B ▲</p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b></p> <p>Ընդհանուր կատարողականը մնացել է անփոփոխ, բայց տվյալների որակը (iii) բարելավվում է, որը գլխավորապես հետևանք է «Client Treasury» համակարգի ներդրման և նշված համակարգում ԶԳ-ների ֆինանսավորմամբ իրականացվող նախագծերի ու ծրագրերի հետ կապված դրամական հոսքերի ներառման:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում չափում (iii)-ի գնահատականը վերանայվել է «B»-ի, քանի որ ծածկվյալում պետք է չներառվեին ՊՈԱԿ-ների եկամուտներն ու ծախսերը:</p> <p>Գ-2 (ii). Հաշվեդրվությունները կազմվում են եռամսյակային կտրվածքով և հրապարակվում եռամսյակին հաջորդող 6 շաբաթվա ընթացքում:</p> <p>Գ-2 (iii). Առկա են հավաստիության հետ կապված որոշ մտահոգություններ, բայց տվյալների առնչվող հարցերը շեշտադրվում են հաշվետվություններում և դրանք բացասաբար չեն անդրադառնում ընդհանուր համապարասխանության / օգրակարության վրա:</p>

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<p>ԿՅ-25.</p> <p>Տարեկան ֆինանսական հաշվետվությունների որակը և ժամանակին ներկայացումը (Մ1)</p> <p>(i) ՖՀ-ների ամբողջականությունը</p> <p>(ii) Սահմանված ժամկետներում ՖՀ-ների ներկայացումը</p> <p>(iii) Կիրառվող հաշվապահական ստանդարտները</p>	<p>D+</p> <p>(i) C</p> <p>(ii) A</p> <p>(iii) D</p>	<p>D+</p> <p>(i) C</p> <p>(ii) A</p> <p>(iii) D</p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Հաշվապահական ժամանակակից ստանդարտների բացակայությունը խոչընդոտում է աուդիտի ենթակա իմաստալից ֆինանսական հաշվետվությունների կազմմանը:</p> <p>Գ-2 (i). Կազմվում է կառավարության համախմբված տարեկան հաշվետվություն: Միգուցե միշտ չէ, որ եկամուտների, ծախսերի և բանկային հաշիվների մնացորդների մասին տեղեկատվությունը ամբողջական է, սակայն բացթողումները էական չեն:</p> <p>Գ-2 (iii). Հաշվապահական ստանդարտները չեն բացահայտվում:</p>

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<b>Գ (iv) Արտաքին ուսումնասիրություն և աուդիտ</b>			
<p>ԿՑ-26.</p> <p>Արտաքին աուդիտի շրջանակը, բնույթը և հետաուդիտային հսկողությունը (Մ1)</p> <p>(i) Իրականացված աուդիտի շրջանակը/բնույթը</p> <p>(ii) Աուդիտորական հաշվետվությունների ժամանակին ներկայացումը ԱԺ</p> <p>(iii) Աուդիտի առաջարկությունների իրականացման նկատմամբ հսկողության ապացույցները</p>	<p><b>D+</b></p> <p>(i) D</p> <p>(ii) A</p> <p>(վերանայվել է «D»-ից)</p> <p>(iii) B</p>	<p><b>C+ ▲</b></p> <p>(i) C ▲</p> <p>(ii) A</p> <p>(iii) B ▲</p>	<p><b>Կատարողականը բարելավվել է:</b></p> <p>Չափում (i)-ի կատարողականը բարելավվել է՝ հիմնականում պայմանավորված 2006թ. «Վերահսկիչ պալատի մասին» օրենքի ընդունմամբ ՎՊ-ին շնորհված ավելի բարձր անկախությանը (չափում (i)): ՎՊ-ն դեռևս չունի բավարար անկախություն: ՎՊ-ի կատարողականը շարունակում է բարելավվել վերջինիս շարունակական բարեփոխումների միջոցով:</p> <p>Առաջընթաց է ապահովվել աուդիտի առաջարկությունների իրականացման ուղղությամբ աուդիտի ենթարկված մարմինների ձեռնարկած քայլերի մասին վկայող փաստերի վերաբերյալ չափում (iii)-ի տեսանկյունից: ՀՀ Կառավարությունը հրապարակում է տեղեկություններ ՎՊ-ի վերահսկողության/աուդիտի արդյունքների, ինչպես նաև աուդիտորական բացահայտումների առնչությամբ աուդիտի ենթարկված մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների մասին: Հստակ չէ, թե որքանով են արդյունավետ այդ միջոցառումները:</p> <p>Գ-2 (i). <i>Ընդհանուր ծախսերի առնվազն 50 տոկոսը ներկայացնող պետական մարմինները աուդիտի են ենթարկվում յուրաքանչյուր տարի: Աուդիտները գլխավորապես ուղղված են գործարքների ստուգմանը, սակայն հաշվետվություններում արտացոլվում են նշանակալից հարցերը: Աուդիտի ստանդարտները կարող են բացահայտվել միայն սահմանափակ ծավալով:</i></p> <p>Գ-2 (iii). <i>Ֆորմալ պատասխան քայլերը ձեռնարկվում են ժամանակին, բայց պարբերական հետաուդիտային հսկողության մասին վկայող ապացույցները փոքրաթիվ են:</i></p>

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<p>ԿՅ-27.</p> <p>Տարեկան բյուջեի մասին օրենքի ուսումնասիրում օրենսդիրի կողմից (Մ1)</p> <p>(i) ԱԺ-ի կողմից իրականացվող ուսումնասիրման շրջանակը</p> <p>(ii) ԱԺ-ի ընթացակարգերը</p> <p>(iii) Բյուջեի նախագծի քննարկման համար ԱԺ-ին հատկացվող ժամանակը</p> <p>(iv) Առանց օրենսդիրի նախապես տված հավանության տարվա ընթացքում բյուջեում փոփոխություններ կատարելու մասին կանոնները</p>	<p><b>C+</b></p> <p><i>(վերանայվել է «A»-ից)</i></p> <p>(i) A</p> <p>(ii) A</p> <p>(iii) A</p> <p>(iv) C</p> <p><i>(վերանայվել է «A»-ից)</i></p>	<p><b>C+</b></p> <p>(i) A</p> <p>(ii) A</p> <p>(iii) A</p> <p>(iv) C</p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b></p> <p>Գնահատականների առումով կատարողականը մնացել է անփոփոխ, սակայն ՀՀ Կառավարության կողմից ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունքում բարձրացել է տարեկան բյուջեի մասին օրենքի նախագծերի ուսումնասիրման որակը (չափում (i)):</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում չափում (iv)-ի համար տրված գնահատականը վերանայվել է «C»-ի, քանի որ օրենսդրությամբ ՀՀ Կառավարությունն իրավունք ունի տարվա ընթացքում լրացուցիչ եկամուտների սահմաններում մեծացնել ընդհանուր բյուջետային ծախսերը՝ առանց ԱԺ-ի նախնական համաձայնության:</p> <p><i>Գ-2 (iv). Գոյություն ունեն հստակ կանոններ, բայց դրանք թույլ են տալիս ծավալուն գերափոխական վերաբաշխումներ, ինչպես նաև ընդհանուր ծախսերի աճ:</i></p>

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<p>ԿՑ-28. Արտաքին աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրումն օրենսդիրի կողմից (Մ1)</p> <p>(i) Աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրման ժամանակին լինելը</p> <p>(ii) Հիմնական բացահայտումների շուրջ լուսնետրի շրջանակը</p> <p>(iii) ԱԺ-ի կողմից առաջարկվող գործողությունները և դրանց իրականացում գործադիրի կողմից</p>	<p><b>D+</b></p> <p>(i) A</p> <p>(ii) A</p> <p>(iii) D</p>	<p><b>D+</b></p> <p>(i) A</p> <p>(ii) A</p> <p>(iii) D</p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b></p> <p>Ամենաթյույ օղակը չափում (iii)-ն է, քանի որ աուդիտորական բացահայտումների ուսումնասիրությունից հետո պատգամավորների կողմից արվող առաջարկները ենթակա չեն պարտադիր կատարման:</p> <p>Գ-2 (iii). ԱԺ-ի կողմից որևէ առաջարկություն չի ներկայացվում:</p>
<b>D. ԴՈՆՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐԸ</b>			
<p>D-1. Ուղղակի բյուջետային աջակցության կանխատեսելիություն</p> <p>(i) փաստացի բյուջետային աջակցության տարեկան շեղումը 2Գ-ների կողմից տրամադրված կանխատեսումներից</p> <p>(ii) Տարվա ընթացքում 2Գ-ների կողմից կատարվող հատկացումների ժամանակին լինելը</p>	<p><b>D+</b></p> <p>(i) C</p> <p>(ii) D</p>	<p><b>C+</b></p> <p>(i) C</p> <p>(ii) B</p>	<p><b>Կատարողականը բարելավվել է:</b></p> <p>Կատարողականը բարելավվել է տարվա ընթացքում բյուջեի աջակցմանն ուղղված տեղաբաշխումների ավելի բարձր կանխատեսելիության շնորհիվ (ii):</p> <p>Գ-2 (i). Վերջին 3 տարիներից ոչ ավելի, քան 1-ում կանխատեսված ժամկետների համեմատ փաստացի ուղղակի բյուջեի աջակցության շեղումը չի գերազանցել 15%-ը:</p> <p>Գ-2 (ii). Վերջին 3 տարիներից 2-ում փաստացի եռամսյակային տեղաբաշխումների ուշացումները (կշռված) չեն գերազանցել 25%-ը:</p>

ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՒՄ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
<p>D-2. ԶԳ-ների կողմից տրամադրվող ֆինանսական տեղեկատվություն ծրագրերի և նախագծերի գծով օգնության բյուջետավորման և հաշվետվությունների նպատակով (Մ1)</p> <p>(i) Նախագծերի ֆինանսավորման նպատակով ԶԳ-ների կողմից կազմվող նախահաշիվների ամբողջականությունը և ժամանակին լինելը</p> <p>(ii) Նախագծերի ֆինանսավորմանն ուղղված ԶԳ-ների փաստացի հոսքերի մասին հաշվետվությունների հաճախականությունը և ծածկույթը</p>	<p><b>A</b></p> <p>(i) A</p> <p>(ii) A</p>	<p><b>A</b></p> <p>(i) A</p> <p>(ii) A</p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b></p>
<p>D-3. Ազգային համակարգերի կիրառմամբ կառավարվող օգնության մասնաբաժին (Մ1)</p>	<p><b>D</b></p>	<p><b>B</b></p>	<p><b>Կատարողականը բարելավվել է:</b></p> <p>Սա մասամբ պայմանավորված է բյուջետային աջակցության տեսքով տրամադրվող օգնության մասնաբաժնի աճով և մասամբ էլ՝ ԶԳ-ների կողմից ֆինանսավորվող ծրագրերի աջակցության առնչությամբ ազգային համակարգերի (գանձապետարան, ֆինանսական հաշվետվություններ և արտաքին աուդիտ) ավելի լայն կիրառմամբ: Ազգային համակարգերի կիրառման մակարդակը մոտ 80% է:</p> <p>Գ-2. Կենտրոնական կառավարությանն ուղղված օգնության 75%-ը կամ ավելին կառավարվում է՝ կիրառելով ազգային ընթացակարգերը (գնումներ, վճարումներ և հաշվապահական հաշվառում, ֆինանսական հաշվետվություններ, աուդիտ):</p>

1/Ֆիսկալ փարին օրացույցային փարին է:

2/Յուրաքանչյուր չափման գնահատման չափանիշը (Գ-2) ցույց է փոխվում երրորդ սյունակում բոլոր այն դեպքերում, երբ գնահատականը A-ից ցածր է:

3/Կարող է դրվել վերընթաց սլաք (▲), եթե ՊՖԿ-ի բարելավման աշխատանքները ընթացքում են, իսկ դրանց իրականացման արդյունքում գնահատականը կբարձրանա:

2008թ. ՊԾՖՀ-ի գնահատման մեջ 10 ցուցանիշների գնահատականները վերանայվել են (բացատրությունները ներկայացվում են ստորև աղյուսակում): Դրանցից երկուսը (ԿՑ 4 և 7) պայմանավորված են շրջանակի փոփոխմամբ:

2008թ. ՊԾՖՀ-ի գնահատականներ, որոնք թվում են սխալ կամ ունեն այլ շրջանակ.

ԿՑ	Գնահատական	Հիմնավորում
ԿՑ-4 (ii)	B	Գնահատականը վերանայվել է «A»-ի: ՊՈԱԿ-ները ներառվել են 2008թ. ՊԾՖՀ-ի գնահատման ծածկույթում, մինչդեռ չպետք է ներառվեին, քանի որ հանդիսանում են ԱԲԳ միավորներ:
ԿՑ-7 (i)	A	Գնահատականը վերանայվել է «B»-ի: ՊՈԱԿ-ները մինչ օրս հանդիսանում են կենտրոնական կառավարության ԱԲԳ միավորներ:
ԿՑ 17 (ii)	A	Գնահատականը վերանայվել է «B»-ի: «A» գնահատականը չափազանց բարձր էր, քանի որ այդ ժամանակ ծրագրերի/նախագծերի ծախսերի ֆինանսավորման նպատակով բացված ՁԳ-ների որոշ հաշիվներ ներառված չէին ԳՄՀ-ում:
ԿՑ-18 (i)	A	Գնահատականը վերանայվել է «D»-ի: «A» գնահատականը թվում է չափազանց բարձր, քանի որ անձնակազմի գրանցումների և աշխատավարձերի վճարացուցակների կանոնավոր համադրումներ չէին իրականացվում: Ենթադրվում էր, որ յուրաքանչյուր պետական մարմնում ԱԿՄ-ի կողմից հաշվապահական հաշվառման ստորաբաժանմանը տրամադրվող հաստիքացուցակը իրենից ներկայացնում է այն նույն ցուցակը, որի հիման վրա հաշվապահական հաշվառման ստորաբաժանումը հաշվարկում է աշխատավարձերը: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ այդ տեղեկատվությունը նույնը չլինի, եթե դրանում կատարվեն միտումնավոր փոփոխություններ, իսկ հաստիքացուցակների և վճարացուցակների նույնականության ստուգման նպատակով չիրականացվեն պարբերական համադրումներ:
ԿՑ-18 (ii)	A	Գնահատականը վերանայվել է «B»-ի: 2008թ. ՊԾՖՀ-ում տրվում է չափազանց բարձր գնահատական: Այնտեղ նշվում է, թե, օրենքի համաձայն, ինչպիսին պետք է լինի իրավիճակը, սակայն չեն ներկայացվում փաստացի իրավիճակը նկարագրող փաստեր: Գոյություն չունեն կատարողականի փոփոխության մասին վկայող փաստեր:
ԿՑ-18 (iii)	B	Գնահատականը վերանայվել է «C»-ի: 2008թ. ՊԾՖՀ-ն չի անդրադարձել հսկողություններին: «B» գնահատականի հիմնավորումը ներկայացված չէ: Կատարողականի փոփոխության մասին վկայող փաստերը բացակայում են:



ԿՑ	Գնահատական	Հիմնավորում
ԿՑ-18 (iv)	B	Գնահատականը վերանայվել է «C»-ի: 2008թ. ՊԾՖՀ-ում իրականից ավելի բարձր է գնահատվել վարձատրության համակարգի նկատմամբ հսկողության աստիճանը: Կատարողականի փոփոխության մասին վկայող փաստերը բացակայում են:
ԿՑ-20 (i)	A	Գնահատականը վերանայվել է «B»-ի: Ծախսային պարտավորությունների նկատմամբ հսկողությունը բարելավվել է շնորհիվ «Client-Treasury» համակարգի ներդրման, «Գանձապետական գործառնական օր» համակարգի պարբերական արդիականացման (որին միացած է «Client-Treasury» համակարգը) և ծախսային պարտավորությունների հսկողության համակարգում ԾԻԳ-երի ծախսերի ներառման: 2008թ. ՊԾՖՀ-ի գնահատականը վերանայվել է, քանի որ 2008թ. դրությամբ այդ ծախսերը ներառված չէին նշված համակարգում:
ԿՑ-20 (iii)	A	Գնահատականը վերանայվել է «C»-ի: 2008թ. ՊԾՖՀ-ում այս չափումը սխալ է ըմբռնվել: Կատարողականը մնացել է անփոփոխ:
ԿՑ-21 (iii)	B	Գնահատականը վերանայվել է «D»-ի: Ըստ ամենայնի, 2008թ. ՊԾՖՀ-ում իրավիճակը գնահատվել է իրականից բարձր, քանզի որ այդ ժամանակ դեռևս չէր ներդրվել համակարգերին միտված ՆԱ-ի գործառույթը:
ԿՑ-22 (i)	A	Գնահատականը վերանայվել է «B»-ի: 2008թ. դրությամբ ԾԻԳ-երի հաշիվները հիմնականում դուրս էին գանձապետական հսկողությունից, իսկ ժամանակին կատարվող համադրումները վերաբերում էին միայն Գանձապետարանի կողմից կառավարվող հաշիվներին:
ԿՑ-24 (iii)	C	Գնահատականը վերանայվել է «B»-ի: Ծածկույթի շրջանակում չպետք է ներառվեին ՊՈԱԿ-ների եկամուտներն ու ծախսերը: Ընդհանուր գնահատականը բարձրանում է՝ դառնալով «B+»:
ԿՑ-26 (ii)	D	Գնահատականը վերանայվել է «A»-ի: Այս չափման միջոցով գնահատվում է պետական բյուջեի կատարման մասին կառավարության տարեկան հաշվետվության վերաբերյալ ՎՊ-ի եզրակացությունն Աժ ներկայացման ժամանակին լինելը: 2008թ. ՊԾՖՀ-ում տրվող գնահատականում սակայն գնահատվել է ՎՊ-ի տարեկան հաշվետվությունն Աժ ներկայացման ժամանակին լինելը: Մինչդեռ այդ հաշվետվությունն ընդգրկում է հարցեր, որոնք վերաբերում են մեկից ավելի տարիների ժամանակահատվածի և այդ իսկ պատճառով կարևոր չեն չափում (ii)-ի տեսանկյունից, որը տարածվում է նախորդ ավարտված ֆինանսական տարվա վրա: Ընդհանուր գնահատականը մնում է «D+»:
ԿՑ-27 (iv)	A	Գնահատականը վերանայվել է «C»-ի: Գնահատականը նույն է ինչ 2013թ. գնահատականը, քանզի 2008թ. ժամանակահատվածի համեմատ իրավիճակը չի փոխվել:

# 1. Ներածություն

## 1.1. Նպատակ

Հայաստանում առաջին ՊԾՖՀ գնահատումն իրականացվել է 2008 թվականին՝ ինքնագնահատման ձևով, հետևաբար, հերթական գնահատումն իրականացվել է ճիշտ ժամանակին: Սույն հաշվետվությամբ ներկայացվում է Հայաստանի ՊՖԿ համակարգի կատարողականում վերջին գնահատումից ի վեր արձանագրված փոփոխությունները:

2008թ. ՊԾՖՀ գնահատումից հետո, 2010թ. մշակվեց և ՀՀ Կառավարության կողմից հաստատվեց ՖԿ-ի բարեփոխումների ռազմավարություն, որը ենթակա էր իրականացման 2011-2020թթ. ժամանակահատվածում (նկարագրվում է Բաժին 4-ում): Բարեփոխումների 1-ին փուլի (ընդգրկում է 2011-2014թթ. ժամանակահատվածը) համար մշակվեց գործողությունների մանրամասն ծրագիր: ՊԾՖՀ-ի սույն հերթական գնահատումը կձառայի որպես տեղեկատվության աղբյուր բարեփոխումների 2-րդ փուլի գործողությունների մանրամասն ծրագրի մշակման համար: Գնահատումը նաև կիրազեկի ՁԳ-ներին այն ֆիդուցիար ռիսկերի մասին, որոնց հետ վերջիններս կարող են առնչվել ՀՀ Կառավարությանը ֆինանսական աջակցություն տրամադրելու պարագայում, ինչպես նաև կօգնի պարզել, թե ինչպես կարող են լավագույնս աջակցել ՀՀ Կառավարությանը գործողությունների հաջորդ ծրագրի իրականացման գործում:

Ի լրումն տնտեսության տարբեր ոլորտներում իրականացվող միջոցառումների ու ծրագրերի միջոցով տրամադրվող նշանակալից աջակցությանը, ԵՄ-ն, ՀԲ-ն, ԳՄՀԸ-ն, ԱԶԲ-ն, ԱՄՀ-ն և այլ ՁԳ-ները էական օժանդակություն են ցուցաբերում նաև ՊՖԿ ոլորտի բարեփոխումների մեծ մասում: Վերջիններս համակարգում են իրենց ջանքերը պարբերաբար կազմակերպվող կորդինացիոն հանդիպումների միջոցով:

Ինչպես առաջին, այնպես էլ այս հերթական ՊԾՖՀ գնահատումը հանդիսանում է ՀՀ Կառավարության կողմից իրականացված ինքնագնահատում: Ի տարբերություն առաջին գնահատման, այս անգամ ինքնագնահատման աշխատանքներն իրականացնող թիմին աջակցելու և վերջինիս աշխատանքը ստուգաճշտելու նպատակով վարձվել է խորհրդատուների թիմ: Խորհրդատուների թիմը կազմված էր 3 տեղացի և 2 արտաքին խորհրդատուներից, որոնց աշխատանքների ֆինանսավորումն իրականացվել է ԵՄ-ի և ԳՄՀԸ-ի կողմից:

## 1.2. Կազմակերպումը և հաշվետվության կազմման գործընթացը

ՀՀ Կառավարության և ԶԳ-ների միջև կայացած հանդիպումից հետո մշակվել է Հայեցակարգ, որը հաստատվել է 2013թ. հունիսի 25-ին: Այնտեղ ներկայացվում են գնահատման կազմակերպման մեխանիզմները: Որպես առաջին քայլ՝ ձևավորվել է Վերահսկող թիմ (ՎԹ), որում ընդգրկվել են ներկայացուցիչներ Ֆինանսների նախարարությունից (ՖՆ) և ԵՄ պատվիրակությունից, ԳՄՀԸ-ից և ՀԲ-ից: ՎԹ-ի ղեկավարն է ՀՀ Ֆինանսների նախարարի առաջին տեղակալ արն. Պավել Սաֆարյանը, որը ստանձնել է գնահատման գործընթացի համակարգողի դերը և օժտված է ինքնագնահատման հաշվետվության վերջնական հաստատման իրավասությամբ: ՎԹ-ի քարտուղար/գնահատման ղեկավար արն. Մակար Ղամբարյանը ՖՆ-ի Ներքին պետական ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության պետն է:

ՎԹ-ն մշակել է ԵՄ-ի և ԳՄՀԸ-ի կողմից ֆինանսավորվող խորհրդատուների տեխնիկական առաջադրանքը: ԵՄ-ն պայմանագիրը շնորհել է Նիդեռլանդական «Ecorys» ընկերությանը՝ երկու արտաքին և մեկ տեղացի խորհրդատուներ ներգրավելու նպատակով: Երկու տեղացի խորհրդատուներ անմիջականորեն վարձվել են ԳՄՀԸ-ի կողմից: Արտաքին խորհրդատուներն են Պիտեր Ֆեյերմանը (թիմի ղեկավար/գլխավոր ֆասիլիտատոր) և Կորինա Սերտանը (որը հիմնականում զբաղվել է հարկային վարչարարության և դոնորների գործելակերպերի ցուցանիշներով՝ ԿՑ-13-15 և D1-D3): Տեղացի խորհրդատուներն են արն. Վահան Սիրունյանը, արն. Սուրեն Պողոսյանը (ԳՄՀԸ) և արն. Արամ Հովհաննիսյանը («Ecorys»):

Հայեցակարգի համաձայն, ինքնագնահատումն իրականացնելու նպատակով օգոստոս ամսին ստեղծվել են 6 գնահատող թիմեր (ԳԹ), որոնցից 4-ի կազմում ընդգրկվել են ՖՆ-ի հետևյալ վարչությունների ներկայացուցիչները՝ Պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչություն (ՊՆՖՀՎ), Բյուջեների կատարման հաշվետվությունների և վերլուծության վարչություն, Բյուջետային գործընթացի կառավարման վարչություն, և Պետական եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչություն (ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի մասնակցությամբ):

5-րդ և 6-րդ գնահատող թիմերը համապատասխանաբար ձևավորվել են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության Վերահսկիչ պալատի (Հայաստանի գերագույն վերահսկիչ ատյանի) ներկայացուցիչներից:

Նախքան Երևան ժամանելը (սեպտեմբերի 10-ին) արտաքին խորհրդատուները հավաքել են համապատասխան փաստաթղթեր տարբեր

կառույցների (մասնավորապես, ՖՆ-ի, Վերահսկիչ պալատի, ԱՄՀ-ի, Համաշխարհային բանկի, ԱԶԲ-ի, ՎԶԵԲ-ի) պաշտոնական կայքերից և կազմել են անհրաժեշտ տեղեկատվության ցուցակը և նախատեսվող հանդիպումների ցանկը, ինչպես նաև խորհրդատուների աշխատանքային պլանը: Խորհրդատուների ժամանումից մեկ շաբաթ առաջ նշված ցուցակներն ու աշխատանքային պլանը ներկայացվել են ՎԹ-ի քարտուղար/գնահատման ղեկավարին:

Առաքելությունն իր աշխատանքները սկսել է ՊԾՖՀ-ի վարչության պետի, ԵՄ-ի պատվիրակության գործառնությունների ստորաբաժանման պետի տեղակալի (պրն. Խոսե Լավարո), ԳՄՀՀ-ի ՊՖԿ թիմի ղեկավարի (պրն. Դավիդ Ֆրանցրեթ) և ավագ խորհրդականի (տկն. Վարսենիկ Մնացականյան) հետ իրականացված ներածական հանդիպումներով: Սեպտեմբերի 12-ին առաքելությունն անցկացրել է ՊԾՖՀ-ին նվիրված ուսուցողական աշխատաժողով, որին մասնակցել են պետական մարմինների և շահագրգիռ ոչ կառավարական մարմինների (հիմնականում ԶԳ-ների) ներկայացուցիչները: Աշխատաժողովի ընթացքում մեծամասամբ իրականացվել են մասնակիցների կողմից գործնական օրինակների գնահատման աշխատանքներ: Վերջիններս իրենցից ներկայացրել են կատարողական ցուցանիշների վերլուծություններ՝ վերցված տարբեր երկրներում անցկացված ՊԾՖՀ գնահատումներից, ընդ որում, դրանք չեն ներառել գնահատման միավորները և խմբերի բաժանված մասնակիցներին խնդրվել է որոշել համապատասխան գնահատականները:

Առարկայական հանդիպումները սկսվել են սեպտեմբերի 13-ին և ավարտվել սեպտեմբերի 27-ին: Հանդիպումներ են անցկացվել ԳԹ-ների անդամների հետ (տես վերը) ՖՆ-ում, Վերահսկիչ պալատում և Ազգային ժողովում: ԳԹ-ների անդամները պատասխանատու են 3 տեղացի խորհրդատուների օժանդակությամբ յուրաքանչյուր ցուցանիշի նկարագրական մասի մշակման համար, ուստի, հանդիպումների նպատակն էր քննարկել նախկինում շրջանառված տեղեկատվական պահանջները, տրամադրել պարզաբանումներ և քննարկել ծագող հարցերը: Հանդիպումներ են կայացել նաև ՖՆ-ի Ներքին առևտրի, Ֆինանսական և Անձնակազմի կառավարման վարչությունների, ինչպես նաև ՊՈԱԿ-ների և պետական առևտրային կազմակերպությունների մոնիտորինգի համար պատասխանատու նախկին վարչության ներկայացուցիչների հետ:

ՀՀ ՖՆ-ից դուրս հանդիպումներ են տեղի ունեցել նաև պետական այլ մարմինների, մասնավորապես, ՀՀ Կրթության և գիտության նախարարության, ՀՀ Քաղաքաշինության նախարարության (ՊՖԿ համակարգերի որակի մասին նրանց տեսակետներին ծանոթանալու նպատակով), ՀՀ Էկոնոմիկայի նախարարության (ԶԳ-ների գործունեության հաշվետվողականության մասով), ՀՀ Տարածքային կառավարման նախարարության (ներկառավարական հարաբերությունների թափանցիկության մասով) և ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի հետ (վարձատրության հա-

մակարգի վերաբերյալ ԿՑ-18 ցուցանիշի մասով):

Հանդիպումներ են անցկացվել նաև ոչ կառավարական կառույցների հետ (Թրանսպարենսի հիթերնեշըն, Գործատուների միություն, Հարկ վճարողների միություն)՝ ՊՖԿ համակարգերի թափանցիկության վերաբերյալ նրանց տեսակետներին ծանոթանալու նպատակով: Արտաքին խորհրդատուների առաքելության վերջին օրերին հանդիպումներ են անցկացվել նաև ԱԶԲ-ի, ԱՄՀ-ի և Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ:

Թիմի ղեկավարը/գլխավոր ֆասիլիտատորը կազմել է Հուշագիր և թիմի մյուս անդամների հետ միասին սեպտեմբերի 26-ին քննարկել է այն Պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության պետի հետ: Հուշագիրն առանձին ներկայացվել է նաև ԵՄ-ի պատվիրակությունից պրն. Խոսե Նավարոյին: Հուշագրում արտացոլվել են ՊՖՀ-ի համակարգի բաղադրիչների կատարողականի վերաբերյալ գնահատման թիմի դիրքորոշումները և ՊԾՖՀ-ի հաշվետվության կազմման ու ավարտման ժամանակացույցը:

Արտաքին խորհրդատուները մեկնել են Երևանից սեպտեմբերի 27-ին: Հաջորդ մի քանի շաբաթվա ընթացքում տեղացի խորհրդատուներն աջակցել են գնահատող թիմերին յուրաքանչյուր կատարողական ցուցանիշի նկարագրական մասի կազմման գործում: Սկզբնական ժամանակացույցի համաձայն, դրանք պետք է ներկայացվեին ՊՆՖՀ-ի վարչության պետին մինչև արտաքին խորհրդատուների մեկնումը, սակայն պարզվեց, որ նշված ժամկետը իրատեսական չէ, քանի որ, ի թիվս այլ պատճառների, աշխատակիցներից շատերը զբաղված էին բյուջեի նախագծի կազմման աշխատանքներում:

Նկարագրական մասերը ՊԾՖՀ-ի գնահատող թիմին են տրամադրվել հոկտեմբերի 25-ին: Որոշ խմբագրական աշխատանքներից հետո հոկտեմբերի 29-ին նյութերը տրվել են թարգմանության: Գործընթացն արագացնելու նպատակով ներգրավվել է 2-րդ թարգմանիչը, և նյութերի մեծ մասի թարգմանությունն ավարտվել է մինչև նոյեմբերի վերջը: Թարգմանված նյութերի խմբագրումը ԳՖ-ից պահանջել է ծավալուն և ժամանակատար աշխատանք: Այնուհետև յուրաքանչյուր կատարողական ցուցանիշին վերաբերող խմբագրված նյութը ուղարկվել է ԳՄՀԸ-ի խորհրդատուներին՝ կարծիք ստանալու համար, որոնք հետագայում ԳՖ-ի կողմից հաշվի են առնվել նյութերի վերանայման ժամանակ: Այս ինտերակտիվ գործընթացը արդյունավետ էր: Ամփոփ գնահատման բաժինը և 2-րդ բաժնի որոշ մասերը կազմվել են ԳՖ-ի կողմից:

ՊԾՖՀ-ի գնահատման անգլերեն տարբերակի առաջին նախագիծը ներկայացվել է ՊՆՖՀ վարչության պետին դեկտեմբերի 19-ին: Այն չի ներառել եկամուտների վարչարարության (ԿՑ 13-15) և դոնորների գործելակերպերի (D1-D3) ցուցանիշները, որոնք պահանջել են որոշ լրացուցիչ աշխատանք: Փաստաթղթի հայերեն թարգմանությունը սկսվել է դեկտեմ-

բերի վերջին: Առաջին ամբողջական նախագծի անգլերեն տարբերակը ներկայացվել է ՊՆՖՀ վարչության պետին 2014թ. հունվարի 9-ին, որի հետո վերջինս տարածել է այն շահագրգիռ ՁԳ-ների շրջանում: Ավարտուն առաջին նախագծի հայերեն տարբերակը ներկայացվել է ՊՆՖՀ վարչության պետին փետրվարի 10-ին, որից հետո վերջինս փոխանցել է փաստաթուղթը ԳԹ-ներին՝ կարծիք ստանալու նպատակով:

Առաջին նախագծի անգլերեն տարբերակի վերաբերյալ ՁԳ-ների մեկնաբանությունները ներկայացվել են ՊՆՖՀ վարչության պետին փետրվարի 12-ին, իսկ ԳՖ-ի կողմից դրանք արտացոլվել են հաշվետվության երկրորդ նախնական տարբերակում: Հայերեն տարբերակի վերաբերյալ ԳԹ-ների մեկնաբանությունները տրամադրվել են Ecorys-ին փետրվարի վերջին/մարտի սկզբին՝ անգլերեն թարգմանությունը կազմակերպելու համար: Դրանք ևս ԳՖ-ի կողմից արտացոլվել են հաշվետվության երկրորդ նախնական տարբերակում, որը փաստաթուղթը ներկայացրել է ՊՆՖՀ վարչության պետին մարտի 24-ին: Այնուհետև հաշվետվության երկրորդ նախնական տարբերակում արված փոփոխությունները թարգմանվել են հայերեն, և թարգմանված տարբերակը ներկայացվել է ապրիլի 3-ին: «ՊԾՖՀ-ի ստուգում» ընթացակարգի շրջանակում հաշվետվության անգլերեն երկրորդ նախնական տարբերակն ուղարկվել է ՊԾՖՀ-ի քարտուղարության ուսումնասիրմանը:

2014թ. ապրիլի 3-ին ԳՖ-ն 9 օրով վերադարձել է երևան: Առաջին մի քանի օրվա ընթացքում ԳՖ-ն և ԳՄՀԸ-ի երկու խորհրդատուները հանդիպել են գնահատող թիմերի հետ՝ լրացուցիչ մեկնաբանությունները քննարկելու նպատակով: ԳՖ-ն պատրաստել է համապատասխան նյութերը, որոնք ներկայացվել են ապրիլի 9-ին կայացած ՊԾՖՀ-ի աշխատաժողովում (վերջինիս մասնակցել են գնահատող թիմերը և ՁԳ-ների ներկայացուցիչները): Նա հաշվետվության երկրորդ նախնական տարբերակում արտացոլել է ՊԾՖՀ-ի քարտուղարության, ինչպես նաև գնահատող թիմերի և ՁԳ-ների ներկայացուցիչների լրացուցիչ մեկնաբանությունները: Հաշվետվության վերջնական նախագիծը ներկայացվել է ՊԾՖՀ-ի քարտուղարությանը ապրիլի 23-ին: Վերջինս ստուգել է իր մեկնաբանությունների արտացոլումը փաստաթղթում: ՊԾՖՀ-ի քարտուղարության մայիսի 1-ի պատասխանում նշվում է, որ մեկնաբանությունների մեծ մասը ներառված է փաստաթղթում, բայց դրանցից երեքի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ են պահանջվում: Գնահատող թիմը կատարել է համապատասխան ճշգրտումներ և վեջնական հաշվետվությունը մայիսի 11-ին ներկայացրել է ՊԾՖՀ-ի քարտուղարություն, որը 2014 թվականի մայիսի 28-ին ստացել է ՊԾՖՀ քարտուղարության հաստատման կնիքը «ՊԾՖՀ-ի ստուգում» ընթացակարգի պահանջներին համապատասխան:

### 1.3. Գնահատման շրջանակը

Գնահատման շրջանակը ընդգրկում է կենտրոնական կառավարության մարմինները, այդ թվում մարզպետարանները: Այն չի ներառում նշված մարմինների ենթակայության տակ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունները (ՊՈԱԿ-ներ), փակ բաժնետիրական ընկերությունները (ՓԲԸ) և տեղական ինքնակառավարման մարմինները, թեև նրանց թափանցիկությանը և կենտրոնական կառավարության համար նշված կազմակերպություններից բխող պոտենցիալ ֆիսկալ ռիսկերին վերաբերող հարցերը գնահատվում են «ԿՑ 7-9» ցուցանիշների տակ: ՀՀ պետական բյուջեի (այսինքն՝ կենտրոնական կառավարության մարմինների) ծախսերը 2012թ. կազմել են 1211.8 մլն ՀՀ դրամ: 2012թ. օրացույցային տարում ՊՈԱԿ-ների ծախսերը կազմել են 155.2 մլրդ ՀՀ դրամ, այսինքն՝ կենտրոնական կառավարության և ՊՈԱԿ-ների ընդհանուր ծախսերի շուրջ 9%-ը: ՏԻՄ-երի ընդհանուր ծախսերը 2012թ. կազմել են 97.5 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր կառավարության ծախսերի շուրջ 6.7 տոկոսը:

## 2. Հայաստան. ընդհանուր տեղեկատվություն

### 2.1. Տնտեսական և հարկաբյուջետային տեղեկատվություն

Նախքան համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, որը սկսվեց 2008թ., մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ-ն արձանագրել է նշանակալից աճ՝ պայմանավորված մասնավոր տրանսֆերտների հաշվին շեշտակի զարգացող շինարարության ճյուղով: 2003-2008թթ. այն իրական արտահայտությամբ աճեց 3.9 անգամ՝ 4.5 տոկոսային կետով նպաստելով իրական ՀՆԱ-ի միջինում 12 տոկոս աճին:

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը բացահայտեց արտաքին ցնցումների նկատմամբ տնտեսության խոցելիությունը: 2009թ. մասնավոր տրանսֆերտները նվազեցին 35 տոկոսով, ներդրումները՝ 31 տոկոսով, իսկ շինարարության ճյուղում կտրուկ անկումը կազմեց 41.6 տոկոս: Տնային տնտեսությունների սպառումը ևս կրճատվեց, թեև ավելի պակաս չափով (ՀՆԱ-ի -1 տոկոսով)՝ պայմանավորված Կառավարության հարկաբյուջետային խթանման ծրագրի իրականացմամբ, որի շնորհիվ որոշ չափով մեղմացավ ճգնաժամի ազդեցությունը: Այնուամենայնիվ, 2009թ. իրական ՀՆԱ-ի անկումը կազմեց 14.1 տոկոս:

Հարկաբյուջետային խթանման ծրագրի նպաստավոր ազդեցության շնորհիվ (որին օժանդակել են ԶԳ-ները, առանձնապես Ռուսաստանի Դաշնությունը, ԱԶԲ-ն և ԱՄՀ-ն իր երկարաձգված ֆինանսավորման և երկարաձգված վարկավորման ծրագրով՝ համաձայնեցված ՀՀ Կառավարության հետ 2010թ. հուլիսին) Հայաստանի տնտեսությունը հաղթահարեց ճգնաժամի հետևանքները: 2010-2012թթ. իրական ՀՆԱ-ն համապատասխանաբար աճեց 2.2%-ով, 4.7%-ով և 7.2%-ով, և 2012թ. վերջին համարյա վերականգնվեց իրական ՀՆԱ-ի նախաճգնաժամային մակարդակը: 2012թ. արձանագրված աճը պայմանավորված էր հանքարդյունաբերության, գյուղատնտեսության (մասամբ բարենպաստ եղանակային պայմանների շնորհիվ) և սպասարկման ոլորտներում գրանցված աճով: Շինարարության ոլորտը հետ է մնացել, սակայն տնտեսության մյուս բոլոր ճյուղերը գերազանցել են 2008թ. իրենց աճի մակարդակները: 2008թ. համեմատ որոշ չափով փոխվել են ոլորտային աճի տեմպերը՝ պայմանավորված արտաքին առևտրի և արդյունաբերության ոլորտի դինամիկայով, որը փոխկապակցված է պղնձի միջազգային գների հետ:

Տնտեսական հեռանկարները հիմնականում պայմանավորված են Եվրագոտում և Ռուսաստանում տեղի ունենալիք զարգացումներով: Նվազման ուղղությամբ ռիսկերը բարձր են պահպանվում՝ հիմնականում պայմանավորված արտաքին միջավայրում, մասնավորապես, Եվրագոտում առկա անորոշություններով, որոնք կարող են Հայաստանին փոխանցվել առևտրի, բանկային ոլորտի զարգացումների և օտարերկրյա ուղղակի ներդրում-



ների ուղիներով: Ավելին, Ռուսաստանի տնտեսության անբարենպաստ զարգացումները հնարավոր է, որ անմիջական ազդեցություն ունենան Հայաստան ուղղվող դրամական փոխանցումների ծավալների վրա:

Աղյուսակ 1-ում ներկայացվում է տեղակատվություն Հայաստանի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ, իսկ Աղյուսակ 2-ում ամփոփ տեսքով ներկայացվում է վերջին չորս տարիների կենտրոնական կառավարության հիմնական հարկաբյուջետային ցուցանիշների կատարողականը:

**Աղյուսակ 1. Հայաստան. հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները**

	2009	2010	2011	2012
Ընդամենը բնակչություն, մլն1/			3.0	
<b>Ազգային եկամուտ և գներ</b>				
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	2661	2844	3363	3290
ՀՆԱ (անվանական), մլրդ ՀՀ դրամ	3142	3460	3778	3998
ՀՆԱ-ի տարեկան իրական աճ, %	-14.1	2.2	4.7	7.2
ՍԳԻ տոկոսային փոփոխություն (ժամանակաշրջանի վերջ)	6.7	8.5	4.7	3.2
ՍԳԻ տոկոսային փոփոխություն (տարեկան միջին)	3.5	7.3	7.7	2.5
<b>Դրամավարկային հարված</b>				
Դրամական զանգվածի տոկոսային աճ	15	11.8	23.7	19.5
<b>Արտաքին հարված</b>				
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ, %-ը ՀՆԱ-ում	-15.8	-14.8	-10.9	-11.2
Համախառն արտաքին պահուստների ներմուծման ծածկույթ տոկոսներով	5.7	4.7	4.7	4.2
Արտաքին պարտք, %-ը ՀՆԱ-ում	57.8	65.4	72.8	77.7
որից՝ պետական և պետության կողմից երաշխավորված	35.7	34.7	36.4	39.5
Պետական արտաքին պարտքի սպասարկման գործակից (ապրանքների և ծառայությունների արտահանման տոկոս)	5.4	4.7	4.2	9.6

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն և ՖՆ 1/ 2011թ. մարդահամարի տվյալների համաձայն, 2011թ. բնակչության թիվը կազմել է 3,213,011 մարդ:

**Աղյուսակ 2. Կառավարության հիմնական հարկաբյուջետային ցուցանիշների կատարողականը (ֆինանսական տարին օրացույցային տարին է)**

Մլրդ ՀՀ դրամ	Փաստացի 2009	Փաստացի 2010	Փաստացի 2011	Փաստացի 2012
<b>Եկամուտներ + արտաքին դրամաշնորհներ</b>	<b>689.9</b>	<b>780.4</b>	<b>880.8</b>	<b>946.2</b>
<b>Եկամուտներ</b>	<b>668.3</b>	<b>749.8</b>	<b>821.4</b>	<b>927.5</b>
<b>Արտաքին դրամաշնորհներ</b>	<b>21.7</b>	<b>30.6</b>	<b>59.4</b>	<b>18.7</b>
<b>Ընթացիկ ծախսեր</b>	<b>718.3</b>	<b>763.1</b>	<b>812.3</b>	<b>875.6</b>
Աշխատանքի վարձատրություն 1/	75.6	78.3	84.7	86.2
Ապրանքներ և ծառայություններ 2/	287.2	298.2	316.6	326.3
Սուբսիդիաներ, տրանսֆերտներ, դրամաշնորհներ 3/	339.3	356.2	375.5	422.4
Տոկոսավճարներ	16.3	30.4	35.5	40.7
<b>Կապիտալ ծախսեր 4/</b>	<b>210.8</b>	<b>191.2</b>	<b>174.2</b>	<b>130.5</b>
<b>Ընդամենը ծախսեր</b>	<b>929.1</b>	<b>954.3</b>	<b>986.5</b>	<b>1006.1</b>
<b>Պակասուրդ</b>	<b>-239.1</b>	<b>-173.9</b>	<b>-105.7</b>	<b>-59.7</b>
<b>Առաջնային պակասուրդ (առանց տոկոսավճարների)</b>	<b>-222.8</b>	<b>-143.4</b>	<b>-70.1</b>	<b>-19</b>
<b>Ֆինանսավորում</b>	<b>239.1</b>	<b>173.9</b>	<b>105.7</b>	<b>59.7</b>
Զուտ արտաքին	354.2	66.5	39.8	54
Զուտ ներքին	-115.1	107.4	65.9	5.7
ՀՆԱ, մլրդ ՀՀ դրամ	3142	3460	3778	3998
Ներքին եկամուտներ, %-ը ՀՆԱ-ում	21.3	21.7	21.7	23.2
Արտաքին դրամաշնորհներ, %-ը ՀՆԱ-ում	0.7	0.9	1.6	0.5
Ընդհանուր ծախսեր, %-ը ՀՆԱ-ում	29.6	27.6	26.1	25.2
Պակասուրդ, %-ը ՀՆԱ-ում	-7.6	-5.0	-2.8	-1.5
Առաջնային պակասուրդ, %-ը ՀՆԱ-ում	-7.1	-4.1	-1.9	-0.5
Աշխատանքի վարձատրություն, %-ը ընդհանուր ծախսերում	8.1	8.2	8.6	8.6

Մյրդ ՀՀ դրամ	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի
	2009	2010	2011	2012
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում, %-ը ընդհանուր ծախսերում	30.9	31.2	32.1	32.4
Սուբսիդիաներ, դրամաշնորհներ, տրանսֆերտներ, %-ը ընդհանուր ծախսերում	36.5	37.3	38.1	42
Տոկոսավճարներ, %-ը ընդհանուր ծախսերում	1.8	3.2	3.6	4
Կապիտալ ծախսեր, %-ը ընդհանուր ծախսերում	22.7	20	17.7	13

1/ Աշխատանքի վարձատրությունը ներառում է աշխատավարձը (համախառն) և սոցվճարները

2/ Ի լրումն ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների, ներառում է նաև «Այլ ծախսերը»

3/ Ներառում է կենսաթոշակները և սոցիալական նպաստները

4/ Սահմանվում է որպես ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր՝ հանած ոչ ֆինանսական ակտիվների գծով իրացումից մուտքերը

Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական ծառայություն և ՖՆ:

Աղյուսակներ 1-ը և 2-ը վկայում են հարկաբյուջետային կայուն վիճակի մասին, որին նպաստել են համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում իրականացված հարկաբյուջետային ճշգրտումները: 2009թ. ՀՆԱ-ի նկատմամբ -7.6%-ի համեմատ 2012թ. ընդհանուր հարկաբյուջետային պակասուրդը նվազել է դառնալով ՀՆԱ-ի -1.5%, որն արդյունք է 2009թ. ՀՆԱ-ի նկատմամբ 29.6%-ի համեմատ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության կրճատման (25.2%): Վերջինս հիմնականում տեղի է ունեցել կապիտալ ծախսերի նվազման հաշվին՝ մասամբ պայմանավորված «Հյուսիս-Հարավ մայրուղի» ծրագրի մեկնարկի ուղացմամբ: Առաջնային պակասուրդը (հանած տոկոսավճարները) 2009թ. -7.1%-ի համեմատ 2012թ. աճել է՝ հասնելով 0.5% մակարդակին: 2009թ. ՀՆԱ-ի նկատմամբ արձանագրված 21.3%-ի համեմատ 2012թ. եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը աճել է մինչև 23.2%՝ մասամբ եկամուտների վարչարարության ուժեղացմանն ուղղված ջանքերի («ԿՑ 13-15», Բաժին 3): Սա, իր հերթին, նվազեցրել է ծախսերի ճշգրտման անհրաժեշտությունը:

### **Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգումը**

Աղյուսակ 2-ում ներկայացված են պետական բյուջեի ընդհանուր ծախսերը տնտեսագիտական դասակարգման ամփոփ հոդվածների տեսքով: Փոքր ինչ փոխվել է աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերի մասնաբաժինը (մոտ 10 տոկոսով): Այլ ընթացիկ ծախսային հոդվածների

մասնաբաժինը զգալիորեն աճել է, մինչդեռ կտրուկ ընկել է կապիտալ ծախսերի մասնաբաժինը՝ ինչը մասամբ պայմանավորված է կապիտալ ծրագրերի, մասնավորապես, «Հյուսիս-Հարավ մայրուղի» ծրագրի իրականացման հետ կապված ուշացումներով:

### **Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգումը**

Աղյուսակ 3-ում ներկայացվում է պետական ծախսերի միտումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգումների: Զգալիորեն աճել է սոցիալական ծառայությունների ոլորտի ընկնող ծախսերի մասնաբաժինը, մինչդեռ էապես նվազել է պաշտպանության և ազգային անվտանգության, տնտեսական ծառայությունների և պետական կառավարման ոլորտներին բաժին ընկնող ծախսերի մասնաբաժինը:

**Աղյուսակ 3. Պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգումը 1/**

	2007	2010	2011	2012	2013
<b>Մասնաբաժինը ընդհանուր ծախսերում (%)</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>
Սոցիալական ծառայություններ	34.9	44.8	46.5	45.9	44.9
Պաշտպանություն և անվտանգություն	23.3	19.1	19.2	19.2	19.5
Տնտեսական ծառայություններ	21.8	17.6	15.3	11	10.6
Պետական կառավարում	9.8	6.2	6.2	6.3	5.8
Այլ ծառայություններ	8.6	8.4	8.6	13.2	14.8
Տոկոսների վճարում	1.6	4	4.3	4.4	4.2

1/ Աղբյուրը՝ 2012-2014թթ., 2011-2013թթ. ՄԺԾԾ-ներ և 2008թ. ՊԾՖԿ գնահատում: Թվերը ներկայացնում են բյուջետավորված/պլանավորված գումարները:

## **2.2. ՊՖԿ իրավական և ինստիտուցիոնալ դաշտը**

### **ՊՖԿ իրավական դաշտը**

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) ՊՖԿ-ն կարգավորող իրավական դաշտը բաղկացած է մի շարք օրենքներից և այլ իրավական ակտերից, որոնք անմիջականորեն բխում են ՀՀ Սահմանադրության դրույթներից: ՊՖԿ ոլորտի հիմնական օրենսդրական ակտերն են «ՀՀ բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Հարկերի մասին», «Գնումների մասին», «Ֆինանսական համահարթեցման մասին», «Ներքին աուդիտի մասին», «ՀՀ Վերահսկիչ պալատի մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքները և այդ օրենքների կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության, ՀՀ ՖՆ-ի, ինչպես նաև

համապատասխան ոլորտներում լիազորված այլ պետական մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերը:

Աղյուսակ 4-ում ներկայացված է ՊՖԿ ոլորտը կարգավորող իրավական դաշտի ընդհանուր նկարագիրը

**Աղյուսակ 4. ՊՖԿ-ի ոլորտը կարգավորող իրավական դաշտը**

Ոլորտ	Նկարագրություն
<p>ՀՀ Սահմանադրություն</p>	<p>Սահմանադրությունը կարգավորում է ՊՖԿ-ի շրջանակը և տարբեր շահագրգիռ կողմերի, օր.՝ ՀՀ Ազգային ժողովի, Կառավարության, Վերահսկիչ պալատի և այլնի փոխհարաբերությունները: Այն սահմանում է նաև բյուջետային գործընթացի հիմնական բաղադրիչներն ու բյուջետային օրացույցի առանցքային ժամկետները:</p>
<p>Բյուջեի կազմում և կատարում</p>	<p>«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը (1997թ., իր հետագա փոփոխություններով) սահմանում է ՀՀ բյուջետային համակարգը և կանոնակարգում է բյուջետային գործընթացը: Այն տարածվում է ՀՀ բյուջետային համակարգի բոլոր մակարդակների բյուջեների վրա՝ ներառյալ ՀՀ պետական և համայնքների բյուջեները: Ի թիվս այլ դրույթների, օրենքը սահմանում է նաև ՄԺԾԾ-ին ներկայացվող հիմնական պահանջները, բյուջետային շրջանակի հետ ՄԺԾԾ-ի կապը, ինչպես նաև ծրագրային բյուջետավորման վերաբերյալ պահանջները:</p> <p>«Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքը (2001թ.) սահմանում է գանձապետական համակարգը, կարգավորում է գանձապետարանի գործունեության հետ կապված հարաբերությունները և նպատակ ունի գանձապետարանի գործունեության հետ կապված հարաբերությունների կարգավորման միջոցով ապահովել ՀՀ և համայնքների ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արդյունավետ կառավարման համակարգի առկայությունը:</p>
<p>Գնումներ</p>	<p>«Գնումների մասին» ՀՀ օրենքը (2010թ.) կարգավորում է պատվիրատուների կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները: Այն տարածվում է պետության, համայնքների, դրանց ենթակա հիմնարկների, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնետաս ունեցող կազմակերպությունների կարիքների համար իրականացվող գնումների գործընթացի վրա:</p>

<p>Ներքին աուդիտ</p>	<p>«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքը (2010թ.) սահմանում է հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի սկզբունքները, բնույթը, շրջանակը, համակարգը, ներքին աուդիտի մասնակիցների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կարգավորում է ներքին աուդիտի կազմակերպման և գործունեության հետ կապված հիմնական հարաբերությունները: Այն տարածվում է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետության կամ համայնքների հիմնարկների, պետական կամ համայնքների ոչ առևտրային կազմակերպությունների և հիսուն տոկոսից ավելի պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպությունների վրա:</p>
<p>Արտաքին վերահսկողություն</p>	<p>«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը (2006թ.) սահմանում է ՀՀ վերահսկիչ պալատի գործունեության իրավական հիմքերը, սկզբունքները, հիմնական խնդիրները, գործառույթները, իրավասությունները, վերահսկիչ պալատի կառուցվածքը, ֆինանսական անկախությունը, գործունեության տարեկան ծրագրերի հաստատման և հաշվետվությունների ներկայացման հետ կապված հարաբերությունները, վերահսկողության ձևերը և տեսակները, այն իրականացնելու կարգը և պայմանները, վերահսկիչ պալատի կողմից տեղեկատվության տրամադրման կարգը, վերահսկողություն իրականացնող աշխատակիցների հիմնական իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, վերահսկիչ պալատում պետական ծառայության, ինչպես նաև պալատի գործողությունների բողոքարկման կարգը և համագործակցությունն այլ մարմինների հետ:</p>
<p>Հարկային օրենսդրություն</p>	<p>«Հարկերի մասին» ՀՀ օրենքը (1997 թ.) սահմանում է Հայաստանի Հանրապետությունում հարկի հասկացությունը և հարկատեսակները, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության (այսուհետ՝ հարկային օրենսդրություն) և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի խախտումների համար պատասխանատվությունը, ինչպես նաև այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում է հարկերի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերը:</p>

2008թ. ՊԾՖՀ գնահատումից ի վեր իրավական դաշտում կատարված հիմնական փոփոխությունները և դրանց արդյունքները ներառել են հետևյալը.

Գնումների ոլորտում 2010 թվականին ընդունված օրենքով գնումների գործընթացն ամբողջովին ապակենտրոնացվել է, ստեղծվել է Գնումների բողոքարկման խորհուրդը, որը հանդիսանում է գնումների գործընթացում պատվիրատուների ենթադրյալ անօրինական գործողությունների կամ անգործության վերաբերյալ բողոքները քննող մարմինը: Ստեղծվել են իրավական հիմքեր թղթային եղանակով գնումներից դեպի էլեկտրոնային գնումներ անցում կատարելու համար:

*Ներքին աուդիտի ոլորտում 2010թ. նոր օրենքի ընդունմամբ* վերացվել է գլխավոր աուդիտորի ինստիտուտը, սահմանվել է ներքին աուդիտի կանոնակարգման պահանջը, իսկ 2013թ. հունվարին ներդրվել է ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգը՝ ներքին աուդիտի որակի նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով:

*Հարկային օրենսդրության* հիմնական փոփոխությունները վերաբերում են ՓՄՁ-ների հարկային հաշվառման ընթացակարգերի պարզեցմանը և հստակեցմանը: Այս առումով անցած հինգ տարիների ընթացքում կատարված փոփոխությունների արդյունքում ՓՄՁ-ների համար ներդրվել է շրջանառության հարկի համակարգը, ինչպես նաև արտոնագրային վճարների համակարգը, որոնք ենթադրում են հարկ վճարողների հարկային պարտավորությունների հաշվառման պարզեցված ընթացակարգեր: Կարևոր փոփոխություն է նաև եկամտահարկի և պարտադիր սոցիալական վճարների փոխարինումը եկամտային հարկով:

*Բյուջետային օրենսդրության առումով*, ծրագրային բյուջետավորման աստիճանական ներդրումն ապահովելու նպատակով 2013թ. փոփոխություններ են կատարվել «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում՝ նախատեսելով տարեկան պետական բյուջեում նոր հատվածների ներառում, որոնք ֆորմալ առումով ներկայացնում են բյուջետային ծախսերը ծրագրային ձևաչափով (ներառելով կատարողական ցուցանիշները):

2008 թվականից *արտաքին վերահսկողության ոլորտում* կատարված փոփոխությունների արդյունքում Վերահսկիչ պալատի կողմից իրականացվող վերահսկողության ընթացքում կազմված արձանագրությունները և ընթացիկ հաշվետվությունները ուղարկվում են Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազություն, եթե առկա են քրեաիրավական բնույթի խախտումների կասկածներ: Ի լրումն, ՎՊ-ի տարեկան հաշվետվությունը Ազգային ժողովում քննարկումից հետո հրապարակվում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում», տեղադրվում Վերահսկիչ պալատի կայքում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (<http://www.azdarar.am>):

ՊԼՖՀ-ի ռազմավարությունը դեռևս պաշտոնապես հաստատված չէ, իսկ նշված ռազմավարության իրավական հիմքը հանդիսացող «Ֆինանսական կառավարման հսկողության մասին» օրենքը դեռևս չի ընդունվել:

ՊՖԿ համակարգի առանցքային տարրերում կատարված փոփոխությունները ավելի մանրամասն քննարկվում են Բաժին 3-ում, կատարողական համապատասխան ցուցանիշների տակ:

**ՊՖԿ-ի ինստիտուցիոնալ դաշտը**

ՀՀ Սահմանադրության (1995թ.(2005թ.փոփ.)) համաձայն, Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Հայաստանի Հանրապետությունը բաղկացած է մարզերից և համայնքներից, որտեղ իրականացվում է պետական կառավարում և տեղական ինքնակառավարում: Մարզերում պետական կառավարումն իրականացնում է ՀՀ կառավարությունը՝ իրեն ենթակա տարածքային կառավարման մարմինների (մարզպետարանների) միջոցով, իսկ համայնքներում իրականացվում է տեղական ինքնակառավարում, ընդ որում համայնքներն իրենց ինքնակառավարման իրավունքն իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով:

Ինստիտուտ	Ինստիտուտի դերը
ՀՀ Նախագահ	ՀՀ Նախագահը պետության գլուխն է, որը հետևում է ՀՀ Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:
Դատական իշխանություն	ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: ՀՀ-ում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ, վերաքննիչ դատարաններ և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ: ՀՀ բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով:



<p>ՀՀ Ազգային ժողով</p>	<p>ՀՀ Ազգային ժողովը իրականացնում է օրենսդիր իշխանությունը: Ի թիվս Ազգային ժողովի Սահմանադրությամբ սահմանված այլ լիազորությունների, վերջինս հաստատում է պետական բյուջեն, վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ, ՀՀ վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ քննարկում է և հաստատում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը, ՀՀ կառավարության առաջարկությամբ սահմանում է ՀՀ վարչատարածքային բաժանումը (ներառյալ ՀՀ վարչատարածքային միավորների՝ ՀՀ մարզերի և համայնքների ցանկը, դրանցից յուրաքանչյուրում ընդգրկվող բնակավայրերը, ՀՀ համայնքների տարածքները և սահմանները):</p>
<p>Գործադիր իշխանություն</p>	<p>ՀՀ կառավարությունը մշակում և իրականացնում է ՀՀ ներքին քաղաքականությունը, իսկ ՀՀ արտաքին քաղաքականությունը մշակում և իրականացնում է ՀՀ Նախագահի հետ համատեղ: ՀՀ կառավարությունը Սահմանադրությամբ սահմանված կարգով ՀՀ Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր ծրագիրը, ՀՀ Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում պետական բյուջեի նախագիծը, ապահովում է պետական բյուջեի կատարումը, որի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում ՀՀ Ազգային ժողով, կառավարում է պետական սեփականություն հանդիսացող գույքը, իրականացնում է ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականություն, իրականացնում է պետական քաղաքականությունը գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնապահպանության բնագավառներում, ապահովում է պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացումը, ապահովում է հասարակական կարգի պահպանությունը, իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքներով սահմանած այլ գործառնություններ և լիազորություններ:</p>

<p>ՀՀ ֆինանսների նախարարություն (ՖՆ)</p>	<p>ՖՆ-ն գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է պետության եկամուտների ձևավորման, պետական ֆինանսների կառավարման բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը: Ստորև ներկայացվում են ՖՆ-ի այն գործառույթները, որոնք անմիջականորեն առնչվում են ՊՖԿ համակարգին.</p> <p>Մակրոտնտեսական հիմնական նպատակային ցուցանիշների որոշումն ու սահմանումը, մակրոտնտեսական ծրագրավորումը, մակրոտնտեսական ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացումը, ՀՀ դրամավարկային քաղաքականության հետ համակարգված հարկաբյուջետային քաղաքականության մշակումը և իրականացումը.</p> <p>Հարկային և այլ եկամուտների միջնաժամկետ և հեռանկարային քաղաքականության մշակումը, հարկային և մաքսային վարչարարության մեթոդաբանության մշակումը.</p> <p>Առաջիկա տարվա բյուջետային գործընթացի աշխատանքների կազմակերպումը, այդ թվում ՀՀ միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, բյուջետային ֆինանսավորման համապատասխան հայտերի լրացման և համայնքային բյուջեների նախագծերի կազմման հարցերում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղորդման տրամադրումը, պետական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված բյուջետավորման ժամանակակից եղանակների կիրառումը,</p> <p>Ներքին աուդիտի բնագավառում մեթոդաբանության մշակումը, ներքին աուդիտորների ուսուցման և շարունակական մասնագիտական վերապատրաստման համակարգի առկայության ապահովումը,</p> <p>Գնումներին վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների համակարգումը և ընդունումը կամ դրանց ներկայացումը հաստատման, գնումների գործընթացի մեթոդական ղեկավարման կազմակերպումը և գնումների գործի կազմակերպման հարցում պատվիրատուներին մեթոդական օժանդակության ցուցաբերումը,</p> <p>Պատվիրատուների գնումների համակարգողների մասնագիտական ուսուցման, շարունակական վերապատրաստման և որակավորման գնահատման համակարգի առկայության ապահովումը, գնումների որակավորված մասնագետների (անձանց) ցուցակի հրապարակումը,</p> <p>Գնումների պաշտոնական տեղեկագրի հրապարակման աշխատանքների կազմակերպումը,</p> <p>Հաշվապահական հաշվառման և աուդիտի ստանդարտների մշակումը, հաշվապահական հաշվառման հաշվային պլանի և ֆինանսական հաշվետվությունների ձևերի մշակումն ու հաստատումը, հաշվապահների և աուդիտորների որակավորման կազմակերպումը և անցկացումը:</p> <p>ՖՆ-ի կազմակերպչական կառուցվածքն արտացոլում է իր պարտականությունները (ներկայացված են Հավելված Դ-ում ցույց տրված կազմակերպչական սխեմայում):</p>
--	---

«Ֆինանսական կառավարման հսկողության մասին» օրենքը, որն ըստ նախատեսվածի պետք է ընդունվի ՊՆՖՀ-ի ռազմավարության շրջանակում, ծրագրային/արդյունքների վրա հիմնվող բյուջետավորման հետագա զարգացումը և դրա հետ կապված՝ ծախսերի հաշվառումը ենթադրում են էական փոփոխություններ ՊՆՖՀ-ի ինստիտուցիոնալ դաշտում:

ՊՈԱԿ-ների հետ կապված իրավահարաբերությունները հիմնականում կարգավորվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» 2001թ. հոկտեմբերի 23-ին ընդունված ՀՀ օրենքով: Այժմ Հայաստանի Հանրապետությունում գործում են մոտ 1800 ՊՈԱԿ-ներ, որոնք մասամբ ֆինանսավորվում են պետական բյուջեից, ինչպես նաև կարող են իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, որից առաջացած շահույթն օգտագործվում է նրանց կանոնադրական նպատակների իրականացման համար:

### 2.3. ՊՆՖՀ-ի բարեփոխումների հիմնական մարտահրավերները

Ինչպես նշվում է Բաժիններ 3-ի և 4-ի համապատասխան հատվածներում, ՊՆՖՀ բարեփոխումներն իրականացվում են, ինչպես նաև ապագայում նախատեսվում են իրականացվել ՊՆՖՀ գերթ է բոլոր ուղղություններով:

Կառավարության առջև ծառայած առանձնակի մարտահրավեր է հանդիսանում առկա ֆինանսական կառավարման համակարգին աջակցող ՏՏ համակարգի հզորացումը: 2011թ. Համաշխարհային բանկի հանձնարարությամբ կազմված հաշվետվությունում՝ նշվում են մի շարք հիմնական հարցեր՝ կապված գործող համակարգի հետ, մասնավորապես, գլխավոր գրքի հետ միացված ավտոմատ համակարգերի և մոդուլների մասով, և դրանով պայմանավորված, տարեկան ֆինանսական հավաստի հաշվետվությունների ժամանակին կազմմանը աջակցող երկակի գրանցմամբ հաշվապահական հաշվառման համակարգի բացակայության մասով (այս հարցը քննության է առնվում Բաժին 3-ի «ԿՑ-25» ցուցանիշին նվիրված մասում): Այնուամենայնիվ, գործող համակարգն ապահովում է իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ ամբողջական տվյալների գրանցումը միասնական հաշվառման համակարգում: Ավելին, ՀՀ հաշվային պլանը ներառում է բոլոր տիպի գործարքները, ինչը թույլ է տալիս դասակարգել յուրաքանչյուր առանձին գործարք և կազմել համապատասխան հաշվետվությունները:

<sup>1</sup> ««ԿՖԿՏՀ»-ի իրականացման բարձրաստիճան ճարտարապետություն և բիզնես գործընթացների ուսումնասիրություն» պատրաստված «Corporate Solutions»-ի կողմից: Հարցերը քննության են առնվում նաև Համաշխարհային բանկի «ՊՆՖՀ-ի բարեփոխումների գերակայությունները» փաստաթղթում, 2010թ. նոյեմբեր:

Դեռևս որոշում չի կայացվել այն մասին, թե ինչպես լավագույնս հզորացնել ՊՖԿ-ի նպատակներով կիրառվող ՏՏ համակարգերը: Փոփոխությունները կարող են կապված լինել դժվարությունների, մեծ ծախսերի և աշխատանքների ընդհատումների հետ, ուստի հարկ է նախապես ամբողջականորեն պլանավորել փոփոխությունների կառավարումը և դրանք իրականացնել ՊՖԿ ռազմավարությանը և, վերջինիս ներքո՝ ՊԼՖՀ ռազմավարությանը համահունչ:

Որոշ փոփոխություններ արդեն իսկ կատարվել են, և դրանց արդյունքում բարելավվել է գործող համակարգի արդյունավետությունը : Օրինակ՝ 2010թ. «Client Treasury» ծրագրային համակարգի ներդրման շնորհիվ ծախսող միավորները կարող են առաջարկվող գործարքների տվյալները մուտքագրել անմիջականորեն Կենտրոնական գանձապետարանի համակարգում, մինչդեռ նախկինում դա արվում էր տեղական գանձապետական բաժինների (ՏԳԲ-ներ) միջոցով: Ներդրվել է էլ-գնումների համակարգը, որը դեռևս լիովին չի գործում: Նախատեսվում է, որ պլանավորված գնումների և հաշիվ-ապրանքագրերի վերաբերյալ տվյալները նշված համակարգի միջոցով հասանելի կլինեն գանձապետական համակարգում, որի արդյունքում կհեշտանա ծախսային պարտավորությունների նկատմամբ հսկողությունը, դրամական միջոցների կառավարումը և կնվազի վճարման հանձնարարականների չֆինանսավորման հավանականությունը:

Կառավարության արջև ծառացած մի այլ սկզբունքային մարտահրավեր է աստիճանական և հետևողական քայլերի կատարման միջոցով Ծրագրային բյուջետավորման ներդրումը բյուջետավորման բոլոր փուլերում (բյուջեի պլանավորում և կատարում, բյուջեի կատարման հաշվետվություն, հաշվապահական հաշվառում, կատարման մոնիտորինգ և աուդիտ)՝ պետական բյուջեի կատարման գանձապետական գործընթացներից ուշադրությունն ուղղելով քաղաքականության սահմանված նպատակների իրագործմանը և «արժեք դրամի դիմաց» սկզբունքի ապահովմանը: Այդ կապակցությամբ կարևորվում է նշված անցման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ և կառուցվածքային փոփոխությունների նախագծումը և համակարգված իրականացումը: Անշուշտ, դրված նպատակը շատ հավակնոտ է՝ ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ լիարժեք ծրագրային բյուջետավորման անցման համար՝ սկսած 2018 թվականից:

Այդ ուղղությամբ իրականացված որոշ միջոցառումներից են Ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ 2012 թվականի բյուջետային գործընթացում բյուջետային ծրագրեի կառուցվածքի վերփոխումը և ծրագրային դասիչների նոր համակարգի ներդրումը: Արդյունքում բյուջետային համակարգում առկա ավելի քան 800 ծրագրերը համախմբվել են 170 ծրագրերի ներքո: Դրանցից մոտ 70-ի համար, որոնք բյուջետային տեղեկատվությունն օգտագործողների և հանրության համար առավել հետաքրքրություն են ներկայացնում,

ստեղծվում է բյուջետային ծրագրերի նկարագրերի (անձնագրերի) համակարգ: Նախտեսվում է շարունակել ոչ ֆինանսական ցուցանիշների համակարգի վերանայման և լրամշակման աշխատանքները, ինչպես նաև իրականացնել հաշվային պլանի ծրագրային սեգմենտի մշակումը: Օրենքով ամրագրվել են Ծրագրային բյուջետավորման բարեփոխումների արդեն իսկ ձեռքբերված արդյունքները, ինչը հիմքեր է ստեղծում այդ բարեփոխումների հետագա ծավալման համար:

### 3. ՊՖԿ համակարգերի, գործընթացների և կառույցների գնահատում

#### 3.1. Ներածություն

Հաջորդող ենթաբաժիններում ներկայացվում է ՊՖԿ ԿԶԾ-ում (պետական ֆինանսների կառավարում – կատարողականի չափման շրջանակ) ներառված ՊՖԿ կատարողականի ցուցանիշների մանրամասն գնահատականը: Գնահատման մեթոդաբանությունը հաշվի է առնում միայն ներկայիս իրավիճակը և չի ներառում այն ընթացիկ ու պլանավորված գործողությունները, որոնց արդյունքում հետագա գնահատումների ժամանակ կարող են տրվել ավելի բարձր գնահատականներ: Ինչևէ, այդ տեղեկատվությունն ամփոփ տեսքով ներկայացվում են յուրաքանչյուր բաժնի նկարագրական հատվածի վերջում:

ՊՖԿ գործընթացի հիմնական տարրերը գնահատելու նպատակով, յուրաքանչյուր ցուցանիշ պարունակում է մեկ կամ ավելի չափումներ: Կիրառվել է գնահատման երկու մեթոդ: Մեթոդ 1-ը (Մ1) կիրառվել է մեկ չափում պարունակող բոլոր ցուցանիշների և մեկից ավելի չափում պարունակող այն ցուցանիշների դեպքում, որոնց դեպքում ցուցանիշի որևէ չափման գծով թույլ կատարողականը կարող է թուլացնել միևնույն ցուցանիշի այլ չափումների լավ կատարողականի ազդեցությունը (այսինքն՝ գնահատվում է ելնելով տվյալ ցուցանիշի գծով չափումների ամենաթույլ օղակի գնահատականից): «Պլյուսե նշանը դրվում է այն դեպքում, երբ մյուս չափումների գնահատականներն ավելի բարձր են:

Մեթոդ 2-ը (Մ2) հիմնվում է ցուցանիշի առանձին չափումների գնահատականների միջինացման վրա: Այն նախատեսված է մեկից ավելի չափումների պարունակող այն ցուցանիշների համար, որոնց դեպքում ցուցանիշի որևէ չափման գծով ցածր գնահատականը անպայմանորեն չի թուլացնում միևնույն ցուցանիշի այլ չափումների բարձր գնահատականների ազդեցությունը: Ցուցանիշի ընդհանուր գնահատականի համար օգտագործվել է 2, 3 և 4 չափումներ ունեցող ցուցանիշների փոխարկման աղյուսակը: ՊԾՖՀ ձեռնարկում («ՊՖԿ կատարողականի չափման շրջանակե [www.pefa.org](http://www.pefa.org)) ներկայացվում է մանրամասն տեղեկատվություն գնահատման մեթոդաբանության վերաբերյալ: 2011թ. հունվարից ուժի մեջ է մտել ԿՑ 2, 3 և 19 ցուցանիշների գնահատման վերանայված մեթոդաբանություն:

Գնահատականի մոտ կարող է դրվել վերընթաց սլաք (▲) այն դեպքում, երբ ընթացքի մեջ է գտնվում ՊՖԿ-ի բարելավմանն ուղղված որևէ միջոցառում, որի ավարտից հետո տվյալ չափմանը կամ ցուցանիշին կարող է տրվել ավելի բարձր գնահատական:

ՊԾՖՀ գնահատումն ուսումնասիրում է ՊՖԿ-ի կատարողականն առկա պայմաններում: Գնահատման նպատակով ուսումնասիրվող/կիրառվող համապատասխան ժամանակահատվածը կախված է ցուցանիշի տեսակից: Որոշ ցուցանիշների համար համապատասխան ժամանակահատված է համարվում վերջին ավարտված ֆինանսական տարին (2012թ.), օրինակ՝ ԿՑ 4, 7, 9, 24-26, 28: Որոշ ցուցանիշների համար (օր.՝ ԿՑ 1-3) սահմանված ժամանակաշրջանը վերջին 3 ֆինանսական տարիներն են (2010-2012թթ.), իսկ որոշ ցուցանիշների համար՝ մինչև գնահատման պահն ընկած ժամանակահատվածը (օրինակ՝ ԿՑ 13-14, որոնք վերաբերում են եկամուտների վարչարարությանը, և ԿՑ-18 ցուցանիշի առաջին երեք չափումները, որոնք վերաբերում են աշխատավարձի վերահսկմանը): Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ՊԾՖՀ-ի քարտուղարության հրապարակած «Ցուցանիշների գնահատմանն աջակցող տեղեկատվության աղբյուրների և ապացույցների վերաբերյալ ուղեցույցներից:

Այս գնահատումը հանդիսանում է հերթական գնահատում, ուստի կարևոր է ապահովել նոր և հին գնահատումների միջև համեմատությունների հիմնավորվածությունը և «նմանընդ նմանիե հետ համադրումները: Հնարավոր է, որ այդ համեմատությունները հիմնավոր չլինեն, եթե որևէ ցուցանիշի նոր գնահատման շրջանակը տարբերվի հին շրջանակից: Սա վերաբերում է «ԿՑ-4»-ին (ծախսային ապառքներ), «ԿՑ 7»-ին (արտաբյուջետային գործառնություններ) և «ԿՑ-24»-ին (տարվա ընթացքում կազմվող բյուջեի կատարման հաշվետվությունների որակ), քանի որ 2008թ. գնահատման մեջ ՊՈԱԿ-ները ներառվել էին կենտրոնական կառավարության բյուջեի շրջանակում, սակայն 2013թ. գնահատման ժամանակ դրանք հաշվի չեն առնվել (այսինքն՝ սույն հաշվետվությունում ՊՈԱԿ-ները ճանաչվել են որպես արտաբյուջետային գործառնություններ իրականացնող միավորներ): Բացի այդ, համեմատությունները կարող են հիմնավորված չլինել նաև այն դեպքերում, երբ 2008թ. ՊԾՖՀ-ում մի շարք ցուցանիշների գծով տրված գնահատականները սույն գնահատման շրջանակներում համարվել են որպես նախկինում տրված ոչ ճիշտ գնահատականներ (այս հարցը հակիրճ քննարկվում է «Ամփոփ գնահատումե բաժնում»): 2008թ. ՊԾՖՀ-ի իրականացման պահի դրությամբ ՊԾՖՀ-ի մեթոդաբանությունը դեռևս համեմատաբար նոր էր և գնահատողների կողմից վերջինիս ըմբռնումը կատարյալ չէր: Այդ իսկ պատճառով կարելի է ասել, որ դրանում թույլ տրվել որոշ սխալներ (սա վերաբերում է նաև բազմաթիվ այլ ՊԾՖՀ գնահատումներին):

Համեմատությունները խնդրահարույց են նաև 2011թ. հունվարին վերանայված մեթոդաբանությամբ գնահատվող երեք ցուցանիշներից երկուսի դեպքում՝ «ԿՑ 2» (շեղում ծախսերի կազմում) և «ԿՑ 19» (պետական գնումներ): 2008թ. ՊԾՖՀ-ում տրվող «ԿՑ-2ե-ի գնահատականի

վերանայման համար պահանջվում է 2005-2007թթ. բյուջեների պլանային ու փաստացի տվյալների մուտքագրում «Excel» աղյուսակում, ինչը ժամանակատար աշխատանք է: «ԿՑ 19»-ի չափումներ (i)-ի, (iii)-ի և (iv)-ի գնահատականների վերանայումը հնարավոր է, սակայն գնումների ոչ մրցակցային ձևերի կիրառման հիմնավորմանը վերաբերող և նախորդ մեթոդաբանությամբ գնահատված չափում (ii)-ի դեպքում գնահատականի վերանայումը կապված է դժվարությունների հետ: Ի տարբերություն նախորդ մեթոդաբանության, վերանայված մեթոդաբանությամբ պահանջում են ստույգ քանակական տվյալներ: Եկամուտների կատարողականին վերաբերող «ԿՑ-3»-ի մեթոդաբանությունը ևս վերանայվել է (եկամուտների թերկանխատեսումը, ինչպես նաև գերկանխատեսումը հանգեցնում է գնահատականի իջեցմանը), սակայն 2008թ. ՊԾՖՀ-ում «ԿՑ-3»-ի համար տրված գնահատականի վերանայման կարգը պարզ է:

Յուրաքանչյուր ցուցանիշի նկարագրական մասին հաջորդում է գնահատման աղյուսակ, որտեղ ներկայացվում է յուրաքանչյուր չափման գնահատականը, նրա հիմնավորումը, իսկ գնահատականի փոփոխման դեպքում՝ վերջինիս բացատրությունը: Յուրաքանչյուր չափման գնահատման նպատակով կիրառված չափանիշները ներկայացվում են սույն հաշվետվության «Ամփոփ գնահատականե բաժնի աղյուսակում:

Ֆինանսական տարին համընկնում է օրացույցային տարվա հետ, և ուստի աղյուսակներում և տեքստում նշվող 2010թ., 2011թ. և 2012թ. (2013թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կատարված գնահատման դրությամբ ավարտված վերջին երեք ֆիսկալ տարիները) վերաբերում են ինչպես ֆիսկալ, այնպես էլ օրացույցային տարիներին:

### 3.2. Բյուջեի արժանահավատությունը

Պետական ֆինանսների կառավարման լավ պրակտիկան ընդգծում է բյուջեի արժանահավատության կարևորությունը, որպեսզի կառավարության պլանավորված քաղաքականություններն ի կատար ածվեն: Բյուջեի արժանահավատությունը պահանջում է փաստացի բյուջետային կատարումների համապատասխանություն քվեարկված բյուջեներին և պատշաճ ֆիսկալ կարգապահություն: Այս խմբի ցուցանիշները գնահատում են, թե որքանով է բյուջեն իրատեսական և իրականացված ըստ մտադրվածի:



**Բյուջեի արժանահավատության կատարողականի ցուցանիշների գնահատումը**

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-1 (Մ1). Ընդհանուր ծախսերի կատարողականը	<b>B</b>	<b>A</b>	<b>Կատարողականը բարելավվել է՝</b> մասամբ եկամուտների ու ծախսերի առավել իրատեսական պլանավորման շնորհիվ:
ԿՑ-2(Մ1). Ծախսերի կազմի փոփոխությունը	<b>«NA»</b> («A»՝ հին մեթոդաբանությամբ)	<b>B+</b> (վերանայված մեթոդաբանությամբ)	<b>Մեթոդաբանությունը փոխվել է:</b> Հնարավոր չէ նոր մեթոդի կիրառմամբ վերագնահատել 2008թ. գնահատականը: Այդ իսկ պատճառով կատարողականի փոփոխության գնահատումն անհնարին է: Տարբերությունը պայմանավորված է հավելյալ եկամուտների հաշվին որոշ մարմինների ֆինանսավորման աճով (2010թ.) և հիմնականում ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից որոշ մարմիններին տրամադրված ֆինանսավորմամբ:
ԿՑ-3(Մ1). Ներքին եկամուտների կատարողականը	<b>B</b> (վերանայված մեթոդաբանությամբ, հինով՝ «A»)	<b>A</b> (վերանայված մեթոդաբանությամբ)	<b>Կատարողականը բարելավվել է՝</b> մասամբ եկամուտների կանխատեսման, վարչարարության և օրենսդրության կատարելագործման արդյունքում:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-4 (Մ1). Ծախսային ապառքների ծավալը	A  («B+» նախորդ ծածկույ- թում)	A	<p><b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> Վերջին տաս տարում ծախսային ապառքներ գործնականում չեն կուտակվում, ինչին նպաստել է պետական բյուջեի եկամուտների հավաքագրման բարձր կատարողականը, ինչպես նաև ծախսային պարտավորությունների կուտ համակարգը, որը հիմնվում է չփոփոխվող օրենսդրական դրույթների վրա: Գանձապետական համակարգի միջոցով գեներացվող հաշվետվական «F254» ձևի միջոցով մոնիտորինգի են ենթարկվում ծախսային պարտավորությունները, մատակարարներին կատարված կանխավճարները, վճարման հանձնարարականներում նշվող գումարները և փաստացի վճարումները, իսկ ապառքներն արտացոլում են այս երեքի տարբերությունը:</p> <p>ՊՈԱԿ-ների ապառքները չեն արտացոլվել 2013թ. գնահատման մեջ, բայց դրանք ներառվել էին 2008թ. ՊԾՖՀ-ի շրջանակում:</p>

### 3.2.1. ԿՑ-1. Փաստացի ընդհանուր ծախսեր՝ համեմատած սկզբնական հաստատված բյուջեի հետ

Այս ցուցանիշի գնահատման նպատակով համեմատությունը կատարվել է Ազգային ժողովի կողմից սկզբնական հաստատված պետական բյուջեի առաջնային ծախսերի հետ: ՀՀ 2010-2012թթ. պետական բյուջեի փաստացի և սկզբնական հաստատված բյուջեի առաջնային ծախսերի շեղումը (բացարձակ արտահայտությամբ) կազմում է համապատասխանաբար 1.4%, 1.9% և 1.7% (2005-2007թթ.՝ համապատասխանաբար 6.7%, 4.9%, 7.4%):

**Աղյուսակ 5. Ընդհանուր առաջնային ծախսերի բյուջետային կատարողականի մակարդակը**

ՀՀ դրամ մլն	2010թ.	2011թ.	2012թ.
Սկզբնական բյուջեի ընդհանուր առաջնային ծախսերը	794,866.1	872,633.5	899,998.0
Փաստացի առաջնային ծախսերը	805,957.2	855,749.6	884,286.7
Փաստացի և սկզբնական բյուջետավորված առաջնային ծախսերի տարբերությունը	11,091.1	-16,883.9	-15,711.3
Սկզբնական բյուջետավորված առաջնային ծախսերի տոկոսային տարբերությունը (%)	1.4%	-1.9%	-1.7%

*Աղբյուրը՝* Ֆինանսների նախարարություն

*Նշում՝* Առաջնային ծախսերը սահմանվում են որպես կենտրոնական կառավարության բյուջեի (տարեկան պետական բյուջեի մասին օրենքի համաձայն) ընդհանուր ծախսեր՝ հանած պարտքի սպասարկման վճարները, ինչպես նաև ԶԳ-ների կողմից ֆինանսավորվող նախագծերը/ծրագրերը: Դրանք չեն ներառում արտաբյուջետային ծախսերը և առանց սահմանափակումների կատարվող ծախսերը (տես «ԿՑ-3»-ին նվիրված մասի տողատակի ծանոթագրություն 2-ը):

2010թ. ծախսերի 1.4% գերակատարումը պայմանավորված է ներքին աղբյուրներից ստացված եկամուտների 4.6 տոկոս գերակատարմամբ (ԿՑ-3): 2011թ. և 2012թ. համապատասխանաբար 1.9%-ով և 1.7%-ով ծախսերի թերակատարումը արդյունք էր որոշ ծրագրերով նախատեսված միջոցների տնտեսման, ինչպես նաև առանձին ծրագրերի շրջանակներում գնումների հետ կապված վճարումների հետաձգման և ներքին աղբյուրներից ֆինանսավորվող որոշ կապիտալ ծրագրերի իրականացման դանդաղ ընթացքի: Բոլոր երեք տարիներին բացարձակ արտահայտությամբ շեղումը եղել է 5 տոկոսից ցածր:

**ԿՑ-1. Ծախսային ընդհանուր արդյունքներ՝ համեմատած սկզբնական հաստատված բյուջեի հետ**

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-1	B	A	<i>Կապարողականը բարելավվել է՝ մասամբ եկամուտների ու ծախսերի առավել իրատեսական պլանավորման շնորհիվ: 2010-2012թթ. պետական բյուջեի փաստացի և պլանային առաջնային ծախսերի շեղումը համապատասխանաբար 1.4%, -1.9% և -1.7% է: 2005-2007թթ. բյուջեների համար շեղումը համապատասխանաբար 6.7%, 4.9% և 7.4% է:</i>
(i)	B	A	Վերջին երեք տարիներին փաստացի առաջնային ծախսերի շեղումը հաստատված բյուջեից չի գերազանցել բյուջեով նախատեսված ծախսերի 5%-ը:

**3.2.2. ԿՑ-2. Ծախսային կազմի փոփոխությունը**

Այս ցուցանիշի գնահատումն իրականացվել է ըստ գերատեսչական դասակարգման: 2010-2012թթ. պետական բյուջեի առաջնային փաստացի ծախսերի կառուցվածքի շեղումը կազմել է համապատասխանաբար 4.9%, 6.4% և 6.4%: 2010-2012թթ. շեղումը պայմանավորված է հավելյալորդային եկամուտներով, Կառավարության իրավասությունների շրջանակում տրամադրված ավելի բարձր հատկացումներով և ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից կատարված հատկացումներով, իսկ 2012թ.՝ նաև պետական հիմնարկների ու կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովմամբ (նշված փաթեթը ներառված չէր հաստատված բյուջեում): Ինչպես ցույց է տրվում Հավելված Ա-ում, «Զբաղիված ծախսեր» կատեգորիայից հատկացումները (որը ներառում է ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից ծախսերը և պաշտոնական գործուղումների, պատվիրակությունների ընդունելությունների և պետական հիմնարկների ու կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման հետ կապված ծախսերը) 2010-2012թթ. համապատասխանաբար կազմել են 22.3 մլրդ, 26.3 մլրդ և 42.4 մլրդ ՀՀ դրամ:

**Աղյուսակ 6. ԿՑ-2. Ծախսային կազմի փոփոխությունը և միջին պատահականությունը**

ՖՏ	Շեղումների կազմի փոփոխություն (%) բյուջեում) 1/	Զբաղիված ծախսեր 2/
2010	4.9%	0%
2011	6.4%	0%
2012	6.4%	0%

1/Սահմանվում է որպես յուրաքանչյուր գերատեսչության «ճշգրտված» այն բյուջեից շեղումների բացարձակ ընդհանուր գումար, որը հանդիսանում է տվյալ գերատեսչության սկզբնական բյուջեն՝ գումարած/հանած ընդհանուր շեղումը (գնահատվում է 2011թ. հունվարից ուժի մեջ մտած «ԿՑ-2»-ի չափման վերանայված մեթոդաբանությամբ): Հին մեթոդի կիրառումը հանգեցնում էր միևնույն նշանի (դրական կամ բացասական) շեղումների դեպքում ավելի բարձր գնահատականի նշանակմանը, իսկ տարվա ընթացքում պահուստային ֆոնդից նախարարություններին կատարվող հատկացումների դեպքում՝ ավելի ցածր գնահատականի նշանակմանը, քանի որ վերջիններս հաշվի են առնվել հաշվարկներում երկու անգամ:

2/Գնահատականը «A» է, եթե, ինչպես Հայաստանի պարագայում, «Չբաշխված ծախսեր» կատեգորիայից միջոցները բաշխվում են ըստ ճյուղային նախարարությունների:

*Աղբյուրը՝* Տարեկան պետական բյուջեի կատարման հաշվետվություններ ([www.minfin.am](http://www.minfin.am))

Գնահատումն իրականացվել է Հավելված Ա-ում բերված աղյուսակում գերատեսչական դասակարգմամբ (ՊԾՖՀ մեթոդաբանությամբ առաջարկվող ամենախոշոր 20 գերատեսչությունների և որպես 21-րդ գերատեսչություն ներկայացված մնացածի հանրագումար) ներկայացված տվյալների հիման վրա, որոնց աղբյուրն են համապատասխան տարվա բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները:

**ԿՑ-2. Փաստացի ծախսերի կառուցվածքը՝ համեմատած սկզբնական հաստատված բյուջեի հետ**

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-2	«NA» (հին մեթոդաբանությամբ՝ «A»)	B+ (վերանայված մեթոդաբանությամբ)	<i>2011թ. հունվարին գնահատման մեթոդաբանությունը փոփոխվել է, և հետևաբար երկու ՊԾՖՀ-ների գնահատականները համադրելի չեն:</i> Հնարավոր չէր վերանայված մեթոդաբանությունը կիրառել 2008թ. ՊԾՖՀ-ի գնահատման ժամանակ օգտագործված տվյալների նկատմամբ: Տարբերությունը պայմանավորված է հավելյալ եկամուտների հաշվին որոշ մարմինների ֆինանսավորման աճով (2010թ.) և գլխավորապես ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից որոշ մարմիններին տրամադրված ֆինանսավորմամբ:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(i)	«ՆԱ» (հին մեթոդաբանության մեջ՝ «Ա»)	В	Վերջին երեք տարիներից երկուսում առաջնային փաստացի ծախսերի կառուցվածքի շեղումը գերազանցել է 5%-ը, սակայն չի գերազանցել 10%-ը:
(ii)	«ՆԱ» (հին մեթոդաբանության մեջ չափում (ii)-ը բացակայում է)	А	Հաստատված բյուջեում չտեղաբաշխված ծախսային հոդվածները, ներառյալ պահուստային ֆոնդը ամբողջապես վերաբաշխվել են նախարարություններին / գերատեսչություններին 2010-2012թթ. ընթացքում:

### 3.2.3. ԿՑ-3. Ընդհանուր փաստացի եկամուտները՝ համեմատած հաստատված սկզբնական բյուջեի հետ

Ներքին եկամուտների ճշգրիտ կանխատեսումը բյուջեի կատարողականը որոշելու կարևորագույն գործոնն է, քանի որ բյուջետավորված ծախսային հատկացումները հիմնված են այդ կանխատեսման վրա: Բյուջետավորված և փաստացի եկամուտների համեմատումն ապահովում է եկամուտների կանխատեսումների որակը:

2010-2012թթ. ՀՀ պետական բյուջեի ներքին եկամուտների (ՀՀ օրենսդրությամբ սահմանված եկամուտներն առանց պաշտոնական դրամաշնորհների) փաստացի կատարողականը գերազանցում է 100%-ը, բայց ոչ ավելի, քան 106%-ը՝ համապատասխանաբար կազմելով 104,6%, 100.7%, 100.8%<sup>2</sup>: Մանրամասները ներկայացվում են Աղյուսակ 7-ում:

<sup>2</sup> Ստացված եկամուտների գումարներում ներառված չեն արտաբյուջետային հաշիվների փաստացի եկամուտները, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում՝ առանց սահմանափակման պետական բյուջեից ֆինանսավորվող այն ծախսերը, որոնք կապված են հարկերի և պետական տուրքերի վճարման հետ: Դրանցից են՝

- ա) պետական կառավարման մարմինների կողմից վճարման ենթակա պետական տուրքը՝ դատարան դիմելիս,
- բ) ստուգումների արդյունքում պետական կառավարման մարմիններին առաջադրված լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունների մարման համար անհրաժեշտ վճարումները,
- գ) պետական հիմնարկների՝ ՊՈԱԿ-ի վերակազմակերպման համար վճարման ենթակա պետական տուրքերը, և
- դ) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման դիմաց ակտիվների կազմից գույքն առանձնացնելիս պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ն:

## Աղյուսակ 7. Ներքին եկամուտների կատարողականը

	Կատարողական, %			Մյլդ ՀՀ դրամ					
	2010թ.	2011թ.	2012թ.	2010թ. պլան	2010թ. փաստ.	2011թ. պլան	2011թ. փաստ.	2012թ. պլան	2012թ. փաստ.
Պետական բյուջեի եկամուտներ (դրամաշնորհներ)	104.6%	100.7%	100.8%	699.6	731.5	796.4	801.8	895.3	902.1
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	103.7%	100.2%	101.9%	570.0	591.1	650.0	651.3	732.3	746.0
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	100.1%	100.0%	90.8%	105.2	105.3	123.4	123.4	142.1	129.1
Ոչ հարկային եկամուտներ	143.6%	117.6%	128.4%	24.4	35.0	23.0	27.1	21.0	27.0

Աղբյուրը՝ Ֆինանսների նախարարություն

Կատարողականների բարձր ցուցանիշներն ապահովվել են հիմնականում հարկային եկամուտների և այլ եկամուտների հաշվին: Ինչևէ, լավ կատարողականը մասամբ ապահովվել է հարկային պարտավորությունները կանխավ կատարելու ուղղությամբ Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) կողմից օրինապահ հարկ վճարողների վրա գործադրված ճնշման արդյունքում: Նման ճնշումներ տեղի են ունեցել նաև նախորդ տարիներին՝ հետագայում ինչ-որ չափով թուլանալով: ԱՄՀ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակում բոլորովին վերջերս այս հարցը կրկին բարձրացվել է (տես մանրամասները «ԿՑ-13»-ին նվիրված մասում):

ՀՀ պետական բյուջեի եկամուտները կանխատեսվում են՝ հաշվի առնելով միջնաժամկետ ծախսային ծրագրերով ամրագրված հարկաբյուջետային սկզբունքները, մակրոտնտեսական կանխատեսումները, առանձին եկամտատեսակների հավաքագրման միտումները (այդ թվում ընթացիկ տարվա կանխատեսումները), հարկային և ոչ հարկային եկամտատեսակների ծածկույթի և դրույքաչափերի օրենսդրորեն ամրագրված փոփոխությունները և եկամուտների վարչարարության բարելավումը (նշվում է ԿՑ 13-15 բաժնում), որի մասին է վկայում ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների առաջանցիկ բարելավումը (Աղյուսակ 2, Բաժին 2):

**ԿՑ-3. Եկամուտների ամփոփ արդյունքներ՝ համեմատած սկզբնական հաստատված բյուջեի հետ**

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-3	<b>B</b> <i>(վերանայված մեթոդաբանությամբ)</i>	<b>A</b>	<b>Կարարողականը բարելավվել է՝</b> մասամբ եկամուտների կանխատեսման, վարչարարության և օրենսդրության կատարելագործման արդյունքում: 2011թ. հունվարից ներդրվել է նոր մեթոդաբանություն, որի համաձայն եկամուտների ինչպես դրական, այնպես էլ բացասական մեծ շեղումները հանգեցնում են գնահատականի իջեցմանը:
(i)	<b>B</b> <i>(«A»՝ հին մեթոդաբանությամբ)</i>	<b>A</b>	2010-2012թթ. փաստացի ներքին եկամուտները կազմել են բյուջեով նախատեսվածի, համապատասխանաբար 104,6%-ը, 100,7%-ը և 100,8%-ը: 2005-2007թթ. շեղումները համապատասխանաբար 104,5%, 110,5% և 113,3% էին, որի արդյունքում վերանայված մեթոդաբանության համաձայն տրվել է «B» գնահատականը:

**3.2.4. ԿՑ-4. Ծախսային վճարների կուտակային ապառքները ու մոնիտորինգը**

Վճարների ապառքները կարող են առաջանալ ֆինանսական ռեսուրսների հոսքի անկանխատեսելիությունից՝ բյուջետավորման և բյուջեի կատարման համակարգի հետ միավորված: Ապառքները պետք է վճարվեն ապագա բյուջեներից (հաշվի առնելով, որ սկզբնական պարտավորությունները օրինական ուժի մեջ էին մտել)՝ հետևաբար կրճատելով ապագա տարիներին ծառայությունների մատուցման ֆինանսավորման համար մատչելի ռեսուրսները: Ընդհանուր առմամբ, ապառքների մշտական խնդիրը նվազեցնում է բյուջեի արժանահավատությունը, որպես հասարակության կողմից ցանկալի հանրային բարիքի և ծառայությունների մատուցման գործիք:

**(i) Ծախսային վճարների կուտակային ապառքներ (որպես համապատասխան ֆիսկալ տարվա փաստացի ընդհանուր ծախսերի տոկոս) և վերջին շրջանում դրանցում արձանագրված որևէ փոփոխությունը)**

Առնվազն վերջին տաս տարում տարեվերջի բյուջետային պարտքեր գործնականում չեն կուտակվում, ինչին նպաստել է պետական բյուջեի եկամուտների հավաքագրման բարձր կատարողականը, ինչպես նաև ծախ-



սային պարտավորությունների կուռ համակարգը, որը ենթադրում է օրենքով սահմանված նախապայմանների բավարարման դեպքում պետական մարմինների կողմից ծախսային պարտավորությունների ստանձնում: Թույլատրելի ծախսային պարտավորությունները հիմնվում են վճարման ժամանակացույցի վրա (տես «ԿՑ-16»-ի նկարագրական մասը): Գանձապետական համակարգը սահմանափակում է ժամանակացույցից շեղվող ծախսային պարտավորությունների ստանձնումը: Համաձայն 2002թ. հունվարի 18-ի թիվ 48 որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի, տվյալ ժամանակաշրջանի բյուջեի հաշվին ծախսային պարտավորություններ չեն կարող ստանձնվել, եթե դրանք գերազանցում են վճարման ժամանակացույցով նախատեսվող գումարները: Այսպիսով, գանձապետական համակարգը մերժում է առաջարկվող այն պարտավորությունները, որոնք կարող են գերազանցել նշված սահմանաչափը: Հակառակ դեպքում, վճարման ժամանակացույցը վերանայվում է (տես «ԿՑ-16»-ի նկարագրական մասը): Եկամուտների անսպասելի թերակատարման դեպքում սկզբունքորեն Կառավարությունը կարող է օգտագործել իր բանկային ավանդները:

Բացի այդ, թիվ 48 որոշմամբ սահմանված ընթացակարգերը, որոնք կիրառվում են տարեվերջին, կանխում են ապառքների առաջացման հնարավորությունը: Յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին, հաշիվ-ապրանքագրերի ուշացած ներկայացման պատճառով տարեվերջին ֆինանսավորման ապառքներից խուսափելու նպատակով Կենտրոնական գանձապետարանը սահմանափակում է նոր պարտավորությունների ստանձնման հնարավորությունը: Մատակարարներից պահանջվում է ներկայացնել վճարման հանձնարարականները մինչև դեկտեմբերի 20-ը: Նրանց տեղեկացվում է, որ նշված ամսաթվից հետո ներկայացված հանձնարարականների գծով ֆինանսավորումը կտրամադրվի հաջորդ տարվա բյուջեից: Այսպիսով, մակատարարները շահադրդված են ժամանակին ներկայացնելու իրենց վճարման հանձնարարականները, որպեսզի խուսափեն ֆինանսավորման հետ կապված ուշացումներից: Մյուս կողմից, բյուջետային հիմնարկները շահադրդված են ժամանակին վերլուծելու նշված հանձնարարականները, որպեսզի խուսափեն հաջորդ տարվա բյուջեի կատարման հետ կապված ընդհատումներից:

Որոշ երկրներում մեկից ավելի տարով կնքված պայմանագրերի ներքո կապալառուներին վճարման ենթակա գումարները կարող են գերազանցել կանխատեսվող մեծությունները՝ ենթադրելով ֆինանսավորման ապառքների առաջացման հավանականություն: Նման հավանականությունը բացակայում է Հայաստանում, քանի որ երկարամյա պայմանագրերի ներքո սպասվող վճարումների գումարը, տարեսկզբին կապալառուների հետ քննարկումներից հետո արտացոլվում է հաջորդ տարվա հաստատված բյուջեում: Կապալառուներն ըստ այդմ պլանավորում են իրենց աշխատանքները՝ նախապես իմանալով, որ բյուջեով չնախատեսված վճարման հանձնարարականների գծով վճարում չի կատարվի՝ առա-

ջացնելով ֆինանսական բեռ: Բյուջեով նախատեսված ֆինանսավորման շրջանակում ներկայացված հանձնարարականների դիմաց վճարումները կատարվում են արագ՝ կապալառուներին հարկային բեռից զերծ պահելու նպատակով (հարկային հաշվապահությունը վարվում է հաշվեգրման հիմունքով, որտեղ վճարման ենթակա հարկերը հիմնվում են կանխատեսվող դեբիտորական պարտքերի վրա):

2008թ. ՊԾՖՀ գնահատումից հետո ծախսային պարտավորությունների հսկողության համակարգի հզորացումը (նշվում է «ԿՅ-20»-ի նկարագրական մասում) նվազեցրել է ֆինանսավորման ապառքների արդեն իսկ ցածր հավանականությունը:

**(ii) Ծախսային վճարների կուտակային ապառքների մոնիտորինգի համար տվյալների առկայությունը**

Գանձապետական հսկողության շրջանակում գործում է ապառքների մշտադիտարկման համակարգը: Հաշվետվական «F254» ձևով ստացվում է տեղեկատվություն յուրաքանչյուր նախարարության և գերատեսչության գծով պայմանագրային բոլոր արժեքների, ծախսային պարտավորությունների, մատակարարներին կատարված կանխավճարների, վճարման հանձնարարականներում նշվող գումարների և փաստացի վճարումների մասին: Գնահատող թիմին ցույց է տրվել հաշվետվական «F254» ձևի օրինակը և հիմնավորող փաստաթղթերը (օր.՝ ստորագրված պայմանագրերը): Յուրաքանչյուր պայմանագրում արտացոլված աղյուսակի սյունակներից մեկում նշվում են կանխավճարները, հաջորդում՝ ներկայացված հաշիվ-ապրանքագրերը, իսկ երրորդում՝ այս երկուսի միջև տարբերությունները, որոնք սովորաբար զրո են, քանի որ վճարման հանձնարարականների գծով վճարումը կատարվում է դրանց ներկայացումից հետո երեք օրվա ընթացքում: Երբեմն երրորդ սյունակում մեծությունը կարող է բացասական լինել, եթե կանխավճարները կատարվել են, բայց չեն ներկայացվել հաշիվ-ապրանքագրերը:

Հաշվապահական համակարգում կիրառվում է դրամարկղային հիմունքը, և տարեվերջին կրեդիտորական պարտքերի առաջացումը բացառվում է: Ուստի, դրանք չեն արտացոլվում տարեվերջի դրությամբ կազմվող ֆինանսական հաշվետվություններում: Դրա համար էլ ուշացումով ներկայացված վճարման հանձնարարականները տարեվերջին չեն կարող գրանցվել որպես պարտավորություններ: Փոխարենը, հաջորդ տարվա սկզբին դրանք հաշվառվում են որպես չկատարված հանձնարարականներ:

Թիվ 48 որոշմամբ (նշվում է վերը) պահանջվում է, որ վճարման հանձնարարականները ներկայացվեն արդեն իսկ համաձայնեցված վճարման ամսաթվից ոչ ուշ, քան երեք օր առաջ: Ավելի վաղ ներկայացված վճարման հանձնարարականների գծով վճարումները չեն իրականացվում ավելի վաղ փուլում: Քանի որ վճարման հանձնարարականների դիմաց վճարումները կատարվում են դրանց ներկայացման ամսաթվին հաջոր-

դող երեք օրվա ընթացքում, ապա այս ժամկետից դուրս ֆինանսավորման ապառքների վաղեմության նկարագիրը իմաստազրկվում է: Ինչևէ, սկզբունքորեն համակարգը կարող է գեներացնել վաղեմության նկարագրեր, որովհետև վճարման հանձնարարականի, ինչպես նաև վճարման ամսաթիվը գրանցվում է համակարգում:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-4	<p style="text-align: center;"><b>A</b></p> <p>(վերանայված ծածկույթ, սկզբնական ծածկույթով՝ «B+»)</p>	<p style="text-align: center;"><b>A</b></p>	<p><b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> Վերջին տաս տարում ծախսային ապառքներ գործնականում չեն կուտակվում, ինչին նպաստել է պետական բյուջեի եկամուտների հավաքագրման բարձր կատարողականը, ինչպես նաև ծախսային պարտավորությունների կուտ համակարգը, որը հիմնվում է չփոփոխվող օրենսդրական դրույթների վրա: Գանձապետական համակարգի միջոցով գեներացվող հաշվետվական «F254» ձևի միջոցով մոնիտորինգի են ենթարկվում ծախսային պարտավորությունները, մատակարարներին կատարված կանխավճարները, վճարման հանձնարարականներում նշվող գումարները և փաստացի վճարումները, իսկ ապառքներն արտացոլում են այս երեքի տարբերությունը:</p> <p>Զբաղատրված պատճառներով ՊՈԱԿ-ների ապառքները ներառվել են 2008թ. ՊԾՖՀ-ում, բայց չեն արտացոլվել 2013թ. գնահատման մեջ, քանի որ համարվել են արտաբյուջետային գործառնություններ (գնահատվում են «ԿՑ 7 և 9»-ում): 2008թ. ՊԾՖՀ-ում չափում (ii)-ի գնահատականը վերանայվել է «A»-ի:</p>
(i)	<p style="text-align: center;"><b>A</b></p>	<p style="text-align: center;"><b>A</b></p>	<p><b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> Վերջին տաս տարում ծախսային ապառքներ գործնականում չեն կուտակվում, ինչին նպաստել է պետական բյուջեի եկամուտների հավաքագրման բարձր կատարողականը, ինչպես նաև ծախսային պարտավորությունների կուտ համակարգը, որը հիմնվում է չփոփոխվող օրենսդրական դրույթների վրա: Մինչև դեկտեմբերի 20-ը ներկայացվող վճարման բոլոր հանձնարարականները ֆինանսավորվում են: Դրամարկղային հիմունքով վարվող հաշվապահությունում տարեվերջի դրությամբ կրեդիտորական պարտքերի գոյացման հնարավորությունը վերանում է: Դեկտեմբերի 20-ից հետո ներկայացված վճարման հանձնարարականները ֆինանսավորվում են հաջորդ տարվա բյուջեից:</p>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(ii)	<p style="text-align: center;">A</p> <p>(վերա- նայված է՝ հաշվի առ- նելով փո- փոխված ծածկույթը, սկզբնա- կան ծած- կույթով՝ «B»)</p>	<p style="text-align: center;">A</p>	<p><b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> Գան- ձապետական համակարգի միջոցով գներաց- վող հաշվետվական «F254» ձևի միջոցով մոնի- տորինգի են ենթարկվում ծախսային պարտա- վորությունները, մատակարարներին կատար- ված կանխավճարները, վճարման հանձնարա- րականներում նշվող գումարները և փաստացի վճարումները, իսկ ապառքներն արտացոլում են այս երեքի տարբերությունը: Սկզբունքորեն, հա- մակարգը կարող է գներացնել վաղեմության նկարագրեր, բայց գործնականում սրա անհրա- ժեշտությունը վերանում է, որովհետև վճարման հանձնարարականների գծով ֆինանսավորումը տրամադրվում է դրանց ներկայացման ամսաթ- վին հաջորդող երեք օրվա ընթացքում: Այս հա- մակարգը չի փոփոխվել:</p> <p>2008թ. գնահատման ժամանակ այս չափմանը տրվել է ավելի ցածր գնահատական՝ այսօրվա ՊՈԱԿ-ների ապառքների մոնիտորինգի միասնական պետական համակարգի բացակա- յությամբ: 2013թ. գնահատման ծածկույթում չեն ներառվել ՊՈԱԿ-ներին առնչվող ՊՖԿ համակար- գերը, քանի որ ՊՈԱԿ-ները հանդիսանում են ար- տաբյուջետային գործառնություններ, որոնք գնա- հատվում են «ԿՑ 7 և 9» ցուցանիշների ներքո:</p>

### 3.3. Համակողմանիությունը և թափանցիկությունը

ՊՖԿ համակողմանության և թափանցիկության չափման ցուցանիշները գնահատում են, թե որքանով է բյուջետային և ֆինակալ ռիսկի վերահսկումը համակողմանի, ինչպես նաև որքանով են ֆինակալ և բյուջետային տեղեկությունները մատչելի հանրության համար: Ստորև աղյուսակում ամփոփ ներկայացվում են այս չափման ցուցանիշների գնահատականները:

**Համակողմանիության և թափանցիկության ցուցանիշների կատարողականության գնահատում**

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-5 (Մ1). Բյուջեի դասակարգում	A	A	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Բյուջեները կազմվում և կատարվում են, ինչպես նաև բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունները կազմվում են ԿՖՎ-2001 գործառնական, տնտեսագիտական և գերատեսչական դասակարգման հիման վրա:</p> <p>2008թ. ՊԾՖՀ գնահատումից ի վեր, բյուջետային ծախսերը պետական բյուջեի նախագծով ներկայացվում են նաև ծրագրային ձևաչափով:</p>
ԿՑ-6 (Մ1). Բյուջեի փաստաթղթավորում	A	A	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Տեղեկատվության 9 հենանիշներից 7-ն ապահովվում են:</p> <p>2008թ. ՊԾՖՀ գնահատումից ի վեր Ազգային Ժողովին տրամադրվող տեղեկատվության կառուցվածքի, ծավալների ու բովանդակության հիմնական փոփոխությունները ներառում են վերլուծությունների որակի, ինչպես նաև ծրագրային դասակարգման ու կատարողական ցուցանիշների ներկայացման ուղղության բարելավումները:</p>
ԿՑ-7 (Մ1). Հաշվետվություններում չարտացոլված կառավարության գործառնությունների ծավալ	<p><b>B+</b></p> <p>(վերանայվել է «A»-ից՝ չափում (i)-ի համար 2013թ. գնահատման նույն ծածկույթի կիրառման պարագայում)</p>	<p><b>B+</b></p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Հաշվետվություններում չարտացոլված ներքին ԱԲԳ ծախսերը (չափում (i)) 2012թ. կազմել են ընդհանուր պետական ծախսերի 4.5%-ը («B» գնահատական): 2008թ. ՊԾՖՀ-ի համաձայն, ԱԲԳ-ները (չափում (ii)) գնահատվել են «A»:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում չափում (i)-ի գնահատականը վերանայվել է «B»-ի՝ հաշվի առնելով այն, որ ՊՈԱԿ-ները կենտրոնական կառավարության արտաբյուջետային գործառնությունների միավորներ են:</p>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-8 (Մ2). Միջկառավարական ֆինկալ հարաբերությունների թափանցիկություն	B	A	<p><b>Կատարողականը բարելավվել է:</b> Չափում (iii)-ի իմաստով կատարողականը բարելավվել է՝ պայմանավորված ՏԻՄ-երի եռամսյակային և տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմմամբ և պետական բյուջեի կատարման հաշվետվությունում դրանց ներառմամբ: Սա արդյունք է 2012թ. կենտրոնական կառավարության գանձապետական համակարգի և ՏԻՄ-երի ֆինանսական կառավարման համակարգերի միջև կապի ապահովման, որին օժանդակել է 2009թ. ՏԻՄ-երում «ԿՖՎ 2001»-ի բյուջետային դասակարգման ներդրումը:</p>
ԿՑ-9 (Մ1). Ընդհանուր ֆինկալ ռիսկի վերահսկում	D+	D+	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Թեև Կառավարությունը դիտանցում և վերլուծում է ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների գործունեությունը և ֆինկալ ռիսկերը, սակայն ֆինանսական հաշվետվությունները դեռևս չեն ենթարկվում արտաքին աուդիտի, բացառությամբ մասնակի և հատվածային աուդիտի դեպքերի: ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսվում ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների արտաքին աուդիտի պարտադիր պահանջ: Համայնքների ֆինանսական վիճակի մոնիտորինգը դեռևս ամբողջական չէ:</p>
ԿՑ-10 (Մ1). Ֆինկալ տեղեկատվության մատչելիությունը հանրությանը	A	A	<p><b>Կատարողականը չի փոխվել:</b> Տեղեկատվության նշված 6 տարրերից 5-ը հասանելի է հանրությանը: Որոշ տարրերի վերաբերյալ տեղեկատվության ծավալը աճում է:</p>

### 3.3.1. ԿՑ-5. Բյուջեի դասակարգումը

2000 թվականին ՀՀ-ում ներդրված բյուջետային դասակարգման համակարգը հիմնվում էր «ԿՖՎ-1986»-ի (Կառավարության ֆինանսական վիճակագրություն) դասակարգման վրա: Մինչև 2008 թվականը և պետական, և համայնքային բյուջեները կազմվում և կատարվում էին «ԿՖՎ-1986»-ի ստանդարտներին՝ համապատասխան՝ ըստ գործառական, տնտեսագիտական և գերատեսչական դասակարգման:

2008 թվականից ՀՀ պետական բյուջեն, իսկ 2009 թվականից՝ նաև ՀՀ համայնքային բյուջեները ԿՖՎ-2001 դասակարգման կառուցվածքին համապատասխան: Ընդ որում, բյուջետային ծախսերի գործառական դասակարգումը կիրառվում է բոլոր երեք մակարդակներով (Բաժին, Խումբ, Դաս), իսկ տնտեսագիտական դասակարգումը կիրառվում և բյուջետային փաստաթղթերում ներկայացվում է չորս մակարդակներով (Դաս, Կատեգորիա, Խումբ, Սինթետիկ հաշիվ): Գերատեսչական դասակարգումը ներկայացվում է բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների մակարդակով: Բոլոր այս երեք դասակարգումները համադրված են տվյալների միասնական շտեմարանում և հանրությանը ներկայացվող տեղեկատվությունն արտացոլված է երեք դասակարգումների եռաչափ տվյալների տարատեսակ ձևաչափերով (օրինակ՝ գործառական-գերատեսչական-տնտեսագիտական կամ գերատեսչական-գործառական-տնտեսագիտական): Փաստորեն, տարեկան պետական բյուջեի մասին օրենքով բյուջետային հատկացումները կատարվում են եռաչափ մակարդակով և բյուջետային որոշում կայացնողները ու տեղեկատվության սպառողները ստանում են տեղեկատվությունը եռաչափ համադրմամբ:

Բյուջետային եկամուտներն ու ծախսերը ներկայացվում են նույն դասակարգմամբ և մանրամասնությամբ ինչպես բյուջեի պլանավորման, այնպես էլ բյուջեի կատարման (գանձապետական համակարգի կենտրոնական և տեղական բաժիններում) ու հաշվետվությունների պատրաստման ժամանակ: Ավելին, բյուջետային պլանավորման, կատարման և հաշվետվությունների կազմման գործընթացները փոխկապակցված են ծրագրային ապահովման մակարդակում, որի շնորհիվ նվազում է համակարգերի միջև անհամապատասխանությունների աստիճանը:

Ինչ վերաբերում է ՀՀ պետական բյուջեի փաստաթղթերում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի (նաև անվանվում է «Չբաշխված ծախսեր», տես՝ ԿՑ-2) ներկայացմանը, ապա նշված ֆոնդը համարվում է որպես բյուջեով չնախատեսված ծախսերի ֆինանսավորման համար նախատեսված հիմնադրամ: Գերատեսչական դասակարգմամբ այն ներկայացվում է որպես ՀՀ կառավարության համար նախատեսված միջոցներ՝ արտահայտված տնտեսագիտական առանձին հոդվածի տեսքով: Բյուջեի կատարման ժամանակ կառավարության առանձին որոշումների հիման վրա տվյալ ֆոնդի միջոցները բաշխվում են (մասամբ

կամ ամբողջությամբ) պետական գերատեսչություններին/նախարարություններին ըստ տնտեսագիտական դասակարգման համապատասխան հոդվածների: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր գերատեսչության/նախարարության բյուջեի կատարման հաշվետվություններում արտացոլվում են ֆոնդից հատկացված միջոցներից ֆինանսավորված ծախսերը: Պահուստային ֆոնդի միջոցների բաշխման վերաբերյալ կառավարության բոլոր որոշումների ցանկը ներառվում է պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունում, որի շնորհիվ աճում է պահուստային ֆոնդի փաստացի ծախսերի թափանցիկությունը:

2008թ. ՊԾՖՀ գնահատումից ի վեր ՀՀ բյուջետային համակարգում ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությանը համաձայն կիրառվում է նաև ծրագրային դասակարգումը: Ծրագրային դասակարգմամբ ներկայացվող տեղեկատվությունն արտացոլում է ըստ նպատակների ձևավորված ծրագրերը, քաղաքականության միջոցառումները, ինչպես նաև այդ ծրագրի արդյունքը նկարագրող ոչ ֆինանսական ցուցանիշները: Այդ ցուցանիշների գծով իրականացվում է նաև մոնիտորինգ և պատրաստվում են հաշվետվություններ, որոնք ներկայացվում են Ազգային ժողով: Ֆինանսների նախարարությունը մշակել է ծրագրային և գործառական դասակարգումների համադրման աղյուսակ, որի միջոցով ծրագրային ձևաչափը ներառվում է պետական բյուջեի պլանավորման տեղեկատվական բազայում:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-5	A	A	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b>                      Բյուջեները կազմվում և կատարվում են, ինչպես նաև բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունները կազմվում են ԿՖՎ-2001 գործառական, տնտեսագիտական և գերատեսչական դասակարգման հիման վրա: 2008թ. ՊԾՖՀ գնահատումից ի վեր բյուջետային ծախսերը պետական բյուջեի նախագծով ներկայացվում են նաև ծրագրային ձևաչափով:</p>



### 3.3.2. ԿՑ-6. Բյուջեում ներառված տեղեկատվության համակողմանիությունը

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն, ՀՀ Կառավարությունը Ազգային ժողով է ներկայացնում առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի փաթեթը, որի բովանդակության հետ կապված հարցերը կարգավորվում են նշված օրենքի 16-րդ հոդվածով:

ՀՀ 2013թ պետական բյուջեի նախագծի փաթեթը պարունակում է տեղեկատվության 9 տարրերից 7-ը (տես Աղյուսակ 8):

**Աղյուսակ 8. Բյուջեի փաստաթղթերում ներկայացվող տեղեկատվությունը**

հհ	Բյուջեի փաստաթղթերի հեանանիշներ	Առկայությունը 2008թ. ՊԾՖՀ-ի դրույթ.	Առկայությունը 2013թ. ՊԾՖՀ-ի դրույթ.	Նշումներ
1.	Մակրո-տնտեսական ենթադրություններ, ներառյալ առնվազն ընդհանուր աճի, գնաճի և փոխարժեքի հաշվարկները	Այո	Այո	Պետական բյուջեի մասին օրենքի նախագծում ներառված «Կառավարության բյուջետային ուղերձի» մասեր II-Ա և II-Բ:
2.	Ֆիսկալ հավելյորդը կամ պակասորդը (դեֆիցիտը) սահմանվում է ըստ ԿՖՎ-ի կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտի	Այո	Այո	Պետական բյուջեի մասին օրենքի Հավելված N 4, աղյուսակ 1:
3.	Դեֆիցիտի ֆինանսավորում, ներառյալ ֆինանսավորման նախատեսվող կառուցվածքը	Այո	Այո	Պետական բյուջեի մասին օրենքի Հավելված N 4, աղյուսակ 1:

hh	Բյուջեի փաստաթղթերի հեանանիշներ	Առկայությունը 2008թ. ՊԾՖՀ-ի դրույթ.	Առկայությունը 2013թ. ՊԾՖՀ-ի դրույթ.	Նշումներ
4.	Պարտքի պաշարը, ներառյալ առնվազն ընթացիկ տարվա սկզբի դրությամբ տվյալները	Այո	Այո	2013թ. պետական բյուջեի նախագծի մաս կազմող ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի N 17 աղյուսակում ներկայացվում է 2011թ. փաստացի, 2012թ. սպասվող և 2013թ. կանխատեսվող պետական պարտքի ծավալն ամբողջությամբ և ըստ յուրաքանչյուր ծրագրի:
5.	Ֆինանսական ակտիվներ՝ ներառյալ առնվազն ընթացիկ տարվա սկզբի դրությամբ տվյալները	Ոչ (վերանայվել է «այո»-ից)	Ոչ	Ֆինանսական ակտիվների օգտագործման / կուտակման մասին տեղեկատվությունը ներկայացվում է բյուջեի փաստաթղթերում, սակայն այնտեղ չի արտացոլվում առաջիկա տարվա տարեսկզբի դրությամբ ֆինանսական ակտիվների կուտակային տվյալը:
6.	Նախորդ տարվա բյուջեի փաստացի ցուցանիշներ՝ ներկայացված նույն ձևաչափով, որ կիրառվել է բյուջեի նախագծում	Այո	Այո	Պետական բյուջեի նախագծի մաս կազմող ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի NN 1-14 աղյուսակներ, որտեղ 2013թ. համար ներկայացված է 2011թ. փաստացի, 2012թ. սպասվող և 2013թ. պլանավորված եկամուտների ու ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը (ընդ որում ծախսերը ներկայացված են ըստ ոլորտների, ծրագրերի և գերատեսչությունների):

hh	Բյուջեի փաստաթղթերի հեանանիչներ	Առկայությունը 2008թ. ՊԾՖԿ-ի դրույթ.	Առկայությունը 2013թ. ՊԾՖԿ-ի դրույթ.	Նշումներ
7.	Ընթացիկ տարվա բյուջեն (վերանայված բյուջեն կամ գնահատված արդյունքը՝ ներկայացված նույն ձևաչափով, որ կիրառվել է բյուջեի նախագծում	Այո	Այո	ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի NN 1-14 աղյուսակներ, որտեղ 2013թ. համար ներկայացված է 2011թ. փաստացի, 2012թ. սպասվող և 2013թ. պլանավորված եկամուտների ու ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը (ընդ որում ծախսերը ներկայացված են ըստ ոլորտների, ծրագրերի և գերատեսչությունների):
8.	Բյուջեի ամփոփ տվյալներ (եկամուտներ և ծախսեր)՝ ըստ կիրառված դասակարգման հիմնական հոդվածների, ներառյալ ընթացիկ և նախորդ տարիների տվյալները	Ոչ	Ոչ	Բյուջետային եկամուտների ամփոփ տվյալները (համապատասխան համեմատականներով) ներկայացվում են ՀՀ կառավարության ուղերձում: Ծախսերի ամփոփ տվյալների աղյուսակ չի կազմվում: Այս տեղեկատվությունը հասանելի է ՀՀ կառավարության ուղերձում առանձին ոլորտներին վերաբերող աղյուսակներում:
9.	Բյուջեի վրա քաղաքականության նոր միջոցառումների ազդեցության բացատրությունը, ներառյալ բոլոր հիմնական եկամտային քաղաքականության փոփոխությունները և/կամ ծախսային ծրագրերի որոշ հիմնական փոփոխությունները	Այո	Այո	<p>Այս տեղեկատվությունը ներկայացվում է ՀՀ կառավարության ուղերձում ըստ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- եկամտի առանձին տեսակների (Մաս III-Ա, շուրջ 20 էջ ծավալով),</li> <li>- ծախսերի բոլոր ուղղությունների (Մաս III-Բ, ավելի քան 150 էջ ծավալով):</li> </ul>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-6	A	A	<p><b>Կատարողականը չի փոխվել:</b> Տեղեկատվության 9 հենանիշներից 7-ն ապահովվում են:</p> <p>2008թ. ՊԾՖՀ գնահատումից ի վեր Ազգային ժողովին տրամադրվող տեղեկատվության կառուցվածքի, ծավալների ու բովանդակության հիմնական փոփոխությունները ներառում են վերլուծությունների որակի, ինչպես նաև ծրագրային դասակարգման ու կատարողական ցուցանիշների ներկայացման ուղղությամբ բարելավումները:</p>

### 3.3.3.ԿՑ-7. Հաշվետվություններում չներկայացվող կառավարության գործառնությունների ծավալը

Տարեկան բյուջետային նախահաշիվները, բյուջեի կատարման միջանկյալ հաշվետվությունները, տարեվերջի ֆինանսական հաշվետվությունները և հանրությանը ներկայացվող այլ ֆիսկալ հաշվետվությունները պետք է ներառեն կառավարությունների բոլոր բյուջետային ու արտաբյուջետային գործունեությունը՝ դրանով իսկ արտացոլելով կառավարության եկամուտների, ծախսերի և ֆինանսավորման ամբողջական պատկերը: Այս ցուցանիշը գնահատում է կենտրոնական կառավարության մակարդակում հաշվետվություններում չարտացոլված արտաբյուջետային գործառնությունների (ԱԲԳ) ծավալը: ԱԲԳ-ի հաշվետու տվյալները պետք է ներառեն պլանավորված/բյուջետավորված ծախսերը, փաստացի ծախսերը և տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ կենտրոնական կառավարության այլ ծախսերի հետ համախմբման միջոցով կամ օրենսդիրին ներկայացվող առանձին փաստաթղթի տեսքով: Սեփական եկամուտների հաշվին ֆինանսավորվող ՆԳԳ-երի ծախսերը նույնպես պտտենցիալ ԱԲԳ-ներ են այն դեպքում, երբ նրանց թույլատրվում է սեփական եկամուտները բյուջե փոխանցելու փոխարեն ուղղել դրանք իրենց ծախսերի ֆինանսավորմանը: Գնահատումը ներառում է 2012թ. (վերջին ավարտված ֆինանսական տարին):

**(i) Ֆիսկալ հաշվետվություններում չներկայացված արտաբյուջետային ծախսերի մակարդակը (բացառությամբ ՋԳ-ների կողմից ֆինանսավորվող ծրագրերի)**

Մի շարք պետական ձեռնարկությունների, մասնավորապես պետական

ոչ առևտրային կազմակերպությունների (ՊՈԱԿ) նախատեսվող ծախսերը չեն ներառվում տարեկան բյուջեի մասին օրենքում և այդ իսկ պատճառով դրանք համարվում են ԱԲԳ միավորներ: ԱԲԳ-ների ծախսերի մեծ մասն արտացոլվում է հաշվետվություններում, և դրանցում չներառված ծախսերը գլխավորապես կազմված են ՊՈԱԿ-ների սեփական եկամուտների հաշվին ֆինանսավորվող ծախսերից: 2006 թվականից տարեկան պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվում է, որ կենտրոնական կառավարության կողմից ֆինանսավորվող ԱԲԳ-ների պլանային ու փաստացի ծախսերը պետք է արտացոլվեն պետական բյուջեի կատարման հաշվետվություններում՝ կառավարության որոշումներով նախատեսված կարգով: Մինչև 2010 թվականը նշված մուտքերն ու ելքերը հաստատվում էին այդ միջոցների հաշվին ծրագրեր իրականացնող համապատասխան ճյուղային կառավարման մարմինների ղեկավարները՝ ՀՀ ֆինանսների նախարարի համաձայնությամբ: Սակայն, 2010 թվականի հունվարին փոփոխություն կատարվեց ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 404 որոշման մեջ, որով սահմանվեց, որ 2010 թվականից արտաբյուջետային միջոցների ձևավորման և ծախսման նախահաշիվները և նրանցում կատարվող փոփոխությունները պետք է հաստատվեն ՀՀ կառավարության կողմից:

Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություններում մանրամասն ներկայացվում են կառավարության որոշումների հիման վրա կառավարության կողմից սահմանված արտաբյուջետային հաշիվների մուտքերն ու ելքերը: Մասնավորապես, հաշվետվություններից երեքն արտացոլում են ԱԲԳ-ների եկամուտների ու ծախսերի պլանային ու փաստացի տվյալները: Առաջինում եկամուտների ու ծախսերի, ինչպես նաև հավելուրդի/պակասուրդի մասին տվյալները ներկայացվում են գործառական դասակարգմամբ: Երկրորդում նշված տեղեկատվությունն արտացոլվում է ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման: Իսկ երրորդը մանրամասնորեն ներկայացնում է եկամուտների, ծախսերի ու հավելուրդ/պակասուրդի մասին տեղեկատվությունն ըստ գերատեսչական ու տնտեսագիտական դասակարգման:

ՊՈԱԿ-ների ֆինանսական հոսքերի մասին ամփոփ տեղեկատվությունը ևս հասանելի է և այն հրապարակվում է: ՊՈԱԿ-ները ՀՀ ֆինանսների նախարարությանն են տրամադրում իրենց կանխիկ հոսքերի վերաբերյալ եռամսյակային ու տարեկան հաշվետվությունները, որտեղ ներկայացվում են ՊՈԱԿ-ների ինչպես պետական բյուջեից, այնպես էլ սեփական աղբյուրներից գոյացած եկամուտները: ՊՈԱԿ-ների սեփական աղբյուրներից գոյացած եկամուտները չեն ներառվում տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունում և այդ իսկ պատճառով դրանք համարվում են հաշվետվություններում չարտացոլվող ԱԲԳ-ներ (ներկայացվում են Աղյուսակ 9-ում):

**Աղյուսակ 9. Կառավարությունից ՊՈԱԿ-ներին և կենտրոնական կառավարության այլ միավորներին ուղղվող տրանսֆերտները**

	2012թ.
Պետական բյուջեի առաջնային ծախսեր՝ ըստ ԿՑ-1 (մլն դրամ)	884,287
ՊՈԱԿ-ների փաստացի ծախսեր (մլն դրամ)	155,150
ՊՈԱԿ-ների փաստացի ծախսեր՝ հանած պետական բյուջեից ստացված միջոցները (մլն դրամ)	39,513
Ֆիսկալ հաշվետվություններում ՊՈԱԿ-ների գծով չներառված գումարի տեսակարար կշիռը պետական բյուջեի առաջնային ծախսերում (%)	4.5%

**(ii) ԶԳ-ների կողմից ֆինանսավորվող ծրագրերի եկամուտների/ծախսերի մասին տեղեկատվությունը, որը ներառվում է ֆիսկալ հաշվետվություններում**

Սույն չափորոշիչի գնահատման համար կիրառվել է այն տեղեկատվությունը, որը հասանելի էր գնահատող խմբին՝ գնահատումն իրականացնելու պահին: Գնահատողներին հասանելի չէր տեղեկատվությունը բոլոր ԶԳ-ների կողմից իրականացվող ծրագրերի ծավալների այն հատվածների մասով, որոնք այդ ԶԳ-ներն իրականացնում են ինքնուրույն (օրինակ՝ առանձին տեխնիկական աջակցության ծրագրերի գծով): Բացառությամբ ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի, ԶԳ-ների կողմից Հայաստանին տրամադրած և ՀՀ կառավարության կողմից հաշվառվող աջակցության ընդհանուր ծավալների հետ համեմատ նման ծրագրերը փոքրաթիվ են և փոքրածավալ: ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորած ծրագրերն ավելի ծավալուն են, սակայն դրանք հիմնականում իրականացվում են ՀԿ-ների կամ ավելի ցածր մակարդակի կառավարությունների կողմից (օր.՝ համայնքային ենթակառուցվածքների ծրագրեր):

Նախագծերի/ծրագրերի ֆինանսավորման նպատակով ԶԳ-ների կողմից տրամադրվող դրամաշնորհների ու վարկերի ծավալը ընդհանուր ծախսերի համեմատ նշանակալից է: 2012թ. հաստատված պետական բյուջեում վարկերի և դրամաշնորհների ընդհանուր գումարը կազմել է շուրջ 96.4 մլրդ դրամ կամ բյուջեի շուրջ 9.2 տոկոսը: Նույն ցուցանիշի 2012թ. փաստացի կատարողականը կազմել շուրջ 58.2 մլրդ դրամ կամ պետական բյուջեի փաստացի ծախսերի շուրջ 5.9 տոկոսը: ԶԳ-ների վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին ֆինանսավորվող ծրագրերի ավելի քան 90%-ը ներառված է պետական բյուջեում և բյուջեի կատարման հաշվետվություններում:

**Ընթացիկ և պլանավորված աշխատանքները**

Կառավարությունը քննության է առնում ՊՈԱԿ-ների համակարգի ոացիոնալացման խնդիրը, այդ թվում ֆիդուցիար հսկողության շրջանակում վեր-

ջիններիս գործունեության թափանցիկության բարձրացման արդյունքում ՊՈԱԿ-ների հաշվետվողականության բարելավման միջոցով: Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակվել և մի շարք ՊՈԱԿ-ներում և նրանց լիազոր (վերադաս) մարմիններում ու ՖՆ-ում փորձարկվել են գործունեության պլանավորման, հաշվետվողականության, մոնիտորինգի ձևերը / օրինակելի ձևաչափերը:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-7	<b>B+</b> (վերանայվել է «A»-ից՝ 2013թ. գնահատման նույն ծածկույթի կիրառման պարագայում)	<b>B+</b>	<b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> 2008թ. գնահատման մեջ չափում (i)-ի գնահատականը վերանայվել է «B»-ի հաշվի առնելով այն, որ ՊՈԱԿ-ները հանդիսանում են կենտրոնական կառավարության ԱԲԿ-ներ:
(i)	<b>B</b> (վերանայվել է «A»-ից՝ 2013թ. գնահատման նույն ծածկույթի կիրառման պարագայում)	<b>B</b>	<b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> Հաշվետվություններում չարտացոլված ներքին ԱԲԳ ծախսերը 2012թ. կազմել են ընդհանուր պետական ծախսերի 4.5%-ը: 2008թ. ՊԾՖՀ-ում գնահատականը վերանայվել է «B»-ի, քանի որ ՊՈԱԿ-ների գործառնությունները չեն համարվել ԱԲԳ-ներ, մինչդեռ իրականում դրանք այդպիսին են:
(ii)	<b>A</b>	<b>A</b>	<b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> Որոշ ոչ էական բացառություններով հանդերձ ԶԳ-ների աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային նպատակային ծրագրերը մեծամասամբ ներկայացված են պետական բյուջեում:

### 3.3.4. ԿՑ-8. Միջկառավարական ֆիսկալ հարաբերությունների թափանցիկությունը

Այս ցուցանիշը գնահատում է վերջին ավարտված ֆինանսական տարվա (2012թ.) ընթացքում ծախսման նպատակով կենտրոնական կառավարությունից տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ) ուղղված տրանսֆերտների թափանցիկությունը:

## Նախապատմություն

Պետության և համայնքների միջև բյուջետային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով: Մասնավորապես, նշված ոլորտը կարգավորող հիմնական օրենքներն են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Ֆինանսական համահարթեցման մասին» և «Համայնքին բյուջեի եկամուտները նվազեցնող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքները:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով տարեկան պետական բյուջեի և կառավարության համապատասխան որոշումների հիման վրա պետական բյուջեից համայնքների համար նախատեսվող տարեկան տրանսֆերտները ներառում են հետևյալը.

ա) համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքների ընթացիկ ծախսերի ծածկման համար տրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաներ (ֆինանսավորվում են տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքին և վերջինիս կատարման եռամսյակային համամասնություններին համապատասխան՝ ամսական հավասար չափերով՝ նույն ամսվա տասնօրյակում):

բ) այլ դոտացիաներ՝ համայնքի բյուջեի ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով որևէ ծախսատեսակի (ծրագրի) իրականացման հետ չկապակցված դրամաշնորհային միջոցներ, որոնք տրամադրվում են տվյալ տարվա բյուջեի մասին օրենքով կամ կառավարության որոշմամբ նախատեսված սահմանաչափերին ու ժամկետներին համապատասխան: Ի տարբերություն (ա) կետում նշվող դոտացիաների, այս դրամաշնորհները չեն կրում պարբերական բնույթ և տրվում են այս կամ այն համայնքին ըստ անհրաժեշտության կամ օրենքի պահանջին համապատասխան: Դրանց գումարները (բացառապես «Համայնքին բյուջեի եկամուտները նվազեցնող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքով հատկացվող գումարների), որպես կանոն, նախապես չեն սահմանվում:

գ) սուբվենցիաներ՝ համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ (ֆինանսավորվում են տվյալ տարվա բյուջեի մասին օրենքում կամ կառավարության որոշման մեջ նշված չափաքանակների և ժամկետների սահմաններում, պայմանագրի և այլ հիմնավորող փաստաթղթերի դրույթներին և պահանջներին հա-



մապատասխան):

**(i) ՏԻՄ-երին ուղղվող ֆինանսական տրանսֆերտների հորիզոնական բաշխման թափանցիկությունն ու օբյեկտիվությունը**

ՀՀ 2012թ. հաստատված պետական բյուջեից համայնքային բյուջեներին նախատեսված հատկացումների 95.9%-ի բաշխումը տրված է օրենքով սահմանված բանաձևերով և կանոններով, այդ թվում.

- «Ֆինանսական համահարթեցման մասին» և «Համայնքին բյուջեի եկամուտները նվազեցնող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքներով սահմանված բանաձևերով և կանոններով պետական բյուջեից համայնքներին տրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների և օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով տրվող այլ դոտացիաների ընդհանուր ծավալը կազմել է ՀՀ 2012թ. հաստատված պետական բյուջեից համայնքային բյուջեներին նախատեսված հատկացումների 78.6%-ը: Բանաձևերն ու կանոնները սահմանված են օրենքով և համայնքների կողմից իրենց հատկացումների հաշվարկման/կանխատեսման տեսանկյունից բարդ չեն (օր.՝ բնակիչների թիվ, գույքահարկի և եկամտահարկի փաստացի մուտքեր):
- «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» և «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքներով նախատեսված կանոններով պետական բյուջեից համայնքներին տրվող սուբվենցիաները կազմել են հատկացումների 17.3%-ը: Երևանին և Գյումրիին (Հայաստանի երկրորդ խոշորագույն քաղաքին) ուղղվող սուբվենցիաների տրամադրումը կարգավորվում է առանձին օրենքով, և պետական բյուջեում նշված համայնքների համար նախատեսված գումարների համամասնությունները սահմանվում են առանձին հավելվածում: Այլ համայնքների դեպքում սուբվենցիաների տրամադրման նպատակն ու հիմնավորումը սահմանվում է իրավական ակտերում և ուղեկցող նյութերում:

Այսպիսով, ՀՀ 2012թ. պետական բյուջեից համայնքներին հատկացվող տրանսֆերտների ընդհանուր գումարի 90%-ից ավելի հորիզոնական տեղաբաշխումը կատարվել է օրենքով սահմանված կանոններին համապատասխան և թափանցիկ համակարգերի միջոցով: Սուբվենցիաները, որպես կանոն, ըստ առանձին համայնքների կոնկրետացվում են պետական բյուջեի նախագծի կազմման փուլում:

Պետական բյուջեից համայնքներին հատկացվող դոտացիաների և սուբվենցիաների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է դառնում հա-

մայնքներին այն պահին, երբ հրապարակվում է բյուջեի նախագիծը (որը հետագայում հաստատվում է Ազգային ժողովի կողմից): Սա հնարավորություն է ընձեռնում համայնքներին ինքնուրույն ծանոթանալ կառավարության մտադրություններին, հաշվարկներին և համայնքներին նախատեսվող հատկացումների գումարներին մինչև համայնքային տարեկան բյուջեների նախագծերի կազմումը:

### **(ii) Համայնքներին ուղղվող հատկացումների մասին հուսալի տեղեկատվության ժամանակին լինելը**

Համայնքների ֆինանսական տարին, օրենքի համաձայն, համընկնում է կենտրոնական կառավարության ֆինանսական տարվա հետ:

Բյուջետային գործընթացը պաշտոնապես սկսվում է բյուջետային գործընթացի սկիզբն ազդարարող յուրաքանչյուր տարի ընդունվող ՀՀ վարչապետի որոշման հիման վրա: Գործնականում համայնքները սկսում են առաջիկա տարվա բյուջեի կազմման գործընթացը այդ տարվան նախորդող տարվա մարտից՝ կիրառելով Ֆինանսների նախարարությունից ստացված մեթոդական ցուցումները: Ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների գնահատման մեխանիզմը թույլ է տալիս համայնքներին սեփական բյուջեների հաստատումից մի քանի ամիս առաջ ստանալու հուսալի տեղեկատվություն իրենց դոտացիաների ծավալների մասին: Հաստատված պետական բյուջեն պաշտոնական հրապարակվելուց հետո մեկամսյա ժամկետում ՀՀ մարզպետարանների միջոցով համայնքներին է տրամադրվում պետական բյուջեից իրենց հատկացվող միջոցների մասին տեղեկատվությունը՝ ուղեկցված դրամաշնորհների հաշվարկման բացատրությամբ: Տեղական ինքնակառավարման մարմինները իրավասու են հաստատել իրենց բյուջեները ինչպես պետական բյուջեի հաստատումից հետո, այնպես էլ դրանից առաջ: Պետական բյուջեի հաստատումից հետո նրանք կարող են ճշգրտումներ անել իրենց բյուջեներում՝ ելնելով նրանից, որ ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, որոնք կազմում են համայնքներին ուղղվող ֆինանսական տրանսֆերտների գերակշիռ մասը, իրենց բնույթով ոչ պայմանական են: 2010-12թթ. ֆինանսական համահարթեցման դոտացիաների փաստացի հատկացումները կազմել են նախատեսվածի 100%-ը՝ համայնքներին ներշնչելով բարձր վստահություն նրանում, որ կստանան պետական բյուջեով իրենց համար նախատեսված բոլոր հատկացումները:

### **(iii) Ըստ ոլորտային կատեգորիաների ընդհանուր կառավարության ֆիսկալ տվյալների համախմբման աստիճանը**

Տարածքային կառավարման նախարարությունը (ՏԿՆ) ստանում է տեղական ինքնակառավարման մարմինների փաստացի բոլոր եկամուտների ու ծախսերի տվյալները տեղական գանձապետական բաժանմունքներից: Ծախսային տվյալները ներկայացվում են «ԿՖՎ»-ին համապատասխանող գործառական և տնտեսագիտական դասակարգման հիման վրա: Նշված

տվյալները համախմբվում են մարզպետարանների կողմից: Այնուհետև մարզպետարանների հաշվետվությունների հիման վրա ՏԿՆ-ն կազմում է մարզերի և ողջ հանրապետության մակարդակում համախմբված ամփոփ հաշվետվություն, որը յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 50 օրվա ընթացքում զետեղվում է ՏԿՆ-ի պաշտոնական կայքում: Այնուհետև յուրաքանչյուր տարվա ավարտից հետո 4 ամսվա ընթացքում ազդեցացված ամփոփ տվյալները ներառվում են տարեկան պետական բյուջեի կատարման հաշվետվությունում: Համայնքային բոլոր բյուջեների կատարման ամփոփ հաշվետվությունները զետեղվում են ՖՆ-ի պաշտոնական կայքում: Սա հնարավոր է դարձել կենտրոնական կառավարության գանձապետական համակարգի հետ համայնքների ֆինանսական կառավարման համակարգերի կապի ապահովման շնորհիվ, որն ուղեկցվել է 2009թ. ՏԻՄ-երում «ԿՖՎ 2001»-ի բյուջետային դասակարգման ներդրմամբ (ԿՑ-5):

2008թ. ՊԾՖՀ գնահատման ժամանակ այս չափումը գնահատվել է «D», քանի որ այդ պահին բացակայում էին գործառական ու տնտեսագիտական դասակարգմամբ ներկայացվող ամփոփ տվյալները (ՏԻՄ-երի համախմբված բյուջեները չէին հրապարակվում):

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-8	B	A	<b>Չափում (iii)-ի կատարողականը բարելավվել է՝ պայմանավորված ՏԻՄ-երի տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմմամբ և պետական բյուջեի կատարման հաշվետվությունում դրանց ներառմամբ:</b> Բարելավումը տեղի է ունեցել կենտրոնական կառավարության գանձապետական համակարգի հետ համայնքների ֆինանսական կառավարման համակարգերի կապի ապահովման շնորհիվ, որն ուղեկցվել է 2009թ. ՏԻՄ-երում «ԿՖՎ 2001»-ի բյուջետային դասակարգման ներդրմամբ:
(i)	A	A	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Պետական բյուջեից համայնքներին հատկացվող համարյա բոլոր (զումարային արտահայտությամբ առնվազն 90 տոկոս) տրանսֆերտների հորիզոնական տեղաբաշխումը կատարվում է օրենքով սահմանված կանոններին համապատասխան և թափանցիկ համակարգերի միջոցով:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(ii)	A	A	<b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> Նախքան համայնքների բյուջեների հաստատման գործընթացի սկիզբը համայնքներին տրամադրվում է հուսալի տեղեկատվություն իրենց փոխանցվելիք հատկացումների ծավալների մասին:
(iii)	D	A	<b>Կարարողականը բարելավվել է:</b> ՏԿՆ-ն եռամսյակային և տարեկան հաշվետվություններում համախմբում է ՏԻՄ-երի բյուջեների բոլոր եկամուտներն ու ծախսերը («ԿՖՎ»-ին համապատասխանող գործառական և տնտեսագիտական դասակարգմամբ): Համայնքների բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների ամփոփ ցուցանիշները ներառվում են պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություններում, որոնք կազմվում են ՖՆ-ի կողմից բյուջետային տարվա ավարտից հետո 4 ամսվա ընթացքում և հրապարակվում ՖՆ-ի պաշտոնական կայքում:  2008թ. ՊԾՖՀ-ից հետո տեղի ունեցած բարելավումը գլխավորապես պայմանավորված է նրանով, որ 2012թ. ՏԿՆ-ն ապահովել է կենտրոնական կառավարության գանձապետական համակարգի հետ ՏԻՄ-երի ֆինանսական կառավարման համակարգերի կապը, որը հնարավոր է դարձել 2009թ. ՏԻՄ-երում «ԿՖՎ 2001»-ին համապատասխանող կենտրոնական կառավարության բյուջետային դասակարգման ներդրման շնորհիվ:

### 3.3.5. ԿՑ-9. Պետական հատվածի այլ միավորների հետ կապված ընդհանուր ֆիսկալ ռիսկի վերահսկողությունը

Այս ցուցանիշը գնահատում է, թե որքանով է կենտրոնական կառավարությունը մոնիտորինգի ենթարկում և կառավարում ողջ երկրի վրա ազդեցություն ունեցող այն ֆիսկալ ռիսկերը, որոնք ի հայտ են գալիս պետական ինքնավար կազմակերպությունների (ԻՊԿ), պետական առևտրային ձեռնարկությունների և տեղական (համայնքային) մարմինների գործունեության արդյունքում: Գնահատումը հիմնվում է վերջին ավարտված 2012թ. ֆինանսական տարվա վրա:

**(i) ՊՈԱԿ-ների և առևտրային ձեռնարկությունների նկատմամբ Կենտրոնական կառավարության կողմից իրականացվող մոնիտորինգի աստիճանը**

Սույն գնահատման շրջանակը ներառում է կենտրոնական կառավարության կողմից պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ ՊՈԱԿներ) և 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ ՓԲԸ-ներ) նկատմամբ հսկողության և մոնիտորինգի իրականացման աստիճանը:

ՊՈԱԿ-ների գործունեության մոնիտորինգն ու հսկողությունը բարելավվել է՝ հնարավորություն տալով Կառավարությանը որոշելու նշված գործունեությունից բխող հնարավոր ռիսկի մակարդակը և համապատասխան դեպքերում սահմանելու ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումներ:

- ՀՀ բոլոր ՊՈԱԿները յուրաքանչյուր եռամսյակ դրանց կառավարումն իրականացնող ՀՀ գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմիններ (այսուհետ՝ ԼՊՄ-ներ) (լիազոր պետական մարմիններ) են ներկայացնում դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններ և ամփոփ հաշվապահական հաշվեկշիռներ: ԼՊՄ-ներն այնուհետև բյուջետային գործառական դասակարգման համաձայն համախմբում են տվյալ հաշվետվություններն ու հաշվապահական հաշվեկշիռներն ըստ բաժինների և խմբերի և ներկայացնում դրանք ՖՆ-ին, որն, իր հերթին, համախմբում և զետեղում է նշված տեղեկատվությունը իր կայքում:
- ՊՈԱԿ-ները նաև կազմում են 47 ծրագրային ու փաստացի ֆինանսատնտեսական ցուցանիշների շեղումների մասին հաշվետվություններ (համաձայն ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 27-ի N 1648-Ն որոշման և ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ. փետրվարի 4-ի N104-Ն հրամանի): ՊՈԱԿ-ների հաշվետվական տվյալների մանրամասնության աստիճանի բարձրացման և եռամսյակային հաշվետվությունների պահանջի շնորհիվ հնարավոր է ավելի արագորեն բացահայտել այն ՊՈԱԿ-ները, որոնք կարող են դառնալ ֆիսկալ ռիսկի աղբյուր:
- Եռամսյակային հաշվետվությունների համար կիրառվող նույն հիմունքով ՊՈԱԿ-ները կազմում են նաև ֆինանսատնտեսական գործունեության մասին հաշվետվություններ, որոնք իրենց ԼՊՄ-ների միջոցով ներկայացվում են ՖՆ-ը՝ ՊՈԱԿ-ների տեղեկատվական բազայում դրանց տվյալները ներառելու նպատակով: Նշված հաշվետվությունների հիման վրա յուրաքանչյուր ՊՈԱԿ-ի համար կազմվում է ընդհանուր հաշվետվություն, որը զետեղվում է ՖՆ-ի պաշտոնական կայքում:
- 2001թ. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքով որոշակի սահմանափակումներ են նախատեսվում ՊՈԱԿ-ների գործունեության նկատմամբ, օր.՝ 22-րդ հոդվածը սահմանափակում է ինքնուրույն խոշոր գործարքներ կնքելու նրանց հնարավորությունը:

- Համաձայն ՀՀ կառավարության 2012թ. օգոստոսի 30-ի N1104-Ն որոշման ԼՊՄ-ների ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների (բացառությամբ դպրոցների) ընթացիկ բյուջետային տարում կնքված բոլոր ֆինանսավորման պայմանագրերի, ինչպես նաև այդ ՊՈԱԿ-ների կողմից նախորդ բյուջետային տարվա ընթացքում ստորագրված բոլոր ընդունման-հանձնման ակտերի ստացված պատկերամուտները տեղադրվում են ՀՀ կառավարության [www.e-gov.am](http://www.e-gov.am) կայքի «ՊՈԱԿ-ների ֆինանսավորում» բաժնում: Սա էապես նպաստում է ՊՈԱԿ-ների կողմից իրականացվող գործարքների առավելագույն հրապարակայնության և թափանցիկության ապահովմանը: Սրան նպաստել է նաև ՀՀ ֆինանսների նախարարի N104-Ն հրամանը, որն ընդունվել է 2013թ. փետրվարի 4-ին:

ՓԲԸ-ները ԼՊՄ-ներին ներկայացնում են տարեկան հաշվետվություններ, որտեղ արտացոլվում են ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները, շահութաբաժինների վճարման և դրանց հաշվարկի վերաբերյալ տեղեկատվությունը, իրականացվող ներդրումային ծրագրերի շրջանակներում հաշվետու տարում կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկանքը, ինչպես նաև ՓԲԸ-ների վերստուգող հանձնաժողովների տարեկան գործունեության արդյունքների մասին հաշվետվությունները: Սրանից հետո ԼՊՄ-ների կողմից վերջիններս ներկայացվում են ՖՆ-ին, որն ուսումնասիրում է դրանք (ի կատարումն ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 21-ի N 1923-Ն որոշման) ուսումնասիրում, մշակում և ՀՀ կառավարություն է ներկայացվում ՓԲԸ-ների վերստուգող հանձնաժողովների հսկողության արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն: Վերստուգիչ հանձնաժողովների հաշվետվություններում ներկայացվում են ստուգումների արդյունքում բացահայտված խախտումները (օրինակ՝ 2012թ. հաշվետվությամբ ներկայացվել էր 273 մլն. դրամի խախտում):<sup>3</sup> ՓԲԸ-ների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերլուծությամբ բացահայտվում են ռիսկերը (օրինակ՝ երկու և ավելի տարի վնասով գործող ձեռնարկությունների մասով, սեփական կապիտալի էական նվազեցումների և սահմանակետին հասնելու պարագայում): Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ կազմվել և ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել վերջին 3 տարիներին վնասով աշխատած ՓԲԸ-ների ցանկը, որը, ելնելով ՓԲԸ-ների տնտեսական գործունեության արդյունքներից, պետական հատվածում մնալու անհրաժեշտությունը հիմնավորող օրենսդրական, տվյալ դրոտում վարվող քաղաքականության պահանջներից, ՓԲԸ-ների տվյալների ուսումնասիրման հիման մշակել է ՓԲԸ-ների՝ պետական հատվածում մնալու չափորոշիչների համակարգը:

Թեև կառավարությունը դիտանցում և վերլուծում է ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ներ-

<sup>3</sup> ՀՀ կառավարության 2012թ. մայիսի 31-ի N732-Ն որոշմամբ 2013թ. հունվարի 1-ից ՓԲԸ-ներում դադարեցվել է վերստուգող հանձնաժողովների գործունեությունը, ինչը պայմանավորված է ներքին աուդիտի համակարգի ներդրմամբ և աստիճանական զարգացմամբ:

րի գործունեությունն ու ֆիսկալ ռիսկերը, սակայն դեռևս չի իրականացվում նշված կազմակերպությունների արտաքին աուդիտը, բացառությամբ մասնակի և հատվածային բնույթի աուդիտի դեպքերի: ՀՀ գործող օրենսդրությամբ ՊՈԱԿներին և ՓԲԸ-ներին հաշվետվություններն արտաքին աուդիտի ենթարկելու պարտադիր պահանջներ չեն առաջադրվում:

**(ii) Կենտրոնական կառավարության կողմից համայնքների ֆիսկալ դիրքի նկատմամբ իրականացվող մոնիտորինգի մակարդակը**

Մինչ օրս համայնքները դեռևս չեն առաջացրել չնախատեսված իրական ֆինանսական բեռ Կառավարության համար: 2008թ. ՊԾՖՀ-ի գնահատումից հետո (որն արձանագրել էր, որ «ֆիսկալ դիրքի նկատմամբ կենտրոնական կառավարության կողմից տարեկան մոնիտորինգ չի իրականացվում») կենտրոնական կառավարությունը սկսել է իրականացնել համայնքների ֆինանսական վիճակը բնութագրող որոշ ցուցանիշների մոնիտորինգ: Ինչևէ, նշված մոնիտորինգն ամբողջական չէ (հատկապես համայնքների զուտ բյուջետային պարտքերի ցուցանիշի գծով): Բացառությամբ Երևանի քաղաքապետարանի, համայնքի բյուջեի կատարման արտաքին աուդիտի գործառույթը պարտադիր չէ և որպես կանոն չի գործում ՏԻՄ-երի մակարդակում, թեև 2002թ. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով (68-րդ հոդված) համայնքների ավագանիներին վերապահված է իրավունք ներգրավելու արտաքին աուդիտի ծառայություններ: 2008թ. դեկտեմբերին, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով փոխվեց Երևանի քաղաքապետարանի իրավական կարգավիճակը: Մասնավորապես, նշված օրենքի 81-րդ հոդվածով նախատեսվում է քաղաքի հաշիվների տարեկան աուդիտի պարտադիր անցկացում: Երևանի բյուջեն կազմում է համայնքային մարմինների ընդհանուր ծախսերի շուրջ 60 տոկոսը:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-9	D+	D+	<b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների նկատմամբ մոնիտորինգն ու վերահսկողությունը բարելավվել է, սակայն ֆինանսական հաշվետվությունները դեռևս չեն ենթարկվում արտաքին աուդիտի: Համայնքների ֆինանսական վիճակի մոնիտորինգը դեռևս ամբողջական չէ:
(i)	C	C	<b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների մոնիտորինգն ու վերահսկողությունը բարելավվել է, սակայն նրանց հաշվետվությունները դեռևս չեն ենթարկվում արտաքին աուդիտի (սա ավելի բարձր գնահատականի պահանջն է):

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(ii)	D	D	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Չնայած որոշակի բարելավումներին, գնահատականը մնացել է նույնը, որովհետև համայնքների ֆինանսական վիճակի մոնիտորինգը (բացառությամբ Երևանի) դեռևս ամբողջական չէ:

### 3.3.6. ԿՑ-10. Առանցքային ֆիսկալ տեղեկատվության հասանելիությունը հանրության համար

Այս ցուցանիշը գնահատում է, թե որքանով է ֆիսկալ տեղեկատվությունը հասանելի ընդհանուր հանրությանը կամ առնվազն համապատասխան շահագրգիռ խմբերին: Տեղեկատվության ստորև նշվող վեց տարրերը պետք է հասանելի լինեն հանրությանը:

**(i) Տարեկան պետական բյուջեի փաստաթղթեր. Հենանիշ՝ ամբողջական փաթեթը Ազգային ժողով ներկայացնելու ժամանակ այն համապատասխան միջոցներով հասանելի է դարձվում հանրությունը («ԿՑ-6» ցուցանիշի նկարագրական բաժնում նշվող տեղեկատվությանը համահունչ)**

Օրենքի պահանջի համաձայն, առաջիկա տարվա ՀՀ պետական բյուջեի նախագիծը Ազգային ժողով ներկայացնելուց հետո ՀՀ կառավարությունը (ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության) եռօրյա ժամկետում պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը (բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող նյութերի) հրապարակում է մամուլում (որպես կանոն, առավել մեծ տպաքանակ ունեցող «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում) և [www.azdarar.am](http://www.azdarar.am) հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Միաժամանակ, պետական բյուջեի նախագիծը տեղադրվում է ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության և ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք-էջերում: Թողարկվում են նաև հեռուստահոլովակներ:

Նոր գործելակերպ է օրենքների նախագծերի հանրային քննարկումը, որը ներդրվել է «Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին (27.1-ին հոդվածի 4-րդ մաս) համապատասխան, 2010 թվականի մարտի 25-ի «Հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» N 296-Ն որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում: Բյուջեի նախագիծը ԱԺ ներկայացնե-



լուց հետո եռօրյա ժամկետում գալիք տարվա պետական բյուջեի նախագծի հանրային քննարկումներին մասնակցելու հրավերը տեղադրվում է ՀՀ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում: Հրավերում նաև նշվում է նախարարության էլեկտրոնային փոստի հատուկ հասցեն՝ նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններն ուղարկելու համար: Առաջարկություններն ու դիտողությունները կարող են ուղարկվել նախագիծը նախարարության ինտերնետային կայքում հրապարակելու ամսաթվին հաջորդող 20 օրվա ընթացքում, և դրանք քննության են առնվում նախագծի լրամշակման ժամանակ:

Նախորդ ՊԾՖՀ գնահատման համեմատ՝ նախագծում ներկայացվող տեղեկատվությունը համալրվել է ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությանը համապատասխան մշակված ծրագրային դասակարգման և ծրագրերի կատարողականը բնութագրող ոչ ֆինանսական նպատակային ցուցանիշների (ըստ գերատեսչությունների) ամբողջական փաթեթով:

**(ii) Բյուջեի կտրարման մասին տարեմիջյան հաշվետվություններ. Հենանիշ՝ նշված հաշվետվությունները պարբերաբար տրամադրվում են հանրությանը համապատասխան տեղեկատվական միջոցների կիրառմամբ՝ դրանց հրապարակումից հետո 1 ամսվա ընթացքում**

Պետական բյուջեի մասին ամսական տեղեկատվությունը և եկամուտների ու ծախսերի տվյալները պարունակող եռամսյակային հաշվետվությունները հրապարակվում են ՀՀ ֆինանսների նախարարության կայք-էջում ([www.minfin.am](http://www.minfin.am)) և մամուլում: Ամսական տեղեկատվությունը հրապարակվում են ամսվա ավարտին հաջորդող 30 օրվա ընթացքում: Եռամսյակային հաշվետվությունները հրապարակվում են եռամսյակի ավարտից հետո 45 օրվա ընթացքում: Դրանք ավելի ծավալուն են և այդ իսկ պատճառով դրանց պատրաստման համար ավելի շատ ժամանակ է պահանջվում: Վերջին երեք տարիների ընթացքում հրապարակման ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է «ԿՑ-24» ցուցանիշի նկարագրական մասում: Էլ-կառավարման պաշտոնական կայքը (ստեղծվել է 2010թ.) հնարավորություն է տալիս հանրության անդամներին համարյա իրական ժամանակում հետևելու բյուջեի կատարողականին (ծրագրային ու փաստացի եկամուտներ ու ծախսեր, գործառական, գերատեսչական և տնտեսագիտական դասակարգում):

**(iii) Տարեկերջի դրությամբ ֆինանսական հաշվետվություններ. Հենանիշ՝ նշված հաշվետվությունները համապատասխան տեղեկատվական միջոցների կիրառմամբ հասանելի են դառնում հանրությանը աուդիտորական ստուգման ավարտից հետո 6 ամսվա ընթացքում**

ՖՆ-ն կազմում է տարեկան ֆինանսական հաշվետվությունը և ներկայացնում այն Կառավարությանը: Վերահսկիչ պալատը (ՎՊ) օժտված է ՖՆ-ի ելակետային տվյալներից օգտվելու հնարավորությամբ, որը թույլ է տալիս վերջինիս ուսումնասիրելու հաշվետվությունը: Մինչև ամեն տարվա

մայիսի 1-ը Կառավարությունը ներկայացնում է աուդիտ անցած հաշվետվությունը Ազգային ժողովին: Մինչև հունիսի երկրորդ չորեքշաբթի ԱԺ-ն քննարկում և հավանություն է տալիս հաշվետվությանը: Աուդիտ անցած հաշվետվությունը գետեղվում է ՎՊ-ի պաշտոնական կայքում ([www.coc.am](http://www.coc.am)) մինչև հունիսի վերջը (տես պաշտոնական կայքը): Տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասին հարցերը քննության են առնվում «ԿՑ-25» ցուցանիշի նկարագրական բաժնում:

**(iv) Արտաքին աուդիտորների հաշվետվություններ: Հենանիշ՝ կենտրոնական կառավարության համախմբված գործառնությունների մասին բոլոր հաշվետվությունները համապատասխան տեղեկատվական միջոցների կիրառմամբ հասանելի են դառնում հանրությանը աուդիտորական սպուզման ավարտից հետո 6 ամսվա ընթացքում:**

Ի լրումն բյուջեի կատարման մասին աուդիտ անցած հաշվետվությունների, ՎՊ-ն կազմում է տարեկան հաշվետվություն, որը հիմնականում անդրադառնում է համապատասխանության հարցերին (օր.՝ գնման ընթացակարգերին): 2012թ. տարեկան հաշվետվությունը գետեղվել է ՎՊ-ի պաշտոնական կայքում 2013թ. մարտի 29-ին: Տարեկան հաշվետվությունները կարող են ընդգրկել նախորդող ոչ թե մեկ, այլ մի քանի տարիներ:

**(v) Շնորհված պայմանագրեր: Հենանիշ՝ շնորհված պայմանագրերի (մոտ 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք արժողությամբ) հրապարակում առնվազն եռամսյակը մեկ անգամ համապատասխան միջոցներով**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն, 1 միլիոն ՀՀ դրամը գերազանցող արժողությամբ պայմանագրեր կնքող պատվիրատուները պարտավոր են գնումների բազային միավորը /1 մլն. դրամ/ գերազանցող պայմանագրեր կնքելու դեպքում գնումների պաշտոնական տեղեկագրում և գնումների պաշտոնական կայքում ([www.procurement.am](http://www.procurement.am), կամ [www.gnumner.am](http://www.gnumner.am)) հրապարակել կնքված պայմանագրի մասին հայտարարություն, որում նշվում է պատվիրատուի և կատարողի անվանումը, պայմանագրի կնքման ամսաթիվը, գինը, առարկան և գնման ձևը: Տեղեկատու իրացվում է Երևանում առնվազն հինգ վաճառքի կետերում, իսկ յուրաքանչյուր մարզում՝ ոչ պակաս, քան մեկ վաճառքի կետում: «Գնումների մասին» օրենքի դրույթները էապես կիրառվում են:

Թեև պայմանագրերի մասին տեղեկատվությունը հասանելի է, սակայն հրապարակման ամսաթիվը հետևողականորեն չի բացահայտվում առնվազն եռամսյակը մեկ անգամ, ինչպես նախատեսվում է ՊԾՖՀ-ի մեթոդաբանությամբ: Այնուամենայնիվ, նշված տեղեկատվությունը առհասարակ ժամանակին է հրապարակվում: ՀՀ օրենսդրությամբ չի սահմանվում գնումների մասին տեղեկատվության բացահայտման որոշակի հաճախականություն: Տեղեկատու լույս է տեսնում որոշակի ծավալով տեղեկատվության հավաքագրման դեպքում: Միջինում այն հրապարակվում է ամեն 20-25 օրը մեկ անգամ՝ կախված մրցության կարգով իրականացվող

գնումների ծավալից՝ շնորհիված պայմանագրերի հրապարակման հաճախականությունը կարող է եռամսյակայինից ցածր կամ բարձր լինել:

**(vi) Առաջնային ծառայություններ մատուցող միավորների հարկացվող ռեսուրսներ. Հենանիշ՝ բոլոր ոլորտներում կամ առնվազն դրանից երկուսում (օր.՝ տարրական դպրոցներ և առաջնային բուժօգնության հիմնարկներ) առաջնային ծառայություններ մատուցող միավորների վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան միջոցներով հրապարակվում է առնվազն տարին մեկ անգամ կամ փրամադրվում է ըստ պահանջի)**

Հանրակրթական դպրոցներին և առաջնային բուժօգնության հիմնարկներին հատկացվելիք բյուջետային միջոցների մասին տեղեկատվությունը հասանելի է հանրությանը միայն հանրագումարային տեսքով, այլ ոչ՝ ըստ առանձին կազմակերպությունների:

Աղյուսակ 10-ում ամփոփ տրվում է վերոնշյալ տեղեկատվության 6 տարրերի հասանելիության մասին տեղեկատվությունը:

**Աղյուսակ 10. Ֆիսկալ տեղեկատվության հասանելիությունը հանրությանը**

Հանրությանը հասանելի տեղեկատվության տարրերը	Հասանելիություն	Գնահատական
Օրենսդրին ներկայացվող տարեկան բյուջեի փաստաթղթեր	Այո	Տեղեկատվությունը (բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող նյութերի) հասանելի է հանրությանը նույն ծավալներով և նույն ժամկետներում, որ կիրառելի է ԱԺ-ին ներկայացման դեպքում: Վերջին ՊԾՖՀ-ի գնահատումից ի վեր ներկայացվում են նաև ծրագրային (ոչ-ֆինանսական) նպատակային ցուցանիշներն ըստ ծրագրերի և քաղաքականության միջոցառումների:
Տարվա ընթացքում բյուջեի կատարման հաշվետվությունների հրապարակում դրանց կազմման ամսաթվին հաջորդող մեկ ամսվա ընթացքում	Այո	Ամսական տեղեկատվությունը (30 օրվա ընթացքում) և եռամսյակային (45 օրվա ընթացքում) հաշվետվությունները հասանելի են դառնում հանրությանը ինտերնետի և պաշտոնական հայտարարությունների միջոցով:

<b>Հանրությանը հասանելի տեղեկատվության տարրերը</b>	<b>Հասանելիություն</b>	<b>Գնահատական</b>
Տարեվերջի ֆինանսական հաշվետվությունների հրապարակում ավարտված աուդիտին հաջորդող 6 ամսվա ընթացքում	Այո	Աուդիտ անցած տարեկան ֆինանսական հաշվետվությունը, որպես կանոն, հասանելի է դառնում հանրությանը (այդ թվում ՎՊ-ի պաշտոնական կայքի միջոցով) ֆինանսական տարվա ավարտից 6 ամսվա ընթացքում:
Ավարտված աուդիտին հաջորդող 6 ամսվա ընթացքում կազմվող արտաքին աուդիտի հաշվետվություններ	Այո	ՎՊ-ն կազմում է տարեկան հաշվետվություն, որտեղ հատուկ ուշադրության են արժանանում համապատասխանության հարցերը: 2012թ. տարեկան հաշվետվությունը զետեղվել է ՎՊ-ի պաշտոնական կայքում 2013թ. մարտի վերջին:
Շնորհված պայմանագրերի (մոտ 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք արժողությամբ) հրապարակում առնվազն եռամսյակը մեկ անգամ	Այո	Տեղեկատուն լույս է տեսնում որոշակի ծավալով տեղեկատվության հավաքագրման դեպքում: Միջինում այն հրապարակվում է ամեն 20-25 օրը մեկ անգամ:
Առաջնային ծառայություն մատուցող միավորների համար ռեսուրսների հասանելիություն առնվազն տարեկան կտրվածքով	Ոչ	Հանրակրթական դպրոցներին ու առաջնային բուժօգնության հիմնարկներին հասանելի բյուջետային գումարների մասին տեղեկատվությունը հասանելի է հանրությանը միայն հանրագումարային տեսքով, այլ ոչ՝ ըստ առանձին կազմակերպությունների:

<b>ԿՑ</b>	<b>Միավոր 2008թ. ՊԾՖՀ</b>	<b>Միավոր 2013թ. ՊԾՖՀ</b>	<b>Գնահատում</b>
ԿՑ-10	A	A	<b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> Հանրությանը հասանելի տեղեկատվության ցանկի վեց տարրերից հինգը հասանելի են հանրությանը, իսկ դրանցից մի քանիսի ծավալն աճում է:

### 3.4. Քաղաքականության վրա հիմնված բյուջետավորումը

Այս խմբի երկու ցուցանիշների միջոցով գնահատվում է, թե որքանով է պետական բյուջեն արտացոլում կառավարության քաղաքականությունը:

#### Քաղաքականության վրա հիմնված բյուջետավորման կատարողականի ցուցանիշների գնահատումը

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-11 (Մ1). Բյուջեի կազմում	A	A	<i>Գնահատման չափանիշների առումով կատարողականը մնացել է անփոփոխ, բայց ներկայացվող ՄԺԾԾ-ների որակը բարելավվել է:</i>
ԿՑ-12 (Մ1). Մեկից ավելի տարիների բյուջետային հեռանկար	B	B	<i>Կատարողականը, ընդհանուր առմամբ, մնացել է անփոփոխ, բայց այն բարելավվել է ռոլորտային ռազմավարական ծրագրերի ծախսային գնահատականների վերաբերյալ չափում (iii)-ի առումով:</i>

#### 3.4.1 ԿՑ-11. Ճշտապահությունը ու մասնակցությունը ամենամյա բյուջետային գործընթացում

Այս ցուցանիշը գնահատում է տարեկան բյուջեի կազմման գործընթացի կազմակերպվածությունը, հստակությունը և համակողմանիությունը:

##### (i) Բյուջետային սահմանված օրացույցի առկայությունը և պահպանումը

Տարեկան բյուջետային գործընթացի իրականացման ընդհանուր դրույթները սահմանվում է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքում, որն ինքնին հիմնվում է ՀՀ Սահմանադրության վրա: Գործընթացը սկսվում է ՀՀ վարչապետի կողմից առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշման ընդունմամբ: Նշված որոշմամբ սահմանվում են ինչպես պետական բյուջեի նախագծի, այնպես էլ միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) մշակման ուղղությամբ ՀՀ պետական մարմինների կողմից իրականացվելիք աշխատանքների կատարման ժամանակացույցերը: Նշված ժամանակացույցերի հիմնական գործողությունների ժամկետները պահպանվում են: Ժամանակացույցի կարևորության և դրա պահպանման մասին վկայում են նաև ՆԳԳ-երի ունեցած հանդիպումների արդյունքները, որոնց համաձայն՝ սահմանված ժամկետները բավարար են իրենց աշխատանքները կազմակերպելու համար: Առաջացող հիմնա-

կան խնդիրները կապված են ոչ թե ինքնին ժամանակացույցի, այլ նախարարությունների և իրենց ենթակա կազմակերպությունների, ինչպես նաև մարզպետարանների կողմից ներկայացվող եռամյա պարբերաբար թարմացվող ՄԺԾԾ հայտերի որակի մակարդակների տարբերության հետ:

Բյուջեի կազմման աշխատանքներն իրականացվում են երկու փուլով: Առաջին (ռազմավարական) փուլը սկսվում է տարեկազմին, երբ ՖՆ-ն պետական մարմիններին է տրամադրում ՄԺԾԾ-ի հայտերի կազմման ցուցումները: Վերջիններս տրամադրվում են հայտերի ներկայացման համար սահմանված ժամկետից շուրջ 2.5 ամիս առաջ (այսինքն՝ 2012 թվականի բյուջետային գործընթացի ժամանակացույցով նշված հայտերը պետք է ներկայացվեին մինչև մարտի 11-ը): Հաջորդ տարվա պետական բյուջեի նախագծի մշակման համար հիմք հանդիսացող գալիք 3 տարիների ՄԺԾԾ-ի հաստատման վերջնաժամկետը (երկրորդ փուլ) հուլիսի 10-ն է: Նշված ժամկետը միշտ պահպանվել է:

Երկրորդ փուլում, մոտ մեկ ամիս հետո (2013 թվականի բյուջետային գործընթացի ժամանակացույցի համաձայն՝ մինչև օգոստոսի 6-ը): պետական մարմիններից պահանջվում է ներկայացնել իրենց բյուջետային հայտերը ՀՀ ֆինանսների նախարարություն: Բյուջետային հայտերի հիմքում դրվող հիմնական ծախսային որոշումները ու գերակայություններն արդեն իսկ հաստատված են լինում առաջին փուլում, այսինքն՝ ՄԺԾԾ-ի գործընթացի շրջանակում՝ դրանով իսկ պարզեցնելով բյուջեի մանրամասն հաշվարկման գործընթացը (օր.՝ 2012թ. այդ որոշումները հայտնի են դարձել ՆԳԳ-երին ապրիլին): Պետական բյուջեի նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացվում է սեպտեմբերին: Կառավարության կողմից պետական բյուջեի նախագիծը պետք է ներկայացվի Ազգային ժողով հաջորդ բյուջետային տարվա սկզբից առնվազն 90 օր առաջ (այսինքն՝ մինչև հոկտեմբերի 3-ը):

Այսպիսով, քննության առնվող ժամանակաշրջանի յուրաքանչյուր տարվա համար սահմանվել է տարեկան պետական բյուջեի կազմման հստակ ժամանակացույց, որը, ընդհանուր առմամբ, պահպանվել է: Ժամանակացույցով բավարար ժամանակ է հատկացվել ՆԳԳ-ներին հաջորդ տարվա իրենց բյուջետային հայտերը նախապատրաստելու համար:

**(ii) Բյուջետային հայտերի նախապատրաստման հստակությունը/ համակողմանությունը և դրա ուղղորդման մեջ քաղաքական ներգրավվածությունը (բյուջեի շրջաբերական կամ համարժեք այլ փաստաթուղթ)**

Պետական մարմիններին ուղարկվող հաջորդ տարվա բյուջետային հայտերը կազմելու և դրանք ներկայացնելու մեթոդական ցուցումներում արտացոլվում են Ազգային ժողովի հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի, երկարաժամկետ ծրագրերի և արդեն իսկ հաստատված վերջին պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի դրույթներից բխող առաջիկա տարվա քաղաքականության գերակայությունները և ծախսերի ֆինանսավորման նախնական կողմնորոշիչ սահմանաչափերը:

Հատկանշական է առաջիկա երեք տարվա պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման գործընթացում պետական կառավարման մարմինների, քաղաքական պաշտոնյաների և ուժերի ընդգրկվածությունը: Մասնավորապես Հայաստանում գործում են ՄԺԾԾ-ի մշակման մշտապես գործող Բարձրագույն Խորհուրդն ու Համակարգող Խումբը (Աղյուսակ 11-ում ներկայացվում է նրանց կազմը):

**Աղյուսակ 11. ՄԺԾԾ-ի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի և համակարգող խմբի կազմը<sup>4</sup>**

Հանձնախմբի անվանումը	Կազմը
<p>ՄԺԾԾ մշակման մշտապես գործող բարձրագույն խորհուրդ</p>	<p>ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ)                      ՀՀ ֆինանսների նախարար (խորհրդի նախագահի տեղակալ)                      ՀՀ տարածքային կառավարման նախարար                      ՀՀ կենտրոնական բանկի նախագահ (համաձայնությամբ)                      ՀՀ առողջապահության նախարար                      ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար                      ՀՀ կրթության և գիտության նախարար                      ՀՀ պաշտպանության նախարար                      ՀՀ մշակույթի նախարար                      ՀՀ էկոնոմիկայի նախարար  <b>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ</b>  <b>Ազգային ժողովի մեծամասնություն կազմող կուսակցությունների ներկայացուցիչներ (խորհրդատվական ձայնի իրավունքով)</b></p>
<p>ՄԺԾԾ մշակման աշխատանքները համակարգող մշտապես գործող խումբ</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ (խմբի ղեկավար)                      ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ                      ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ                      ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ                      ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ                      ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ                      ԶԳ-ների ներկայացուցիչներ (համաձայնությամբ)</p>

<sup>4</sup> Ինքնազնահատման աշխատանքների իրականացման ժամանակահատվածում

Ինչպես երևում է Աղյուսակ 11-ից, ՄԺԾԾ գործընթացում քաղաքական ներկայացվածությունը շատ բարձր է, և ՄԺԾԾ քաղաքական որոշումները կայացվում են այս մակարդակում: Քաղաքական մակարդակի ներգրավվածությունը առկա ոչ միայն ՄԺԾԾ-ի ավարտական փուլում փաստաթուղթը հաստատելիս, այլև գործընթացի տարբեր փուլերում, ինչպիսիք են, օրինակ, ՄԺԾԾ-ի նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների քննարկումը, ծախսերի չափաքանակների հաստատումը և այլն: Այսպիսով, ՄԺԾԾ-ի և բյուջետային գործընթացներում հաջողությամբ համադրված են «վերևից-ներքև» և «ներքևից-վերև» տեղեկատվական հոսքերը: Ինչպես նշվում է «ԿՑ-12» ցուցանիշի նկարագրական բաժնի կետ (i)-ում, գործընթացի հուսալիությունը արտացոլված է պետական մարմինների բյուջետային ծախսերի տարեկան նախահաշիվներում, որոնցում նախատեսվող հատկացումները էապես չեն տարբերվում նախորդ տարվա ՄԺԾԾ-ի երկրորդ տարվա ծախսերի ֆինանսավորման կողմնորոշիչ մակարդակներից, իսկ նշանակալից տարբերությունների բացատրությունը և հիմնավորումն արտացոլվում է ՆԳԳ-ների կողմից տրամադրվող տեղեկատվությունում:

Գնահատման թիմի հետ հանդիպումների ժամանակ նախարարությունների ներկայացուցիչները նշել են, որ 2008թ. ՊԾՖՀ-ից հետո ՄԺԾԾ-ի գործընթացի որակն էապես բարելավվել է: Սա պայմանավորված է նրանով, որ ճյուղային նախարարություններն ավելի լավ են տեղեկացված և ունակ ՄԺԾԾ-ի հայտերի քննարկման ժամանակ մասնակցելու ՖՆ-ի հետ կառուցողական երկխոսությանը և, ըստ այդմ, կարող են ավելի հետևողականորեն հիմնավորել «ներ», այսինքն՝ «բազային»/շարունակական նախահաշիվներից բացի այլ լրացուցիչ ծախսերի անհրաժեշտությունը: ՄԺԾԾ-ի գործընթացի ներդրման առաջին տարիներին (այսինքն՝ 2000-ականների կեսերին) ճյուղային նախարարությունների հետ բանակցման ժամանակ ՖՆ-ն ուներ գլխավոր դերակատարություն, ինչը պայմանավորված էր ոչ միայն անցյալից ժառանգած բյուջետավորման ընթացակարգերով, այլ նաև նրանով, որ ՆԳԳ-ներում քաղաքականության ձևավորման, կառավարման և մոնիտորինգի գործառույթներն առանձնացված էին մեծապես մուտքերի և նորմատիվային չափանիշների վրա հիմնվող բյուջետավորման գործընթացներից:

Այսպիսով, ՆԳԳ-երին տրամադրվում է համապարփակ և հստակորեն սահմանված բյուջետային հայտերի կազմման շրջաբերական, որն արտացոլում է կառավարության կողմից հաստատված նախնական առավելագույն սահմանաչափերը նախքան ՆԳԳ-երի շրջանում նշված փաստաթղթի տարածումը:

### **(iii) Օրենսդիրի կամ համանման լիազորությամբ օժտված այլ մարմնի կողմից բյուջեի ժամանակին հաստատումը (վերջին երեք տարում)**

Աղյուսակ 12-ում ներկայացվում են Ազգային ժողովի կողմից վերջին չորս տարեկան պետական բյուջեների հաստատման ամսաթվերը: Բոլոր



նշված տարիներին բյուջեները հաստատվել են նախքան ֆինանսական տարվա ավարտը:

### Աղյուսակ 12. Բյուջեի նախագծի հաստատման ամսաթվերը

Բյուջետային տարի	Հաստատման ամսաթիվ
2010թ.	10.12.2009թ.
2011թ.	09.12.2010թ.
2012թ.	08.12.2011թ.
2013թ.	05.12.2012թ.

### Ընթացիկ և պլանավորված աշխատանքները

Վերջին տարիներին մշակվել է ծրագրային բյուջետավորման շրջանակը (ՄԺԾԾ-ն ներդնելուց հետո), որի նպատակն էր էլ ավելի ամրապնդել քաղաքականության խնդիրների և բյուջեների միջև կապը: Ծյուղային նախարարությունները կազմում են բյուջեները նաև ծրագրային դասակարգմանը համապատասխան, որոնք պետական բյուջեի նախագծի հետ մեկտեղ ներկայացվում են Խորհրդարան: Մինչ օրս ծրագրային բյուջեների ներկայացումը Խորհրդարան պարտադիր բնույթ չէր կրում, սակայն ներկայում, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքում համապատասխան փոփոխություն կատարելուց հետո, 2014 թվականից նաև ծրագրային դասակարգմամբ բյուջեի ներկայացումը ԱԺ դարձել է պարտադիր:

Պետական բյուջեն այսօր էլ կազմվում և կատարվում է ավանդական գերատեսչական, գործառական և հողվածների մանրամասն բացվածքով տրվող տնտեսագիտական դասակարգման հիման վրա: Ինչևէ, ՖՆ-ն կիրառում է «համադրման» աղյուսակ, որն ավտոմատ եղանակով կապ է հաստատում ծրագրային տեղեկատվության և տնտեսագիտական դասակարգման տեղեկատվական բազաների միջև՝ դրանով իսկ ապահովելով ծրագրային և պաշտոնական բյուջեների միջև համապատասխանությունը: Համադրման աղյուսակը նաև թույլ է տալիս մոնիտորինգի և հաշվետվական համակարգերում կիրառել ինչպես ծրագրային բյուջեի, այնպես էլ պաշտոնական բյուջեի դասակարգումները:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-11	A	A	<b>Գնահատման չափանիշների առումով կարարողականը մնացել է անփոփոխ,</b> սակայն ՄԺԾԾ-ների որակը բարձրացել է:
(i)	A	A	Գոյություն ունի տարեկան բյուջեի կազմման հստակորեն սահմանված ժամանակացույց, որը, ընդհանուր առմամբ, պահպանվում է և բավարար ժամանակ է տալիս ՆԳԳ-երին (ՄԺԾԾ հայտերի կազմման շրջաբերականը ստանալու ամսաթվից հետո առնվազն վեց շաբաթ) մանրամասնորեն կազմված հայտերը իմաստալից կերպով ու ժամանակին կազմելու համար:
(ii)	A	A	ՆԳԳ-երին տրամադրվում է բյուջետային հայտերի կազմման համապարփակ և հստակորեն սահմանված շրջաբերական, որն արտացոլում է բյուջեի կազմման գործընթացի ռազմավարական փուլում նախքան ՆԳԳ-երի շրջանում վերը փաստաթղթի տարածումը կառավարության կողմից հաստատված նախնական առավելագույն սահմանաչափերը:
(iii)	A	A	Վերջին երեք տարիներին օրենսդիրը հաստատել է հաջորդ տարվա պետական բյուջեն մինչև գալիք բյուջետային տարվա սկիզբը:

### 3.4.2. ԿՑ-12. Ֆիսկալ պլանավորումը, ծախսային քաղաքականությունը և բյուջետավորումը մեկից ավելի տարիների կտրվածքով

Այս ցուցանիշը հաշվի է առնում միջնաժամկետ հեռանկարում բյուջետավորման և քաղաքականության առաջնահերթությունների միջև կապը և այն, թե որքանով են քաղաքականության միջոցառումների ազդեցության ծախսային գնահատումը ներառված բյուջեի ձևավորման գործընթացում:

**(i) Մեկից ավելի տարիների կտրվածքով ֆիսկալ կանխատեսումների կատարումը և գործառական դասակարգմամբ հատկացումների որոշումը**

Յուրաքանչյուր տարի «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն, հանրապետությունում կազմվում, ՀՀ կառավարության կողմից հաստատվում և Ազգային ժողով է ներկայացվում առաջիկա երեք տարիների ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը<sup>5</sup> (այդ մասին նշվում է նաև «ԿՑ 11» ցուցանիշի նկարագրական բաժնում): Ընդ որում, ՄԺԾ-ի հաստատման տարվան հաջորդող տարում կազմվող հերթական ՄԺԾ-ում ավելացվում է հերթական 3-րդ տարին: ՄԺԾ-ում ներկայացվում են մակրոտնտեսական և ագրեգացված ֆիսկալ ցուցանիշների կանխատեսումները (ծախսերը ներկայացվում են ըստ ծրագրերի՝ տնտեսագիտական, գործառական և գերատեսչական դասակարգմամբ): ՄԺԾ-ով առաջիկա տարվա համար նախատեսված և առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշների միջև շեղումների առկայության դեպքում այդ շեղումները և դրանց առաջացման պատճառները օրենքի պահանջի համաձայն ենթակա են ներկայացման պետական բյուջեի նախագծում:

ՄԺԾ-ն պարունակում է ոչ միայն հարկաբյուջետային տեղեկատվություն եկամուտների, ծախսերի ու դեֆիցիտի վերաբերյալ: Այն նաև արտացոլում է հարկաբյուջետային սկզբունքները, ռիսկերն ու մակրոտնտեսական կանխատեսումները, ոլորտային վերլուծությունը, տվյալ ժամանակահատվածում հոշակված ոլորտային գերակայությունները, կանխատեսվող ծախսերի վրա ազդող ծախսային գործոնները ինչպես ծավալների, այնպես էլ գների առումով, ոլորտների կտրվածքով ծրագրերի և դրանց նպատակների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը (մոտ 900 էջ, ներառյալ հավելվածները և ծրագրային բյուջետավորման դասակարգումը):<sup>6</sup> ՄԺԾ-ն կուռ, հուսալի և միասնական համակարգ է: Տարիներ առաջ ներդրված ՄԺԾ-ն երկար ուղի է անցել և դեռ կարող է էլ ավելի կատարելագործվել ծրագրային բյուջետավորման ընթացիկ բարեփոխումների միջոցով:

Որպես կանոն, ՄԺԾ-ները հիմնվում են 10-15 տարվա ռազմավարական հեռանկար ընդգրկող երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի վրա: Նման առաջին ծրագիր հանդիսանում էր Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ընդգրկում էր 2003-2015թթ. ժամանակաշրջանը), որից հետո ընդունվեց Կայուն զարգացման ծրագիրը (ընդգրկում է 2008-2021թթ. ժամանակաշրջանը): Երրորդ ռազմավարական ծրագիրը՝ Հայաստանի զարգացման ռազմավարական ծրագիրը, ներառում է 2013-2025թթ. ժամանակային հորիզոնը: Սույն գնահատման իրականացման պահի դրությամբ այն դեռևս հաստատված չէր Կառավարության կողմից,

<sup>5</sup> Բյուջետային համակարգի մասին օրենք, հոդված 21, կետ 2

<sup>6</sup> ՄԺԾ-ի փաստաթղթի անգլերեն թարգմանությունը չի պարունակում ծրագրային բյուջետավորման դասակարգումը, որը ներառված է միայն ՄԺԾ-ի հայերեն բնօրինակում:

բայց վերջնական նախագիծը հրապարակվել էր ՀՀ ֆինանսների նախարարության կայքում 2013թ. երրորդ եռամսյակում և ռազմավարական փուլի ընթացքում («ԿՑ-11») այն անմիջականորեն կիրառվել է 2014թ. պետական բյուջեի և 2014-2016թթ. ՄԺԾԾ-ի նախագիծը մշակելիս:

### **(ii) Պարտքի կայունության վերլուծությունների շրջանակն ու հաճախականությունը**

ԱՄՀ-ի և Համաշխարհային բանկի հետ համատեղ ամեն տարի ՖՆ-ն իրականացնում է պարտքի կայունության վերլուծություն, որը ներառում է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պարտքը: Վերլուծության եզրակացությունները ամփոփ ներկայացվում են նաև ՄԺԾԾ-ի «Հարկաբյուջետային ռիսկեր» բաժնում:<sup>7</sup> ԱՄՀ-ն/Համաշխարհային բանկը անցկացրել են ՖՆ-ի աշխատակիցների ուսուցում ՊԿՎ-ի վերաբերյալ, որի մեթոդաբանությունը ի սկզբանե մշակվել է նշված երկու կառույցների կողմից:

### **(iii) Մեկից ավելի տարիների կտրվածքով ընթացիկ և ներդրումային ծախսերի գնահատմամբ ուղեկցվող ոլորտային ռազմավարությունների առկայությունը**

Ոլորտային ռազմավարական ծրագրերը (այսինքն՝ տվյալ ոլորտի համար կառավարության համար հաստատված այն ռազմավարական ծրագրերը, որոնք այնուհետև ծառայում են որպես հիմք ինչպես երկարաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ ծրագրերի կազմման համար) ամբողջապես չեն ընդգրկում տվյալ ոլորտը, կամ դրանք չեն պարունակում ծախսային գնահատականներ: Հայաստանում կիրառվող մոտեցման համաձայն, առանձին ոլորտային ռազմավարություններում ֆինանսական կանխատեսումները կրում են տեղեկատվական բնույթ: Եթե դրանք ենթակա լինեն պարտադիր կատարման, ապա կարող են խոչընդոտել յուրաքանչյուր տարի իրականացվող ՄԺԾԾ պլանավորման գործընթացին, որի շրջանակում դիտարկում են բոլոր ոլորտների գծով համապարփակ ֆինանսական պլանները՝ հաշվի առնելով ընդհանուր ծախսային առաստաղով պայմանավորված սահմանափակումները: Փոխարենը, բոլոր ոլորտների ռազմավարական պլանավորումն ու դրանց հանրագումարային ֆինանսական կանխատեսումներն իրականացվում են հեռանկարային ռազմավարական ծրագրերի շրջանակում (ԱՀՌԾ (2003թ.), ԿԶԾ (2008թ.), ՀԶՌԾ (2013թ., նախագիծ)), իսկ այնուհետև դրանք տեղափոխվում են եռամյա ՄԺԾԾ-ի պլանավորման գործընթաց:

Ինչևէ, ծախսերի գնահատում կատարվում է ՄԺԾԾ-ի գործընթացի շրջանակում: Այն ավելի իրատեսական է, քանի որ հեռանկարային պլանավորման համեմատ այստեղ ծախսերը կարող են հաշվարկվել առավել ստույգ կերպով, օրինակ, դրանք կարող են ներառել հանձնառված կապիտալ

<sup>7</sup> Հրապարակված ՊԿՎ-ի (հայերեն տարբերակ) առաջին նախադասությամբ նշվում է, որ ՊԿՎ-ն իրականացվել է Համաշխարհային բանկի հետ համատեղ:

ներդրումներից բխող ապագա ընթացիկ ծախսերը:

**(iv) Ներդրումային բյուջեների և առաջանցիկ ծախսային հաշվարկների միջև կապերը**

Կարևոր ներդրումների մեծ մասն ընտրվում է համապատասխան ոլորտային և հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրերի հիման վրա, սակայն նրանց ազդեցությունը ընթացիկ ծախսերի վրա բյուջեների նախագծերի կազմման ժամանակ ոչ միշտ է հաշվի առնվում: Պետական ներդրումների տնտեսական և ֆինանսական գնահատումն իրականացվում է համապատասխան ճյուղային նախարարության կողմից, իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունը հանդես է գալիս այդ գնահատականների հիմնավորվածությունը ուսումնասիրող և դրա վերաբերյալ կառավարությանը եզրակացություն ներկայացնող մարմնի դերում: Ընթացիկ և ներդրումային ծախսերի հիմնավորվածության ուսումնասիրությունները կատարվում են առանձնացված, սակայն պլանավորման ընթացքում տեղի է ունենում դրանց համադրում:

Իրականում ընթացիկ և ներդրումային ծախսերի փոխկապվածության որակի ու արժանահավատության մակարդակը կախված է ոլորտային պատասխանատու մարմինների պլանավորման ու բյուջետավորման կարողությունների մակարդակից և նշված կարողությունների փոխադարձ ինտեգրման աստիճանից: Նշված ինտեգրումը դեռևս ավարտուն չէ: Ծրագրային բյուջետավորման շրջանակը թվացյալորեն արտացոլում է ինտեգրումը, բայց նույնիսկ այսօր, պլանավորման ու բյուջետավորման գործընթացների մի քանի տարի ընթացող բարեփոխումներից հետո, ընթացիկ և կապիտալ ծախսերի բյուջետավորմամբ զբաղվող ստորաբաժանումները ՖՆ-ում իրականում դեռևս գործում են իրարից առանձին: Կիրառվող հաշվապահական հաշվառման մեջ կապիտալ ներդրումներից բխող ընթացիկ ծախսերը չեն տարանջատվում:

**Ընթացիկ և պլանավորված աշխատանքները**

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը պլանավորում է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացնել տեխնիկական աջակցության ծրագիր, որի նպատակն է հստակեցնել և նկարագրել ներդրումային և ընթացիկ ծախսերի պլանավորման միասնական համակարգը, որը կկիրառվի պետական բյուջեի պլանավորման ու կազմման ժամանակ: Այսպիսով, թեև նախատեսված են որոշակի բարելավումներ, սակայն տրվում է նույն գնահատականը, ինչ նախորդ ՊԾՖՀ-ում:

«ԿՑ-11»-ի նկարագրական բաժնում նշվող ընթացիկ և պլանավորված աշխատանքները վերաբերում են նաև «ԿՑ-12»-ին:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-12	B	B	<b>Կատարողականը, ընդհանուր առմամբ, մնացել է անփոփոխ</b> , բայց չափում (iii)-ի առումով բարելավվել է:
(i)	A	A	<b>Գնահատման չափանիշի համաձայն, կատարողականը մնացել է անփոփոխ:</b> ՄԺԾԾ-ի հայտերի և ինքնին ՄԺԾԾ-ի փաստաթղթի որակը ժամանակի ընթացքում բարելավվել է:
(ii)	A	A	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Ամեն տարի կատարվում է արտաքին և ներքին պարտքի կայունության վերլուծություն:
(iii)	D	C	<p><b>Կատարողականը բարելավվել է՝</b> հաշվի առնելով հեռանկարային ռազմավարական ծրագրերի մշակման կայացած համակարգը և դրա փոխկապակցվածության բարձր աստիճանը տարեկան ՄԺԾԾ և բյուջետային պլանավորման գործընթացների հետ: Հեռանկարային ծրագրերը իրատեսական են, սակայն չեն պարունակում ծախսային գնահատականներ, քանի որ ծախսերի գնահատումը կատարվում է ՄԺԾԾ-ի գործընթացի շրջանակում:</p> <p><i>Գ2. Սահմանված են մի քանի կարևոր ոլորտների ռազմավարությունները, սակայն ծախսերի էական գնահատում կատարվել է միայն առաջնային ծախսերի մինչև 25 տոկոսը ներկայացնող ոլորտների համար:</i></p>
(iv)	C	C	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Գնահատման չափանիշը հետևյալն է. «Բազմաթիվ ներդրումային որոշումների կապը ոլորտային ռազմավարությունների հետ թույլ է, իսկ միայն փոքրաթիվ (բայց կարևոր) դեպքերում են դրանցից բխող ընթացիկ ծախսերը ներառված առաջանցիկ բյուջետային նախահաշիվներում»:

### 3.5. Բյուջեի կատարողականի կանխատեսելիությունն ու վերահսկումը

Այս ցուցանիշներն ուսումնասիրում են բյուջեի կատարման համար միջոցների կանխատեսելիությունն ու բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվողականության ապահովմանն ուղղված ներքին հսկողություններն ու միջոցառումները: Այս ցուցանիշները բաժանված են երեք ենթաբաղադրիչների՝ եկամուտների վարչարարություն, բյուջեի կատարում և դրամական միջոցների/պարտքի կառավարում ու ներքին հսկողության համակարգեր:

#### 3.5.1. Եկամուտների վարչարարությունը (ԿՑ 13-15)

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-13 (Մ2). Հարկ վճարողների պարտականությունների և պարտավորությունների թափանցիկություն	C+	B+	<i>Կատարողականը բարելավվել է հարկ վճարողների սպասարկման (չափում (ii)) և հարկային գանգատարկման գործընթացի (չափում (iii)) առումով, ի շնորհիվ 2010թ. միջգերապետական գանգատարկման խորհրդի ստեղծման:</i>
ԿՑ-14 (Մ2). Հարկ վճարողների գրանցման և հարկերի գնահատման միջոցառումների արդյունավետություն	B	B	<i>Կատարողականը բարելավվել է չափում (iii)-ի մասով՝ ի շնորհիվ ռիսկերի վրա հիմնվող հարկային ստուգումների համակարգի հաջող ներդրման և կիրառության: Ընդհանուր գնահատականը մնացել է անփոփոխ:</i>

<p>ԿՑ-15 (Մ1). Հարկային վճարումների հավաքագրման արդյունավետություն</p>	<p><b>D+</b> (վերանայվել է «B+»-ից)</p>	<p><b>D+</b></p>	<p><b>2010-2012թթ. փարեվերջի դրությամբ հարկային ապառքների կուտակային ծավալը կազմել է ընդհանուր հարկային հավաքագրումների 13%-ից 17%-ը: Ապառքների մեծ մասը բաժին է ընկնում ընդամենը 30 կազմակերպություններին, և դրանց հավաքագրման մակարդակը շարք ցածր է: ՊԵԿ-ը ի վիճակի է 2012թ. ներդրված «Հարկատու 3» համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով հաշվառել հարկային ապառքները:</b></p> <p>2008թ. ՊԾՖՀ-ի գնահատականը ՊԵԿ-ի կողմից վերանայվել է «D+»-ի, քանի որ այդ ժամանակ դեռևս ներդրված չէր «Հարկատու 3» էլ-կառավարման համակարգը:</p>
--	---	------------------	---

### 3.5.1.1. ԿՑ-13. Հարկ վճարողների պարտականությունների և պարտավորությունների թափանցիկությունը

Այս ցուցանիշը գնահատում է հիմնական հարկային օրենսդրության և կանոնակարգերի հստակության և համակողմանիության մակարդակը, այս տեղեկատվության հասանելիությունը հարկատուներին և հարկային գանգատարկման մեխանիզմների առկայությունն ու կիրառությունը:

#### Նախապատմություն

ՀՀ-ում գործում է միասնական հարկային համակարգ: «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված են հիմնական հարկատեսակները, իսկ առանձին հարկատեսակների հետ կապված հարաբերությունները կարգավորված են առանձին հարկատեսակների մասին օրենքներով և համապատասխան ենթաօրենսդրական ակտերով: Գործող օրենսդրության համաձայն, պետական բյուջե հավաքագրվող հիմնական հարկատեսակներն են՝ ավելացված արժեքի հարկը (2012-13թթ.՝ 50% մասնաբաժին), ակցիզային հարկը (6.6% մասնաբաժին), շահութահարկը (15.9% մասնաբաժին), եկամտային հարկը (12.3% մասնաբաժին), մաքսատուրքերը (5.8%



մասնաբաժին) և այլ եկամուտները, օր.՝ շրջանառության հարկը (10.1% մասնաբաժին): Առանձին գործունեության տեսակներ իրականացնող տնտեսվարողների համար սահմանված են ավելացված արժեքի հարկին և շահութահարկին փոխարինող հաստատագրված հարկեր և արտոնագրային վճարներ: Հարկատեսակների տվյալներն ամփոփ ներկայացվում են Աղյուսակ 13-ում:

**Աղյուսակ 13. Եկամուտների հավաքագրումները**

	2010թ.	2011թ.	2012թ.	Աճի տեմպ		
				2010թ.	2011թ.	2012թ.
Հավաքագրված հարկային եկամուտներ	592,529,892	652,083,928	747,612,355	12%	10%	15%
ԱԱՀ	301,730,546	328,745,512	369,661,641	16%	9%	12%
Ակցիզային հարկ	48,140,510	39,404,481	49,323,791	11%	-18%	25%
Շահութահարկ	77,813,062	97,842,317	118,653,446	-5%	26%	21%
Եկամտահարկ	73,939,848	81,210,641	91,667,269	19%	10%	13%
Մաքսատուրք	29,366,721	36,289,380	43,040,111	14%	24%	19%
Այլ	61,539,205	68,591,597	75,266,097	10%	11%	10%

Պետական հարկային քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության համար պատասխանատու է ՀՀ Ֆինանսների նախարարությունը, որի լիազորությունները վերոնշյալ բնագավառներում սահմանված են նախարարության կանոնադրությամբ: Իրականացվող հարկային վարչարարության համար պատասխանատու է ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեն, որի լիազորությունները ու խնդիրները հիմնականում սահմանված են «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում:

2008թ. գնահատումից հետո մինչ օրս Հայաստանի հարկային ու մաքսային համակարգում իրականացվում են հիմնարար փոփոխություններ՝ ուղղված եկամուտների վարչարարության թափանցիկության և արդյունավետության բարձրացմանը, որի շնորհիվ բարելավվել է գործարար

միջավայրը և ամրապնդվել է հարկման բազան:

- Հարկային և մաքսային մարմինները միավորվել են՝ դառնալով մեկ միասնական մարմին:
- Կատարվել են օրենսդրական փոփոխություններ, որոնց նպատակն էր բարելավել գործարար միջավայրը և կատարելագործել հարկային վարչարարությունը: 2008թ. իրականացված միջոցառումների շրջանակում ձեռնարկվել են քայլեր հետևյալ ուղղություններով՝ խոշոր բիզնեսի ճիշտ, լիարժեք և ժամանակին հարկման ապահովում, փոքր բիզնեսի և միջին բիզնեսի համար արդյունավետ հարկային բեռի սահմանում՝ «փափուկ» հարկային վարչարարության կիրառմամբ, հարկային մարմնում կոռուպցիայի հաղթահարում, կամավոր հարկային օրինապահության (ինքնահայտարարման) սկզբունքի վերաբերյալ ուսուցման անցկացում, հարկային ստուգումների նոր քաղաքականություն իրականացում, հարկային մարմնում կառավարման արդյունավետ համակարգի ներդրում, և հարկային վարչարարությունում տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարման ապահովում: Նշված միջոցառումներն իրականացվել են 2012 թվականին:
- Միջոցառումների երկրորդ փուլի նպատակն է բարձրացնել հարկ վճարողների սպասարկման որակը, վերակազմակերպել հարկային մարմնի հիմնական բիզնես գործընթացները, ներդնել հարկային հսկողության ժամանակակից մեխանիզմներ, բարձրացնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը և կատարելագործել ներքին հսկողության մեխանիզմները:

Մասնավորապես, վերջին 5 տարում իրականացվել են հետևյալ առանձնակի միջոցառումները.

- Մշակվել և 2010 թվականին հաջողությամբ գործարկվել է էլեկտրոնային հաշվետվությունների համակարգը, որը պարտադիր է խոշոր ընկերությունների համար և կամավոր՝ ՓՄՁ-ների համար: 2011 թվականին ստեղծվել է էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրս գրման համակարգը, որի կիրառումը կամավոր է բոլոր հարկ վճարողների համար: Մինչև 2011թ. կեսը տվյալ համակարգը ընդլայնվել է՝ ներառելով ավելի քան 4000 հարկ վճարող:
- Ներդրվել է ՀՀ տարածքից արտահանվող ապրանքների մասով ՀՀ-ում մատակարարներին վճարված ավելացված արժեքի հարկի գումարների վերադարձման ավտոմատացված համակարգ: Միաժամանակ, պետության համար սահմանվել են տույժեր ավելացված արժեքի հարկի վերոնշյալ գումարները սահմանված ժամկետներում տնտեսվարողներին չվերադարձնելու համար: Այնուամենայնիվ, ՊԾՖՀ-ի գնահատող թիմի հետ հանդիպումներում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներն

արտահայտել են իրենց մտահոգությունը վերը նշված համակարգի թափանցիկության և արդարության առնչությամբ:

- Խորհրդարանը հաստատել է Մաքսային օրենսգրքի փոփոխությունները, որոնց համաձայն թույլատրվում են էլեկտրոնային մաքսային հայտարարագրերը, էլեկտրոնային ստորագրությունները և էլեկտրոնային վճարումները: Վերը փոփոխությունները ուժի մեջ են մտել 2011 թվականին: Արդյունքում կրճատվել է մաքսագերծման համար պահանջվող միջին ժամանակը, որը ներկայում 2 օր է:
- Նեղացվել է հարկային արտոնությունների շրջանակը՝ հանելով այն արտոնությունները, որոնց դրական ազդեցությունը տնտեսության վրա էական չէ:
- Բարելավվել են վարչական ընթացակարգերը: Օրինակ՝ 2012 թվականին նորովի է շարադրվել հարկ վճարողների կողմից առաքվող կամ տեղափոխվող ապրանքների ուղեկցող փաստաթղթերի գրանցման կարգը:
- Առավել հստակեցվել են հարկային օրենսդրության խախտումների համար սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման ընթացակարգերը:
- Ներդրվել է ռիսկերի հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգը:

### **(i) Հարկային պարտավորությունների հստակությունն ու համակողմանիությունը**

Ընդհանուր առմամբ, 2008 թվականից ի վեր էականորեն կրճատվել են գործող հարկային օրենսդրությունում առկա ոչ հստակ և ոչ ամբողջական դրույթները: Օրենսդրությամբ սահմանվող հարկային նորմերը պարունակում էին անհամապատասխանություններ, երկիմաստություններ և թյուրմեկնաբանություններ (օր.՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» և «Հարկերի մասին» օրենքների որոշ դրույթներ ամբողջական և հստակ չէին), որոնց վերացման ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Կատարելագործվել են հարկային օրենսդրության առանձին դրույթների վերաբերյալ պաշտոնական պարզաբանումների տրամադրման գործընթացները՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել հարկային օրենսդրությունում առկա ոչ հստակ դրույթները: ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և Ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող պաշտոնական պարզաբանումները պետք է կազմվեն հստակ ուղեցույցներին համապատասխան և համաձայնեցվեն նշված երկու մարմինների միջև: Արդյունքում, գործող օրենսդրությունում մեծապես կրճատվել է ոչ հստակ և ոչ համապարփակ դրույթների թիվը, և դրանով իսկ նվազել է պարզաբանումներ տալու անհրաժեշտությունը: 2011թ. ընթացքում տրամադրվել է շուրջ 44 պաշտոնական պարզաբանում, իսկ 2012թ. դրանց թիվը կտրուկ նվազել է՝ դառնալով 27:

Հարկային օրենսդրությունը թույլ է տալիս հարկային մարմնին որոշ դեպքերում կայացնել որոշումներ սեփական հայեցողությամբ, սակայն հայեցողականության կիրառման աստիճանը հստակորեն կարգավորվում է օրենսդրությամբ, որը ստույգ սահմանում է հարկվող օբյեկտների, հարկման դրույքաչափերի, հարկերի վճարման ժամկետների որոշման, ինչպես նաև օրենսդրական պահանջների խախտման համար պատասխանատվության տեսակների ու չափերի վերաբերյալ կանոնները: Օրինակ՝ գործող օրենսդրության համաձայն, եթե հարկ վճարողը հարկային մարմին չի ներկայացնում հարկվող օբյեկտների վերաբերյալ հաշվապահական փաստաթղթերը, ապա հարկվող օբյեկտը որոշվում է հարկային մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հայեցողական մոտեցման ակնառու օրինակ է հարկային պարտավորությունների մի մասը սահմանված ժամկետից շուտ վճարելու ուղղությամբ Պետական եկամուտների կոմիտեի կողմից օրինապահ հարկ վճարողների վրա գործադրված ճնշումը (ինչպես ՊԾՖՀ-ի գնահատող թիմի հետ հանդիպման ժամանակ նշել է ԱՄՀ-ի մշտական ներկայացուցիչը և ՔՀԿ-ներից մեկը): 2008թ. գնահատմանը հաջորդող ժամանակաշրջանում նման ճնշումները նվազել են, բայց ՀՀ Կառավարությունը գտնում է, որ խնդիրը դեռևս չի վերացել, և այդ մասին է վկայում ԱՄՀ-ի հետ վերջերս համաձայնեցված «Երկարաձգված ֆինանսավորման վարկի» ծրագրի առնչությամբ ԱՄՀ-ին հղված Մտադրությունների նամակը: Նշված նամակին կից Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունների հուշագրում (ՏՖՔՀ) շեշտադրվում է հետևյալը. «Նպատակ ունենք ծրագրի գործողության ընթացքում արդյունավետությունը խթանող եկամուտների վարչարարության և հարկային քաղաքականության միջոցառումների միջոցով ավելացնել հարկային եկամուտները»: «Արդյունավետությունը խթանող» արտահայտությունը նշանակում է «հավակնոտ նպատակներ սահմանելու և գործող հարկ վճարողներին թիրախավորելու նախկին գործելակերպից անցում հարկային օրինապահության ցածր մակարդակ արձանագրած ուղղություններում ջանքերի գործադրմանը»<sup>8</sup>):

## **(ii) Հարկային պարտավորությունների և վարչական ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը հարկ վճարողների համար**

Հարկ վճարողների զանգվածային և անհատական իրազեկման նպատակով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը կիրառում է բազմաթիվ միջոցներ, այդ թվում.

<sup>8</sup> Վերցված է 2014թ. փետրվարի 20-ի ՀՀ Կառավարության «Երկարաձգված ֆինանսավորման վարկի» ներքո պայմանավորվածության խնդրանքի մասին ԱՄՀ-ի աշխատակիցների գեկույցի Հավելված 1-ի («Մտադրությունների նամակ») Ներդիր 1-ից (Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունների հուշագիր): ՄՆ-ն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից: Զեկույցը հրապարակվել է ԱՄՀ-ի պաշտոնական կայքում 2014թ. մարտի 31-ին, 2014թ. մարտի 7-ին վերոնշյալ վարկը ԱՄՀ-ի Տնօրենների գործադիր խորհրդի կողմից հաստատելուց հետո:

### **Հարկ վճարողների զանգվածային իրազեկումը.**

ա) ՀՀ ԿԱ ՊԵԿ-ն ունի հարկային և մաքսային ծառայությունների համապատասխան արքար՝ [www.taxservice.am](http://www.taxservice.am) և [www.customs.am](http://www.customs.am) կայքերը (ինչպես նաև դրանց անցումն ապահովող [www.petekamutner.am](http://www.petekamutner.am) հասցեն): Կայքերն ապահովում են օգտվողների լայն շրջանակի համար հարկային և մաքսային տեղեկատվություն, այդ թվում՝ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի, պաշտոնական պարզաբանումների և առավել հաճախ տրվող հարցերի ու դրանց պատասխանների, հաճախ հանդիպող սխալների, հաշվետվական ձևերի, հարկերի վճարման հաշվեհամարների, հարկային և մաքսային վիճակագրության, հարկային և մաքսային մարմինների հասցեների, կառուցվածքի և ղեկավար անձնակազմի վերաբերյալ: Կայքերում նաև տեղադրվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ հրապարակումների էլեկտրոնային տարբերակները, վարվում է ընթացիկ լրահոս: Կատարելագործվել են հարկ վճարողների համար նախատեսված «Թեժ գիծ» ծառայության գործառույթները:

բ) ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը ապահովում է մի քանի պարբերականների հրատարակումը, ներառյալ հետևյալը.

- երկու եռամսյակային ամսագրեր՝ «Հարկատու» և «Մաքսատուն», որոնք ընթերցողին են ներկայացնում հարկային և մաքսային ոլորտների նորությունները, արդի խնդիրները և դրանց լուծումները, կատարվող աշխատանքների ընթացքը և հարկ վճարողների արձագանքները,

- «Հարկային և մաքսային համառոտագիր» ամենամսյա փոքրածավալ ամսագիրը, որը օգտվողներին է ներկայացնում դասակարգված համառոտ տեղեկատվություն՝ հարկային և մաքսային օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ:

գ) 2013 թվականի տարեսկզբից ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը գործարկել է «TaxInfo» շաբաթական հեռուստահաղորդաշար, որը կանոնավոր անդրադառնում է հարկային օրենսդրության և վարչարարության նորություններին, հարկային մարմինների գործունեությանը և դրա առնչությամբ հարկ վճարողների և ԶԼՄ-ների արձագանքներին,

դ) ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը ավանդաբար տեղեկատվական հանդիպումների շարքեր է կազմակերպում հարկ վճարողների և դրանց տարբեր խմբերի համար ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում,

ե) ՀՀ ԿԱ ՊԵԿ Ուսումնական կենտրոնը և Արաբկիրի ու Վանաձորի հարկ վճարողների սպասարկման կենտրոնները պարբերաբար ուսումնական միջոցառումներ են կազմակերպում հարկ վճարողների համար՝ հիմնականում ուշադրությունը կենտրոնացնելով առավել պահանջված թեմաների վրա: Դրանց մասին հայտարարությունները և այլ տեղեկատվությունը հասանելի են ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության կայքում և հարկային տեսչություններում տեղադրված ցուցատախտակների վրա:

## **Հարկ վճարողների անհատական իրազեկումը**

ա) ՀՀ ԿԱ ՊԵԿ կառուցվածքում գործում է հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնը,

բ) Անհատական իրազեկման նպատակով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը գործնականում կիրառում է նաև մի շարք այլ գործիքներ, օրինակ՝ տեղեկատվական տերմինալները, որոնք տեղադրված են բոլոր հարկային տեսչությունների տարածքներում և թույլ են տալիս օգտվողին ինքնուրույնորեն կամ Հարկ վճարողների սպասարկման (ՀՎՍ) ստորաբաժանման աշխատակցի օգնությամբ գտնել փնտրվող տեղեկատվությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային կայքերից և օրենսդրական շտեմարաններից («Առլիս»), մուտք գործել և օգտվել ՀՎՍ էլեկտրոնային ծառայություններից:

ՀՀ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի հետ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հաղորդակցությունը կազմակերպվում է հայերեն լեզվով, որն օրենսդրական պահանջ է: Ինչ վերաբերում է ֆիզիկական անձանց և օտարերկրյա սուբյեկտների հետ հաղորդակցմանը, ապա այս դեպքում կիրառելի են նաև փոխադարձաբար ընդունելի այլ լեզուներ:

### **(iii) Հարկային գանգատարկման մեխանիզմի առկայությունը և կիրառումը**

Հարկային մարմնի և հարկային ծառայողի գործողությունների վարչական կարգով բողոքարկման վերաբերյալ դրույթները կանոնակարգվում են «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1 հոդվածով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով: Հարկային և մաքսային մարմնի գործող գանգատարկման հանձնաժողովը պատասխանատու է հարկային և մաքսային մարմնի գործողությունների դեմ գանգատների ուսումնասիրման, ինչպես նաև հարկային վեճերի լուծման համար: Հանձնաժողովը հարկային մարմնի ղեկավարի կողմից ձևավորվող, վերադաս հարկային մարմնում մշտապես գործող մարմին է: Այն կազմված է նախագահից և ութ անդամից, որոնք իրենց աշխատանքը հանձնաժողովում համատեղում են իրենց զբաղեցրած հարկային ծառայության պաշտոնների հետ: Դիմում-գանգատները հանձնաժողովի կողմից քննության են առնվում 15 օրվա ընթացքում, իսկ դրանց վերաբերյալ որոշումները կայացվում են գանգատի ստացման կամ հանձնաժողովի նիստի ամսաթվին հաջորդող 30 օրվա ընթացքում: 2011-2012թթ. ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի գանգատարկման հանձնաժողովի կողմից քննության է առնվել ընդամենը համապատասխանաբար 230 և 156 գանգատ, որից 42%-ը և 47%-ը բավարարվել է, իսկ 38%-ը և 33%-ը՝ համապատասխանաբար մերժվել: 2013 թվականի առաջին վեց ամիսների ընթացքում հանձնաժողովը քննության է առել թվով 90 գանգատ, որոնց 43%-ը բավարարվել են, իսկ 32% -ը մերժվել:

Հարկ վճարողների կողմից ներկայացվող դիմում-գանգատների քննության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 21-ի թիվ 1361-Ն որոշման հիման վրա 2010թ. ստեղծվել է միջգերատեսչական գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ), որի կազմում ընդգրկվել են ներկայացուցիչներ ՀՀ ֆինանսների նախարարությունից, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից, ՀՀ արդարադատության նախարարությունից, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից և ՀՀ կառավարության աշխատակազմից: Խորհրդում որոշումները կայացվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նիստերն իրավագոր են եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհուրդն իր նիստերի ժամանակ քննարկում է հանձնաժողովի կողմից մերժված կամ մասնակի բավարարված գանգատների փաթեթները և խորհրդի նիստերի անցկացման վայրում դրա մուտքագրվելուն հաջորդող 10 օրվա ընթացքում իր եզրակացությունը ներկայացնում ՀՀ ԿԱ ՊԵԿ: Գանգատարման հանձնաժողովը, հաշվի առնելով խորհրդի ընդունած եզրակացությունը, երկու աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է դիմում-գանգատի վերաբերյալ որոշումը: Խորհրդի ընդունած եզրակացության վերաբերյալ առարկությունների դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահը ներկայացնում է իր առարկությունները, գանգատների փաթեթը և խորհրդի եզրակացությունը ՀՀ վարչապետին: ՀՀ վարչապետի մոտ քննարկումից հետո հանձնաժողովը կայացնում է որոշում, որի բնօրինակը մեկ օրվա ընթացքում տրամադրվում է հարկ վճարողին, իսկ կրկնօրինակը՝ խորհրդին: ՊԵԿ-ի գանգատարման հանձնաժողովի որոշումների ընդունմանը հաջորդող 10 օրվա ընթացքում դրանք հրապարակվում են ՊԵԿ-ի պաշտոնական կայքում:

Ընդհանուր առմամբ, գանգատարկման խորհրդի ինստիտուտի ներդրումը բարելավել է հարկ վճարողների գանգատների քննության գործընթացի անաչառությանը և անկախությանը: Գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհրդի եզրակացությունները չընդունելու դեպքում ՀՀ վարչապետի մոտ գանգատների քննարկումը կարող է նպաստել գործընթացի արդարությանը և անաչառությանը:

Հարկ վճարողը իրավունք ունի նաև դատական կարգով բողոքարկելու ՊԵԿ-ի գործողություններն ու անգործությունը՝ իր հայցադիմումը ներկայացնելով ինչպես վարչական վարույթից հետո, այնպես էլ նախքան այն: Դատական կարգով ներկայացված բողոքները լավում են ընդհանուր իրավասության վարչական դատարանում:

2013թ. ապրիլին կայացած ԱՄՀ-ի Ֆիսկալ հարաբերությունների դեպարտամենտի առաքելությունը եզրակացրել է, որ առաջընթաց է արձանագրվում վիճելի հարցերի լուծման մեխանիզմի կատարելագործման ուղղությամբ (որի մասին հղում է արվում ԱՄՀ-ի 2010թ. հաստատված Երկարաձգված ֆինանսավորման և վարկավորման ծրագրի 6-րդ ուսումնասիրման փաստաթղթում (2013թ. հուլիս)):

## **Ընթացիկ և պլանավորված աշխատանքները**

2013 թվականի հուլիսին ՀՀ կառավարությունը հաստատել է «Հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների ուղեցույցը և դրանցից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը»: Նշյալ ուղեցույցով ամրագրվում են առաջիկա տարիներին ՀՀ հարկային օրենսդրության վերանայման հիմնական սկզբունքները, ինչպես նաև սահմանվում են դրանց իրականացմանն ուղղված միջոցառումները:

2013թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը ազգային փոստային օպերատորի հետ կնքել է համաձայնագիր փոստային բաժանմունքներում հարկ վճարողների սպասարկման (ՀՎՍ) կետեր բացելու վերաբերյալ: ՀՎՍ կետերը հանդիսանում են հարկային տեսչությունների հարկ վճարողների սպասարկման կենտրոնների աշխարհագրորեն առանձնացված ստորաբաժանումներ, որոնք այցելուներին են մատուցում առավել բարձր պահանջարկ ունեցող ՀՎՍ ծառայություններ, այդ թվում տրամադրում պարզաբանումներ և տեղեկատվական աջակցություն հաշվետվությունների ներկայացման և հարկերի վճարման գործում:

2012թ. դեկտեմբերին ՀՀ Կառավարություն է ներկայացվել ՏՀԶԿ-ի ուղեցույցներին համահունչ տրանսֆերտային գնագոյացման մասին օրինագիծը: ԱՄՀ-ի Ֆիսկալ հարաբերությունների դեպարտամենտը, սակայն, հանդես է եկել նշված օրինագծի կատարելագործմանն ուղղված առաջարկներով, որոնք ՀՀ Կառավարությունը նախատեսում է ներառել Խորհրդարանի քննարկմանը ներկայացվելիք օրինագծում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը և Հարկային քաղաքականության վարչությունը տեխնիկական աջակցություն են ստանում Համաշխարհային բանկից, ԱՄՀ-ից և ԱՄՆ ՄԶԳ-ից:<sup>9</sup> ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ իրականացվող 4 տարվա տևողությամբ Հարկային բարեփոխումների ծրագիրը գործարկվել է 2013թ. փետրվարին: Ծրագիրը ներառում է հետևյալ բաղադրիչները. (i) Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում, և (ii) Հարկային քաղաքականության և վարչարարության շուրջ երկխոսության բարելավում:

<sup>9</sup> ԱՄՀ-ի ՖՀԴ-ի կողմից 2010թ. մարտից մինչև 2013թ. ապրիլը տրամադրվել է 7 տեխնիկական աջակցություն եկամուտների վարչարարության կատարելագործման ուղղությամբ:



ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-13	C+	B+	<b>Կատարողականը բարելավվել է հարկ վճարողների սպասարկման (չափում (ii)) և հարկային գանգափարկման գործընթացի (չափում (iii)) առումով:</b>
(i)	B	B	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> ԳՉ (i). Բոլոր հիմնական հարկատեսակներին վերաբերող օրենսդրությունը և ընթացակարգերը հստակ են և ամբողջական, իսկ համապատասխան պետական մարմինների հայեցողական իրավասությունները՝ բավականին սահմանափակված:
(ii)	C	A	<b>Կատարողականը բարելավվել է ի շնորհիվ նրա, որ ՊԵԿ-ի պաշտոնական կայքերը էապես կատարելագործվել են՝ ապահովելով տեղեկատվության ավելի դյուրին և արագ հասանելիությունը հարկ վճարողների համար:</b> Կատարելագործվել են հարկային հարցերի վերաբերյալ պարզաբանումներ տրամադրող «Թեժ գիծ» ծառայության գործառնությունները: 2013թ. սկզբին ՊԵԿ-ը սկսել է շաբաթական պարբերականությամբ թողարկել «TaxInfo» հեռուստաշարը: ՊԵԿ-ը պարբերաբար անցկացնում է ուսուցողական ծրագրեր և գանգվածային քարոզարշավներ:
(iii)	C	B	<b>Կատարողականը էապես բարելավվել է միջ-գերատեսչական գանգափարկման խորհրդի սրբեղծման արդյունքում հարկային գանգափարկման կառուցվածքում անկախության ապահովման միջոցով:</b> ԳՉ (iii). Ստեղծվել և լիարժեքորեն գործում է թափանցիկ վարչական ընթացակարգեր ունեցող հարկային գանգափարկման համակարգ, բայց դեռևս շատ վաղ է գնահատելու նրա արդյունավետությունը, կամ նրա որոշումների հրապարակայնության, էֆեկտիվության, արդարության կամ կատարման նկատմամբ արդյունավետ հսկողության հետ կապված որոշ հարցեր ենթակա են կարգավորման:

ԳՉ = գնահատման չափանիշ

### 3.5.1.2. ԿՑ-14. Հարկ վճարողների գրանցման և հարկերի գնահատման միջոցառումների արդյունավետությունը

#### (i) Հարկ վճարողների գրանցման համակարգում կիրառվող հսկողությունները

1) 2011թ. ապրիլի 1-ից ՀՀ-ում ներդրված է «մեկ պատուհանի» սկզբունքով հարկ վճարողների հաշվառման համարների (ՀՎՀՀ) տրամադրման համակարգը: Այդ սկզբունքի ներքո ՀՎՀՀ-ն տնտեսվարողին է տրամադրվում է պետական գրանցման (հաշվառման) ժամանակ՝ առանց հարկային մարմին դիմելու: Ներկայումս հաշվառման նպատակով հարկային մարմին պետք է դիմեն միայն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, ինչպես նաև նոտարները և դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, դրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունները: ՀՎՀՀ-ը և հաշվառման վկայականը տրամադրվում են դիմողին ոչ ուշ, քան դիմելու օրվան հաջորդող աշխատանքային օրը: Հարկ վճարողին տրամադրվում է եզակի հաշվառման համար (ՀՎՀՀ), որը ենթակա չէ փոփոխման՝ անկախ հարկ վճարողի կարգավիճակից: Վերջինիս վերակազմավորման դեպքում, օրինակ, ՀՎՀՀ-ն փոխանցվում է հարկ վճարողի իրավահաջորդին:

Հարկ վճարողների հաշվառումն իրականացվում է միասնական էլեկտրոնային շտեմարանի միջոցով, որը լիովին ավտոմատացված է և հանդիսանում է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի էլեկտրոնային կառավարման համակարգի առանձին մոդուլներից մեկը: Հարկ վճարողների ռեգիստրի ընդհանուր տվյալները հասանելի են հարկային ծառայության կայքում՝ «ՀՀ հարկ վճարողների փնտրման համակարգ»-ում ([http://taxservice.am/OS\\_Taxpayers.aspx](http://taxservice.am/OS_Taxpayers.aspx)):

ԱԱՀ վճարող համարվողների մասով առանձին հաշվառում վարելու համար կիրառվում է նաև ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման համարներ, որն իրենից ներկայացնում նույն հարկ վճարողի ՀՎՀՀ՝ ավելացրած « / 1» եթե հարկ վճարողը կազմակերպություն է և « / 0», եթե հարկ վճարողը անհատ ձեռնարկատեր է:

ՀՎՀՀ-ի առկայությունը պարտադիր է հարկ վճարողի հաշվետվությունների և վճարահաշվարկային փաստաթղթերի վրա: ՀՎՀՀ-ի առկայությունը նաև պարտադիր է ՀՀ տարածքում կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից բանկային հաշիվներ բացելու դեպքում, որը թույլ է տալիս ՊԵԿ-ին ներառել ֆիզիկական անձանց և ընկերություններին հարկային հաշվառման ցանցում:

Վերջերս առաջընթաց է արձանագրվել նաև եկամտային հարկի և կենսաթոշակային վճարների անձնավորված հաշվառման նոր էլեկտրոնային համակարգի գործարկման միջոցով կենսաթոշակային վճարներում ՀՎՀՀ-ների հաջող ինտեգրման ուղղությամբ:

2013թ. ապրիլին կայացած ԱՄՀ-ի ՖՀԴ-ի առաքելությունը առաջարկել է էլ ավելի ամրապնդել հարկ վճարողների հաշվառման հսկողությունները և հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերը:

**(ii) Գրանցման և հայտարարագրման պարտավորությունների չկատարման դեպքում կիրառվող պատժամիջոցների արդյունավետությունը**

Հարկային օրենսդրության պահանջների խախտման համար գործող օրենսդրությամբ սահմանված են երեք տեսակի պատասխանատվության միջոցներ՝ վարչական, քրեական և ֆինանսական (տույժեր, տուգանքներ): Հարկային օրենսդրությամբ պահանջների խախտման համար նախատեսված պատժամիջոցները նախատեսված են «Հարկերի մասին» ՀՀ օրենքով, իսկ որոշ առանձնահատուկ դեպքերի համար՝ նաև առանձին հարկատեսակների մասին օրենքներով: Մասնավորապես «Հարկերի մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է հետևյալը.

- հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու համար ուշ վճարված հարկի գումարի նկատմամբ օրական 0.15 տոկոսի չափով տույժ,
- հարկային հաշվետվությունները սահմանված ժամկետից 15 օր ուշացումով ներկայացնելու համար ուշ ներկայացված հաշվետվության մեջ նշված հարկի գումարի 5 տոկոս չափով տույժ,
- հաշվապահական հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով վարելու համար այդ խախտման հետևանքով պակաս հաշվարկված հարկի գումարի 10 տոկոսի չափով տուգանք,
- հարկվող օբյեկտը թաքցնելու կամ պակաս ցույց տալու մեկ տարվա ընթացքում հայտնաբերված 1-ին դեպքերի համար թաքցված կամ պակաս ցույց տրված հարկի գումարի 50 տոկոս չափով տուգանք, իսկ մեկ տարվա ընթացքում կրկնակի խախտման դեպքում՝ տուգանք 100 տոկոսի չափով,
- առանց օրենքով սահմանված կարգի պետական գրանցման (հաշվառման) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս երկու հարյուր հազար դրամից: Նշյալ խախտումն արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում կրկնվելու դեպքում գանձվում է տուգանք՝ համապատասխանաբար 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս հինգ հարյուր հազար դրամից: Միաժամանակ, եթե իրականացվող գործունեությունը ենթակա լիցենզավորման, գործունեությունն իրականացնող անձից գանձվում է նաև լիցենզավորման ենթակա տվյալ գործունեության համար սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

Նշյալ գումարները ենթակա են վճարման համապատասխան ակտը ներկայացնելու ամսաթվին հաջորդող 10-օրյա ժամկետում: Հարկային

օրենսդրության պահանջների չկատարման համար նախատեսվող պատժամիջոցները հստակ են: Պատժամիջոցների կիրառումը համարժեքորեն արդյունավետ է այն առումով, որ խախտումը բացահայտելուց հետո հնարավոր չէ խուսափել պատասխանատվությունից: Այնուամենայնիվ, միշտ չէ, որ պատժամիջոցները (որոնք թեև արդյունավետ են) մշտապես հետևողականորեն կիրառվում են:

**(iii) Հարկային աուդիտի և հարկային խարդախության դեպքերի քննության ծրագրերի պլանավորումն ու մոնիտորինգը**

2008թ. ՊԾՖՀ-ից հետո էապես կատարելագործվել է հարկային ստուգումները կարգավորող իրավական դաշտը: Ստուգումների պլանավորման ողջ գործընթացը կարգավորվում է (i) «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, (ii) ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Հարկային մարմնի գործունեության շրջանակներում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» թիվ 1636-Ն որոշմամբ, (iii) ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2011 թվականի նոյեմբերի 28-ի «Ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգումների պլանավորման գործընթացի նկարագրությունը հաստատելու մասին» թիվ 2923-Ա հրամանով և (iv) ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2011 թվականի ապրիլի 28-ի «Հարկային մարմնի կողմից ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման, անցկացման և իրացման կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 745-Ա հրամանով:

Հարկային մարմինը ստուգման է ենթարկում ստուգումների տարեկան ծրագրում ներառված տնտեսվարողներին: Հարկային մարմինը կազմում է ստուգումների ծրագիրը՝ հաշվի առնելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանվող պահանջները, այսինքն՝ ստուգումների ծրագրերը կազմվում են ռիսկերի համակարգի միջոցով ընտրված հարկ վճարողների ցանկի հիման վրա՝ հաշվի առնելով նրանց ռիսկայնության խմբերը: Նշանակալից ռիսկ պարունակող ընտրված ուղղություններից մեկը վերաբերում է ԱԱՀ-ի վերադարձին (օր.՝ հարկ վճարողները պահանջում են ԱԱՀ-ի վերադարձ այն ծախսերի համար, որոնք կապված չեն իրենց գործունեության հետ): Ուստի, տվյալ ուղղությամբ ստուգման աշխատանքները ընդլայնվել են:

2012 թվականին ստուգման ենթակա հարկատուների ցանկում ընդգրկված էին 2386 տնտեսվարողներ, 2013 թվականին՝ 1566, իսկ 2013թ. հուլիսի 1-ից մինչև 2014թ. հունիսի 30-ը՝ 1385 տնտեսվարողներ: Բացի այդ, նվազել է հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների թիվը: Այսպես, եթե 2011 թվականին իրականացվել է 1604 ստուգում, ապա սկսած 2012թ. դրանց թիվը կազմել է 1016: Ստուգումների թվի նախատեսվող կրճատումը հիմնավորվում է առավել ռիսկային ուղղություններում ջանքերի կենտրոնացման անհրաժեշտությամբ, որի մասին են վկայում մեկ ստուգման հաշվով հայտնաբերված գումարների աճը, որը 2012թ. արդյունքներով կազմել է 80 տոկոս:

2013թ. ապրիլի ԱՄՀ-ի ՖՀԴ-ի առաքելությունն առաջարկել է էլ ավելի հզորացնել հարկային ստուգումների գործառույթը:

**Ընթացիկ և պլանավորված աշխատանքները**

ՀԲ-ի ֆինանսավորմամբ իրականացվող Հարկային վարչարարության արդիականացման ծրագիրը գործարկվել է 2012թ. դեկտեմբերին: Ծրագրի փաստաթղթում նշվում է այլ երկրների համեմատ հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցածր մակարդակի մասին, որը պայմանավորված է բազմաթիվ հարկային արտոնությունների արդյունքում հարկման նեղ բազայով և հարկային խարդախության դեպքերի բացահայտման ու պատժելու համար պահանջվող կարողությունների անբավարարությամբ: Ծրագիրը կհամագործակցի նաև վերջերս գործարկված ԱՄՆ ՄԶԳ-ի Հարկային բարեփոխումների ծրագրի հետ: Ծրագրի նպատակն է. (i) ներդնել ՊԵԿ-ի գործունեությանը աջակցող ժամանակակից, ինտեգրված ՏՏ համակարգ, (ii) բարելավել տվյալների փոխանակումը, (iii) վերակազմավորել և ավտոմատացնել բիզնես գործընթացները, և (iv) ընդլայնել էլ-կառավարումը:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-14	B	B	<i>Կադարողականը բարելավվել է չափում (iii)-ի մասով՝ ի շնորհիվ ռիսկերի վրա հիմնվող հարկային ստուգումների համակարգի հաջող ներդրման և կիրառման: Ընդհանուր գնահատականը մնացել է անփոփոխ:</i>
(i)	B	B	<i>Կադարողականը մնացել է անփոփոխ: ՀՎՀՀ-ները միացած չեն պետական այլ մարմիններում վարվող տեղեկատվական բազաներին, բացառությամբ իրավաբանական անձանց «մեկ պատուհանի» սկզբունքով գրանցման համակարգի, որի հետ կապն ապահովվել է 2011թ. ապրիլից: ՀՎՀՀ-ների տրամադրման գործընթացը կենտրոնացված է և ավտոմատացված: Բացի այդ, հարկ վճարողների տեղեկատվական բազան որոշ չափով միացած է բանկային համակարգին, քանի որ ՀՀ տարածքում բանկային հաշիվ բացելու համար պահանջվում է ՀՎՀՀ-ի ներկայացում:</i>  <i>ԳՉ (i). Հարկ վճարողները հաշվառվում են ամբողջական տեղեկատվական բազայի համակարգում՝ ապահովված պեղական այլ մարմինների հաշվառման համակարգերի և ֆինանսական հարվածի կանոնակարգերի հետ որոշ կապերով:</i>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(ii)	B	B	<p><b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> Հարկային օրենսդրության պահանջների չկատարման համար նախատեսվող պատժամիջոցները բավականին հստակ են: Պատժամիջոցների կիրառումը համարժեքորեն արդյունավետ է այն առումով, որ խախտումը բացահայտելուց հետո հնարավոր չէ խուսափել պատասխանատվությունից:</p> <p>Գ2 (ii). <i>Խախտումների համար սահմանված են պարժամիջոցներ կարևոր ուղղությունների մեծ մասում, բայց ոչ լիարժեք և/կամ ոչ հետևողական վարչարարության պարճառով միշտ չէ, որ դրանք արդյունավետ են:</i></p>
(iii)	C	B	<p><b>Կարարողականը բարելավվել է:</b> 2008թ. ՊԾՖՀ-ից ի վեր ներդրվել և հաջողությամբ իրականացվում է ռիսկերի վրա հիմնված հարկային ստուգումների ընտրության համակարգը:</p> <p>Գ2 (iii). <i>Հարկային ստուգումները և խարդախության դեպքերի քննությունը կառավարվում և հաշվետվություններում ներկայացվում են գրավոր սահմանված ստուգումների պլանի համաձայն, և սահմանված են հստակ ռիսկային չափանիշներ ինքնագնահատում կիրառող առնվազն մեկ կարևոր հարկային ուղղությունում:</i></p>

Գ2 = գնահատման չափանիշ

### 3.5.1.3. ԿՑ-15. Հարկերի հավաքագրման արդյունավետությունը

Այս ցուցանիշը գնահատում է հարկային մարմնի կողմից հարկային ապառքների մակարդակի նկատմամբ իրականացվող հսկողությունը, եկամուտների վարչարարության մարմնի կողմից հարկերի գումարները գանձապետարան փոխանցելու և հավաքագրումների համակարգի պատշաճ գործունեության ապահովման նպատակով հարկային հավաքագրումների տվյալների համադրման արդյունավետությունը: Այս ցուցանիշը առաջին չափումը վերլուծում է վերջին երկու ավարտված ֆիսկալ տարիների համար, իսկ մնացած երկու չափումները՝ իրավիճակի գնահատման պահի դրությամբ (2013թ. սեպտեմբեր):

**(i) Համախառն հարկային ապառքների հավաքագրման մակարդակը**

ՊԵԿ-ում հարկային պարտավորությունները, այդ թվում ապառքները (ժամկետանց պարտավորությունները), տույժերն ու տուգանքները հետևողականորեն էլեկտրոնային եղանակով հաշվառվում են հարկ վճարողների անհատական հաշիվների քարտերում «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով: 2011թ. տարեվերջից նշված համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով մշակվում են հարկային հաշվետվությունների տվյալները և իրականացվում է հարկային հաշիվների ավտոմատ վերլուծությունը: Համակարգը տալիս է ապառքների, այդ թվում տվյալ օրվա դրությամբ դրանց կուտակային մեծության մասին տարբեր տեղեկանքների գեներացման հնարավորություն: ԱՄՀ-ի Երկարաձգված վարկավորման և ֆինանսավորման ընթացիկ ծրագրով նախատեսվող հաշվետվական պահանջներից մեկը ենթադրում է հարկային ապառքների մասին ՊԵԿ-ի կողմից ամսական հաշվետվությունների ներկայացում (30 խոշորագույն կազմակերպությունների, ջրային տնտեսության, էներգետիկայի և ոռոգման ոլորտների ընկերությունների համար՝ եռամսյակային պարբերականությամբ): Աղյուսակ 14-ում ներկայացվում են տարեվերջի դրությամբ հարկային կուտակային ապառքները՝ արտահայտված հարկային հավաքագրումների նկատմամբ տոկոսային հարաբերակցության տեսքով:

**Աղյուսակ 14. Հարկային կուտակային ապառքները**

ՀՀ դրամ	2010թ.	2011թ.	2012թ.
1) Հարկերի հավաքագրում	592,529,892	652,083,928	747,612,355
2) Տարեսկզբի դրությամբ հարկային ապառքների կուտակային մեծությունը	101,133,300	103,396,000	105,767,500
3) Հարկային ապառքների տեսակարար կշիռը հարկային հավաքագրումներում = 2/1	17 %	15.9 %	14.1 %
4) Տարեվերջի դրությամբ հարկային ապառքների կուտակային մեծությունը	103,396,000	105,767,500	100,138,200
5) Տարեվերջի դրությամբ հարկային ապառքների տեսակարար կշիռը հարկային հավաքագրումներում = 4/1	17.4 %	16.2 %	13.4 %

Աղբյուրը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ

2010-2012թթ. տարեվերջի դրությամբ կուտակային ապառքների ծավալը փոքր-ինչ փոխվել է՝ կազմելով ընդհանուր տարեկան հավաքագրումների 13-17 տոկոսը: Այն հիմնականում ներառում է այն ապառքները, որոնք ամեն տարի փոխանցվում են հաջորդ տարի: 2012թ. վերջի դրությամբ 100.1 միլիարդ ՀՀ դրամի կուտակային ապառքներից 68.2 միլիարդ ՀՀ դրամը (68%) բաժին է ընկնում ընդամենը 30 կազմակերպությունների: Ապառքների փոքր ծավալը պետք է թույլ տա ՊԵԿ-ին կենտրոնացնել ապառքների հավաքագրմանն ուղղված իր ջանքերը, բայց գործնականում, չնայած այս առումով աջակցող օրենսդրությանը, ապառքների հավաքագրման ջանքերը խնդրահարույց են, և ապառքների համարյա ողջ գումարն ամեն տարի փոխանցվում է գալիք տարի: Կարողությունների հետ կապված սահմանափակումները թույլ չեն տալիս ՊԵԿ-ին հետագա քայլեր ձեռնարկել ապառքներ կուտակած կազմակերպությունների առնչությամբ:

Մնացած 31.9 մլրդ ՀՀ դրամից 29.5 մլրդ ՀՀ դրամը արտացոլում է անվճարունակ ճանաչված ընկերությունների հարկային ապառքների առնչությամբ ՊԵԿ-ի կողմից ՀՀ դատարաններ ներկայացված թվով 601 հայցապահանջների գումարները: Զգալի թվով դեպքերում դատարանի կայացրած որոշումները հօգուտ ՊԵԿ-ի են: Ապառքները հավաքագրվում են Արդարադատության նախարարության ենթակայության տակ գործող Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից, որը վերականգված գումարները փոխանցում է Գանձապետարան:

## **(ii) ՖՆ-ին հավաքագրված հարկերի փոխանցման գործընթացի արդյունավետությունը**

ՀՀ-ում հարկային եկամուտները ամբողջությամբ հավաքագրվում են բանկային համակարգի և վճարահաշվային կազմակերպությունների միջոցով: Տնտեսվարողները կարող են վճարել հարկերը նաև փոստային համակարգի միջոցով: 2013 թվականին ներդրվել է հարկերի վճարման էլեկտրոնային համակարգը, որի շնորհիվ հարկ վճարողները կարող են ինքնուրույն վճարել հարկերը առանց բանկ այցելելու անհրաժեշտության: Հավաքագրված եկամուտները ըստ առանձին հարկատեսակների օրական կտրվածքով ՊԵԿ-ի կողմից փոխանցվում են գանձապետական համապատասխան հաշվեհամարներին:

## **(iii) Հարկերի հաշվարկների, հավաքագրումների, ապառքների վերաբերյալ գրանցումների և ՖՆ-ի մուտքերի տվյալների միջև ամբողջական համադրումների հաճախականություն**



Գանձապետական հաշիվները առցանց միացված են ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի տեղեկատվական բազային, և օրական կտրվածքով ստուգվում է գանձապետարան կատարված փոխանցումների ճշտությունն ըստ առանձին հարկատուների և հարկատեսակների: Յուրաքանչյուր հարկ վճարողի համար վարվում են էլեկտրոնային քարտեր ըստ առանձին հարկատեսակների, ներառյալ ժամկետանց հարկային պարտավորությունները: Ապահովված է անհատական հաշիվների քարտերի օրական շարժերի, հարկերի վճարումների, հայտարարագրված պարտավորությունների, հաշվեգրված տույժերի ու տուգանքների մասին տեղեկատվության հասանելիությունը:

Գանձապետական հաշիվներին կատարված վճարումների և հարկ վճարողների հարկային պարտավորությունների համադրումներն իրականացում են օրական պարբերականությամբ: Համադրումների կատարումը հանդիսանում է ինչպես ՊԵԿ-ի, այնպես էլ հարկային տեսչությունների ամենօրյա գործունեության մի մասը:

**Ընթացիկ և պլանավորված աշխատանքները**

Տես ԶԳ-ների ֆինանսավորմամբ իրականացվող ՏԱ ծրագրերի առնչությամբ «ԿՑ 13-14» ցուցանիշների նկարագրական մասը:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-15	D+ (վերանայվել է «B+»-ից)	D+	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> 2010-2012թթ. տարեվերջի դրությամբ հարկային ապառքների կուտակային ծավալը կազմել է ընդհանուր հարկային հավաքագրումների 13%-ից 17%-ը: Ապառքների գերակշռող մասը բաժին է ընկնում թվով 30 կազմակերպություններին, և դրանց հավաքագրման մակարդակը շատ ցածր է: ՊԵԿ-ը հնարավորություն ունի էլեկտրոնային եղանակով հաշվառել հարկային ապառքները 2012թ. ներդրված «Հարկատու 3» էլ-կառավարման համակարգի միջոցով:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖԿ	Միավոր 2013թ. ՊԾՖԿ	Գնահատում
(i)	D (վերա- նայվել է «B»-ից)	D	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> 2010-2012թթ. տարեվերջի դրությամբ հարկային ապառքների կուտակային ծավալը կազմել է ընդհանուր հարկային հավաքագրումների 13%-ից 17%-ը (Աղյուսակ 13): Ապառքների 70%-ը բաժին է ընկնում ընդամենը 30 կազմակերպություններին, և դրանց հավաքագրման մակարդակը շատ ցածր է՝ պայմանավորված ՊԵԿ-ի վերահսկողությունից դուրս գտնվող պատճառներով: Մնացած 30%-ը բաժին է ընկնում անվճարունակ ճանաչված 600 ընկերություններին, որոնց առնչությամբ գործերը ՊԵԿ-ի կողմից ներկայացվել են դատարան՝ հասնելով որոշ հաջողության: ՊԵԿ-ը հնարավորություն ունի էլեկտրոնային եղանակով հաշվառել հարկային ապառքները 2012թ. ներդրված «Հարկատու 3» էլ-կառավարման համակարգի միջոցով:</p> <p><i>Գ2 (i). Վերջին տարում պարտքի հավաքագրման մակարդակը 60%-ից ցածր էր, իսկ ապառքների ընդհանուր գումարը՝ նշանակալից (այսինքն՝ տարեկան ընդհանուր հավաքագրումների ավելի քան 2%-ը)</i></p> <p>2008թ. ՊԾՖԿ-ի գնահատականը ՊԵԿ-ի կողմից վերանայվել է «D»-ի, քանի որ այդ ժամանակ դեռևս չէր ներդրվել հարկ վճարողների էլ-կառավարման համակարգը:</p>
(ii)	A	A	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Գ2 (ii). Բոլոր հարկային եկամուտները ուղղակիորեն փոխանցվում են ՖՆ-ի կողմից վերահսկվող հաշիվներին կամ օրական կտրվածքով իրականացվում են փոխանցումներ Գանձապետարան:</p>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(iii)	D (վերանայվել է «A»-ից)	A	<p><b>Կատարողականը բարելավվել է «Հարկատու 3» էլ-կառավարման համակարգի ստեղծման արդյունքում, որը տվել է հարկային ապառքների բարելավված հաշվառում իրականացնելու հնարավորություն:</b></p> <p>ԳՉ (iii). Հարկային հաշվարկների, հավաքագրումների, ապառքների և ՖՆ-ին ուղղվող փոխանցումների տվյալների ամբողջական համադրում է կատարվում տվյալ ամսվան հաջորդող 1 ամսվա ընթացքում:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ի գնահատականը ՊԵԿ-ի կողմից վերանայվել է «D»-ի, քանի որ այդ ժամանակ դեռևս չէր ներդրվել հարկ վճարողների էլ-կառավարման համակարգը:</p>

ԳՉ = գնահատման չափանիշ

### 3.5.2. Բյուջեի կատարումը և դրամական միջոցների/ պարտքի կառավարումը (ԿՑs 16-17)

«ԿՑ 16-17» ցուցանիշների ամփոփ գնահատում.

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-16 (Մ1). Բյուջեի կատարման կանխատեսելիություն	A	A	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ բոլոր 3 չափումների համար:</b>
ԿՑ-17 (Մ2). Դրամական միջոցների / պարտքի կառավարում	B (վերանայվել է «A»-ից)	A	<b>Կատարողականը բարելավվել է չափում (ii)-ի մասով՝ գանձապետական միասնական հաշվում զարգացման գործընկերների կողմից իրականացվող նախագծերի / ծրագրերի բանկային հաշիվները ներառելու միջոցով:</b>

### 3.5.2.1. ԿՑ-16. Ծախսային պարտավորությունների համար ֆինանսական միջոցների հասանելիության կանխատեսելիությունը

Բյուջեի արդյունավետ կատարումն ըստ աշխատանքային պլանի պահանջում է, որ ծախսող նախարարություններն ու գերատեսչությունները հուսալի տեղեկություններ ստանան այն միջոցների մատչելիության վերաբերյալ, որոնց սահմաններում նրանք կարող են ստանձնել ծախսային պարտավորություններ:

#### (i) Դրամական միջոցների կանխատեսման ու դիտանցման աստիճանը

«Պետական բյուջեի մասին» համապատասխան օրենքի և պետական բյուջեի եռամսյակային համամասությունների հաստատման մասին ՀՀ Կառավարության որոշման ընդունումից հետո (նշված որոշմամբ սահմանվում են յուրաքանչյուր բյուջետային հիմնարկի ծախսերի եռամսյակային սահմանաչափերը) Գանձապետարանը (որը գործում է ՖՆ-ի կառուցվածքում) կազմում է նոր բյուջետային տարվա դրամական հոսքերի կանխատեսում եռամսյակային, ամսական և շաբաթական կտրվածքով: Կանխատեսումները կարող են ճշգրտումների ենթարկվել ամեն շաբաթ՝ հաշվի առնելով փաստացի դրամական մուտքերն ու ելքերը:

Դրամական հոսքերի դիտանցումն իրականացնում է Բյուջետային հանձնաժողովը, որի նիստերը գումարվում են ամեն հինգշաբթի ՀՀ Ֆինանսների նախարարությունում: Հանձնաժողովի աշխատանքները կարգավորվում են ՀՀ ֆինանսների նախարարի 10.08.1999թ. թիվ 305 հրամանով, որով սահմանվում է հանձնաժողովի կազմը, նիստերի ժամկետներն ու հաճախականությունը: Հանձնաժողովի նիստերին հրավիրվում /մասնակցում են նաև ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչները: Նիստերի ընթացքում քննարկվում են դրամական հոսքերի կառավարման շաբաթական ծրագրերը՝ հաշվի առնելով նախորդ շաբաթվա գանձապետական միասնական հաշվի մուտքերն ու ելքերը: Անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են հաջորդ շաբաթների դրամական հոսքերի կանխատեսումները: Ըստ անհրաժեշտության, քննարկվում են նաև ծախսերի տեղաշարժերը, որոնք պայմանավորված են վճարումների ժամանակացույցերի վերանայմամբ, պետական բյուջեով չնախատեսված ծախսերով, բյուջետային մուտքերի թերակատարմամբ և այլն: Անհրաժեշտության դեպքում, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի դրույթների համաձայն, պետական բյուջեում կարող են կատարվել վերաբաշխումներ: Վերջին անգամ նման էական վերաբաշխում կատարվել է 2009թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով, երբ ՀՀ Կառավարությունը փոփոխել է եռամսյակային համամասությունները՝ հատկացումների մեծ մասը տեղափոխելով տարվա վերջ:

**(ii) Տարվա ընթացքում ՆԳԳ-ների համար ծախսային պարտավորությունների առաստաղների վերաբերյալ պարբերական տեղեկությունների հուսալիությունն ու ժամանակային հորիզոնը**

ՀՀ նախարարությունները, կառավարությանն առընթեր մարմինները և այլ ծախսող միավորները կարող են ծախսերը ծրագրել և դրանց գծով պարտավորություններ ստանձնել բյուջետային նոր տարվա սկզբում՝ վերը կետ (i)-ում նշվող եռամսյակային համամասնությունների սահմաններում: «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, եռամսյակային համամասնությունները սահմանվում են ՀՀ կառավարության կողմից պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 45 օրվա ընթացքում: 2009 թվականից ի վեր պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները հաստատվել են ՀՀ կառավարության կողմից ՀՀ պետական բյուջեն հաստատվելուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում, նախքան ֆիսկալ տարվա սկիզբը (Աղյուսակ 15): Այսպիսով, բյուջետային հիմնարկները կարող են ծրագրել իրենց ծախսերը և ստանձնել ծախսային պարտավորությունները ողջ տարվա ժամանակային հորիզոնին համապատասխան: Հատկանշական է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն, գնումների գործընթացները կարող են նախաձեռնվել նույնիսկ մինչև տարեկան բյուջեի մասին օրենքի ընդունումը: Մատակարարի հետ պայմանականորեն կարող է կնքվել պայմանագիր նախքան բյուջեի հաստատումը, սակայն Ազգային ժողովի կողմից պահանջվող հատկացումները չհաստատելու դեպքում այն լուծվում է:


**Աղյուսակ 15. պետական բյուջեի և եռամսյակային համամասնությունների հաստատման ամսաթվերը**

Բյուջետային տարի	ՀՀ ԱԺ կողմից ՀՀ պետական բյուջեի հաստատման ամսաթիվ	ՀՀ կառավարության կողմից ՀՀ պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունների հաստատման ամսաթիվ և որոշման համար
2009թ.	27.11.2008թ.	25.12.2008թ. թիվ 1573-Ն
2010թ.	10.12.2009թ.	24.12.2009թ. թիվ 1522-Ն
2011թ.	09.12.2010թ.	23.12.2010թ. թիվ 1748-Ն
2012թ.	08.12.2011թ.	22.12.2011թ. թիվ 1919-Ն
2013թ.	05.12.2012թ.	20.12.2012թ. թիվ 1616-Ն

Թեև պայմանագրային հիմունքով ծախսային պարտավորությունները կարող են ստանձնվել վճարումների մինչև մեկ տարվա ժամանակային հորիզոնով, սակայն տարվա ընթացքում կատարվող վճարումները չպետք է գերազանցեն եռամսյակային սահմանաչափերը: Հիմնավոր պատճառների առ-

կայության դեպքում (օր.<sup>1</sup> նախատեսվածից տարբերվող ժամանակացույցով կապալառուների կողմից վճարման փաստաթղթերի ներկայացման դեպքում) բյուջետային հիմնարկները կարող են դիմել նշված սահմանաչափերի ճշգրտման խնդրանքով: Ինչպես ցույց է տրվում ստորև գծապատկերում, ՀՀ կառավարությունը միշտ էլ ունեցել Գանձապետական միասնական հաշվում (ԳՄՀ) բավարար միջոցներ պետական բյուջեով նախատեսված ծախսերը ֆինանսավորելու համար՝ դրանով իսկ ապահովելով բավարար ճկունություն սահմանված (կամ հետագայում վերանայված) ժամանակացույցին համապատասխան ծախսային պարտավորությունները կատարելու համար:

**Գծապատկեր. ԳՄՀ-ի մնացորդները, 2010-2012թթ.**



**(iii) ՆԳԳ-ների ղեկավարությունից բարձր մակարդակում կայացվող որոշումների հիման վրա բյուջետային հատկացումներում փոփոխությունների կատարման պարբերականությունը և թափանցիկությունը**

ՀՀ պետական բյուջեի կատարման ընթացքում բյուջետային հատկացումների վերաբաշխումները կատարվում են «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածին համապատասխան: Նշված հոդվածի համաձայն, ճյուղային նախարարությունների կողմից ծախսային վերաբաշխումները կատարվում են իրենց իսկ նախաձեռնությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումները ՀՀ Ֆինանսների նախարարությանը, որը հաստատում է առաջարկվող վերաբաշխումները: Այդ իսկ պատճառով ՆԳԳ-ների համար նման վերաբաշխումները կանխատեսելի են:

ՆԳԳ-ների ղեկավարությունից բարձր մակարդակում վերաբաշխումները կատարվում են ՀՀ կառավարության որոշումների հիման վրա՝ տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 3 տոկոսի սահմաններում: Նշված մակարդակը գերազանցող վերաբաշխումները կատարվում են ՀՀ Ազգային ժողովի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով: 2008թ. ի վեր նման վերաբաշխման անրաժեշտություն չի ծագել:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-16	A	A	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ բոլոր երեք չափումների համար:</b>
(i)	A	A	ԳՉ (i). Ֆիսկալ տարվա համար կատարվում է դրամական հոսքերի կանխատեսում, որի տվյալները ամսական կտրվածքով նորացվում են՝ հաշվի առնելով փաստացի մուտքերն ու ելքերը
(ii)	A	A	ԳՉ (ii). ՆԳԳ-ները ի վիճակի են բյուջեփային հատկացումների սահմաններում առնվազն 6 ամիս առաջ պլանավորել և սպանձնել ծախսային պարտավորություններ
(iii)	A	A	ԳՉ (iii). Տարվա ընթացքում բյուջեփային հատկացումներում նշանակալից ճշգրտումներ կատարվում են տարին մեկ կամ երկու անգամ՝ կանխատեսելի և թափանցիկ կարգով

ԳՉ = գնահատման չափանիշ

### 3.5.2.2. ԿՑ-17. Դրամական մնացորդների, պարտքի և երաշխիքների գրանցումը և կառավարումը

Պարտքի ու երաշխիքների արդյունավետ կառավարումն ֆիսկալ կառավարման էական բաղադրիչներից մեկն է: Պարտքի և երաշխիքների վատ կառավարումը կարող է հանգեցնել պարտքի սպասարկման անհարկիորեն բարձր ծախսերի: Ինչ վերաբերում է դրամական միջոցների արդյունավետ կառավարմանը, ապա անհարկի վարկերից և տոկոսավճարների հետ կապված ծախսերից խուսափելու կարևոր պահանջներից մեկը բանկային հաշիվներում առկա ողջ կառավարության մնացորդների (այդ թվում արտաբյուջետային միջոցների ու ՉԳ-ների ֆինանսավորմամբ իրականացվող և կառավարության կողմից կառավարվող ծրագրերի հաշիվների) բացահայտումն ու համախմբումն է:

#### (i) Պարտքի հաշվառման և կառավարման որակը

ՀՀ ֆինանսների նախարարի 03.03.2010թ. թիվ 150-Ա հրամանով հաստատվել է պետական պարտքի կառավարման բարեփոխումների գործողությունների ծրագրի: Նպատակ ունենալով բարձրացնել պետական

պարտքի կառավարման արդյունավետությունը՝ իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- պարտքի գրանցման և հաշվառման համակարգ ներդրում,
- պարտքի կառավարման ինստիտուցիոնալ կառուցվածքի բարելավում և հզորացում,
- պետական պարտքի մասին տարեկան և կիսամյակային հաշվետվությունների որակի բարելավում,
- առաջնային շուկայի զարգացմանն ուղղված քայլերի իրականացում,
- պարտքի միջնաժամկետ ռազմավարության մշակում:

*Պարտքի գրանցումը և հաշվառումը.* ՀՀ ֆինանսների նախարարության և ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման կազմակերպության (UNCTAD) միջև 2011թ. ապրիլի 26-ին ստորագրված պայմանագրի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում 2011 թվականի սեպտեմբերին ներդրվեց պարտքի կառավարման և ֆինանսական հաշվետվողականության «DMFAS 6.0» համակարգը: Ներկայումս համակարգում ամբողջությամբ մուտքագրված է ՀՀ կառավարության վարկերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ սկսած 2008 թվականից: UNCTAD-ի կողմից համակարգը լրամշակելուց հետո այնտեղ կմուտքագրվի նաև տեղաբաշխված պետական պարտատուների և 2008թ. նախորդող տարիների պետական պարտքի վերաբերյալ տեղեկատվությունը, որը ներկայումս պահվում է թղթային և էլեկտրոնային տեսքով: Մինչև «DMFAS 6.0» համակարգի ներդրումը ՀՀ կառավարությանը տրամադրված վարկերի գրանցման նպատակով կիրառվում էին «Debt Tracking System» համակարգը և «Excel» ծրագիրը, իսկ պետական պարտատուների վերաբերյալ տեղեկատվության գրանցման համար մինչ օրս էլ օգտագործվում է «Excel» ծրագիրը:

*Պարտքի կառավարման ինստիտուցիոնալ կառուցվածքը.* ՀՀ ֆինանսների նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 17-ի N 663-Ա հրամանով հաստատվել է պետական պարտքի կառավարման վարչության նոր կառուցվածքը: Սրա արդյունքում բարելավվել է պարտքի կառավարման ստորաբաժանման ներքին կառուցվածքը, հստակեցվել են պարտքի կառավարման ստորաբաժանման գործառնությունները և ձևավորվել է միջազգային լավագույն փորձին համապատասխան պարտքի կառավարմամբ զբաղվող առաջնային, միջին և հետին գրասենյակների գործառնություններով նոր ստորաբաժանում: Հաշվառման և սպասարկման բաժինը պատասխանատու է ՀՀ կառավարության բոլոր պարտքային պարտավորությունների գրանցման, հաշվառման և դրանց գծով վճարումների իրականացման համար: Նշենք, որ մինչ այդ ներքին և արտաքին պարտքի գծով գործառնությունների հաշվառումը և վճարումների իրականացումը բաժանված էր ներքին պարտքի կառավարման և արտաքին պարտքի կառավարման բաժինների միջև:



*Հաշվետվությունների որակը.* Բարելավվել է 1999 թվականից թողարկվող պետական պարտքի մասին տարեկան և կիսամյակային հաշվետվությունների որակը: Ավելացվել են մի քանի նոր բաժիններ, ինչպիսիք են մակրոտնտեսական միջավայրը, դրամական հոսքերի կառավարումը, ռիսկերի վերլուծությունը և այլն: 2012թ. հուլիսից ՀՀ ֆինանսների նախարարությունը իր կայքում հրապարակում է ՀՀ պետական պարտքի վերաբերյալ ամսական տեղեկագիրը: ՀՀ ֆինանսների նախարարության սահմանած կանոնի համաձայն, տեղեկագիրը հրապարակվում է հաշվետու ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 5-րդ աշխատանքային օրը և պարունակում է ամփոփ տեղեկատվություն հաշվետու ամսվա պետական պարտքի կուտակային տվյալների մասին: Նշենք, որ պետական պարտքի վերաբերյալ տեղեկատվություն են պարունակում նաև ՀՀ պետական բյուջեի կատարման մասին եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, որոնք զետեղվում են ՖՆ-ի պաշտոնական կայքում (ամենավերջին հաշվետվությունը տես՝ <http://minfin.am/index.php?fl=5355&lang=3>):

*Համադրումը.* Արտաքին աղբյուրներից վարկերի մասհանման բոլոր հայտերը, ի լրումն ծրագրերն իրականացնող մարմինների հաստատման, ենթակա են հաստատման և գրանցման ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Վարկատուների կողմից մասհանման հայտերը հաստատվելուց հետո համապատասխան տեղեկատվությունը (թղթային կամ էլեկտրոնային տարբերակով) ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարությանը, որտեղ այն գրանցվում է «DMFAS» համակարգում օրական կտրվածքով և ամփոփվում ամսական կտրվածքով: Համաշխարհային Բանկի «Client Connection» և Ասիական Չարգացման Բանկի «LFIS/GFIS/LAS» ինտերնետային ծրագրերը հնարավորություն են տալիս վարկառուին հետևել ուղարկված մասհանման հայտերի հաստատման ընթացքին օպերատիվ (առցանց) կարգով: Այս երկու կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի գծով 2010-2012թթ. կատարված մասհանումները կազմել են ընդհանուր մասհանումների համապատասխանաբար 37%, 44% և 55%: Մյուս վարկատուների կողմից փաստացի կատարված մասհանումների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է էլեկտրոնային փոստի միջոցով կամ թղթային տեսքով:

Փաստացի մասհանումների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր է հանդիսանում նաև ԾԻԳ-երի համար բացված գանձապետական հաշիվների շարժը: 2012թ. ընթացքում 37գործող վարկային ծրագրերից 25 ծրագրերի հաշիվները վարվել են կենտրոնական գանձապետարանում, 3 ծրագրերինը՝ առևտրային բանկերում նախքան 2012թ. սկզբին դրանց ավարտը, իսկ 9 ծրագրերի գծով մասհանումները զարգացման գործընկերների կողմից ուղղակիորեն կատարվել են շահառուին՝ այդ մասին էլեկտրոնային եղանակով անհապաղ տեղեկացնելով պարտքի կառավարման ստորաբաժանմանը<sup>10</sup>: Տվյալների հետ կապված անճշտություն-

<sup>10</sup> Նման մասհանումները բնորոշ են միայն «KfW»-ին ՎՋԲ-ի ծրագրերին: Օրինակ՝ «KfW»-ն վճարումներ է կատարում ջրային օպերատորի կառավարող ընկերությանը: Այդ գործարքները ներառված են բյուջեում և հաշվառվում են գանձապետարանի կողմից: ՖՆ-ի

ները շտկվում են վարկատուների և ԾԻԳ-երի հետ էլեկտրոնային նամակագրության միջոցով:

ՀՀ կառավարությանը տրամադրված վարկերի սպասարկման (մայր գումարի մարում, տոկոսավճար և այլ վճարներ) գծով վճարման պահանջագրերը վարկատուներից ստացվում են էլեկտրոնային կամ թղթային տեսքով և համադրվում են ՀՀ ֆինանսների նախարարության հաշվարկների հետ: Ստացված տեղեկատվության հիման վրա պատրաստվում է ՀՀ կառավարության վարկերի սպասարկման գծով վճարումների հաջորդ ամսվա ժամանակացույցը, որը տրամադրվում է ՖՆ-ում գործող Բյուջետային հանձնաժողովին (ԿՑ-16) և ՀՀ կենտրոնական բանկին: Փաստացի վճարումների վերաբերյալ տեղեկատվությունը գրանցվում և ամփոփվում է օրական կտրվածքով:

Ներքին պարտքի (պետական պարտատոմսերի ծավալ, կառուցվածք և գործարքներ) մասին տեղեկատվությունը կարող է տրամադրվել ամենօրյա, շաբաթական, ամսական, եռամսյակային և տարեկան կտրվածքով:

## **(ii) Կառավարության կանխիկ դրամական միջոցների մնացորդների համախմբման աստիճանը**

Կանխիկ դրամական միջոցների բոլոր մնացորդները հաշվարկվում են օրական կտրվածքով և համախմբվում Գանձապետական միասնական հաշվում (ԳՄՀ), որը ներառում է պետական բյուջեի, արտաբյուջետային, դեպոզիտային և մոնետիզացիոն բոլոր հաշիվները: ԳՄՀ-նՖՆ -ի Կենտրոնական գանձապետարանի անվամբ Կենտրոնական բանկում բացված և դրամով արտահայտված հաշիվ է, որին ամրագրվում են Հայաստանի Հանրապետության և համայնքների տնօրինության տակ գտնվող բոլոր միջոցները և որից կատարվում են Հայաստանի Հանրապետության և համայնքների բոլոր վճարումները:

Սկսած 2011 թվականից ՀՀ կառավարությունը աստիճանաբար կենտրոնական գանձապետարան է բերել արտասահմանյան ֆինանսավորմամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի բոլոր հատուկ հաշիվները: Վերջիններս իրենցից ներկայացնում են Գանձապետական միասնական հաշվի ներքո համապատասխանա ԾԻԳ-ի անունով բացված արտարժույթային ենթահաշիվներ: Մինչև 2012թ. արտասահմանյան ֆինանսավորմամբ իրականացվող որոշ ծրագրերի ներքո մասհանումները կատարվում էին շահառուին ուղղակի վճարումների տեսքով, սակայն 2012 թվականից նշված ծրագրերի ներքո մասհանումները և ծախսերը նույնպես գրանցվում են Կենտրոնական գանձապետարանի միջոցով «Գործառնական օր» ծրագրի հիման վրա:

պարտքի կառավարման վարչությունը ներկայացնում է հայտը «KfW»-ին, որը վճարում է ընկերությանը, որից հետո «KfW»-ն անմիջապես էլեկտրոնային եղանակով գործարքի մասին տեղեկատվությունը ներկայացնում է պարտքի կառավարման վարչությանը: Վերջինս գրանցում է տվյալները գանձապետական համակարգերում:

**(iii) Վարկերի գծով պայմանագրերի կնքման և երաշխիքների տրամադրման համակարգերը**

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի համաձայն, Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների հետ կնքված վարկային/փոխառության և երաշխիքային պայմանագրերը ենթակա են վավերացման ՀՀ Ազգային ժողովի կողմից: Այն վարկային համաձայնագրերը, որոնք ստորագրվում են մասնավոր բանկերի հետ և դրանց հետ կապված հարաբերությունները չեն կարգավորվում «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով, կնքվում են ՀՀ կառավարության հավանությունը ստանալուց հետո: Համաձայն ՀՀ կառավարության 18.06.1998թ. N380 որոշման, բյուջետային երաշխիքները (երաշխավորագրերը) տրամադրվում են ՀՀ կառավարության որոշման հիման վրա՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

Համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի.

- արտաքին պետական պարտք ներգրավելու վերաբերյալ պայմանագրերը կնքվում են ՀՀ ֆինանսների նախարարության համաձայնությամբ, որն իր համաձայնությունը տալիս է հիմք ընդունելով պայմանագրի համապատասխանությունը կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրին, որն իր հերթին հանդիսանում է ՀՀ կառավարության միջնաժամկետ ծախսային ծրագրի մաս (օր.՝ 2011-2013թթ. ՄԺԾԾ-ի գլուխ 20),
- պետական երաշխիքներ կարող են տրամադրվել ՀՀ ֆինանսների նախարարության դրական եզրակացության հիման վրա՝ հիմք ընդունելով դրանց համապատասխանությունը կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագրին և տնտեսական զարգացման ծրագրերին. գերակա առաջնահերթություն ունեցող ծրագրերի ֆինանսավորման համար անհրաժեշտ պարտքի երաշխավորման հավանականությունն ավելի բարձր է:
- «Պետական պարտքի մասին» և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով սահմանվում են նաև պետական պարտքի և երաշխիքների համար համապատասխան սահմանափակումներ: Մասնավորապես.
- պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 60 տոկոսը: Եթե պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 50 տոկոսը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3 տոկոսը,
- որոշակի պահի դրությամբ տրամադրված և չմարված պետական երաշխիքների հանրագումարը չպետք է գերազանցի նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 20 տոկոսը, և

- տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների ընդհանուր գումարը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված երաշխիքների) չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների 10 տոկոսը:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-17	B+ (վերանայվել է «A»-ից)	A	<b>Կարարողականը բարելավվել է չափում (ii)-ի մասով՝</b> գարգացման գործընկերների կողմից իրականացվող նախագծերի / ծրագրերի բանկային հաշիվները գանձապետական միասնական հաշվում ներառելու միջոցով:
(i)	A	A	<p><b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> Տվյալների որակի հետ կապված խնդիրները պետք է բացառվեն: Փաստերը վկայում են, որ նման իրավիճակը շարունակում է պահպանվել է, իսկ պարտքի տվյալների նորացման, հաշվետվությունների հրապարակման ժամկետայնության բարելավումը և դեբիտորների ու կրեդիտորների գրանցված տվյալների համադրումը կատարելագործվել է «DMFAS»-ի կիրառման, ինչպես նաև ՖՆ-ում պարտքի կառավարման ստորաբաժանման կառուցվածքի բարելավման միջոցով (օր.՝ ներկայում հաշվետվությունները կազմվում են ամսվա ավարտին հաջորդող շաբաթվա ընթացքում, իսկ տարիներ առաջ եռամսյակային հաշվետվությունները կազմվում էին 25 օրվա ընթացքում):</p> <p><i>ԳԶ (i). Ներքին և արտաքին պարտքի մասին գրանցումները ամբողջական են և ամսական կտրվածքով դրանք նորացվում են և համադրվում ամբողջական համարվող տվյալների հետ: Ղեկավարության համար նախատեսված, ինչպես նաև վիճակագրական հաշվետվություններ են կազմվում առնվազն եռամսյակային կտրվածքով:</i></p>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(ii)	B <i>(վերանայվել է «A»-ից)</i>	A	<p><b>Կատարողականը բարելավվել է</b> չափում (ii)-ի մասով՝ զարգացման գործընկերների կողմից իրականացվող նախագծերի / ծրագրերի բանկային հաշիվները գանձապետական միասնական հաշվում ներառելու միջոցով:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում «A» գնահատականը թվում է չափազանց բարձր, քանի որ ծրագրերի / նախագծերի ծախսերի ֆինանսավորման նպատակով ՁԳ-ների համար բացված որոշ հաշիվները դուրս էին ԳՄՀ-ից: Այդ ժամանակից ի վեր դրանք ներառվել են ԳՄՀ-ում: Գնահատականը վերանայվել է «B»-ի:</p> <p><i>ԳՉ (ii). Բոլոր դրամական մնացորդները հաշվարկվում և համախմբվում են օրական կտրվածքով:</i></p>
(iii)	A	A	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b></p> <p><i>ԳՉ (iii). Վարկային պայմանագրերի կնքումը և երաշխիքների տրամադրումը իրականացվում են թափանցիկ չափանիշների և հարկաբյուջետային նպատակային ցուցանիշների հիման վրա, և դրանք միշտ հաստատվում են մեկ պատասխանաբար պետական մարմնի կողմից:</i></p>

ԳՉ = գնահատման չափանիշ

### 3.5.3. Ներքին հսկողության համակարգեր

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-18 (Մ1). Աշխատավարձերի հսկողության արդյունավետությունը	<b>D+</b> <i>(վերանայվել է «B+»-ից)</i>	<b>D+</b>	<b>2008թ. ՊԾՖՀ-ում փոփոխ գնահատականները իջեցվել են: Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> «D+» գնահատականը բացատրվում է պետական մարմիններում աշխատավարձերի վճարացուցակների և անձնակազմի վերաբերյալ գրանցումների միջև ժամանակին կատարվող համադրման գործընթացի բացակայությամբ: Վերջինս գլխավորապես պայմանավորված է նրանով, որ դրանց միջև ավտոմատացված կապերի բացակայության պատճառով համադրման գործընթացը դառնում է շատ ժամանակատար:
ԿՑ-19 (Մ2). Թափանցիկությունը, մրցակցությունը և բողոքարկման մեխանիզմները գնումների համակարգում	<b>Համադրելի չէ</b> (Նոր մեթոդաբանությամբ նախկինում կիրառվող 3 ցուցանիշների փոխարեն կիրառվում են 4-ը, և նոր մեթոդաբանությունն ավելի համապարփակ է.  հին մեթոդաբանությամբ՝ «A»)	<b>B</b>	<b>«Գնումների մասին» նոր օրենքի ընդունումը, Գնումների բողոքարկման խորհրդի ստեղծումը և էլ-գնումների կայքի գործարկումը (էլ-կառավարման համակարգի ստեղծման շրջանակներում) վկայում են գնումների համակարգի թափանցիկության բարելավման մասին: Գնումների ոչ մրցակցային ձևերի կիրառման հիմնավորումները դեռևս լիովին թափանցիկ չեն:</b> Հատուկ կամ բացառիկ իրավունքների հիման վրա գնումների ոչ մրցակցային ձևերի կիրառման դեպքերի թիվը բարձր է (արժեքային արտահայտությամբ՝ 66% - 2011թ., 72% - 2012թ.):

<p>ԿՑ-20 (Մ1). Ոչ աշխատավարձային ծախսերի նկատմամբ ներքին հսկողությունների արդյունավետությունը</p>	<p>C+</p>	<p>C+</p>	<p><b>Ընդհանուր կապարողականը մնացել է անփոփոխ</b>՝ ներքին հսկողությունների (բացառությամբ ծախսային պարտավորությունների նկատմամբ հսկողության) մասին ըմբռնման ու դրանց կիրառման (չափումներ (ii-iii)) առումով առկա թերությունների պատճառով: Ծախսային պարտավորությունների նկատմամբ հսկողության արդյունավետությունը (չափում (i)) բարձրացել է, ինչը մասամբ պայմանավորված է «Client-Treasury» համակարգի ներդրմամբ, Գանձապետական գործառնական օր (ԳԳՕ) ծրագրային համակարգի պարբերական արդիականացմամբ և դրա ծածկույթում ԾԻԳ-երի ներառմամբ:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում գնահատականները թվում են չափազանց բարձր և հետևաբար իջեցվել են:</p>
<p>ԿՑ-21 (Մ1). Ներքին աուդիտի արդյունավետությունը</p>	<p>D+</p>	<p>C▲</p>	<p><b>Չափումներ (i)-ի և (iii)-ի կապարողականը բարելավվել է՝ պայմանավորված 2012թ. համակարգերին միտված ՆԱ-ի ժամանակակից և գործառնական առումով անկախ գործառույթի ներդրմամբ և ղեկավարության կողմից իրականացվող հեղափոխության հսկողության բարելավմամբ: Հեղափոխության հսկողությունը շարունակում է բարելավվել:</b> Չափում (ii)-ի տեսանկյունից Ֆինանսների նախարարությունը պարբերաբար չի ստանում աուդիտների արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ, քանի որ աուդիտի նոր տեղեկատվական համակարգը մասնակի է շահագործվում: 2008թ. գնահատման պահի դրությամբ այն ստանում էր հաշվետվություններ, բայց ՆԱ-ի համակարգը նվազ զարգացած էր:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում չափում (iii)-ի գնահատականը վերանայվել է «D»-ի, քանի որ այդ ժամանակ համակարգերին միտված ՆԱ-ի գործառույթ դեռևս ներդրված չէր:</p>

### 3.5.3.1. ԿՑ-18. Աշխատավարձերի հսկողության արդյունավետությունը

Ծախսերի հիմնական բաղադրիչ հանդիսացող աշխատավարձի արդյունավետ վերահսկումը հուսալի ֆինանսական կառավարման կարևոր ցուցանիշներից մեկն է:

#### Նախապատմություն

Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, հատուկ ծառայությունները պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, փրկարար ծառայության պետական գործադիր մարմիններում, ինչպես նաև օրենքներով նախատեսված այլ ծառայությունները: Քաղաքացիական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով, իսկ պետական ծառայության մյուս տեսակների համար՝ ՀՀ այլ համապատասխան օրենքներով:

ՀՀ պետական մարմիններում աշխատողների առավելագույն թվաքանակը հաստատվում է ՀՀ Վարչապետի կամ ՀՀ Կառավարության որոշումներով կամ ՀՀ Նախագահի հրամանագրերով՝ կախված պետական մարմնի առանձնահատկություններից (օրինակ՝ ՀՀ Վարչապետի որոշումները տարածվում են 35 պետական կառավարման մարմինների վրա, որոնք ներառում են ՀՀ նախարարությունները և մարզպետարանները, ՀՀ Կառավարության որոշումները տարածվում են ՀՀ Արտաքին գործերի նախարարության վրա, ՀՀ Նախագահի հրամանագրերը, ի թիվս այլ մարմինների, վերաբերում են նաև ՀՀ Նախագահի աշխատակազմին): 2013թ. պետական մարմիններում աշխատողների ընդհանուր թվաքանակը կազմել է 19173 մարդ, որից 7698-ը կազմել են քաղաքացիական ծառայողները, 1127-ը քաղաքացիական հատուկ ծառայության աշխատողները, 2700-ը հարկային և մաքսային ծառայության աշխատողները և 2600-ը հանդիսացել են դատական համակարգի աշխատակիցներ: Մնացած 5048 աշխատողները հանդիսացել են քաղաքացիական ծառայության պաշտոններ չգրառեցնող աշխատողները (քաղաքական, հայեցողական, տեխնիկական և սպասարկող անձնակազմ) և հատուկ ծառայողները պետական այլ մարմիններում, օր.՝ Կադաստրի պետական կոմիտեում, ՀՀ դատախազությունում, ՀՀ Նախագահի աշխատակազմում և այլն: Աշխատողների թվաքանակը ներկայացված է ՀՀ կառավարության 2013թ. պետական բյուջեի ուղերձում: Վերը նշված հաշվարկները չեն ներառում պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության և պետական գաղտնիք պարունակող այլ ոլորտների աշխատակիցների վերաբերյալ տվյալները:

Ի տարբերություն այլ ոլորտների, պաշտպանության ոլորտի ծախսերը



բյուջեում արտացոլվում են մեկ հոդվածով՝ չտարանջատելով աշխատողների վարձատրությանն ուղղվող միջոցները: Նշված ոլորտում վարձատրության համակարգի ուսումնասիրությունը դուրս է սույն գնահատման շրջանակներից:

**(i) Անձնակազմի գրանցումների և աշխատավարձերի վճարացուցակի միջև ինտեգրման և համադրման աստիճանը**

Ինչպես նշվում է ստորև, սահմանված ընթացակարգով նախատեսվում է պետական յուրաքանչյուր մարմնի համար պաշտոնների անվանացանկերի հաստատում, վերջինիս հիման վրա հաստիքացուցակների հաստատում և այդ հաստիքացուցակների ներկայացում Հաշվապահական հաշվառման համար պատասխանատու ստորաբաժանում:

ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդն (ՔԾԽ) ընդհանուր պատասխանատվություն է կրում ՔԾԽ-ում վարվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի հետ յուրաքանչյուր պետական մարմնի հաստիքացուցակում (տվյալ մարմնում աշխատող մարդկանց ցուցակն է) ներառված քաղաքացիական ծառայողների ցանկի համապատասխանության ստուգման համար (այսինքն՝ աշխատողը կարող է աշխատանքի նշանակվել միայն սահմանված պաշտոններում): Պետական յուրաքանչյուր մարմնի հաստիքացուցակի կառավարումն իրականացնում է տվյալ մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը (ԱԿՍ): Պետական մարմինների նախաձեռնությամբ հաստիքացուցակներում քաղաքացիական ծառայության պաշտոններին առնչվող փոփոխությունները կարող են իրականացվել ՔԾԽ-ի նախապես տված հավանությամբ: ՔԾԽ-ն վարում է քաղաքացիական ծառայողների միասնական գրանցամատյան, որը կառավարվում է «Մերգեյլան» ծրագրային համակարգի միջոցով, որն իր հերթին ապահովում է անմիջական կապ ՔԾԽ-ի և պետական մարմինների ԱԿՍ-ների միջև: «Մերգեյլան» ծրագրային համակարգը ներդրվել է 2010թ.՝ զարգացման գործընկերների որոշակի աջակցությամբ:

Յուրաքանչյուր պետական մարմնի հաստիքացուցակը հաստատվում և փոփոխվում է տվյալ մարմնի ղեկավարի կողմից՝ ԱԿՍ առաջարկությամբ: Հաստիքացուցակները կազմվում են՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մարմնի աշխատողների համար սահմանված թույլատրելի առավելագույն թվաքանակը (հաստատվում է ՀՀ Վարչապետի և ՀՀ Կառավարության որոշումներով, և ՀՀ Նախագահի հրամանագրերով), պետական ծառայության պաշտոնների թվաքանակը, անվանացանկերը, պաշտոնների դասակարգումներն ու դասային աստիճանները: Յուրաքանչյուր պաշտո-

նի համար սահմանվում է ամսական աշխատավարձի չափն ու համապատասխան անհատական հավելումները:

Հաստիքացուցակը պետական մարմնում աշխատող անձանց ցանկն է (որում ներառվում են նաև պաշտոնները, քաղաքացիական ծառայության դասային աստիճանները, սահմանված ամսական աշխատավարձի չափը), որն իրենից ներկայացնում է ԱԿՍ-ում վարվող աշխատողների անձնական գրանցումների միայն մի մասը: Միայն հաստիքացուցակում ներառված տեղեկատվությունը բավարար չէ ամսական աշխատավարձերի հաշվարկման համար, քանի որ գոյություն ունեն աշխատողների վերաբերյալ այլ գրանցումներ ևս, (օր.՝ ժամանակավոր անաշխատունակության թերթիկներ, արձակուրդի և այլնի մասին հրամաններ և այլն), որոնք անհրաժեշտ են ամսական աշխատավարձերի հաշվարկման համար, սակայն չեն արտացոլված հաստիքացուցակում:

Պետական մարմնի ԱԿՍ-ը պատասխանատու է նաև պետական ծառայության այլ ոլորտներում հաստիքացուցակների և պաշտոնների անվանացանկերի միջև համապատասխանության ապահովման համար: Ի տարբերություն քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկերի և հաստիքացուցակներում քաղաքացիական ծառայության տվյալների համադրման հստակ ավտոմատացված մեխանիզմների (որոնք գործում են «Մերգեյվան» ծրագրի միջոցով), այլ (ոչ քաղաքացիական ծառայության) պաշտոնների անվանացանկերի հետ հաստիքացուցակի տվյալների պարբերական համադրման հստակ ավտոմատացված մեխանիզմներ գոյություն չունեն (ստուգումը հիմնականում կատարվում է միմյանց հետ չկապակցված «Excel» ֆայլերի հիման վրա): Սա գլխավորապես վերաբերում է վերը «Նախապատմություն» բաժնում նշվող հատուկ ծառայություններին: Ինչ վերաբերում է պետական մարմնի այլ (օր.՝ սպասարկող) անձնակազմին, ապա նման աշխատողները նշանակվում են հաստիքացուցակում ներառված ոչ քաղաքացիական ծառայության պաշտոններին՝ հաշվի առնելով ՀՀ Վարչապետի/ՀՀ Նախագահի որոշումներով պետական մարմինների աշխատողների համար սահմանված առավելագույն թվաքանակը և յուրաքանչյուր պետական մարմնի բյուջեով աշխատավարձի ֆոնդի համար հաստատված ծավալները:

Պետական մարմնի հատիքացուցակը հաստատելուց հետո 3 օրա ժամկետում ԱԿՍ-ն ոչ էլեկտրոնային եղանակով այն տրամադրում է տվյալ մարմնի Հաշվապահական հաշվառման ստորաբաժանմանը, որը մուտքագրում է այն աշխատավարձերի հաշվարկման նպատակով կիրառվող «Հայկական ծրագրեր» էլեկտրոնային համակարգ (համակարգը ներդրված է բոլոր պետական մարմիններում): Դա նշանակում է, որ գոյություն չունի ավտոմատ կապ ԱԿՍ-ում վարվող հաստիքացուցակի և «Հայկական

ծրագրեր»-ի միջև<sup>11</sup>: Հաստիքացուցակում ներառված յուրաքանչյուր աշխատողի համար ԱԿՍ-ում վարվող անձնական գործի տվյալները և դրանցում կատարված փոփոխությունները նույնպես տրամադրվում են Հաշվապահական հաշվառման ստորաբաժանմանը, որտեղ նշված տեղեկատվությունը ձեռքով մուտքագրվում է «Հայկական ծրագրեր» համակարգ: Վերջինս թույլ է տալիս ավտոմատ հաշվարկել աշխատավարձը՝ հաշվի առնելով տվյալ ամսում անձի աշխատած փաստացի աշխատաժամանակը: Համակարգը ավտոմատ կերպով գեներացնում է աշխատավարձերի վճարացուցակը, որը ներկայացվում է պետական մարմնի աշխատակազմի ղեկավարի հաստատմանը: Վճարացուցակը հաստատելուց հետո պետական մարմնի գանձապետական հաշիվներից աշխատավարձը փոխանցվում է յուրաքանչյուր աշխատողի համապատասխան բանկային հաշվին:

Որոշ պետական մարմիններում ԱԿՍ-ում վարվող անձնակազմի գրանցումների փոփոխությունները տրամադրվում են Հաշվապահական հաշվառման ստորաբաժանմանը միայն անձնակազմի փոփոխությունների մասին փաստաթղթերի (օր.՝ աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման, պաշտոնի բարձրացման, տարեկան արձակուրդների և այլնի մասին նախարարի հրամանների) կրկնօրինակների տեսքով, որոնց հիման վրա ԱԿՍ-ում փոփոխություններ են իրականացվել աշխատողների անձնական գործերում: Վերոնշյալ փաստաթղթերի կրկնօրինակները տեղադրվում են պետական մարմնի ներքին համակարգչային ցանցի հատուկ դաշտերում՝ հնարավորություն տալով Հաշվապահական հաշվառման ստորաբաժանմանը ստուգել և ներբեռնել դրանք և այնուհետև ձեռքով կատարել համապատասխան փոփոխություններ «Հայկական ծրագրեր» համակարգում: Նման մոտեցման կիրառման պարագայում մեծանում է մարդկային գործոնի նշանակությունը՝ դրանով իսկ առաջացնելով «Հայկական ծրագրեր»-ում փոփոխությունների ամբողջականության և ժամանակին կատարմանը սպառնացող հնարավոր ռիսկեր:

Որպես կանոն, տարվա ընթացքում չեն կատարվում ԱԿՍ-ներում վարվող անձնական գրանցումների և Հաշվապահական հաշվառման ստորաբաժանումներում առկա գրանցումների ու աշխատավարձերի վճարացուցակների համապարփակ և կանոնավոր համադրումներ: Ստուգումներն իրականացվում են պատահական ընտրանքի մեթոդով սխալների հայտնաբերման միջոցով կամ աշխատողների բարձրացրած խնդիրների կամ գանձատների քննության արդյունքում: Ինչևէ, նման գործընթացները չեն հանդիսանում ֆորմալ ու համապարփակ համադրումներ: Կարելի է ասել,

<sup>11</sup> «Հայկական ծրագրեր» էլեկտրոնային համակարգն ի սկզբանե մշակվել էր մասնավոր հատվածի հաշվապահական հաշվառման համար 1990-ականներին, որից հետո այն ձեռք է բերվել և ներդրվել պետական մարմինների կողմից: Պետական հատվածում այն լիովին ներդրվել է 2010թ. հետո:

որ իրականում գոյություն չունեն համակողմանի պարբերական համադրումներ կատարելու էական խոչընդոտներ, սակայն գործնականում ԱԿՍ-ներում վարվող անձնակազմի գրանցումների և Հաշվապահական հաշվառման ստորաբաժանումներում վարվող աշխատավարձերի տվյալների միջև ուղղակի էլեկտրոնային կապի բացակայության պայմաններում համադրումները կարող են լինել բավականին ժամանակատար:

2008թ. ՊԾՖՀ-ում նշվում է, որ «ԱԿՍ-ի կողմից հաստիքացուցակը տրամադրվում է Հաշվապահական հաշվառման ստորաբաժանմանը, ինչը նույնական է այն հաստիքացուցակի հետ, որը վերջինիս կողմից կիրառվում է աշխատավարձի հաշվարկների կատարման նպատակով»: Այնուամենայնիվ, հաստիքացուցակը կարող է և իրականում նույնը չլինել, քանի դեռ առկա է վերջինիս փոփոխման հավանականություն (միտումնավոր կամ ոչ միտումնավոր սխալների արդյունքում), հետևաբար, անհրաժեշտ է իրականացնել համադրումներ Հաշվապահական հաշվառման ստորաբաժանման կազմած աշխատավարձերի վճարացուցակի, նախորդ ամսվա աշխատավարձի տվյալների և ԱԿՍ-ի տրամադրած հաստիքացուցակի միջև համեմատություններ կատարելու միջոցով: Ստացվում է, որ նման համադրումներ չեն իրականացվում և հետևաբար «A» գնահատականն այս դեպքում ճիշտ չէ: Նույնիսկ եթե համադրումներն իրականում կատարվեին, գնահատականը միևնույն է կլիներ «B», քանի որ «A» գնահատականը ենթադրում է անմիջական կապ հաստիքացուցակների և վճարացուցակների միջև, ինչը այս դեպքում բացակայում է:

Գնահատող թիմի հետ հանդիպումների ժամանակ ՎՊ-ի, Ֆինանսական վերահսկողության տեսչության (ՖՆ) և ԶԳ-ների ներկայացուցիչները նշել են, որ այլ (օրինակ՝ գնումների) ոլորտների համեմատ, աշխատավարձերի նկատմամբ հսկողությունները համեմատաբար ցածր ռիսկեր են պարունակում: Այնուամենայնիվ, ՎՊ-ն, դեռևս չի իրականացրել աշխատավարձերի աուդիտներ, իսկ ներքին աուդիտի գործառույթը դեռևս գտնվում է իր զարգացման փուլում: Ուստի ֆորմալ համադրումների բացակայության պայմաններում հնարավոր չէ վստահաբար փաստել, որ աշխատավարձերի նկատմամբ հսկողություններն ավելի ուժեղ են հսկողության այլ համակարգերի համեմատ:

## **(ii) Անձնակազմի գրանցումների և աշխատավարձերի վճարացուցակների փոփոխությունների ժամանակին լինելը**

Քաղաքացիական ծառայողների անձնական գործերի վերաբերյալ տվյալների գրանցման, գրանցամատյանի վարման և պահպանման կարգը սահմանվել է ՀՀ ՔԾԽ 2002թ հունիսի 1-ի թիվ 14-Ն որոշմամբ:

Մի շարք պետական մարմիններում կատարված դիտարկումներից պարզվել է, որ պետական մարմինների անձնակազմում կատարված ցանկացած փոփոխություն (թափուր պաշտոնի առաջացում, պաշտոնական առաջխաղացում և այլն) 3-օրյա ժամկետում արտացոլվում է անձնակազմի գրանցումներում: Նմանապես, աշխատավարձերի վճարացուցակում համապատասխան փոփոխությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը, 3-օրյա ժամկետում տրամադրվում է Հաշվապահական հաշվառման ստորաբաժանմանը, որն իր հերթին 1-2 օրում մուտքագրում է այն աշխատավարձի հաշվարկման նպատակով կիրառվող «Հայկական ծրագրեր» ավտոմատացված համակարգ՝ հաջորդ ամսվա վճարացուցակում այն արտացոլելու նպատակով:

Այնուամենայնիվ, գոյություն չունի ամբողջական (պետական բոլոր մարմիններն ու պաշտոնները ներառող) ու հուսալի տեղեկատվություն անձնակազմի հետ կապված փոփոխություններն անձնական գործերում և աշխատավարձի վճարացուցակում արտացոլելու համար պահանջվող ժամանակի, ինչպես նաև հետադարձ ճշգրտումների ծավալների վերաբերյալ: Ավելին, գնահատող թիմի դիտարկումները ցույց են տվել, որ ներքին հսկողության գործող համակարգերը ոչ միշտ են երաշխավորում թարմացվող տեղեկատվության ամբողջականությունն ու ժամանակին լինելը:

Չնայած, ստացվում է, որ բացակայում է ճշգրտումների ժամանակին լինելու մասին պարբերական տվյալների գեներացման համակարգը, սակայն պետական մարմինների ներքին աուդիտորների և ֆինանսիստների հետ հարցազրույցները վկայում են, որ աշխատավարձերի վճարացուցակներում հետադարձ ճշգրտումների դեպքերը տեղի են ունենում հազվադեպ, իսկ դրանց ընդհանուր գումարը փոքր է:

### **(iii) Անձնակազմի գրանցումների և աշխատավարձերի վճարացուցակների փոփոխությունների նկատմամբ ներքին հսկողությունները**

Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանվում են աշխատակիցների հաստիքացուցակների և պաշտոնների անվանացանկերի հաստատման և դրանցում փոփոխությունների իրականացման, ինչպես նաև պաշտոնների նշանակման ու ազատման գործընթացները և դրանց համար պատասխանատու միավորները: Քաղաքացիական ծառայողների, ներառյալ հատուկ ծառայություններում ընդգրկված քաղաքացիական ծառայողների անձնական գործերի վարման գործընթացի նկատմամբ արտաքին հսկողությունն իրականացնում է ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդը, որը պարբերաբար ուսումնասիրում է անձնական գործերի վարման համապատասխանությունը սահմանված ընթացակարգերին՝ ներառյալ տեղեկատվության ամբողջականությունն ու համապատասխանությունը:

Պետական մարմիններում քաղաքացիական ծառայողների գրանցամատյանների վարման գործընթացը կանոնակարգված է և այդ գործառույթների իրականացման համար սահմանված են պատասխանատու ստորաբաժանումներ: Փաստաթղթերի կառավարման մասնագիտացված համակարգչային ծրագրի միջոցով պետական մարմիններում հատուկ նշանակված անձինք վարում են աշխատողների անձնական գործերը և աշխատավարձի վճարացուցակների տվյալները, ինչպես նաև իրենց վերապահված լիազորությունների շրջանակում թույլտվությունների և գաղտնաբառերի միջոցով հսկողություն են իրականացնում դրանցում արվող փոփոխությունների նկատմամբ: Կատարված ցանկացած փոփոխություն ապահովում է ստուգելիության հնարավորությունը: Ինչպես նշվում է չափումներ (i)-ի և (ii)-ի նկարագրական մասում, այն, ինչ տեղի է ունենում գործնականում, կարող է լիովին չհամապատասխանել նրան, ինչ նախատեսված է: Ավելին, վերը նկարագրվող գործընթացը վերաբերում է միայն քաղաքացիական ծառայողներին և անպայմանորեն չի տարածվում նաև պետական այլ ծառայությունների վրա: Ոչ բոլոր պետական մարմիններում են հսկողությունները բավարար, որպեսզի ապահովեն անձնակազմի գրանցումներում և աշխատավարձի վճարացուցակներում կատարվող փոփոխությունների լիարժեք ամբողջականությունը և ժամանակին լինելը:

Հսկողության համակարգի կարևոր տարրերից մեկը պետք է լինի աշխատողների հաճախելիության հաշվառումը, որը ենթադրում է յուրաքանչյուր աշխատողի գրանցում աշխատանքի ներկայանալու պահին: Ստորաբաժանումների ղեկավարները հաշվի են առնում այս տեղեկատվությունը աշխատաժամանակի հաշվարկների տեղեկագրերի ստորագրման ժամանակ՝ դրանով իսկ դյուրինացնելով աշխատավարձերի ճիշտ հաշվարկը: Գրեթե բոլոր պետական մարմինների շենքերի մուտքերի մոտ տեղակայված են հաճախելիության հաշվառման էլեկտրոնային համակարգեր, բայց մուտքերի գրանցման նպատակով դրանց հաշվառումները դեռևս ինտեգրված չեն աշխատավարձերի վճարացուցակների կազմման գործընթացին:

#### **(iv) Հսկողության թույլ կողմերի և/կամ «ուրվական» աշխատողների բացահայտմանն ուղղված վարձատրության համակարգի աուդիտի առկայությունը**

Թեև ներքին աուդիտի օրենսդրության համաձայն, ներքին աուդիտի գործառույթը պետք է իրականացնի անձնակազմի կառավարման և վարձատրության համակարգերի աուդիտ, սակայն նշված գործառույթը դեռևս իր զարգացման սկզբնական փուլում է (ԿՑ-21), և դեռևս վաղ է դրա հուսալիության և արդյունավետության մասին խոսելը: Վերջին 3

տարում պետական մարմիններում վարձատրության համակարգի համապարփակ և կանոնավոր աուդիտներ չեն իրականացվել: Իրականացված աուդիտները կրել են մասնատված բնույթ, այսինքն՝ իրականացվել են պետական մարմնի կամ ԱԿՍ-ում, կամ Հաշվապահական հաշվառման ստորաբաժանումում:

Վարձատրության համակարգը գտնվում է նաև ՖՆ-ի ֆինանսական վերահսկողության տեսչության (ՖՎՏ) ուշադրության կենտրոնում: Ի տարբերություն գնումների ոլորտի, սահմանված կանոնների և կանոնակարգերի հետ անհամապատասխանության առումով վարձատրության համակարգը ՖՎՏ-ի կողմից դիտվում է որպես համեմատաբար ցածր ռիսկեր պարունակող համակարգ: ՖՎՏ-ն ավելի շուտ կատարում է գործարքների ստուգման, քան ներքին աուդիտի գործառույթ, որն ի տարբերության դրա, ավելի շատ կենտրոնանում է համակարգերի վրա: ՖՎՏ-ն ստուգում է հաստիքացուցակը և աշխատավարձի հաշվարկների արժանահավատությունը, ինչպես նաև աշխատողների հաճախելիության տվյալները՝ գաղտնի համաձայնության հնարավոր դեպքերը բացահայտելու նպատակով: Մասնավորապես, ՖՎՏ-ն ստուգում է, թե արդյոք կան «ուրվական» աշխատողներ (օր.՝ աշխատանքի ընդունված մարդիք, որոնք վճարվում են, սակայն իրականում աշխատանքի չեն գալիս):

### **Ընթացիկ և պլանավորված աշխատանքներ**

- Ընթացքում են գտնվում «Հայկական ծրագրեր» էլեկտրոնային համակարգի արդիականացման և ԱԿՍ-ների կողմից կիրառվող անձնակազմի տվյալների կառավարման մոդուլների հետ նշված համակարգի կապի ապահովման աշխատանքները, որոնց արդյունքում կապահովվի անմիջական ծրագրային կապ անձնակազմի գրանցումների և վճարացուցակների միջև:
- 2011թ. ընդունված և 2012թ. ուժի մեջ մտած «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն, 6 տարբեր տիպի հանրային ծառայությունները ենթակա են ներդաշնակեցման: Նշված օրենքը սահմանում է մարդկային ռեսուրսների կառավարման ընդհանուր սկզբունքները:
- Վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորող ենթաօրենսդրական ակտերը վերանայվում են՝ դրանք օրենքների հետ համապատասխանեցնելու նպատակով:
- Նախատեսվում է նաև ներդնել աշխատակիցների ծանուցման ավտոմատ համակարգ, որի միջոցով պետական մարմինների աշխատակիցները կստանան ծանուցումներ իրենց փոխանցված աշխատավարձերի վերաբերյալ:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-18	D+ <i>(վերանայվել է «B+»-ից)</i>	D+	<p><b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> «D+» գնահատականը բացատրվում է պետական մարմինների աշխատավարձերի վճարացուցակների և անձնակազմի վերաբերյալ գրանցումների միջև ժամանակին կատարվող համադրման բացակայությամբ: Վերջինս գլխավորապես պայմանավորված է նրանով, որ դրանց միջև ավտոմատացված կապերի բացակայության պատճառով համադրման գործընթացը դառնում է շատ ժամանակատար:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում տրված գնահատականները թվում են չափազանց բարձր և հետևաբար վերանայվել են:</p>
(i)	D <i>(վերանայվել է «A»-ից)</i>	D	<p><b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> Հաստիքացուցակների/ անձնակազմի վերաբերյալ այլ գրանցումների և աշխատավարձերի վճարացուցակների, ինչպես նաև ոչ քաղաքացիական ծառայողների պաշտոնների անվանացանկերի և հաստիքացուցակների միջև կապերը ավտոմատացված չեն, և համադրումներ չեն իրականացվում: Պետական մարմիններում աշխատավարձի վճարացուցակները կազմվում են Հաշվապահական հաշվառման ստորաբաժանումների կողմից՝ ԱԿՍ-ների կողմից այդ ստորաբաժանումներին փոխանցվող հաստիքացուցակների և անձնակազմի այլ գրանցումների հիման վրա: Վերջիններս ձեռքով մուտքագրում են տեղեկատվությունը աշխատավարձերի հաշվարկման համար կրառվող «Հայկական ծրագրեր» համակարգ, որն ավտոմատ կերպով իրականացնում է աշխատավարձերի հաշվարկներ: Որոշ պետական մարմիններում կիրառվող ներքին հսկողության համակարգերը չեն երաշխավորում փոխանցվող տվյալների և դրանց ձեռքով մուտքագրման ամբողջականությունը, և այս պարագայում էլ ավելի ակնհայտ է դառնում առանձին համադրումներ կատարելու անհրաժեշտությունը: Նման համադրումներ պարբերաբար չեն իրականացվում, քանի որ, ուղղակի էլեկտրոնային կապի բացակայության պայմաններում այն կլինի ժամանակատար:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում «A» գնահատականը հիմնավորվել է նրանով, որ «յուրաքանչյուր պետական մարմնում ԱԿՍ-ի կողմից հաշվապահական ստորաբաժանմանը տրամադրվող հաստիքացուցակներ իրենից ներկայացնում է այն նույն ցանկը, որի հիման վրա հաշվապահական ստորաբաժանումը հաշվարկում է աշխատավարձերը»: Այնուամենայնիվ, ինչպես նշվում է վերը նկարագրական մասում, հնարավոր է, որ այն չլինի միևնույն ցանկը: Այդ իսկ պատճառով «A» գնահատականը վերանայվել է «D»-ի:</p> <p>Գ-2 (i). Աշխատավարձի վճարացուցակների ամբողջականության վրա բացասաբար է անդրադառնում հաստիքացուցակի, անձնակազմի գրանցումների և վճարացուցակի փոխանցման համադրման բացակայությունը:</p>



ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(ii)	B <i>(վերա- նայված է «A»-ից)</i>	B	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Բացակայում է աշխատավարձերի վճարացուցակների փոփոխությունների ժամանակին լինելու մասին պարբերական տվյալների գեներացման համակարգը: Ինչևէ, մի շարք պետական մարմինների ներքին աուդիտորների և ֆինանսիստների հետ հարցազրույցները վկայում են, որ վճարացուցակներում հետադարձ ճշգրտումների դեպքերը տեղի են ունենում հազվադեպ, իսկ դրանց ընդհանուր գումարը փոքր է: «A» գնահատականի համար պահանջվում է տվյալների թարմացման ժամանակին լինելու և հետադարձ ճշգրտումների ծավալի ստույգ քանակական գնահատականներ: Հետևաբար տրվել է «B» գնահատականը:</p> <p>Թվում է, որ 2008թ. ՊԾՖՀ-ում տրվել է այդ պահի դրությամբ առկա իրավիճակի՝ իրականից ավելի բարձր գնահատական, ներկայացնելով այն, ինչ նախատեսվում է օրենքով և չներկայացնելով փաստացի իրավիճակը հիմնավորող փաստերը: Կարելի է ասել, որ այդ գնահատումից ի վեր իրավիճակը չի փոփոխվել, և ուստի 2008թ. գնահատականը վերանայվել է «B»-ի:</p> <p><i>Գ2 (ii) «B» գնահատականի համար. Անձնակազմի գրանցումներում և աշխատավարձի վճարացուցակներում կատարվող փոփոխությունների թարմացումները տեղի են ունենում առավելագույնը մինչև 3 ամիս ուշացումով, բայց դա անդրադառնում է փոփոխությունների միայն մի փոքր մասի վրա: Հետադարձ ճշգրտումները կատարվում են հազվադեպ:</i></p>
(iii)	C <i>(վերա- նայվել է «B»-ից)</i>	C	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Անձնակազմի գրանցումներում և աշխատավարձի վճարացուցակներում փոփոխություններ կատարելու իրավասությունները հստակ են և դրանք վերապահված են համապատասխան ստորաբաժանումներին ու աշխատակիցներին: Նշված փոփոխությունների մասին ողջ տեղեկատվությունը գրանցվում է համապատասխան համակարգչային ծրագրում և ապահովում է անհրաժեշտ ստուգելիությունը: Համակարգերում, այնուամենայնիվ, առկա են թերություններ, օր.՝ չի երաշխավորվում տվյալների լիարժեք արժանահավատությունը:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում ոչինչ չի ասվում հսկողությունների մասին: «B» գնահատականը հիմնավորված չէ, և քանի որ 2008թ. կատարողականը չի տարբերվում ներկա կատարողականից, ուստի գնահատականը վերանայվել է «C»-ի:</p> <p><i>Գ2 (iii). Հսկողության մեխանիզմներն առկա են, բայց համարժեք չեն տվյալների լիարժեք ամբողջականությունն ապահովելու համար:</i></p>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(iv)	C <i>(վերանայվել է «B»-ից)</i>	C	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Սկզբունքորեն, ներքին աուդիտի մասին օրենսդրությունը նախատեսում է անձնակազմի կառավարման և վարձատրության համակարգերի աուդիտ, բայց ներքին աուդիտի գործառույթը դեռևս գտնվում է իր զարգացման սկզբնական փուլում: Վերջին 3 տարում վարձատրության համակարգի որևէ համապարփակ աուդիտ չի իրականացվել: ԱԿՍ-ները և հաշվապահական հաշվառման ստորաբաժանումները ենթարկվել են մասնատված աուդիտների, որոնք հիմնականում ուղղված են եղել առանձին գործարքների, այլ ոչ թե՛ համակարգերի ուսումնասիրմանը: ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչությունը իրականացնում է իրականացված գործարքների ստուգումներ՝ դրանով իսկ մասնակիորեն ապահովելով աուդիտի գործառույթը:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում վարձատրության համակարգի աուդիտին տրվել է իրականից բարձր գնահատական, և հետևաբար գնահատականը վերանայվել է «C»-ի:</p> <p><i>Գ2 (iv). վերջին 3 տարիներին անցկացվել են վարձատրության համակարգի մասնակի աուդիտներ կամ աշխատողների հետազոտություններ:</i></p>

Գ2 = գնահատման չափանիշ

### 3.5.3.2. ԿՑ-19. Թափանցիկությունը, մրցակցությունը և բողոքարկման մեխանիզմները գնումների համակարգում

Զգալի ծավալի պետական ծախսեր են կատարվում պետական գնումների համակարգի միջոցով: Գնումների լավ գործող համակարգն ապահովում է կառավարության կողմից ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման նպատակով ապրանքների ձեռքբերման ժամանակ դրամական միջոցների արդյունավետ օգտագործումն ու փողի դիմաց արժեքը:

Այս ցուցանիշի չափումները 2011թ. հունիսին ենթարկվել են փոփոխության և համադրելի չեն 2008թ. ՊԾՖՀ-ի շրջանակում գնահատված չափումների հետ:

#### Նախապատմություն

2010թ. վերջում «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքի ընդունմամբ (որը փոխարինել է 2005թ. «Գնումների մասին» ինքնին վերանայված օրենքին) նշանակալից փոփոխություններ են կատարվել գնումների ոլորտը կարգավորող օրենսդրական և կանոնակարգային դաշտում:

- Գնումների համակարգը լիովին ապակենտրոնացվել է, այսինքն՝ բոլոր պետական մարմինները ինքնուրույն են կատարում իրենց գնումները (նախկինում պետական մարմինների կարիքների համար մրցակցային հիմունքներով կատարվող գնումներն իրականացվում էր կենտրոնացված ձևով՝ Պետական գնումների գործակալության միջոցով):
- Ստեղծվել է Գնումների բողոքարկման խորհուրդ (ԳԲԽ), որն անկախ մարմին է և որի կազմում ընդգրկվել են ՀՀ պետական մարմինների, համայնքների, ՀՀ Կենտրոնական բանկի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (նախկինում պետական գնումների վերաբերյալ բողոքները քննության էին առնվում ՀՀ ֆինանսների նախարարության (ՖՆ) կողմից, որը, սակայն, գնումների գործընթացից անկախ չէր):
- Ընդլայնվել է օրենքի գործողության ոլորտը, որն այժմ տարածվում է նաև պետական կազմակերպությունների կողմից կատարվող գնումների, ինչպես նաև պետությունից կամ որևէ համայնքից կամ ՀՀ կենտրոնական բանկից կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կամ պետական կամ համայնքային հիսուն տոկոսից ավելի մասնակցությամբ կազմակերպություններից նվիրաբերության կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձանց վրա՝ նվիրաբերության կարգով ստացած միջոցների հաշվին կատարվող գնումների մասով:
- Պետական գնումների գործակալությունը, որը գործում էր ՖՆ-ի կառուցվածքում, վերակազմավորվել է Գնումների աջակցման կենտրոնի (ԳԱԿ): Վերջինս խորհրդատվություն է տրամադրում գնումներ իրականացնող կազմակերպություններին և մոնիտորինգի ենթարկում դրանց գործունեությունը, ինչպես նաև հանդես գալիս որպես ԳԲԽ-ի քարտուղարություն:

2012թ. հունվարի 1-ից ներդրվել է էլեկտրոնային գնումների համակարգը: Արդյունքում, ՀՀ պետական մարմինների կողմից բաց մրցակցային ձևով գնումներն իրականացվում են նշված համակարգի միջոցով ([www.armeps.am](http://www.armeps.am)): Որոշ տեխնիկական թերությունների պատճառով էլեկտրոնային գնումների համակարգը ներկայում լիարժեքորեն չի գործում:

ԱՊՀ երկրներից Հայաստանը առաջինը ստորագրեց (2010թ. դեկտեմբերի 7-ին) ԱՀԿ-ի Գնումների ընդհանուր համաձայնագիրը, որի շրջանակներում գնումների նախընտրելի ձև է համարվում գնումների բաց մրցակցային ձևը (համահունչ է «UNICTRAL»-ին): Նշված փաստաթղթի ստորագրման և միջազգային համայնքի կողմից ընդունման փաստը վկայում է այն մասին, որ Հայաստանի պետական գնումների ոլորտը կարգավորող օրենսդրությունը համապատասխանում է միջազգային ստանդարտներին:

Ժամանակը ցույց կտա, թե գնումների գործընթացի ապակենտրոնացումը ճյուղային նախարարությունների մակարդակում կհանգեցնի արդյոք արդյունավետության բարձրացմանը: Ճյուղային նախարարություններում կարողությունների սահմանափակությունը ենթադրում է, որ արդյունավետության աճից բխող օգուտների նյութականացման համար կպահանջվի որոշակի ժամանակ<sup>12</sup>:

**(i) Իրավական և օրենսդրական կարգավորման դաշտի թափանցիկությունը, համապարփակությունը և մրցակցությունը**

Աղյուսակ 16-ում ցույց է տրվում, թե որքանով է իրավական և օրենսդրական կարգավորման դաշտը համապատասխանում ՊԾՖՀ-ի շրջանակում սահմանված նվազագույն պահանջներին<sup>13</sup>:

**Աղյուսակ 16. Գնումների ոլորտը կարգավորող իրավական և օրենսդրական կարգավորման դաշտը**

Նվազագույն պահանջներ	Համապատասխանություն պահանջներին (Այո /Ոչ)	Բացատրություն
(i) Ունի հիերարխիկ կառուցվածք, իսկ գերակայության կարգը հստակորեն սահմանված է;	Այո	Գնումների մասին ՀՀ օրենսդրությունը բաղկացած է ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, «Գնումների մասին» ՀՀ օրենքից և դրա կիրարկումն ապահովող այլ իրավական ակտերից (ՀՀ կառավարության որոշումներ, ՀՀ ՖՆ հրամաններ):  Գնումների կարգավորման և համակարգման ոլորտում այլ իրավական ակտեր ընդունելու լիազորություններ ունեն միայն ՀՀ կառավարությունը և գնումների ոլորտում լիազոր մարմինը (ՀՀ ՖՆ): Ընդ որում, գնումների ոլորտում այդ մարմիններից յուրաքանչյուրի իրավաստեղծ լիազորությունների շրջանակները հստակ սահմանված են «Գնումների մասին» օրենքով:

<sup>12</sup> ««Թրանսփարենսի ինթերնեշնլ»-ի Երևանի գրասենյակի կողմից գնահատող թիմին ներկայացված տեսակետ:

<sup>13</sup> Այս ցուցանիշը ներառված է նաև ՏՀԶԿ-ի Ջարգացման աջակցման հանձնախմբի Ազգային գնումների գնահատման շրջանակում:

Նվազագույն պահանջներ	Համապատասխանություն պահանջներին (Այո /Ոչ)	Բացատրություն
(ii) Ազատ և հեշտությամբ մատչելի է հանրությանը պատշաճ միջոցներով	Այո	Գնումների գործընթացի պետական կարգավորման և համակարգման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը կրում են նորմատիվային բնույթ և դրանք հրապարակվում են ՀՀ իրավական ակտերի պաշտոնական տեղեկագրում, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնումների էլեկտրոնային տեղեկատույում ( <a href="http://www.procurement.am">www.procurement.am</a> , <a href="http://www.gnumner.am">www.gnumner.am</a> ) և այլ պաշտոնական տեղեկատվական կայքերում ( <a href="http://www.laws.am">www.laws.am</a> ):
(iii) Տարածվում է պետական միջոցների հաշվին իրականացվող բոլոր գնումների վրա	Այո	Հայաստանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց ենթակա հիմնարկները, պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները, 50 տոկոսից ավելի պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններն իրենց վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն իրականացնում են միասնական ընթացակարգերով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգերին համապատասխան: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ միջազգային պայմանագրերով (համաձայնագրերով) սահմանվում են գնումների կատարման այլ նորմեր, քան նախատեսված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ: Օրինակներից են ԶԳ-ների ֆինանսավորմամբ իրականացվող առանձին ծրագրերի շրջանակում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները, որոնք իրականացվում են այդ ԶԳ-ների կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան: 2012թ. նման գնումները կազմել են 2012թ. ՀՀ պետական բյուջեի ծախսերի մոտ 10 տոկոսը:

Նվազագույն պահանջներ	Համապատասխանություն պահանջներին (Այո /Ոչ)	Բացատրություն
<p>(iv) Գնումների բաց մրցակցային ձևը ճանաչվում է որպես նախընտրելի ձև և հստակորեն սահմանվում են այն հանգամանքները, երբ կարող են կիրառվել նաև այլ ձևերը՝ տալով դրանց հիմնավորումը</p>	<p>Այո</p>	<p>«Գնումների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է գնման ձևերը, ինչպես նաև սահմանում է, որ գնումների նախընտրելի և հիմնական ընթացակարգը բաց ընթացակարգն է: «Գնումների մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 10.02.2011թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշմամբ հաստատված կարգը հստակ նկարագրում և տալիս են այն համապատասխան հիմնավորումները՝ որոնց առկայության դեպքում պատվիրատուն իրավասու է բաց ընթացակարգից բացի կիրառել գնման այլ ընթացակարգեր:</p>
<p>(v) Հանրության համար ապահովում է հետևյալ ողջ տեղեկատվության հասանելիությունը՝ կառավարության գնումների պլաններ, մրցութային հնարավորություններ, շնորհվող պայմանագրեր, և գնումների հետ կապված բողոքների լուծման վերաբերյալ տվյալներ</p>	<p>Այո</p>	<p>Գնումների մասին ՀՀ օրենսդրությունը պահանջում է, որպեսզի գնումների պլանները, դրանցում կատարվող փոփոխությունները, գնումների հայտարարությունները և հրավերները, հրավերներում կատարվող փոփոխությունները, հրավերների վերաբերյալ տրամադրված պարզաբանումները, գնման ընթացակարգը չկայացած ճանաչելու մասին հայտարարությունը, 1 մլն ՀՀ դրամը գերազանցող պայմանագրերի դեպքում պայմանագիր կնքելու և կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները, գնումների վերաբերյալ բողոքները և դրանց վերաբերյալ ԳԲԽ-ի որոշումները հրապարակվեն գնումների էլեկտրոնային տեղեկատույուն (<a href="http://www.procurement.am">www.procurement.am</a>, <a href="http://www.gnumner.am">www.gnumner.am</a>):</p>

Նվազագույն պահանջներ	Համապատասխանություն պահանջներին (Այո /Ոչ)	Բացատրություն
(vi) Սահմանում է գնումների անկախ վարչական ուսումնասիրման գործընթաց՝ մինչև պայմանագրերի ստորագրումը մասնակիցների կողմից ներկայացված բողոքներն ուսումնասիրելու նպատակով	Այո	<p>Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն, նախքան պայմանագրի կնքումը պատվիրատուն հրապարակում է պայմանագիր կնքելու մասին որոշումը, որով սահմանվում է անգործողության ժամկետ, որի ընթացքում շահագրգիռ անձիք կարող են ԳԲԽ-ի միջոցով բողոքարկել պատվիրատուի և/կամ գնահատող հանձնաժողովի որոշումները: 50մլն ՀՀ դրամը գերազանցող գնումների դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է, իսկ այդ գումարը չգերազանցող գնումների դեպքում՝ առնվազն 5 օրացուցային օր: Անգործության ժամկետի ընթացքում չի կարող կնքվել պայմանագիր:</p> <p>ԳԲԽ-ին բողոք ներկայացնելու դեպքում, մինչև խորհրդի կողմից բողոքի վերաբերյալ որոշման ընդունումը ևս պատվիրատուն իրավունք չունի կնքել պայմանագիր (բողոքի վերաբերյալ խորհուրդը իր որոշումն ընդունում և հրապարակում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում):</p>

**(ii) Գնման մրցակցային ձևերի կիրառումը**

Այս չափումը գնահատվում է ելնելով բաց մրցակցային ձևի կիրառման համար սահմանված շեմը գերազանցող գնումների դեպքում՝ գնման այլ ձևերի կիրառմամբ պայմանագրերի կնքման վերաբերյալ ներկայացված պատշաճ հիմնավորումների մակարդակից:

Գնումների մասին նոր օրենսդրությունը նախատեսում է գնումների մի շարք ընթացակարգեր, սակայն դրանք գլխավորապես հանդիսանում են գնումների մրցակցային ձևեր (իրականացվում են բաց հայտարարությունների միջոցով և չեն սահմանափակում պոտենցիալ մասնակիցների մասնակցությունը գնման գործընթացին): Գնումների ոչ մրցակցային ձև է հանդիսանում միայն առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով իրականացվող բանակցային ընթացակարգը, որն ըստ էության հանդիսանում է մեկ աղբյուրից գնումների գործընթաց:

Գնումների մասին ՀՀ օրենսդրությունը հստակ նկարագրում է այն համապատասխան հիմնավորումները, որոնց առկայության դեպքում պատվիրատուն իրավասու է բաց ընթացակարգից բացի կիրառել գնման այլ ընթացակարգեր: Հիմնավորումները հիմնականում վերաբերվում են այն դեպքերին, երբ ի հայտ է գալիս գնման «անհետաձգելի չնախատեսված պահանջ», կիրառելի են հեղինակային, հատուկ կամ բացառիկ իրավունքի օգտագործման մասին դրույթները կամ հիմնավոր պատճառներով պատվիրատուն միևնույն մատակարարից ձեռք է բերում լրացուցիչ քանակությամբ ապրանքներ / ծառայություններ<sup>14</sup>:

Պետական մարմինների կողմից յուրաքանչյուր տարվա համար հաստատվող և հրապարակվող գնումների պլանում նշվում է գնման առարկայի անվանումը, չափման միավորը, քանակը, տվյալ գնման համար նախատեսված բյուջետային հատկացումները, ինչպես նաև գնման ձևը (ընթացակարգը): Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը հաստատվում է ՀՀ կառավարության կողմից, իսկ այլ (օր.՝ արտաբյուջետային) միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանները՝ համապատասխան պատվիրատուների ղեկավարների կողմից:

Պետական մարմիններում գնումների յուրաքանչյուր պայմանագրի շնորհման վերաբերյալ պահվում են համապատասխան գրանցումներ և փաստաթղթեր: Եթե գնման գինը գերազանցում է 1 մլն. ՀՀ դրամը, ապա կազմվում է նաև գնման ընթացակարգի արձանագրություն, որտեղ ի լրումն գնման գործընթացի վերաբերյալ այլ մանրամասն տեղեկությունների, նշվում է նաև գնման ձևի ընտրության հիմնավորումը: Պետական մարմինների ներքին աուդիտի ստորաբաժանումները, Ֆինանսների նախարարությունը, ԳԱԿ-ը, ՖՆ-ի Ֆինանսական վերահսկողության տեսչությունը և ՀՀ Վերահսկիչ պալատը նույնպես ներգրավված են ՀՀ օրենսդրության պահանջների հետ պետական մարմինների կողմից ընտրված գնման ձևերի համապատասխանության գնահատման գործում: ՀՀ ՖՆ-ի կողմից մշակված ռիսկերի գնահատման մեթոդաբանությունն օգնում է վերջինիս կողմից գնահատման ենթակա գնումների ընտրության իրականացմանը: ՖՆ-ի Ֆինանսական վերահսկողության տեսչության և ՀՀ Վերահսկիչ պալատի (ՎՊ-ի 2012թ. տարեկան հաշվետվություն) գնահատմամբ, օրենսդրության հետ համապատասխանության առումով գնումների ոլորտը պարունակում է համեմատաբար բարձր ռիսկեր, և այդ իսկ պատճառով հատուկ ուշադրություն է դարձվում ներկայացված հիմնավորումների ճշտության գնահատմանը:

Գնահատող թիմի հավաքագրած փաստերը ցույց են տալիս, որ ավելի

<sup>14</sup> Օրենսդրությամբ սահմանվող հիմնավորումների ամբողջական ցանկը (որը տրամադրվել է գնահատող թիմին) ներառում է հետևյալը. (i) հատուկ կամ բացառիկ, օր.՝ հեղինակային իրավունքի կիրառման պահանջ, (ii) չնախատեսված անհետաձգելի գնման կարիք, (iii) սկզբնական մակատարարից ապրանքների լրացուցիչ քանակություններ ձեռք բերելու պահանջ, երբ գնման աղբյուրի փոփոխումը կապված է տեխնիկական բարդությունների հետ, ընդ որում գնման առարկայի գնի աճը չպետք է գերազանցի 20 տկոսը:



մեծ ուշադրություն է դարձվում գնման ձևերի ընտրությանը և կիրառվող ոչ մրցակցային ձևերի հիմնավորմանը: Հանդիպումների ժամանակ պետական մարմինների ներկայացուցիչները նշել են, որ գնման ձևերի ընտրության հարցում սկսել են ցուցաբերել ավելի խիստ մոտեցում: Ինչ-ևէ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ԲՀԿ) ներկայացուցիչները գնահատման թիմի հետ հանդիպումների ժամանակ արտահայտել են որոշակի մտահոգություն՝ կապված նրա հետ, որ գնումների ոչ մրցակցային ձևերի կիրառումը միշտ չէ, որ բավարար հիմնավորված է: Մյուս կողմից, նրանք նշել են, որ վերջին տարիներին գնման ձևերի ընտրությունը դարձել է ավելի թափանցիկ:

Աղյուսակ 17-ում ներկայացված է պետության կարիքների համար 2011թ. և 2012թ. իրականացված գնումների ոչ մրցակցային ձևերի վերաբերյալ տեղեկատվությունը, որտեղ պետության կարիքների համար իրականացվող գնումների ոչ մրցակցային ձև են դիտարկվել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով իրականացվող բանակցային ընթացակարգով կատարվող գնումները: 2011թ. և 2012թ. գնումների ոչ մրցակցային ձևերի կիրառմամբ պայմանագրերի մեծ մասը շնորհվել է. (արժեքային արտահայտությամբ 2011թ. 66%-ը և 2012թ. 72%-ը, իսկ քանակային արտահայտությամբ 2011թ. 54%-ը և 2012թ. 82%-ը) հատուկ կամ բացառիկ իրավունքների հիման վրա (օր.՝ ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների կողմից մատուցվող հիվանդանոցային և կրթական ծառայությունների դեպքում):

**Աղյուսակ 17. Շնորհված գնման պայմանագրեր, 2011-2012թթ.**

	2011	2012
<b>Գնման պայմանագրերի շնորհման բոլոր դեպքերը</b>		
Շնորհված պայմանագրերի ընդհանուր թիվը	14617	18059
Շնորհված պայմանագրերի ընդհանուր արժեքը (մլն ՀՀ դրամ)	166804.6	171900.0
<b>Գնման պայմանագրերի շնորհման դեպքերը (բացառությամբ բաց մրցակցային մեթոդների)</b>		
Շնորհված պայմանագրերի ընդհանուր թիվը*	7874	14892
Շնորհված պայմանագրերի ընդհանուր արժեքը (մլն ՀՀ դրամ)	110972.5	123385.8
Բաց մրցույթի միջոցով չշնորհված պայմանագրերի արժեքի տեսակարար կշիռը շնորհված բոլոր պայմանագրերի ընդհանուր արժեքում (%)	66	72
Բաց մրցույթի միջոցով չշնորհված պայմանագրերի թվի տեսակարար կշիռը շնորհված բոլոր պայմանագրերի ընդհանուր թվաքանակում (%)	54	82

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

**(iii) Գնումների մասին ամբողջական, արժանահավատ և ժամանակին տեղեկատվության հասանելիությունը հանրությանը**

Պետության կարիքների համար գնումների գործընթացին առնչվող հիմնական տեղեկատվությունը, ներառյալ գնումների պլանները, դրանցում կատարվող փոփոխությունները, գնումների հայտարարությունները, հրավերները, հրավերներում կատարվող փոփոխությունները, հրավերների վերաբերյալ տրամադրված պարզաբանումները, գնման ընթացակարգը չկայացած ճանաչելու մասին հայտարարությունը, 1 մլն ՀՀ դրամը գերազանցող պայմանագրերի դեպքում պայմանագիր կնքելու և կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները հրապարակվում են գնումների էլեկտրոնային տեղեկատույում ([www.gnumner.am](http://www.gnumner.am) կամ [www.procurement.am](http://www.procurement.am)): Գնումների մասին հայտարարությունները նաև հրապարակվում են [www.azdarar.am](http://www.azdarar.am) հասցեով ինտերնետային էջում:

Աղյուսակ 18-ում ներկայացված է տեղեկատվություն պետության կարիքների համար 2012թ իրականացված գնումների հրապարակայնության վերաբերյալ:

**Աղյուսակ 18. Հանրության համար գնումների մասին տեղեկատվության հասանելիության աստիճանը**

Տեղեկությունների տեսակ	Հասանելիությունը հանրության համար	Հանրության տեղեկացման համար դրանց թարմացման հաճախականությունը/ ժամանակին լինելը	Գնումների ծավալը 2012թ.		
			Ընդամենը	Հրապարակված	%
Պետական մարմինների գնումների պլաններ	Այո	Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջով, գնումների պլանները և դրանցում փոփոխությունները հաստատվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են գնումների էլեկտրոնային տեղեկատույում ( <a href="http://www.gnumner.am">www.gnumner.am</a> ):  ՀՀ պետական մարմինների 2012թ գնումների պլանները հաստատվել են ՀՀ Կառավարության 29.12.11թ. «ՀՀ 2012 թ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին» թիվ 1919-Ն որոշմամբ և հրապարակվել են պաշտոնական տեղեկագրում ու գնումների պաշտոնական տեղեկատույում:	187127.9  (մլն ՀՀ դրամ)	187127.9  (մլն ՀՀ դրամ)	100

<p>Պայմանագրերի շնորհման դեպքեր</p>	<p>Անբավարար տեղեկատվություն</p>	<p>Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջով, կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները պայմանագրի կնքումից հետո 7 օրացուցային օրվա ընթացքում հրապարակվում են գնումների էլեկտրոնային տեղեկատույում, եթե գնման գինը գերազանցում է 1 մլն ՀՀ դրամը:</p> <p>2012թ. կնքված պայմանագրերի զգալի մասի դեպքում տեղեկատույում չեն նշվում դրանց հրապարակման ժամկետները: Ավելին, բացակայում է ամբողջական տեղեկատվություն դրանց փաստացի հրապարակման ամսաթվերի մասին: Հետևաբար, հնարավոր չէ լիարժեքորեն գնահատել տեղեկատվության այս տարրը:</p>	<p>171900.0 (մլն ՀՀ դրամ)</p>	<p>171900.0 (մլն ՀՀ դրամ)</p>	<p>100</p>
<p>Սակարկությունների հնարավորություններ</p>	<p>Այո</p>	<p>Գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն, 5 աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի հրավերն ու հայտարարությունը հրապարակվում են գնումների էլեկտրոնային տեղեկատույում:</p>	<p>12 475.2 (մլն ՀՀ դրամ)</p>	<p>12 475.2 (մլն ՀՀ դրամ)</p>	<p>100</p>
<p>Գնումների բողոքարկման արդյունքների մասին տեղեկատվություն</p>	<p>Այո</p>	<p>ԳԲԽ-ի որոշման կայացման օրվան հաջորդող 5 օրվա ընթացքում որոշումը հրապարակվում է գնումների էլեկտրոնային տեղեկատույում և ուղարկվում է պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին:</p> <p>2012թ. ընթացքում պետության կարիքների համար գնումների գործընթացի առնչությամբ ներկայացվել է 38 բողոք, որոնց վերաբերյալ խորհրդի որոշումները սահմանված ժամկետներում ներկայացվել են բողոքարկող կողմերին և հրապարակվել գնումների էլեկտրոնային տեղեկատույում:</p>	<p>38</p>	<p>38</p>	<p>100</p>

ՊԾՖԿ-ի գնահատողի թիմի հետ հանդիպումների ժամանակ ԲՀԿ- ների (Գործատուների միություն, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ») ներկայացուցիչները նշել են, որ 2013թ. ընթացքում գնումների համակարգի թափանցիկությանն էապես բարելավվել է: Օրինակ՝ մեծապես բարձրացել է մեկ աղբյուրից գնումների մասին տեղեկատվության հասանելիությունը:

#### **(iv) Գնումների բողոքարկման անկախ վարչական համակարգի առկայությունը**

Պետության կարիքների համար գնումների գործընթացների վերաբերյալ բողոքները քննում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն ստեղծված ԳԲԽ-ը, որի կայացրած որոշումները իրավապարտադիր են և պատվիրատուի, լիազոր մարմնի (ՀՀ ՖՆ) և բողոք ներկայացրած անձի կողմից կարող են բողոքարկվել միայն դատական կարգով: ԳԲԽ-ն անկախ խորհուրդ է, թեև ինստիտուցիոնալ առումով այն լիսթեբորեն անկախ չէ ՖՆ-ից, որի հետ փոխկապվածությունը դրսևորվում է միայն նրանով, որ ՖՆ-ի ենթակայությամբ ՊՈԱԿ-ի կարգավիճակով գործող ԳԱԿ-ը հանդես է գալիս որպես ԳԲԽ-ի քարտուղարություն: ԳԱԿ-ը պետք է ունենա զուտ տեխնիկական դերակատարում, և սկզբունքորեն ՖՆ-ն չի կարող ազդել ԳԲԽ-ի որոշումների վրա:

2012թ. պետության կարիքների համար գնումների գործընթացի առնչությամբ ներկայացվել է 38 բողոք, որից 17-ը լուծվել է հօգուտ բողոքարկողի (բողոքը բավարարվել է, ընթացակարգը չեղյալ է հայտարարվել), իսկ 10-ը թողնվել է առանց քննության (նախքան ԳԲԽ-ի որոշում կայացնելը բողոք ներկայացրած անձի կողմից բողոքը հետ է կանչվել): Վերոհիշյալ բողոքների քննությունը և դրանց վերաբերյալ որոշումները կայացվել են առավելագույնը 20 օրացուցային օրվա ընթացքում, ինչը համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին: Պետության կարիքների համար գնումների գործընթացի առնչությամբ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացրած որոշումները հրապարակվել են գնումների էլեկտրոնային տեղեկատույում ([www.gnumner.am](http://www.gnumner.am)) և հասանելի են հանրությանը:

Բողոքարկման/գանգատարկման մեխանիզմը գնահատվում է ըստ հետևյալ չափանիշների:

Բողոքներն ուսումնասիրվում են այն մարմնի կողմից, որը	Այո/ Ոչ	Հիմնավորում
<p>(i) կազմված է գնումների իրավական դաշտին քաջածանոթ փորձառու մասնագետներից և ներառում է մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության, ինչպես նաև կառավարության ներկայացուցիչներ</p>	<p>Այո</p>	<p>ԳԲԽ-ի կազմում կարող են ընգրկվել գնումների մասին ՀՀ օրենսդրության իմացության բավարար մակարդակ ունեցող՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից որակավորված անձիք, որոնք ներկայացնում են հետևյալ կառույցները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով նախատեսված պետական կառավարման մարմիններ,</li> <li>• ՀՀ քաղաքային համայնքներ,</li> <li>• ՀՀ կենտրոնական բանկ, և</li> <li>• ՀՀ-ում գրանցված և լիազորված մարմին գրավոր դիմում ներկայացրած հասարակական կազմակերպություններ (արհմիություններ):</li> </ul> <p>ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսվում մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների ներառում ԳԲԽ-ի կազմում: Թեև սա ցանկալի կլիներ, սակայն իր սահմանմամբ հենանիշը չի ներառում «մասնավոր հատվածի» և «քաղաքացիական հասարակության» սահմանումները: Իրականում ՀԿ-ները մասնավոր հատվածի կազմակերպություններ են («հանրային» հասկացության հակառակը «մասնավոր»-ն է, և, բացի այդ, ՀԿ-ները միավորումներ են, որոնք մատուցում են մասնավոր ծառայություններ): Ուստի, եթե ԳԲԽ-ում ներգրավված են ՀԿ-ների ներկայացուցիչներ, ապա հենանիշի հետ անվանական համապատասխանությունն ապահովվում է:</p> <p>ԳԲԽ-ի կազմում ի սկզբանե ընդգրկվել են 105 անդամներ, այդ թվում ՀԿ-ների ներկայացուցիչներ, սակայն նրանց մի մասը հաջողությամբ չի հանձնել ՀՀ ֆինանսների նախարարության անցկացրած քննությունը, իսկ մի մասն էլ չի ներկայացել քննությանը: Արդյունքում ներկայումս ԳԲԽ-ի կազմում ներառված է 67 անդամ, այդ թվում 2 ներկայացուցիչ ՀԿ-ներից:</p> <p>Այնուամենայնիվ, խորհրդի կազմում կառավարության ներկայացուցիչների թվի գերակշռության պայմաններում կարելի է եզրակացնել, որ նրանք կարող են գերակշռել նաև երեք անդամներից ձևավորվող հանձնաժողովների կազմում, մինչդեռ, անաչառության տեսանկյունից, ոչ կառավարական կազմակերպությունների ավելի բարձր ներկայացվածությունը կարող էր ցանկալի լիներ: ՀԿ-ների ներկայացուցիչները ժամանակ առ ժամանակ ներառվում են այդ հանձնաժողովներում:</p>

Բողոքներն ուսումնասիրվում են այն մարմնի կողմից, որը	Այր/Ոչ	Հիմնավորում
(ii) որևէ կերպ ներգրավված չէ գնումների գործարքներում կամ այնպիսի գործընթացում, որը հանգեցնում է պայմանագրի շնորհման մասին որոշումների կայացմանը	Այո	Ստացված յուրաքանչյուր բողոքը քննելու համար խորհրդի անդամներից ձևավորվում է երեք անձից բաղկացած հանձնաժողով: Յուրաքանչյուր դեպքում հանձնաժողովի կազմն ընտրվում է ռոտացիոն կարգով՝ պատահական ընտրության սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կազմում չեն կարող ներառվել այն պատվիրատուի կողմից ներկայացված և ԳԲԽ-ում ընդգրկված անձիք, որի գործողությունները բողոքարկվում են: Առանձին ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող խորհրդի անդամները պարտավոր են ինքնաբացարկ հայտնել տվյալ ընթացակարգից, հակառակ դեպքում նրանց բացարկ է հայտնում հանձնաժողովի նախագահը: Եթե առանձին ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունի հանձնաժողովի նախագահը, ապա նա բացառում է իր մասնակցությունը տվյալ ընթացակարգին և նրան փոխարինում է խորհրդի մեկ այլ անդամ: Հանձնաժողովի անդամները ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն:
(iii) չի գանձում այնպիսի վճարներ, որոնք թույլ չեն տալիս համապատասխան կողմերին դիմել տվյալ մարմնին	Այո	<p>Վճարի չափը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և այն կազմում է 30 000 ՀՀ դրամ: Վճարի մի մասը (մինչև 60 տոկոսը) ուղղվում է բողոքարկման հանձնաժողովի անդամների վարձատրությանը, իսկ մնացած մասը համարվում է Գնումների աջակցման կենտրոնի եկամուտը: Գնումների աջակցման կենտրոնն իրականացնում է ԳԲԽ-ի քարտուղարության գործառույթը, որի շրջանակներում վերջինս կազմակերպում է խորհրդի աշխատանքները, գնահատում է ստացված բողոքների (դիմումների) ամբողջականությունը, խորհրդին եզրակացություն է ներկայացնում յուրաքանչյուր բողոքի վերաբերյալ և հրապարակում է ԳԲԽ-ի որոշումները:</p> <p>Գնումների աջակցման կենտրոնի, պատվիրատուների և ՀՀ ՖՆ-ի պաշտոնատար անձանց հետ քննարկումների արդյունքներից կարելի է եզրակացնել, որ սահմանված վճարի չափը գործնականում չի խոչընդոտում բողոքներ ներկայացնելու գործընթացին Մինչ օրս գնումների մասնակիցների կողմից չեն բարձրաձայնվել խնդիրներ՝ կապված վճարի չափի հետ: Մյուս կողմից, այն բավականաչափ բարձր է, որպեսզի բացառի կողմերից որևէ մեկի անբարեխիղճ գործողությունների արդյունքում գնման ընթացակարգերի անհարկի կասեցումներն ու խոչընդոտները:</p>

Բողոքներն ուսումնասիրվում են այն մարմնի կողմից, որը	Այո/ Ոչ	Հիմնավորում
<p>(iv) հետևում է բողոքների ներկայացման և լուծման գործընթացներին, որոնք սահմանված են հստակորեն և հասանելի են հանրությանը</p>	<p>Այո</p>	<p>Գնումների բողոքարկման ընթացակարգերը, ժամկետները, ինչպես նաև բողոքարկման հանձնաժողովի լիազորություններն ու գործունեության սկզբունքները հստակորեն սահմանված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, որը տպագրվում է ՀՀ իրավական ակտերի պաշտոնական տեղեկագրում, «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնումների էլեկտրոնային տեղեկատույում (<a href="http://www.procurement.am">www.procurement.am</a>, <a href="http://www.gnumner.am">www.gnumner.am</a>), այլ պաշտոնական տեղեկատվական կայքերում (<a href="http://www.laws.am">www.laws.am</a>) և հասանելի է հանրությանը: Բողոքի վերաբերյալ հանձնաժողովի որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն հնարավորություն են ունենում ներկա գտնվելու խորհրդի նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները: Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում:</p> <p>Գնումների մասին ՀՀ օրենսդրությունը նախատեսում է, որ ԳԲԽ-ի կայացրած որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով: Ըստ ԳԱԿ-ի տրամադրած տեղեկատվության, 2011-2013թթ. ընդհանուր առմամբ ստացվել է 106 բողոք, որից միայն 4-ի դեպքում է, որ կողմերը դատական կարգով բողոքարկել են ԳԲԽ-ի կայացրած որոշումները: Ընդ որում, դեպքերից երկուսի մասով դատարանը ուժի մեջ է թողել խորհրդի որոշումը, մեկի մասով փոփոխության է ենթարկվել խորհրդի որոշումը, իսկ մյուս գործը սույն գնահատման պահի դրությամբ դեռևս դատական լուծում չէր ստացել:</p> <p>Վերոգրյալը վկայում է այն մասին, որ ԳԲԽ-ն, ընդհանուր առմամբ, հետևել է բողոքների ներկայացման և քննության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին:</p>

Բողոքներն ուսումնասիրվում են այն մարմնի կողմից, որը	Այո/ Ոչ	Հիմնավորում
(v) օժտված է գնումների գործընթացի կասեցման իրավասությամբ	Այո	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի համաձայն, բողոքի ներկայացումը ինքնաբերաբար չի հանգեցնում պայմանագրի կնքման կասեցմանը: Սակայն մինչև խորհրդի կողմից բողոքի վերաբերյալ որոշման ընդունումը պատվիրատուն իրավունք չունի կնքելու պայմանագիր: Նույն օրենքի 48-րդ հոդվածը սահմանում է, որ խորհուրդն իր որոշմամբ իրավունք ունի կասեցնել գնումների ընթացակարգը, առջինն ճանաչել գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումները, այդ թվում անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը, չեղյալ հայտարարել կնքված պայմանագիրը, սահմանափակել պայմանագրի կատարումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, պատվիրատուի նկատմամբ կիրառել տուժանք պայմանագրի գնի առավելագույնը 10 տոկոսի չափով, հայտարարել պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու, ինչպես նաև մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին: Նշված ցուցակում անձի ներառման ժամկետը 3 տարի է: Այն հրապարակվում է գնումների էլեկտրոնային տեղեկատույում:
(vi) կայացնում է որոշումներ կանոններով/կանոնակարգերով սահմանված ժամկետում	Այո	ԳԲԽ-ը բողոքի վերաբերյալ որոշումը կայացնում է բողոքը ստանալու ամսաթվին հաջորդող 20 օրացուցային օրվա ընթացքում: Փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում գնահատող թիմը եզրակացրել է, որ նշված ժամկետը պահպանվում է:
(vii) որոշումներ է կայացնում, որոնք պարտադիր են բոլոր կողմերի համար (առանց բացառելու արտաքին ավելի բարձր մարմիններին դիմելու հնարավորությունը)	Այո	ԳԲԽ-ի որոշումները իրավապարտադիր են («Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 48): ԳԲԽ-ի որոշումները կարող են վիճարկվել դատական կարգով («Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 45):
<b>Նշված 7 չափանիշներից բավարարվածների քանակը</b>	7	



ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖԿ	Միավոր 2013թ. ՊԾՖԿ	Գնահատում
ԿՑ-19		B	<b>«Գնումների մասին» նոր օրենքի ընդունումը, Գնումների բողոքարկման խորհրդի ստեղծումը, և էլ-գնումների պաշտոնական կայքի գործարկումը (էլ-կառավարման ներդրման շրջանակում) վկայում են գնումների համակարգում թափանցիկության մակարդակի աճի մասին:</b>
(i)	Նախկին մեթոդաբանությունը համադրելի չէ վերանայվածի հետ: Նախկին երեքի փոխարեն նոր մեթոդաբանությամբ նախատեսվում է չորս չափում, որոնց սահմանումները ևս տարբեր են: Եթե 2008թ . ՊԾՖԿ-ի	A	Պետության կարիքների համար իրականացվող գնումների գործընթացը կարգավորող իրավական դաշտը համապատասխանում է բոլոր 6 հենանիշներին: Գ2 (i). Իրավական դաշտը համապատասխանում է նշված բոլոր 6 պահանջները:
(ii)	գնահատման ժամանակ կիրառվել նոր մեթոդաբանությունը, ապա, ամենայն հավանականությամբ, գնահատականը ներկայինիս համեմատ կլիներ	D	Առկա տվյալներն անբավարար են գնումների մասին օրենսդրության տեսակետից ոչ մրցակցային ձևերի կիրառման հիմնավորվածության աստիճանը գնահատելու համար: Սա մտահոգության տեղիք է տալիս՝ հաշվի առնելով հատուկ կամ բացառիկ իրավունքների հիման վրա գնման ոչ մրցակցային ձևի կիրառման դեպքերի թիվը (արժեքային արտահայտությամբ 66%՝ 2011թ., 72%՝ 2012թ., տես Աղյուսակ 18-ը): Ոչ մրցակցային ձևերի կիրառման հիմնավորումների ուղղությամբ տարբեր մարմինների (օր.՝ ՖՆ, ԳԱԿ, Ֆինանսական վերահսկողության տեսչություն) կողմից իրականացվող զգալի ծավալով ստուգումները ենթադրում են, որ այս չափման գնահատման համար պահանջվող փաստերն առկա են: Գ2 (ii). Գնահատման համար անհրաժեշտ հուսալի տվյալները հասանելի չեն:
(iii)	ավելի ցածր, քանի որ ընդունվել է «Գնումների մասին» նոր օրենքը, ստեղծվել է ԳԲԻ-ն, իսկ գնումների նոր էլեկտրոնային տեղեկատուի միջոցով ապահովվում է տեղեկատվության ավելի բարձր հասանելիությունը:	B	Թեև կնքված պայմանագրերի մասին տեղեկատվությունը հրապարակվում գնումների էլեկտրոնային տեղեկատույում, սակայն դրանք հրապարակման փաստացի ժամկետների վերաբերյալ համապարփակ և ամբողջական տեղեկատվությունը բացակայում է: Գնումների գործընթացին վերաբերող հիմնական տեղեկությունների չորս տարրերից երեքը համապարփակ են և արժանահավատ: Այդ տեղեկատվությունը (բոլոր պետական մարմինների մասով) համապատասխան միջոցներով և սահմանված ժամկետներում ամբողջապես հասանելի է հանրությանը: Գ2 (iii). Հանրությանը հասանելի են տեղեկատվության 4 տարրերից առնվազն 3-ը (օր.՝ գնումների պլաններ), որոնք ներկայացնում են գնումների 75%-ը (արժեքային արտահայտությամբ):
(iv)		A	Գնումների բողոքարկման համակարգը բավարարում է բոլոր չափանիշները:

Գ2 = գնահատման չափանիշ

### 3.5.3.3. ԿՑ-20. Ոչ աշխատավարձային ծախսերի նկատմամբ ներքին հսկողությունների արդյունավետությունը

Աշխատավարձերի, պարտքի և եկամուտների կառավարմանը վերաբերող հսկողությունները քննարկվում են ԿՑ 14-15 և ԿՑ 17-18 ցուցանիշներին նվիրված բաժիններում:

#### (i) Ծախսային պարտավորությունների նկատմամբ հսկողությունների արդյունավետությունը

Պետական բյուջեից իրականացվող բոլոր տիպի ծախսերի համար գործում է ծախսային պարտավորությունների նկատմամբ գանձապետական հսկողության մանրամասն համակարգ, որն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գանձապետական հսկողության կանոններին համաձայն: Հսկողությունն իրականացվում է Գանձապետարանում վարվող «Գանձապետական գործառնական օր» (ԳԳՕ, նախկինում՝ «LSFinance») համակարգչային ծրագրի միջոցով:

2008 թվականից հետո ծախսային պարտավորությունների նկատմամբ գանձապետական հսկողությունը բարելավվել է: 2010թ. «Client-Treasury» ծրագրային համակարգի ներդրման շնորհիվ բարձրացել է բյուջեի կատարման նկատմամբ ներքին հսկողության արդյունավետությունը՝ հնարավորություն տալով պետական մարմիններին ուղղակիորեն կապվել ԳԳՕ ծրագրին՝ նախկինում տեղական գանձապետական բաժինների միջոցով ապահովվող կապի փոխարեն: ԳԳՕ համակարգն ինքնին պարբերաբար արդիականացվել է: Համակարգը գործում է բոլոր պետական մարմիններում և ԾԻԳ-երում: Մինչև 2008թ. ԾԻԳ-երի կողմից իրականացվող ծախսերի նկատմամբ գանձապետական հսկողություն գործնականում չէր իրականացվում: 2010թ. ԾԻԳ-երի առևտրային բանկերում վարվող հաշիվները տեղափոխվեցին Կենտրոնական բանկում վարվող գանձապետական միասնական հաշիվ (ԿՑ-17), իսկ 2013թ. կեսերից գանձապետական հսկողության կանոնները սկսեցին կիրառվել նաև ԾԻԳ-երի կողմից իրականացվող բյուջետային ծախսերի գծով ծախսային պարտավորությունների նկատմամբ:

2013թ. կեսերից էլ ավելի բարելավվեց ծախսային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ամբողջականությունն ու հուսալիությունը, ինչը ծախսային պարտավորությունների նկատմամբ գանձապետական հսկողության գործընթացներում ծախսերը հիմնավորող սկզբնական փաստաթղթերի հաշվառման և դրանց նկատմամբ ավտոմատ հսկողությունների ներդրման արդյունք էր:

Հսկողությունները ներառում են ավտոմատացված գրանցումների, հսկողությունների և հաստատումների մանրամասն գործընթացներ ծախսային պարտավորությունների ստանձնման և կատարման բոլոր փուլերում, այդ թվում.

- Տարեկազմին պետական մարմինների տարեկան և եռամսյակային բյուջեների հաստատում և դրանց գրանցում գանձապետական համակարգում:
- Յուրաքանչյուր պետական մարմնի ծախսերի եռամսյակային առատադնների (ծախսերի նախահաշիվների) հաստատում , այդ թվում տնտեսագիտական դասակարգմամբ, և նշված ծախսային նախահաշիվների գրանցում գանձապետական համակարգում: Ծախսային նախահաշիվները հիմնվում են դրամական հոսքերի մանրամասն կանխատեսումների վրա՝ հաշվի առնելով յուրաքանչյուր եռամսյակի կտրվածքով ծախսային մանրամասն գնահատականները (ԿՑ-16):
- Առաջարկվող ծախսային պարտավորությունների վերաբերյալ ամբողջական տվյալները պետք է գրանցվեն գանձապետական համակարգում, որտեղ դրանք ավտոմատ կերպով համեմատվում են հաստատված նախահաշիվների հետ:
- Նախահաշիվներով հաստատված ծախսերի սահմաններում ծախսային պարտավորություններ ստանձնելու նպատակով վճարման ժամանակացույցերի հաստատում (ամսական բաշխմամբ) և հաշվառում: Բյուջետային տարվա ցանկացած ժամանակահատվածում ծախսային պարտավորությունների շրջանակներում իրականացվող վճարումները պետք է համապատասխանեն վճարման հաստատված ժամանակացույցին: Վճարման ժամանակացույցերը մերժվում են, եթե դրանք չեն համապատասխանում նախահաշիվներով հաստատված ծախսերի մանրամասներին:
- Հաստատված ժամանակացույցերի հիման վրա ծախսային պարտավորությունների ստանձնում (գնումներ, պայմանագրերի կնքում և այլն) և փաստացի ծախսային պարտավորությունների հաշվառում (ներառելով պայմանագրային բոլոր մանրամասները): Նախքան առաջարկվող պարտավորությունների գծով տվյալների գրանցումը դրանք ավտոմատ եղանակով համեմատվում են սահմանված ծախսային նախահաշիվների և վճարման ժամանակացույցերի հետ:
- Ծախսային պարտավորությունների մասին ողջ տեղեկատվությունը (պայմանագրերից քաղվածքներ) գրանցվում է գանձապետական համակարգում: Ուղեկցող փաստաթղթերը (ընդունման-հանձնման ակտեր, տեղեկանքներ և այլն), որոնք հիմնավորում են ծախսային պարտավորությունների և վճարման ժամանակացույցի վրա հիմնվող վճարման հանձնարարականները, ներկայացվում են գանձապետարան, որտեղ դրանք գրանցվում են: Համակարգն ավտոմատ համեմատում է վճարման հանձնարարականում նշված գումարը հիմնավորող փաստաթղթերում և վճարման ժամանակացույցում արտացոլված գումարի հետ:

- Բյուջետային ծախսերի եռամսյակային համամասնությունների փոփոխման դեպքում համապատասխան փոփոխություններ են կատարվում նաև ծախսային նախահաշիվներում և վճարման ժամանակացույցերում՝ բյուջեով նախատեսված, բայց դեռևս չստանձնված ծախսերի մասով:

Վերոհիշյալ բոլոր հսկողություններն իրականացվում են «ԳԳՕ» համակարգի միջոցով, որտեղ գրանցվում և հաշվառվում են վերը նշված բոլոր գործընթացները, փաստաթղթերն ու պարտավորությունները: Համակարգը բացառում է սահմանված հսկողությունները շրջանցելու հնարավորությունը: 2010 թվականից բոլոր պետական մարմիններում տեղադրված «Client-Treasury» համակարգի միջոցով ապահովվում է վերջիններիս կապը «ԳԳՕ» համակարգին, որը հնարավորություն է տալիս ծախսային պարտավորությունների նկատմամբ ողջ հսկողությունն իրականացնել էլեկտրոնային եղանակով, առանց հսկողության գործընթացում գանձապետական տեղական բաժինների մասնակցության: Սրա շնորհիվ բարձրացել է ծախսային պարտավորությունների ստանձնման ու կատարման գործընթացի արդյունավետությունը:

Նշված հսկողությունների արդյունքում ծախսային պարտավորություններն արդյունավետ կերպով սահմանափակվում են բյուջեով հաստատված ծախսային առաստաղների և դրամական հոսքերի կանխատեսումների սահմաններում, իսկ գանձապետական հաշիվներից վճարումներն իրականացվում են միայն սահմանված կարգով ստանձնված պարտավորությունների դիմաց: Վերոհիշյալ հսկողությունների խախտմամբ ստանձնված ցանկացած ծախսային պարտավորություն օրենքի ուժով համարվում է առջինը:

Ծախսային պարտավորությունների և վճարումների նկատմամբ սահմանված հսկողությունների արդյունավետության մասին է վկայում այն, որ վերջին ավելի քան տաս տարում պետական բյուջեի գծով ծախսային ապառքներ չեն կուտակվել:

## **(ii) Ներքին հսկողության այլ կանոնների/ընթացակարգերի համակողմանիությունը, համապատասխանությունը և ըմբռնումը**

Հանրային ֆինանսների կառավարման ոլորտին առնչվող ներքին հսկողության գործընթացները սահմանվում են համապատասխան օրենքներով, կառավարության որոշումներով, նշված օրենքներից բխող շրջաբերականներով և ցուցումներով: Այդ փաստաթղթերը սահմանում են բյուջեի պլանավորման, կատարման (այդ թվում պարտավորությունների ստանձնումը, գնումների իրականացումը, ակտիվների օգտագործումը, վճարումների իրականացումը) և հաշվառման նկատմամբ հսկողության գործընթացները:

Թեպետ նշված գործընթացները հիմնականում լավ կանոնակարգված են, այնուհանդերձ ներքին հսկողությունները սահմանող շրջաբերական-

ների և մեթոդական ցուցումների ամբողջականությունը, հասանելիությունը և արդիականությունը հեռու են ցանկալի մակարդակից:

Ներքին հսկողության գործընթացների ըմբռնման մակարդակը տարբեր է պետական մարմիններում: ՖՆ-ի Ուսուցման կենտրոնի (ՈՒԿ) կողմից պարբերաբար անցկացվող դասընթացներն օգնում են պետական հատվածի աշխատողներին ավելի լավ ըմբռնելու ներքին հսկողության համակարգերը, սակայն նոր աշխատողների համար հատուկ ներածական դասընթացներ նախատեսված չեն: ՈՒԿ-ի կողմից անցկացվող դասընթացները, որոնք նվիրված են ներքին հսկողություններին, ներառում են «Գանձապետական հաշիվների էլեկտրոնային կառավարում», «Բյուջեի կատարում» և «Գնումների կազմակերպում» թեմաներով դասընթացները: Այլ դասընթացները վերաբերում են բյուջեի կազմմանը և արդյունքների վրա հիմնվող բյուջետավորմանը, պետական ներդրումների կառավարմանը, ծրագրերի կառավարմանը, ներքին աուդիտին, հանրային հատվածի հաշվապահական հաշվառմանը, հարկային վարչարարությանը և համակարգչային հմտություններին: Դասընթացների մասնակիցների թիվը (կենտրոնական կառավարության բոլոր կառույցներից) կազմել է 1820 մարդ ինչպես 2012թ., այնպես էլ 2013թ. համար (պլանավորված):

### **(iii) Գործարքների տվյալների մշակման և գրանցման կանոնների հետ համապատասխանության աստիճանը**

Չնայած, որ ներքին հսկողություններն ընդհանուր առմամբ պահպանվում են, և դրանց շրջանցման դեպքերը հաճախակի չեն, այնուամենայնիվ, ՀՀ ՖՆ ֆինանսական վերասկզբություն տեսչության կողմից իրականացվող ստուգումների, պետական մարմինների ներքին աուդիտների և ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից իրականացվող աուդիտների արդյունքում պարբերաբար արձանագրվում են: Այնուամենայնիվ, ներքին հսկողության գործընթացների խախտման և պարզեցված ընթացակարգերի չհիմնավորված կիրառման դեպքեր:

Պետական մարմիններում ներքին հսկողության համակարգերի արդյունավետության գնահատման համար պատասխանատու են այդ մարմինների ներքին աուդիտի ստորաբաժանումները (ՖՎՏ-ն, օրենքի համաձայն, միայն ստուգում է առանձին գործարքների համապատասխանությունը օրենսդրական պահանջներին): Ինչպես նշվում է «ԿՑ-21»-ում, պետական մարմիններում ներքին աուդիտի ներդրման աշխատանքները սկսվել են ընդամենը 2012 թվականին, ուստի դեռևս շատ սակավաթիվ են ներքին հսկողության համակարգերի համապարփակ գնահատումները, որոնք թույլ կտան ամբողջական և համընդգրկուն պատկերացում կազմել հսկողությունների արդյունավետության, պատշաճ կիրառման ու համապատասխանության մակարդակի մասին: Այդուհանդերձ, առանձին պետական մարմիններում կազմված ներքին աուդիտի հաշվետվություններում, ի թիվս այլոց, արձանագրվել են նաև խախտումներ՝ կապված ոչ պատշաճ լիազորումների, պայմանագրերի կատարման նկատմամբ ոչ

պատշաճ հսկողությունների, գործարքների ոչ համարժեք հաշվապահական ձևակերպումների հետ:

Վերջին մի քանի տարիներին ՀՀ վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվություններում նույնպես նշվում են բազմաթիվ համակարգային բնույթ կրող խախտումների և թերությունների մասին, որոնք կրկնվում են տարեց-տարի և ազդում ներքին հսկողության գործընթացների արդյունավետության վրա: Այդ թերություններն ու խախտումները ներառում են որոշումների ընդունման ոչ պատշաճ լիազորումներ, ակտիվների կառավարման, տեխնիկական և այլ հսկողության կանոնների, սահմանված ընթացակարգերի և նորմերի խախտումներ, անավարտ աշխատանքների ընդունման և դրանց դիմաց վճարումների, գործարքների սխալ հաշվապահական ձևակերպումների, հսկողությունների ոչ պատշաճ կամ թերի կիրառության ու դրանց շրջանցման դեպքեր:

### ***Ընթացիկ և պլանավորված աշխատանքները***

ՊՖԿԲ-ի առաջին փուլի կարևոր բաղադրիչներից մեկը Պետական ներքին ֆինանսական հսկողության (ՊՆՖՀ) ռազմավարությունն է: Ռազմավարության համաձայն, կառավարումը պետք է «ապակենտրոնացվի» այն առումով, որ ստորին օղակների ղեկավարներին տրվի ճկունություն կառավարելու ծախսերը՝ ելնելով աստիճանաբար ներդրվող ծրագրային բյուջետավորմանը համապատասխան պետական ծախսերի որակը բարձրացնելու նպատակից: Գործող համակարգում կառավարումը խիստ կենտրոնացած է ճյուղային նախարարությունների ստորակարգության վերին օղակում: Ճկունության ընդլայնումը զուգակցվում է հաշվետվողականության պահանջներով, և ճյուղային նախարարություններում ներքին աուդիտի գործառույթները կարող են մոնիտորինգի ենթարկել հաշվետվողականությանն աջակցող ներքին հսկողության համակարգերի հուսալիությունը:

ՊՆՖՀ-ի ռազմավարության կարևոր բաղադրիչներից մեկը կառավարչական հաշվետվողականության վրա հիմնվող՝ ֆինանսական կառավարման և հսկողության (ՖԿՀ) համակարգի ստեղծումն է: Վերջինս դեռևս չի ներդրվել պայմանավորված համապատասխան օրենսդրության բացակայությամբ:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-20	C+	C+	<p><i>Ընդհանուր կարարողականը մնացել է անփոփոխ՝ պայմանավորված ներքին հսկողությունների (բացառությամբ ծախսային պարտավորությունների նկատմամբ հսկողությունների) ըմբռնման և պարզաճ կիրառման հետ կապված թերություններով (չափումներ (ii) և (iii)): Ծախսային պարտավորությունների նկատմամբ հսկողության արդյունավետությունը (չափում (i)) բարձրացել է 2010թ. «Client-Treasury» համակարգի ներդրման, ԳԳՕ ծրագրային համակարգի պարբերական արդիականացման և դրանում ԾԻԳ-երի ներառման շնորհիվ:</i></p>
(i)	B <i>(վերանայվել է «A»-ից)</i>	A	<p><b>Կարարողականը բարելավվել է:</b> «Client Treasury» համակարգի ներդրման, «ԳԳՕ» համակարգի պարբերական արդիականացման արդյունքում բարձրացել է պարտավորությունների նկատմամբ հսկողության արդյունավետությունը: Միաժամանակ, ընդլայնվել է համակարգի ծածկույթը՝ դրանում ներառելով ԾԻԳ-երին: 2012 թվականից բոլոր պետական մարմինները «Client-Treasury» ծրագրային համակարգի միջոցով (ներդրվել է 2010թ.) միացել են «ԳԳՕ» համակարգին՝ հնարավորություն ստանալով իրականացնել ամբողջական ավտոմատացված հսկողություն ծախսային պարտավորությունների ստանձնման ու կատարման գործընթացի նկատմամբ, ներառյալ ԾԻԳ-երի կողմից ծախսային պարտավորությունների ստանձնման նկատմամբ հսկողությունը: Նախկինում պետական մարմինների և կենտրոնական գանձապետարանի միջև կապն ապահովվում էր տեղական գանձապետական բաժինների միջոցով:</p> <p>Իրավիճակն ակնհայտորեն բարելավվել է, և գնահատականի տեսանկյունից միակ փոփոխությունը համակարգում ԾԻԳ-երի ներառումն է: Նախկինում համակարգից ԾԻԳ-երի դուրս լինելը վկայում է, որ 2008թ. ՊԾՖՀ-ում գնահատականը պետք է լիներ «B», և այն համապատասխանաբար վերանայվել է: ԳՉ (i). գործում են ծախսային պարտավորությունների նկատմամբ հսկողության համապարփակ մեխանիզմներ, որոնք ծախսային պարտավորությունները արդյունավետորեն սահմանափակում են առկա դրամական միջոցների և հաստատված բյուջեբային հարկացումների շրջանակում:</p>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(ii)	C	C	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Ներքին հսկողությունները սահմանող շրջաբերականների և մեթոդական ցուցումների ամբողջականությունը, հասանելիությունը և ժամանակին լինելը հեռու է ցանկալի մակարդակից: Նոր աշխատողների համար չեն անցկացվում ներքին հսկողությունների նվիրված հատուկ ներածական դասընթացներ:</p> <p>ԳՉ (ii). Ներքին հսկողության այլ կանոնները և ընթացակարգերը բաղկացած են մի խումբ կանոններից, որոնք ըմբռնվում են դրանք ուղղակիորեն կիրառող անձանց կողմից: Հնարավոր է, որ որոշ կանոններ և ընթացակարգեր ավելորդ լինեն:</p>
(iii)	C (վերանայվել է «A»-ից)	C	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> ՀՀ ՖՆ ֆինանսական վերահսկողություն տեսչության կողմից իրականացվող ստուգումների, պետական մարմինների ներքին աուդիտների կողմից իրականացվող աուդիտների և ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից իրականացվող աուդիտների արդյունքում պարբերաբար արձանագրվում են ներքին հսկողության գործընթացների խախտման և պարզեցված ընթացակարգերի չհիմնավորված կիրառման դեպքեր:</p> <p>Անկասկած, այս չափման գնահատման առումով 2008թ. ՊԾՖՀ-ում առկա է թյուրըմբռնում, որտեղ հիմնավորումը ներկայացվում է ընդամենը 1 տողով՝ նշելով միայն գործարքների զրանցման մասին: Գնահատականը վերանայվել է «C»-ի:</p> <p>ԳՉ (iii). գործարքների գերակշիռ մասում պահպանվում է կանոնների հեյր համապատասխանությունը, բայց պարզեցված ընթացակարգերի չհիմնավորված կիրառումը մտահոգության պոտենցիալ է փայլիս:</p>

Գ2 = գնահատման չափանիշ



### 3.5.3.4. ԿՑ-21. Ներքին աուդիտի արդյունավետությունը

#### *Նախապարմություն*

Ներքին աուդիտի գործառույթը ներդրվել և գործում է միայն վերջերս, 2012թ. «Ներքին աուդիտի մասին» օրենքի ընդունումից հետո:

Վերոնշյալ օրենքի ընդունմամբ էական փոփոխություններ են կատարվել ներքին աուդիտի (ՆԱ) օրենսդրական և կանոնակարգային դաշտում: Այդ փոփոխություններն ուղղված էին կազմակերպական և գործառական առումով ՆԱ-ի համապատասխանեցմանն ընդունված միջազգային չափանիշներին: Նշված փոփոխությունների արդյունքում սահմանվել են համակարգի օրենսդրական հիմքերը, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտները, դրանց կիրառման ցուցումները և ներքին աուդիտորի վարքագծի կանոնները: Արդյունքում ապահովվել է ներքին աուդիտի գործառական անկախությունը՝ նախատեսելով ներքին աուդիտի գործառույթի անմիջական ենթակայությունն ու հաշվետվողականությունը կազմակերպության ղեկավարին: Բացի այդ, մշակվել են ներքին աուդիտի կանոնակարգերը, ձեռնարկները և ուղեցույցները՝ դրանով իսկ ապահովելով աուդիտի բավարար շրջանակները:

2013թ. հունվարին ներդրվել է ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական էլեկտրոնային համակարգը, որը միակն է տարածաշրջանում: Այն հնարավորություն է տալիս արդյունավետորեն փաստաթղթավորել աուդիտի բոլոր փուլերը (պլանավորում, իրականացում, հաշվետվությունների կազմում և վերստուգում): Սույն գնահատման պահի դրությամբ, տեխնիկական խնդիրներով պայմանավորված, նշված տեղեկատվական համակարգը ներդրվել էր միայն 37 պետական մարմիններում:

#### **(i) Ներքին աուդիտի գործառույթի ծածկույթն ու որակը**

Ներքին աուդիտի նոր համակարգը ներդրվում է փուլերով՝ ՀՀ Կառավարության հաստատած ժամանակացույցին համապատասխան: Սույն գնահատման պահի դրությամբ, ներքին աուդիտի ստորաբաժանումներ են ստեղծվել 55 պետական կառավարման մարմիններից 52-ում (98.7%): Այդ մարմիններում աուդիտորների ընդհանուր թիվը կազմել է 153, որից 131-ը որակավորված աուդիտորներ են (ՖՆ-ի ներքին որակավորման համակարգի համաձայն), իսկ 22-ը՝ ուսուցանվող աուդիտորներ: Ներքին աուդիտի ստորաբաժանումները պատասխանատու են նաև այդ մարմինների լիազոր կառավարման ներքո գործող պետական հիմնարկներում, ՊՈԱԿ-ներում, հիսուն տոկոսից ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերություններում ներքին աուդիտի գործառույթների ներդրման և գործունեության ապահովման համար: Աուդիտի միջավայրի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը բացակայում է, քանի որ դեռևս ոչ բոլոր պետական մարմիններն են կիրառում ներքին աուդիտի

միասնական կառավարման տեղեկատվական էլեկտրոնային համակարգը, սակայն դրանց թվաքանակն առնվազն 3115-ն է:

Ներքին աուդիտորների բաշխվածությունն ըստ աուդիտի ենթակա միավորների հավասարաչափ չէ: Օրինակ, ՀՀ կրթության և գիտության նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման 3 աուդիտորներին բաժին է ընկնում ներքին աուդիտի ենթակա 300 միավոր: Այսպիսի զգալի անհամապատասխանության արդյունքում ներքին աուդիտի եռամյա ռազմավարական ծրագրերով հնարավոր է լինում ծածկել ներքին աուդիտի միջավայրի ընդամենը մոտ 50 տոկոսը, ինչը հանդիսանում է ներքին աուդիտի կարողությունների զգալի սահմանափակություն:

Ներքին աուդիտի ստորաբաժանումների գործառույթների շրջանակն ու ծածկույթը սահմանվում է եռամյա ռազմավարական, ինչպես նաև տարեկան ծրագրերով, որոնցում առաջնահերթությունները հիմնվում են ռիսկերի գնահատականների վրա և որոնք ենթակա են հաստատման համապատասխան պետական մարմինների ղեկավարների կողմից:

Մինչև 2012թ. ներքին աուդիտը գերազանցապես կենտրոնացած էր ֆինանսական հարցերի վրա, իսկ ներքին հսկողության համակարգերի գնահատումներ չէին իրականացվում: 2012 թվականից սկսած ավելի մեծ ուշադրություն է դարձվում համակարգային հարցերին: ՀՀ ՖՆ կողմից հրապարակված «ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2012թ. տարեկան ամփոփ հաշվետվության» համաձայն, 2012 թվականին ՀՀ պետական կառավարման մարմինների (առանց Երևանի քաղաքապետարանի) կողմից իրականացված 642 աուդիտորական առաջադրանքներից 92 (14,3%)-ը կենտրոնացել են համակարգերի վրա, որը կազմել է ներքին աուդիտի ընդհանուր աշխատաժամանակի մոտ 30%-ը:

Ներքին աուդիտի համակարգը դեռևս գտնվում է ներդրման վաղ փուլում: Դեռևս մշակվում և ընդունվում են ներքին աուդիտի մասնագիտական ստանդարտներ և ձեռնարկներ, որոնք համահունչ են Ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից սահմանված ստանդարտներին: Որակի երաշխավորման համակարգը գործում է միայն 36 պետական մարմիններում: Դեռևս ձևավորվում են պետական մարմինների ներքին աուդիտի կոմիտեները: Ներքին աուդիտի գործառույթի որակի արտաքին գնահատման լիազորությունները վերապահվել են ՀՀ ՖՆ-ին միայն վերջերս և մինչ օրս նման գնահատումներ չեն իրականացվել:

## **(ii) Հաշվետվությունների հաճախականությունն ու տարածումը**

Նախքան ներքին աուդիտի հաշվետվության կազմումը աուդիտի արդյունքները պետք է քննարկվեն աուդիտի ենթարկված միավորի ղեկավարի հետ, որից հետո հաշվետվության նախնական տարբերակը պետք է ներկայացվի աուդիտի ենթարկված միավորի ղեկավարությանը՝ կարծիքի: Հաշվետվության վերջնական տարբերակը ենթակա է հաստատման աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից և այնուհետև պետք է

տրամադրվի տվյալ մարմնի ղեկավարին, ներքին աուդիտի կոմիտեին և ներքին աուդիտի ենթարկված ստորաբաժանման ղեկավարին:

Ներքին աուդիտի միջազգային ստանդարտների ընդունմամբ հանվել է առանձին աուդիտների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ՀՀ ՖՆ ներկայացնելու պարտադիր պահանջը՝ փոխարենը նախատեսելով տարեկան ամփոփ հաշվետվությունների ներկայացում վերջինիս: Ինչպես նշվում է վերը, ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգը լիարժեքորեն չի գործում, ուստի ՀՀ ՖՆ-ն չունի հուսալի տեղեկատվություն այն մասին, թե որքանով են պետական մարմիններում ապահովվում աուդիտի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման և տարածման վերաբերյալ կանոնները: 2012թ. ընթացքում ՀՀ ՖՆ-ին ամփոփ տարեկան հաշվետվություն է ներկայացրել պետական մարմինների 80 տոկոսը:

Ներքին աուդիտի հաշվետվությունները չեն ներկայացվում ՀՀ վերահսկիչ պալատ, քանի դեռ դրանք չեն պահանջվել վերջինիս կողմից (ՀՀ ֆինանսների նախարարի 08.12.2011թ. N. 974-Ն հրաման), սակայն կարելի է ասել, որ սա զուտ ֆորմալ ընթացակարգ է:

### **(iii) Ղեկավարության կողմից ներքին աուդիտի արդյունքներին արձագանքման աստիճանը**

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի համաձայն, յուրաքանչյուր պետական մարմնում, որտեղ առկա է ներքին աուդիտի ստորաբաժանում, պետք է գործի ներքին աուդիտի կոմիտե, որը գլխավորում է տվյալ պետական մարմնի ղեկավարը: Կոմիտեի քարտուղարի պարտականությունները դրված են ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի վրա: Ներքին աուդիտի կոմիտեի հիմնական գործառույթներից է կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության նկատմամբ հսկողության իրականացումը, ինչպես նաև ներքին աուդիտի հետ ներքին աուդիտի ստորաբաժանման և այլ ստորաբաժանումների փոխհարաբերությունների կորդինացումը: Կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեի անդամները քննարկում են ներքին աուդիտի հաշվետվությունները, ինչպես նաև ներքին աուդիտի գործառույթին վերաբերող այլ նշանակալից հարցերը, այդ թվում ներքին աուդիտի առաջարկությունների հիման վրա կազմված գործողությունների պլանի կատարումը:

Դատելով ՀՀ ՖՆ-ի տրամադրած տեկատվությունից՝ աուդիտի առաջարկությունների իրականացման ուղղությամբ բազմաթիվ ղեկավարների կողմից ձեռնարկվել են բավականին համարժեք գործողություններ: 2012թ. 45 մարմիններում իրականացված ներքին աուդիտների արդյունքում հայտնաբերվել են 1648 թերացումներ: Այդ թերացումները վերաբերում են պետական գնումների գործընթացի կազմակերպման հետ կապված խնդիրներին, պայմանագրերի կատարման նկատմամբ հսկողության, հաշվապահական հաշվառման և պայմանագրերի կատարման հետ կապված

այլ հարցերին: Նշված թերացումների շտկման նպատակով կազմվել են գործողությունների ծրագրեր: Նախատեսված 900 միջոցառումներից 754-ը իրականացվել են գործողությունների ծրագրով սահմանված ժամկետներում, 25-ը՝ սահմանված ժամկետների խախտմամբ, 4-ը ընդհանրապես չեն իրականացվել, իսկ 117-ը, ըստ սահմանված ժամանակացույցի, դեռևս գտնվել են կատարման ընթացքում: Ներքին աուդիտորների հետ հարցազրույցների արդյուքները վկայում են այն մասին, որ ներքին աուդիտի նոր համակարգի ներդրումից հետո զգալիորեն բարձրացել է ներքին աուդիտի բացահայտած խնդիրներին կազմակերպության ղեկավարության արձագանքման որակը և այն շարունակում է բարելավվել:

Չնայած վերոգրյալին, փաստերը բավարար չեն, որպեսզի հավաստեն, որ առաջարկություններն իրականացվում են պետական մարմինների մեծ մասում: Որոշ նախարարություններում և գերատեսչություններում ներքին աուդիտի կոմիտեները լիարժեքորեն չեն գործում: Առանձին պետական մարմինների ներքին աուդիտի կոմիտեների արձանագրությունների ընտրանքային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ընդհանուր առմամբ, առանձին պետական մարմիններ ներքին աուդիտի հաշվետվությունների հիման վրա կազմում են գործողությունների ծրագրեր, սակայն տպավորություն է ստեղծվում, որ առաջարկությունների իրականացման նկատմամբ ներքին աուդիտի կոմիտեները համակարգված ձևով մոնիտորինգ չեն իրականացնում: Գնահատող թիմի կողմից ուսումնասիրված ներքին աուդիտի հաշվետվությունները միշտ չէ, որ պարունակել են գործողությունների ծրագրերին վերաբերող առաջարկություններ: Ավելին, ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի ոչ լիարժեք կիրառությամբ պայմանավորված, ներկայումս չկա ամբողջական և հուսալի տեղեկատվություն ներքին աուդիտի գործառույթի կողմից առաջարկվող գործողությունների ծրագրերին արձագանքելու նպատակով, կազմակերպության ղեկավարության ձեռնարկած միջոցառումների ժամանակին լինելու և համապարփակության վերաբերյալ:

### **Ընթացիկ և պլանավորված աշխատանքները**

Ընթացիկ աշխատանքները գլխավորապես ուղղված են ՀՀ ՖՆ-ի լիազորությունների շրջանակում պետական այլ մարմիններում ներքին աուդիտի գործառույթների գնահատումներ իրականացնելու կարողությունների հզորացմանը: Ապագա գերակա աշխատանքներն են. (i) ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի կատարելագործումը և նշված համակարգում բոլոր մարմինների ընդգրկումը, և (ii) ներքին աուդիտի կոմիտեների գործունեության բարելավումը:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-21	D+	C▲	<p><b>Չափումներ (i)-ի և (iii)-ի կարարողականը բարելավվել է՝ պայմանավորված 2012թ. համակարգերին միջված ՆԱ-ի ժամանակակից և գործառնական առումով անկախ գործառույթի ներդրմամբ և ղեկավարության կողմից իրականացվող հեղափոխության հսկողության բարելավմամբ:</b> Հետաուդիտային հսկողությունը շարունակում է բարելավվել: Չափում (ii)-ի տեսանկյունից Ֆինանսների նախարարությունը պարբերաբար չի ստանում աուդիտների արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ, քանի որ աուդիտի նոր տեղեկատվական համակարգը մասնակի է շահագործվում: 2008թ. գնահատման պահի դրությամբ այն ստանում էր ՆԱ-ի հաշվետվություններ, սակայն ՆԱ-ի համակարգն այդ ժամանակ նվազ զարգացած էր:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում չափում (iii)-ի «B» գնահատականը վերանայվել է «D»-ի:</p>
(i)	D	C	<p><b>Կարարողականը բարելավվել է:</b> ՆԱ-ի գործառույթը գործում է գրեթե բոլոր պետական մարմիններում: Ընդունվել են ՆԱ-ի ստանդարտներ, վարքագծի կանոններ և ձեռնարկներ, որոնք հիմնվում են ներքին աուդիտի միջազգային ստանդարտների վրա: Կազմակերպության ղեկավարին ՆԱ-ի անմիջական ենթակայության սահմանման միջոցով աճել է ՆԱ-ի անկախությունը: ՆԱ-ի աշխատաժամանակի մոտ 30 տոկոսը հատկացվում է համակարգերի աուդիտին: Այդուհանդերձ, աուդիտի ստանդարտներն ամբողջությամբ չեն պահպանվում: Կարողությունների սահմանափակության պայմաններում դանդաղում են ՆԱ-ի գործառույթի կայացման տեմպերը:</p> <p>Գ2 (i). Գործառույթը ներդրված է առնվազն ամենակարևոր պետական մարմիններում, որտեղ ներքին աուդիտը կարարում է համակարգերի որոշ ուսումնասիրումներ, բայց հնարավոր է, որ ՆԱ-ն չհամապարասխանի մասնագիտական ստանդարտներին:</p>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(ii)	C	C	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b>  Ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգը շահագործվում է միայն մասամբ, և ՀՀ ՖՆ-ն ի վիճակի չէ հուսալիորեն տեղեկանալ, թե որքանով են պետական մարմիններում ապահովվում աուդիտի արդյունքների մասին հաշվետվությունների ներկայացման և տարածման վերաբերյալ կանոնները: Թեև 2008թ. ՊԾՖՀ-ի իրականացման պահի դրությամբ ՆԱ-ի գործառույթը նվազ զարգացած էր, սակայն ճյուղային նախարարությունների կողմից ՀՀ ՖՆ-ին ՆԱ-ի հաշվետվությունների ներկայացումը պարտադիր պահանջ էր: ՆԱ-ի հաշվետվությունները տրամադրվում են ՎՊ-ին և վերահսկողական գործառույթ իրականացնող այլ մարմիններին համապատասխան պահանջի ներկայացման դեպքում:</p> <p><i>Գ2 (ii). Հաշվետվություններ են ներկայացվում պետական մարմինների մեծ մասի համար, բայց հնարավոր է, որ դրանք չներկայացվեն ՖՆ-ին և գերազույն արդյանի վերահսկիչ մարմնին:</i></p>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(iii)	D (վերա- նայվել է «B»-ից)	C▲	<p><b>Կարարողականը բարելավվել և շարունակում է բարելավվել:</b> ՆԱ-ի նոր համակարգի ներդրումից հետո զգալիորեն բարձրացել է ՆԱ-ի հաշվետվություններում ներկայացվող առաջարկություններին կազմակերպության ղեկավարության ուշադրությունը և դրանց արձագանքման որակը: ՆԱ-ի կոմիտեների ոչ կատարյալ աշխատանքը, սակայն, վկայում է, որ միշտ չէ, որ առաջարկությունները իրականացվում են կամ նույնիսկ մշակվում: ՀՀ պետական մարմիններում ՆԱ-ի տեղեկատվական համակարգի մասնակի շահագործումը թույլ չի տալիս գնահատել ղեկավարության ձեռնարկած միջոցառումների ժամանակին լինելը և համապարփակությունը: Այնուամենայնիվ, հետաուդիտային հսկողության աստիճանը շարունակում է բարելավվել:</p> <p>Թվում է, որ 2008թ. ՊԾՖՀ-ում իրականից բարձր գնահատական է տրվել այդ ժամանակ տիրող իրավիճակին, քանզի այդ ժամանակ դեռ չէր ներդրվել համակարգերին միտված ՆԱ-ի գործառույթը: Գնահատականը վերանայվել է «D»-ի:</p> <p><i>ԳՉ (iii). Բազմաթիվ ղեկավարների կողմից ձեռնարկվում են բավականին համարժեք գործողություններ, բայց հաճախ՝ ուշացումով:</i></p>

ԳՉ = գնահատման չափանիշ

### 3.6. Հաշվապահություն, գրանցումներ և հաշվետվությունների ներկայացում

#### Ամփոփ գնահատական

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-22. Հաշիվների համադրում (Մ2)	B+ (վերանայվել է «A»-ից)	A	<p><b>Կատարողականը բարելավվել է, քանի որ 2012 թվականից ԳՄՀ-ում են արտացոլվում օտարերկրյա ֆինանսավորմամբ ԾԻԳ-երի միջոցով իրականացվող նախագծերի/ ծրագրերի բոլոր գործարքները:</b></p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում չափում (i)-ի գնահատականը վերանայվել է «B»-ի, քանի որ ԳՄՀ-ում այդ ժամանակ չէին արտացոլվում ԾԻԳ-երի գործարքները:</p>
ԿՑ-23. Ծառայություններ մատուցող միավորների կողմից ստացված միջոցների մասին տեղեկատվություն (Մ1)	C	A	<p><b>Կատարողականը բարելավվել է ՊՈԱԿ-ի կարգավիճակ ունեցող դպրոցների կողմից պեդագոգական բյուջեից ստացվող ու ծախսվող միջոցների մասին հաշվետվությունների կազմման և հրապարակման արդյունքում:</b></p>
ԿՑ-24. Տարվա ընթացքում կազմվող՝ բյուջեի կատարման հաշվետվություններ (Մ1)	B+ (վերանայվել է «C+»-ից)	B+	<p><b>Ընդհանուր կատարողականը մնացել է անփոփոխ, բայց տվյալների որակը (iii) բարելավվում է, որը գլխավորապես հետևանք է «Client Treasury» համակարգի ներդրման և նշված համակարգում 29- ների ֆինանսավորմամբ իրականացվող նախագծերի ու ծրագրերի հետ կապված դրամական հոսքերի ներառման:</b></p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում գնահատականը վերանայվել է «B»-ի, քանի որ ծածկույթում պետք է չներառվեին ՊՈԱԿ-ների եկամուտներն ու ծախսերը: Ընդհանուր գնահատականը բարձրանում է՝ դառնալով «B+»:</p>



ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-25. Տարեկան ֆինանսական հաշվետվություններ (Մ1)	D+	D+	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Հաշվապահական ժամանակակից ստանդարտների բացակայությունը խոչընդոտում է աուդիտի ենթակա իմաստալից ֆինանսական հաշվետվությունների կազմմանը:

### 3.6.1. ԿՑ-22. Հաշիվների համադրման ժամանակին լինելը և պարբերականությունը

Կենտրոնական կառավարության բանկային հաշիվների, միջանկյալ հաշիվների և կանխավճարների (գործուղումների, շինարարական աշխատանքների գծով կանխավճարներ, գործառնական ծախսերի գծով կանխավճարային հաշիվներ և այլն) վերաբերյալ հաշվապահական այլ տեղեկատվության ընդհանուր համադրման և տարբերությունների շտկման գործընթացը գնահատվում է՝ հաշվի առնելով գնահատման ժամանակ տիրող իրավիճակը:

#### (i) Բանկային համադրումների պարբերականությունը

ՀՀ Կենտրոնական բանկում վարվող ՀՀ կառավարության Գանձապետական միասնական հաշվում (ԳՄՀ) օրական արտացոլվող դեբետային ու կրեդիտային գործարքները էլեկտրոնային եղանակով օրական կտրվածքով «Գանձապետական գործառնական օր» ծրագրի միջոցով համադրվում են Ֆինանսների նախարարությունում վարվող գանձապետական գրանցումների հետ, որոնք վերաբերում են գործարքներին: Նուստրո համադրումը կատարվում է դեբետային և կրեդիտային գործարքներին համապատասխան: Համադրման արդյունքում բացահայտված տարբերությունները շտկվում են հաջորդ օրը:

Ինչպես նշվում է «ԿՑ-17»-ի չափում (ii)-ի նկարագրական մասում, օտարերկրյա ֆինանսավորմամբ ծրագրերի / նախագծերի շրջանակում միջոցների տեղաբաշխումները և դրանց հաշվին կատարված ծախսերը 2012 թվականից ի վեր արտացոլվում են ԳՄՀ-ում: Մինչև 2012թ. նշված տեղաբաշխումները և ծախսերը չէին ներառվում ԳՄՀ-ում, այլ արտացոլվում էին ԳՄՀ-ից դուրս վարվող բանկային հաշիվների մնացորդների փոփոխություններում:

#### (ii) Միջանկյալ հաշիվների և կանխավճարների համադրման պարբերականությունն ու տարբերությունների շտկումը

Բյուջետային հիմնարկները շաբաթական կտրվածքով սպասարկող տեղական գանձապետական բաժանմունք (ՏԳԲ) են ներկայացնում հաշվետվություն կանխիկ ձևով կատարվող ծախսերի վերաբերյալ՝ համաձայն ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 18-ի թիվ 48 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի: Նշված ծախսերը ֆինանսավորվում են ՏԳԲ-ներից ստացված կանխավճարների հաշվին: Հաշվետվություններում նշվում են բյուջետային հատկացումների սահմաններում ծախսված գումարները՝ դրանով իսկ հնարավորություն տալով գրոյացնել և որպես ծախս վերադասակարգել կանխավճարները: Գործուղումների գծով կանխավճարների պարագայում կիրառվում է նույն ընթացակարգը, այսինքն՝ գործուղումից հետո կանխավճար ստացողները ներկայացնում են հաշվետվություն ծախսված գումարների վերաբերյալ:

Միջանկյալ հաշիվներն առանձնացված համակարգով համադրելու/գրոյացնելու անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ միջանկյալ հաշիվներով գոյացող մուտքերը օրական ձևակերպվում են որպես եկամուտ՝ համաձայն ներկայացվող հաշվեհամարների: Միայն անճշտությունների բացահայտման դեպքում կատարվում են համապատասխան հաշվանցում: Եկամուտների հետ կապված միջանկյալ հոդվածները կարող են ստեղծվել այն դեպքում, երբ եկամուտներ վճարողները չունեն / չեն կիրառում ՀՎՀՀ: Իրականացվում են բարեփոխումներ՝ ուղղված գործարքների կատարման ժամանակ հարկ վճարողների կողմից ՀՎՀՀ կիրառելու պարտադիր պահանջի ներդրմանը:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-22	B+ (վերանայվել է «A»-ից)	A	<i>Չափում (i)-ի առումով կարարողականը բարելավվել է, քանի որ 2012 թվականից ԳՄՀ-ում են արտացոլվում օտարերկրյա ֆինանսավորմամբ ԾԻԳ-երի միջոցով իրականացվող նախագծերի/ծրագրերի բոլոր գործարքները:</i>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(i)	B (վերանայվել է «A»-ից)	A	<p><b>Կատարողականը բարելավվել է, քանի որ 2012 թվականից ԳՄՀ-ում են արտա-ցուվում օտարերկրյա ֆինանսավոր-մամբ իրականացվող նախագծերի/ ծրագրերի բոլոր գործարքները:</b></p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում գնահատականը վե-րանայվել է «B»-ի, քանի որ այդ ժամա-նակ ԾԻԳ-երի բանկային հաշիվները նե-րառված չէին ԳՄՀ-ում:</p> <p>ԳՉ (i). Կենտրոնական կառավարության բանկային հաշիվների բանկային հա-մադրումը կատարվում է առնվազն ամ-սական կտրվածքով ազրեզացված և մանրամասնեցված տվյալների մակար-դակում, սովորաբար ժամանակաշրջանի ավարտին հաջորդող 4 շաբաթվա ըն-թացքում:</p>
(ii)	A	A	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b></p> <p>Ծախսերի և գործուղումների ֆինանսա-վորման նպատակով ՏԳԲ-ներից փո-խանցվող կանխավճարները պարբերա-բար գրոյացվում են:</p> <p>ԳՉ (ii). Համադրումը և հաշվանցումը կա-տարվում է առնվազն եռամսյակը մեկ անգամ, ժամանակաշրջանին հաջորդող մեկ ամսվա ընթացքում, և միայն մի քա-նի ազատ մնացորդներ են փոխանցվում գալիք ժամանակաշրջաններ:</p>

ԳՉ = գնահատման չափանիշ

### 3.6.2. ԿՑ-23. Ծառայություն մատուցող միավորների կողմից ստացված միջոցների մասին տեղեկատվության հասանելիությունը

Խնդիրներ կարող են առաջանալ ծառայություն մատուցող առաջնային միավորների մոտ՝ կապված իրենց համար նախատեսված միջոցների ստացման հետ: Այս ցուցանիշը կիրառելի է ինչպես կենտրոնական կառավարության, այնպես էլ ՏԻՄ-երի ենթակայության տակ գործող տարրական կրթության և առողջապահական հիմնարկների նկատմամբ:

Ծառայություններ մատուցող միավորներին պետական բյուջեից հատկացված միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը տեղական գանձապետական բաժանմունքների (ՏԳԲ-ներ) միջոցով առցանց ռեժիմով հավաքվում է օրական կտրվածքով ըստ գործառույթների, ծրագրերի և տնտեսագիտական հողվածների, բայց, ընդհանուր առմամբ, այն չի մանրամասնվում ընդհուպ մինչև ծառայություն մատուցող միավորների բացվածքով:

*Առողջապահություն:* Հիվանդանոցների և պոլիկլինիկաների մեծ մասը փակ բաժնետիրական ընկերություններ են: Առանձին հիվանդանոցներին ու պոլիկլինիկաներին հատկացված բյուջետային միջոցների վերաբերյալ տվյալները վերջիններիս կողմից ներկայացվում են Պետական առողջապահական գործակալություն, որը հավաքագրում, ամփոփում և հրապարակում է դրանք գործակալության կայքում<sup>15</sup>: Հաշվետվություններում արտացոլվում են ավելի քան 450 առողջապահական կազմակերպություններին փաստացի հատկացված գումարներն ըստ մարզերի և ողջ հանրապետության մակարդակում:

*Կրթություն:* Միջնակարգ դպրոցներն ունեն ՊՈԱԿ-ի կարգավիճակ: Ինչպես բոլոր այլ ոլորտներում գործող ՊՈԱԿ-ները, նրանք ևս կազմում են և լիազոր մարմին (օրինակ՝ Կրթության և գիտության նախարարությանը) ներկայացնում եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ: Նրանք նաև Ֆինանսների նախարարություն են ներկայացնում հաշվետվություններ պետական բյուջեից փաստացի ստացված կամ նախատեսվող գումարների, ինչպես նաև առևտրային բանկերում վարվող իրենց հաշիվներին մուտքագրված այլ միջոցների (այսինքն՝ սեփական եկամուտների) մասին: Նշված հաշվետվություններն ամփոփվում և հրապարակվում են Ֆինանսների նախարարության ՊՈԱԿ-ների բաժնի կողմից:

<sup>15</sup> ՊԾՖՀ-ի գնահատման պահի դրությամբ ՊԱԳ-ի ինտերնետային կայքը չէր գործում: Նշված հաշվետվությունները ներկայացվել են գնահատող թիմին՝ վերջինիս խնդրանքով:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-23	C	A	<p><b>Կարարողականը բարելավվել է ՊՈԱԿ-ի կարգավիճակ ունեցող դպրոցների կողմից պետական բյուջեից ստացվող ու ծախսվող միջոցների մասին հաշվետվությունների կազմման և հրապարակման արդյունքում:</b> Պետական մարմինները (մարզպետարանները, Պետական առողջապահական գործակալությունը (ՊԱԳ), Կրթության նախարարությունը, Ֆինանսների նախարարությունը) պարբերաբար (եռամսյակը և տարին մեկ անգամ) ստանում են հաշվետվություններ պետական բյուջեից և այլ աղբյուրներից (օր.՝ սեփական եկամուտներ) ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների ստացած միջոցների մասին: Տեղեկատվությունը նաև ամփոփ հրապարակվում է ՖՆ-ի և ՊԱԳ-ի կողմից: Այդ ժամանակից ի վեր ՏՏ համակարգերի կատարելագործման շնորհիվ բարելավվել է ծառայություն մատուցող միավորներին հատկացվող միջոցների թափանցիկությունը:</p> <p>ԳՉ. Ընթացիկ տվյալների հավաքագրման կամ հաշվապահական հաշվառման համակարգերը տրամադրում են հուսալի տեղեկատվություն հանրապետության հանրակրթական դպրոցների և առաջնային բուժօգնության հիմնարկների կողմից դրամական միջոցների և բնեղենի տեսքով ստացված բոլոր ռեսուրսների վերաբերյալ, որը առնվազն տարեկան կտրվածքով արտացոլվում է հաշվետվություններում:</p>

ԳՉ = գնահատման չափանիշ

### **3.6.3. ԿՑ-24. Տարվա ընթացքում կազմվող բյուջետային հաշվետվությունների որակն ու համապատասխանությունը սահմանված ժամկետներին**

Բյուջեն կատարելու կարողությունը պահանջում է, որ բյուջեի փաստացի կատարողականի մասին տեղեկատվությունը ժամանակին և պարբերաբար հասանելի լինի ՖՆ-ին և կառավարությանը, որպեսզի կատարողականը ենթարկվի մոնիտորինգի, անհրաժեշտության դեպքում բյուջեի կատարման բնականոն ընթացքը վերականգնելու նպատակով սահմանվեն նոր գործողությունները: Նշված տեղեկատվությունը պետք է նաև հասանելի լինի ճյուղային նախարարություններին՝ իրենց պատասխանատվության շրջանակում աշխատանքները կառավարելու նպատակով:

#### **(i) Բյուջեի նախահաշիվների ծածկույթի և համադրելիության առումով հաշվետվությունների շրջանակը**

Հաշվետվությունները կազմվում են ամսական և եռամսյակային կտրվածքով: Եռամսյակային ամփոփ հաշվետվությունները պարունակում են բյուջետային փաստացի եկամուտների և դրամարկղային ծախսերի մասին: Եռամսյակային հաշվետվություններում տվյալները ներկայացվում են ըստ տնտեսագիտական և գործառական հոդվածների՝ սահմանված բյուջետային դասակարգմանը համապատասխան: Հաշվետվությունները նաև ներառում են արտաքին աղբյուրներից ստացված վարկերի և դրամաշնորհների հաշվին ֆինանսավորված փաստացի ծախսերի, ծախսային պարտավորությունների և ծախսերի ֆինանսավորման մասին տվյալները: Ինչևէ, ամփոփ հաշվետվություններում արտացոլվում են միայն դրամարկղային ծախսերի մասին տվյալները:

#### **(ii) Հաշվետվությունների հրապարակման համապատասխանությունը սահմանված ժամկետներին**

Պատրաստվում են ամսական և եռամսյակային հաշվետվություններ, որոնք բոլորն էլ հրապարակվում են: Միևնույն ժամանակ, նախքան հրապարակումը դրանք կարող են օգտագործվել ավագ ղեկավարության կողմից բյուջեում անհրաժեշտ ճշգրտումներ կատարելու մասին որոշումներ կայացնելու նպատակով: Ամսական միջանկյալ հաշվետվությունները հրապարակվում են ժամանակահատվածի ավարտից հետո 4-5 շաբաթվա ընթացքում, իսկ եռամսյակայինները՝ ժամանակաշրջանի ավարտից հետո 45 օրվա ընթացքում:

Եռամսյակային հաշվետվությունների ներկայացման ժամանակահատվածը		Հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը <sup>16</sup>
2010 թ.	1-ին եռամսյակ	10.05.2010թ.
	2-րդ եռամսյակ	12.08.2010թ.
	3-րդ եռամսյակ	10.11.2010թ.
2011 թ.	1-ին եռամսյակ	10.05.2011թ.
	2-րդ եռամսյակ	09.08.2011թ.
	3-րդ եռամսյակ	16.11.2011թ.
2012 թ.	1-ին եռամսյակ	11.05.2012թ.
	2-րդ եռամսյակ	10.08.2012թ.
	3-րդ եռամսյակ	12.11.2012թ.
2013 թ.	1-ին եռամսյակ	13.05.2013թ.
	2-րդ եռամսյակ	09.08.2013թ.

2013թ. առաջին եռամսյակից սկսած Ազգային ժողովի Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում կառավարության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի են ունենում նաև եռամսյակային հաշվետվությունների քննարկումներ:

### (iii) Տեղեկատվության որակը

Գանձապետարանի ՏՏ համակարգերի արդիականացման շնորհիվ բարելավվում է բյուջեի կատարման եռամսյակային հաշվետվություններում արտացոլվող տվյալների որակը: «Treasury-Client» համակարգը թույլ է տալիս ճյուղային նախարարություններին առանց ՏԳԲ-ների միջամտության ծախսային գործարքների տվյալները ուղղակիորեն մուտքագրել գանձապետական ՏՏ համակարգ՝ դրանով իսկ նվազեցնելով ծախսերի ֆինանսավորման մասին ՖՆ-ում առկա տվյալների և փաստացի ծախսերի մասին ճյուղային նախարարությունների տվյալների միջև անհամապատասխանության աստիճանը: ԶԳ-ների կողմից գանձապետարանի ՏՏ համակարգի կիրառման շրջանակի ընդլայնումը ևս հանգեցնում է ԶԳ-ների կողմից ֆինանսավորվող ծախսերի մասին տեղեկատվության որակի բարձրացմանը:

<sup>16</sup> Հաշվետվությունները Ազգային ժողով ներկայացնելուց հետո դրանք զետեղվում են հետևյալ կայքում՝ [www.minfin.gov.am](http://www.minfin.gov.am):

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-24	<p><b>B+</b></p> <p><i>(վերանայվել է «C+»-ից)</i></p>	<p><b>B+</b></p>	<p><b>Թեև ընդհանուր կատարողականը մնացել է անփոփոխ, բայց տվյալների որակը (չափում (iii)) բարելավվում է, որը գլխավորապես հետևանք է «Client Treasury» համակարգի ներդրման և նշված համակարգում ՁԳ-ների ֆինանսավորմամբ ԾԻԳ-երի միջոցով իրականացվող նախագծերի ու ծրագրերի հետ կապված դրամական հոսքերի ներառման:</b></p>
(i)	<p><b>A</b></p>	<p><b>A</b></p>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Բյուջեի կատարման մասին հաշվետվությունները՝ նախատեսված ղեկավարության համար, կազմվում են՝ կիրառելով բյուջետային դասակարգման այն նույն ծածկագրերը, որոնք օգտագործվում են հաստատված բյուջեում: Սա թույլ է տալիս փաստացի ծախսերի ու եկամուտների տվյալներն անմիջականորեն համեմատել բյուջեով նախատեսված գումարների հետ: Հաշվետվությունները նաև ներառում են մինչ օրս ստանձնված ծախսային պարտավորությունների տվյալները:</p> <p><i>ԳՁ (i) Տվյալների դասակարգումը տալիս է սկզբնական հաստատված բյուջեի հետ համեմատության հնարավորություն: Տեղեկատվությունը ներառում է բյուջեի նախահաշվի բոլոր հոդվածները: Ծախսերի տվյալները ընդգրկում են ինչպես ծախսային պարտավորությունների ստանձնման, այնպես էլ վճարումների կատարման փուլերը:</i></p>



ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(ii)	B	B	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b>                      Հաշվետվությունները պատրաստվում են եռամսյակային կտրվածքով և հրապարակվում են ժամանակաշրջանի ավարտից հետո 6 շաբաթվա ընթացքում: Ամսական հաշվետվությունները հրապարակվում են 4-5 շաբաթվա ընթացքում: Երկու դեպքում էլ հաշվետվությունները հասանելի են դառնում ավագ դեկավարությանը, որը դրանք հաշվի է անում բյուջեի կատարողականի վերլուծության մեջ:</p> <p>ԳՉ (ii). Հաշվետվությունները կազմվում են եռամսյակային կտրվածքով և հրապարակվում եռամսյակին հաջորդող 6 շաբաթվա ընթացքում:</p>
(iii)	B (վերանայվել է «C»-ից)	B▲	<p><b>Կատարողականը բարելավվում է:</b> Բյուջեի կատարման մասին եռամսյակային հաշվետվություններում արտացոլվող տվյալների որակը բարելավվել է շնորհիվ «Client-Treasury» համակարգի ներդրման և գանձապետական համակարգում ԾԻԳ-երի ներառման:</p> <p>2008թ. ՊԾՖՀ-ում նշվող գնահատականը վերանայվել է «B»-ի, քանի որ այս ցուցանիշի ծածկույթը պետք է չներառեր ՊՈԱԿ-ների ֆինանսական հոսքերի մասին հաշվետու տվյալները (սա գնահատվում է առանձին «ԿՑ-7» ցուցանիշի համատեքստում):</p> <p>ԳՉ (iii). Առկա են հավաստիության հետ կապված որոշ մրահոգություններ, բայց տվյալներին առնչվող հարցերը շեշտադրվում են հաշվետվություններում և դրանք բացասաբար չեն անդրադառնում ընդհանուր համապատասխանության/օգտակարության վրա:</p>

ԳՉ = գնահատման չափանիշ

### 3.6.4. ԿՑ-25. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների որակն ու համապատասխանությունը սահմանված ժամկետներին

#### (i) Ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությունը

Կառավարության համախմբված հաշվետվությունը պատրաստվում է տարեկան կտրվածքով: Հաշվետվությունում համախմբվում են բյուջեի կատարման այն հաշվետվությունները, որ կազմում են կենտրոնական կառավարության բյուջետային հիմնարկները (այսինքն՝ բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների և կենտրոնական կառավարության ինքնավար միավորների, որոնց բյուջետավորման ու հաշվապահական հաշվառման համակարգերը դուրս են կենտրոնական կառավարության բյուջետային համակարգի<sup>17</sup>, ընդ որում, Հայաստանի համատեքստում համախմբված հաշվետվությունում չեն ներառվում նաև ՊՈԱԿ-ները):

Ինչպես նշվում է չափում (iii)-ում, հաշվապահական հաշվառման ժամանակակից ստանդարտների բացակայության պայմաններում ՀՀ Կառավարությունը ի վիճակի չէ կազմել աուդիտի ենթարկելի տարեկան ֆինանսական հաշվետվություններ: Ինչպես նշվում է Պետական ներքին ֆինանսական վերահսկողության ռազմավարության (ՊՆՖՎ) նախագծում.<sup>18</sup> «ՀՀ Վերահսկիչ պալատը ի վիճակի չէ եզրակացություն տալ ֆինանսական դիրքի և գործունեության արդյունքների ճշմարիտ ներկայացման վերաբերյալ, քանի որ մշակված չեն հաշվապահական հաշվառման ժամանակակից ստանդարտներ»: ՎՊ-ին ներկայացվող տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունները չեն պարունակում հաշվապահական տեղեկատվության մեծ մասը, որը սովորաբար արտացոլվում է ֆինանսական (ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների մասին) հաշվետվություններում:

Հաշվետվությունները ներառում են տեղեկատվություն գանձապետական միասնական հաշվի (ԳՄՀ) և նրա ենթահաշիվների մնացորդների և շարժի, ՀՀ Կառավարության բանկային հաշիվների մեծ մասի մնացորդների մասին: 2008թ. ՊԾՖՀ գնահատումից հետո, շնորհիվ ԳՄՀ-ում ԾԻԳ-երի հաշիվների ներառման, մեծացել է ՀՀ Կառավարության բանկային հաշիվների մնացորդների ծածկույթը ԳՄՀ-ում (ԿՑ-17): Արտացոլվում են նաև ԳՄՀ-ի ենթահաշիվների, օր.<sup>1</sup> մասնավորեցման հաշվի և Կայունացման ֆոնդի (2013թ. թողարկված եվրոպարտատոմսերի մնացորդային գումարների և համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակ Ռուսաստան-

<sup>17</sup> Ինչպես հստակեցվում է ՊԾՖՀ-ի «Դաշտային ուղեցույց»-ում՝ տպագրված 2012թ. մարտին, էջ. 143-144:

<sup>18</sup> 2010թ. նոյեմբերի 11-ին կայացած ՀՀ Կառավարության նիստի թիվ 44 արձանագրության Հավելված 10:

նից ստացված աջակցության) հաշվի մնացորդները: Տեղեկատվությունը տրամադրվում է ավելի շատ տեղեկանքի, քան հաշվետվության տեսքով, որտեղ ցույց է տրվում հաշիվների մնացորդների փոփոխությունների կապը եկամուտների ու ծախսերի մասին տեղեկատվության հետ:

**(ii) Վերահսկիչ Պալատին ներկայացվող տարեկան ֆինանսական հաշվետվությունների (ՏՖՀ) համապատասխանությունը սահմանված**

Պետական բյուջեի կատարման տարեկան համախմբված հաշվետվությունները Ազգային ժողովին են ներկայացվում բյուջետային տարվա ավարտից հետո 4 ամսվա ընթացքում (տես ստորև Աղյուսակ 19-ը): Այնուհետև աուդիտի նպատակներով Ազգային ժողովը ուղարկում է դրանք Վերահսկիչ պալատ (ելնելով Սահմանադրության պահանջից):

**Աղյուսակ 19. ՀՀ պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները ՀՀ ԱԺ ներկայացնելու փաստացի ժամկետները**

Հաշվետու ժամանակահատված	Հաշվետվության ներկայացման օր
2010թ.	29/04/2011
2011թ.	28/04/2012
2012թ.	30/04/2013

**(iii) Կիրառվող հաշվապահական ստանդարտները**

Տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունները կազմվում են սահմանված ձևաչափով, որն, ինչևէ, համահունչ չէ Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին (ՀՀՀՀՄՍ) կամ վերջիններիս համապատասխանող ազգային ստանդարտներին: Պետական մարմինները առաջնորդվում են դեռևս ԽՍՀՄ-ի օրոք ընդունված հաշվապահական հաշվառման հրահանգներով (ՍՍՀՄ Ֆինանսների նախարարության 1987թ. մարտի 10-ի թիվ 61 հրաման), բայց հաշվապահական հաշվառման ստանդարտները չեն բացահայտվում:

Թեև սա ուղղակիորեն չի վերաբերում սույն ցուցանիշի գնահատմանը, բայց տարեկան հաշվետվությունները ներկայում պարունակում են տեղեկատվություն բյուջետային բոլոր ծրագրերի ոչ ֆինանսական պլանային ու փաստացի կատարողական ցուցանիշների մասին, ինչպես նաև դրանց շեղումների հիմնավորումները:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖԿ	Միավոր 2013թ. ՊԾՖԿ	Գնահատում
ԿՑ-25	D+	D+	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ. հաշվապահական ժամանակակից ստանդարտների բացակայությունը խոչընդոտում է աուդիտի ենթակա իմաստալից ֆինանսական հաշվետվությունների կազմմանը:</b></p>
(i)	C	C	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> ՖՆ-ի կողմից կազմվող տարեկան հաշվետվությունում համախմբվում են բյուջետային հիմնարկների բյուջեի կատարման հաշվետվությունները: Վերջիններս համապարփակ են եկամուտների, դրամաշնորհների ու ծախսերի առումով և ներառում են ՀՀ Կառավարության բանկային հաշիվների մեծ մասի մնացորդների (և դրանց շարժերի) մասին տեղեկատվությունը: Ընդ որում, դրանց ծածկույթը ընդլայնվել է 2008թ. ՊԾՖԿ-ից հետո ԳԱՀ-ում ԾԻԳ-երի հաշիվները ներառելուց հետո: Ինչևէ, հաշվետվությունները չեն արտացոլում ֆինանսական հաշվետվություններում, օր.՝ եկամուտների, դրամաշնորհների և ծախսերի հաշվետվություններին ֆորմալորեն կապված հաշվապահական հաշվեկշռում, դրամական հոսքերի մասին հաշվետվությունում սովորաբար ներառվող հաշվապահական տեղեկատվության մեծ մասը:</p> <p>ՎՊ-ի հաշվետվությունները ցույց են տալիս, որ հնարավոր չէ եզրակացություն տալ տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունների վերաբերյալ. դրանք չեն պարունակում հաշվապահական այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է կառավարության ֆինանսական դիրքն արժանահավատորեն արտացոլելու փաստի վերաբերյալ եզրակացություն տալու համար:</p> <p>Գ2 (i). Կազմվում է կառավարության համախմբված տարեկան հաշվետվություն: Միգուցե միշտ չէ, որ եկամուտների, ծախսերի և բանկային հաշիվների մնացորդների մասին տեղեկատվությունը ամբողջական է, սակայն բացթողումները էական չեն:</p>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(ii)	A	A	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Կառավարության համախմբված հաշվետվությունը աուդիտի նպատակով ՎՊ-ին է ներկայացվում բյուջետային տարվա ավարտից հետո 5 ամսվա ընթացքում:</p> <p>ԳՉ (ii). Հաշվետվությունը ներկայացվում է արտաքին աուդիտի ֆինանսական տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում:</p>
(iii)	D	D	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունները կազմվում են սահմանված ձևաչափով, բայց հաշվետվության կազմման հիմքում ընկած հաշվապահական հաշվառման ստանդարտները չեն բացահայտվում: Հաշվապահական ժամանակակից ստանդարտների բացակայությունը խոչընդոտում է աուդիտի ենթարկելի և իմաստալից տարեկան ֆինանսական հաշվետվությունների կազմմանը:</p> <p>ԳՉ (iii). Հաշվետվությունների ձևաչափը ժամանակի ընթացքում հետևողականորեն չի պահպանվում, կամ հաշվապահական ստանդարտները չեն բացահայտվում:</p>

ԳՉ = գնահատման չափանիշ

### 3.7. Արտաքին վերահսկողություն և օրենսդրի կողմից իրականացվող ուսումնասիրում

Ցուցանիշների այս խմբի միջոցով գնահատվում է կառավարության բյուջետային նախահաշիվների, ինչպես նաև պետական հաշիվների արտաքին ուսումնասիրման որակն ու ժամանակին լինելը:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-26 (Մ1). Արտաքին աու- դիտ (Մ)	D+	C+ ▲	<p><b>Կատարողականը բարելավվել է՝ հիմնականում պայմանավորված ՀՀ Սահմանադրության և «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի վերջին փոփոխությունների արդյունքում ՎՊ-ի անկախության աճով (չափում (i)): ՎՊ-ն դեռևս չունի բավարար անկախություն:</b> Չափում (i)-ի իմաստով ՎՊ-ի կատարողականը շարունակում է բարելավվել վերջինիս շարունակական բարեփոխումների միջոցով:</p> <p><b>Առաջընթաց է ապահովվել աուդիտի առաջարկությունների իրականացման փաստերի վերաբերյալ չափում (iii)-ի տեսանկյունից, որը, սակայն դեռևս բավարար չէ ավելի բարձր գնահատական երաշխավորելու համար:</b> ՀՀ Կառավարությունը հրապարակում է տեղեկություններ ՎՊ-ի վերահսկողության/աուդիտի արդյունքների, ինչպես նաև աուդիտորական բացահայտումների առնչությամբ աուդիտի ենթարկված մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների մասին: Դեռևս հստակ չի այդ միջոցառումների արդյունավետությունը:</p>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-27 (Մ1). Բյուջեի ուսումնասիր- ում օրենսդիրի կողմից	<b>C+</b> (վերան- այվել է «A»-ից)	<b>C+</b>	<p><b>Գնահատականների առումով կատարողականը մնացել է անփոփոխ, սակայն ՀՀ Կառավարության կողմից ծրագրային բյուջե-տրավորման ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունքում բարձրացել է տարեկան բյուջեի մասին օրենքի նախագծերի ուսումնասիրման որակը (չափում (i)):</b></p> <p>Առանց օրենսդիրի նախնական հավանության տարվա ընթացքում բյուջեում կատարվող փոփոխությունների օրինականությանը վերաբերող չափում (iv)-ը 2008թ. ՊԾՖՀ-ում վերանայվել է «C»-ի, քանի որ օրենսդրությու-նը թույլատրել է և մինչ օրս թույլատրում է ՖՆ-ին տարվա ընացքում լրացուցիչ եկամուտների սահմաններում ավելացնել բյուջեի ընդհանուր ծախսերը՝ առանց ԱԺ-ի համաձայնության:</p>
ԿՑ-28 (Մ1) Աուդի- տորական հաշվետվությ- ունների ուսում- նասիրում օրենսդիրի կողմից	<b>D+</b>	<b>D+</b>	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ: Ամենաթույլ օղակը չափում (iii)-ն է, քանի որ աուդիտորական բացահայտումների ուսումնասիրությունից հետո պարզամավորների կողմից արվող առաջարկները ենթակա չեն պարտադիր կատարման:</b></p>

### 3.7.1. ԿՑ-26. Արտաքին աուդիտի շրջանակը, բնույթը և հետաուդիտային ստուգումը

Բարձր որակի արտաքին աուդիտը պետական միջոցների օգտագործման թափանցիկության ապահովման կարևորագույն պահանջներից մեկն է:

#### **Նախապարմություն**

2008թ. ՊԾՖՀ գնահատման պահի դրությամբ նշանակալից փոփոխություններ էին տեղի ունենում կազմակերպա-իրավական և կանոնակարգային դաշտում, որոնք էապես ազդել են ՀՀ արտաքին պետական աուդիտի համակարգի վրա: 2005թ. ՀՀ Սահմանադրության փոփոխություններից և 2006թ. վերջին «ՀՀ Վերահսկիչ պալատի մասին» օրենքի (և դրա իրականացումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի) ընդունումից և 2007թ. այն ուժի մեջ դնելուց հետո ՀՀ Վերահսկիչ պալատը (ՎՊ) ձեռք է բերել ավելի մեծ անկախություն: Օրենքի համաձայն, այն գործում է Ազգային ժողովից առանձին. նախկինում այն հայտնի էր որպես ՀՀ Ազգային ժողովի Վերահսկիչ պալատ:<sup>19</sup> ՎՊ-ը հանդիսանում է ՀՀ արտաքին պետական աուդիտի համար պատասխանատու միակ (բարձրագույն) մարմինը: Նրա գործունեությունը կարգավորվում է վերոնշյալ օրենսդրությամբ, որը սահմանում է տվյալ մարմնի լայն վերահսկողական իրավասությունները, այդ թվում պետական և համայնքային բյուջեների ելքերի և մուտքերի, ինչպես նաև պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողությունը:

Օրենքը փոփոխվել է մեկ անգամ 2010 թվականին, երկու անգամ՝ 2012 թվականին և մեկ անգամ՝ 2013 թվականին: 2010թ. փոփոխությունները ՎՊ-ին տալիս են իրավասություն վերահսկողության ընթացքում քրեաիրավական բնույթի խախտումների գծով կասկածների դեպքում հաղորդում ուղարկելու ՀՀ դատախազություն: Այլ փոփոխությունները սույն գնահատման տեսանկյունից էական չեն:

ՎՊ-ի ղեկավարումն իրականացվում է ՎՊ-ի խորհրդի կողմից, որը բաղկացած է յոթ անդամներից՝ ՎՊ-ի նախագահը, ՎՊ-ի նախագահի տեղակալը և խորհրդի հինգ անդամները: ՎՊ-ի նախագահը ՎՊ-ի ղեկավարն է, որը նշանակվում է ԱԺ-ի կողմից ՀՀ Նախագահի առաջարկությամբ՝ վեց տարի ժամկետով: Նախագահի տեղակալը և խորհրդի մյուս 5 անդամները նշանակվում են ՀՀ Նախագահի կողմից՝ ՎՊ-ի նախագահի առաջարկությամբ վեց տարի ժամկետով: ՎՊ-ի նախագահի և խորհրդի այլ անդամների լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել (օր.՝ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում): ՎՊ-ի աշխատակազմը հանդիսանում է պետական կառավարչական հիմնարկ, որի աշխատակիցները հանդիսանում են քաղաքացիական ծառայողներ (ներկայում նրանց թիվը 131-ն է):

<sup>19</sup> 2008թ. ՊԾՖՀ-ում «Ազգային ժողովի վերահսկիչ պալատի» կատարողականը գնահատվել է նախորդ, այլ ռե չե նոր օրենսդրության հիման վրա:



**(i) Աուդիտի շրջանակն ու բնույթը**

2006թ. «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ ՎՊ-ն ստացել է անկախության նոր կարգավիճակ, բայց այդուհանդերձ «INTOSAI»-ի ստանդարտներին համապատասխանության առումով դեռևս առկա են մի շարք խնդիրներ.

«INTOSAI»-ի ստանդարտներ	Անհամապատասխանություններ «INTOSAI»-ի ստանդարտների հետ
<p><b>ՎՊ-ի անկախություն.</b>  <i>Նշանակումներ և լիազորությունների վաղաժամկետ դադարեցում</i></p>	<ul style="list-style-type: none"> <li>• ՎՊ-ի աշխատակազմը քաղաքացիական ծառայողներ են, և ՎՊ-ն չունի լիիրավ իրավասություն աշխատակիցների աշխատանքի ընդունման, վերապատրաստման և ատեստավորման, ինչպես նաև աշխատանքից ազատման հարցերում: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով նշված իրավասություններն իրականացվում են ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի (ՔԾԽ) միջոցով, որը տվյալ ոլորտում հանդիսանում է լիազոր պետական մարմին: Հետևաբար, անձնակազմի հարցերում ՔԾԽ-ն կարող է վերահսկել ՎՊ-ի գործունեությունը:</li> </ul>
<p><b>ՎՊ ֆինանսական անկախությունը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ Կառավարությունն իրավունք ունի փոփոխություններ կատարել ՎՊ-ի տարեկան բյուջեի նախագծում նախքան այն ԱԺ ներկայացնելը: «INTOSAI»-ի կողմից ընդունված Լիմայի և Մեխիկոյի հռչակագրերի համաձայն, արտաքին աուդիտի մարմնի բյուջեի նախագծով նախատեսվող գումարների կրճատման իրավասությունը պետք է պատկանի միայն օրենսդիրին՝ գործադիր իշխանության նվազագույն միջամտությամբ:</li> </ul>

«INTOSAI»-ի ստանդարտներ	Անհամապատասխանություններ «INTOSAI»-ի ստանդարտների հետ
<p><b>ՎՊ-ի անկախությունը պետության բոլոր ֆինանսական ռեսուրսների օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացման առումով</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Համաձայն ՀՀ Սահմանադրության, ՎՊ-ը վերահսկողություն է իրականացնում բյուջետային միջոցների, պետական ու համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման նկատմամբ: Սակայն գործող այլ ՀՀ օրենքներով, ՎՊ-ը իրավասու չէ վերահսկողություն իրականացնելու պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ստացած ոչ բյուջետային եկամուտների, ինչպես նաև արտաքին աղբյուրներից ստացված այն պետական վարկերի ու դրամաշնորհների նկատմամբ, որոնք հետագայում տրամադրվում և շրջանառվում են առևտրային բանկերի և ֆինանսական կազմակերպությունների կողմից:</li> </ul>
<p><b>ՎՊ-ի անկախությունն իր տարեկան գործունեության ծրագրի կազմման առումով</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• ՎՊ-ի՝ Սահմանադրությամբ ամրագրված անկախությունը գործնականում չի ապահովվում, քանի որ ՎՊ-ի գործունեության տարեկան ծրագիրը հաստատում է ԱԺ-ը:</li> </ul>

Օրենքով ՎՊ-ին վերապահված են լայն լիազորություններ, որոնք, ի թիվս այլոց, ներառում են. (i) պետական և համայնքային բյուջեների ելքերի և մուտքերի, ինչպես նաև պետական ու համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողության/աուդիտի իրականացումը, (ii) ՀՀ պետական բյուջեի կատարման մասին ՀՀ կառավարության տարեկան հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների կազմումը և ներկայացումը ԱԺ և (iii) պետական պարտքի կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացումը:

ՎՊ-ն լիազորված է վերահսկելու/աուդիտի ենթարկելու բոլոր պետական և տեղական ինքակառավարման մարմինները, ներառյալ դրանց աշխատակազմերն ու ենթակա հիմնարկները: Այս լիազորությունն ընդգրկում է նաև ՊՈԱԿ-ները և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունները, սակայն ինչպես արդեն նշվել է, այս մարմիններում ՎՊ վերահսկողական լիազորությունները սահմանափակվում են ՀՀ պետական բյուջեից նրանց հատկացված գումարներով: ՎՊ-ն չունի լիազորություն վերահսկելու և աուդիտի ենթարկելու ոչ բյուջետային աղբյուրներից այդ մարմինների կողմից ստացվող եկամուտները:

ՎՊ-ն գործում է իր տարեկան ծրագրի հիման վրա, որը հաստատվում է ԱԺ-ի կողմից: Ծրագրում ընդգրկվող թեմաները գլխավորապես ընտրվում են դիսկերի գնահատման հիման վրա: 2012թ. ՎՊ-ի տարեկան ծրագիրն ընդգրկել է թվով 20 հարցեր, այդ թվում «ՀՀ 2012թ պետական բյուջեի կատարման մասին» ՀՀ կառավարության հաշվետվության աուդիտը և դրա վերաբերյալ եզրակացության տրամադրումը: Վերջինս յուրաքանչյուր տարի պարտադիր իրականացվող աուդիտ է, որն ընդգրկում է պետական բյուջեի բոլոր մակարդակները՝ ապահովելով պետական բյուջեի ծախսերի 100% ծածկույթը:

Բյուջեի կատարման հաշվետվության աուդիտի նախապատրաստման և նշված հաշվետվության որակի մասին եզրակացության տրամադրման գործընթացը բարելավման կարիք ունի, քանի որ այն ամբողջովին չի համապատասխանում «INTOSAI»-ի ստանդարտներին: Խնդիրներից մեկն այն է, որ ՎՊ-ի եզրակացությունում ամբողջությամբ չեն բացահայտվում բյուջեի կատարման հաշվետվությունների կազմման հիմքում ընկած, ինչպես նաև այդ հաշվետվությունների աուդիտի ժամանակ ՎՊ-ի կողմից կիրառված ստանդարտները:

2012թ. տարեկան ծրագրին համապատասխան ՎՊ-ի կողմից իրականացված վերահսկողական այլ աշխատանքներն, ի թիվս այլոց, ընդգրկել են 10 պետական մարմիններ, 1 համայնք, 6 պետական հիմնարկներ, 1 բաժնետիրական ընկերություն: Առանձին պետական մարմիններում իրականացված աուդիտի շրջանակը ներառել է նաև ստուգումներ վերջիններիս լիազոր կառավարման ներքո գործող ՊՈԱԿ-ներում և բաժնետիրական ընկերություններում: Պետական մարմինների աուդիտները չեն ընդգրկում նրանց ողջ գործունեությունը, այլ ուղղված են միայն այն գործառույթների ստուգմանը, որոնք դիտարկվում են որպես դիսկալին (օր.՝ գնումների գործընթացը): Այդ իսկ պատճառով աուդիտները թեմատիկ են և չեն իրականացվում ըստ որոշակի ժամանակահատվածի և կազմակերպության: Ուստի, այդ աուդիտները չեն հանդիսանում տարեկան աուդիտներ և, որպես կանոն, ընդգրկում են 3 և ավելի տարիների «հետահայաց» ժամանակահատված: Օրինակ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունում 2012թ անցկացված աուդիտը գլխավորապես ներառել է թեմաներ, որոնք ընդգրկել են 2010թ. հունվարից առաջ ընկած ժամանակահատվածը:

ՊԾՖՀ-ի մեթոդաբանությունը վերաբերում է միայն նախորդ տարին ընդգրկող աուդիտի հաշվետվություններին, որոնք ընդգրկում են կառավարության տվյալ տարվա ֆինանսական հաշվետվությունները և տվյալ տարում յուրաքանչյուր բյուջետային հիմնարկի ներքին հսկողության համակարգերի կիրառման գնահատումները: Սույն ՊԾՖՀ-ի գնահատման համատեքստում մեթոդաբանությունը տարածվում է միայն ՀՀ Կառավարության կողմից կազմված՝ ամենավերջին տարվա (այսինքն՝ 2012թ.) բյուջեի կատարման հաշվետվության մասին ՎՊ-ի եզրակացության վրա, ինչպես նաև ներքին հսկողության այն հարցերի

վրա, որոնք վերաբերում են տվյալ տարուն և նշված են տարեկան հաշվետվությունում: Գործնականում դժվար է 2012թ. թեմաները (օր.՝ գնումներ) ըստ կատեգորիաների տարանջատել նախորդ տարիներին վերաբերող հարցերից, և դրա համար ՊԾՖՀ-ի գնահատման շրջանակում ուշադրությունը կենտրոնացվում է միայն աուդիտ անցած պետական բյուջեի կատարման հաշվետվության մասին ՎՊ-ի եզրակացության վրա:

ՎՊ-ի իրականացրած աուդիտները գլխավորապես ներառել են ֆինանսական, համապատասխանության աուդիտները: Գնալով ավելի մեծ ուշադրություն է դարձվում համակարգերի վրա հիմնվող աուդիտներին: Նման աուդիտները դեռևս լիովին չեն համապատասխանում «INTOSAI»-ի ստանդարտներին: Կարողությունների սահմանափակության պատճառով ՎՊ-ն միայն վերջերս է սկսել ներդնել կատարողականի (արդյունավետության) աուդիտի տարրերը:

Վերջին տարիներին ՎՊ-ն տեխնիկական աջակցություն է ստացել ԳՄՀԸ-ից, Համաշխարհային բանկից, ԱՄՆ ՄՁԳ-ից, «ՍԻԳՄԱ»-ից և Նիդեռլանդներից: Վերջերս մշակվել է ֆինանսական աուդիտի նոր ձեռնարկ: Բացի այդ, կազմվել են աուդիտի ձեռնարկներ կատարողականության աուդիտի (2008թ.) հարկային վարչարարության (2007թ.), բնապահպանական և ոլորտային (օր.՝ առողջապահություն, կրթություն) վերահսկողության վերաբերյալ, թեև դրանք հիմնականում չեն կիրառվում, քանի որ հիմնական ուշադրությունն ուղղված է ֆինանսական և համապատասխանության աուդիտներին:

**(ii) Աուդիտի հաշվետվություններն օրենսդրին ժամանակին ներկայացնելը**

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման հաշվետվությունը ԱԺ է ներկայացնում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը: «ՀՀ վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՎՊ-ը կազմում է իր պաշտոնական եզրակացությունը ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ և ներկայացնում այն Ազգային ժողովին, ՀՀ Նախագահին և ՀՀ Կառավարությանը: Հաշվետվությունը և դրա վերաբերյալ ՎՊ-ի եզրակացությունը քննարկվում են ԱԺ-ում, իսկ հաշվետվությունը ԱԺ-ի կողմից հաստատվում է մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի երկրորդ չորեքշաբթին (գոյություն չունի եզրակացությունը խորհրդարանի կողմից հաստատելու օրենսդրական պահանջ):

Աղյուսակ 20-ում ներկայացված է տեղեկատվություն վերջին 3 տարիների ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ ՎՊ-ի եզրակացությունը ԱԺ ներկայացնելու փաստացի ժամկետների մասին:

**Աղյուսակ 20. Ազգային ժողովի կողմից աուդիտի հաշվետվությունների ստացման ամսաթվերը**

Աուդիտի հաշվետվության անվանումը	2010թ. հաշվետվության ստացման ամսաթիվ	2011թ. հաշվետվության ստացման ամսաթիվ	2012թ. հաշվետվության ստացման ամսաթիվ
ՎՊ-ի կողմից ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվետվության նախագծի ստացման ամսաթիվը	29.04.2011	28.04.2012	30.04.2013
Հաշվետվության վերաբերյալ ՎՊ-ի եզրակացությունը ԱԺ ներկայացնելու ամսաթիվը	11.05.2011	07.06.2012	24.05.2013
ԱԺ-ի կողմից ՎՊ-ի եզրակացության ստացման և ՎՊ-ի կողմից հաշվետվության նախագծի ստացման ամսաթվերի միջև ժամանակային տարբերությունը (արտահայտված օրերով)	12 օր	38 օր	24 օր

Այսպիսով, վերջին 3 տարիներին ՀՀ պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ ՎՊ-ի եզրակացությունը օրենսդրին է տրամադրվել այդ հաշվետվությունը ՎՊ-ի կողմից ստանալուց առավելագույնը 38 օրվա ընթացքում:

Ինչ վերաբերում է ՎՊ-ի գործունեության տարեկան ծրագրի կատարման մասին տարեկան հաշվետվությանը, ապա «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ ՎՊ-ի գործունեության տարեկան հաշվետվությունը ԱԺ է ներկայացվում և տեղադրվում է ՎՊ-ի պաշտոնական կայքում բյուջետային տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում:

ՎՊ-ի 2012թ. տարեկան հաշվետվությունը խորհրդարան է ներկայացվել 2013թ. մարտի 29-ին: Հաշվետվությամբ ներկայացվել են ՎՊ-ի 2012թ. գործունեության ծրագրի շրջանակներում իրականացված թվով 20 վերահսկողությունների արդյունքները: Ինչպես արդեն նշվել է, նշված վերահսկողական աշխատանքները չեն հանդիսանում պետական մարմինների տարեկան աուդիտներ և դրանցից գեթէ բոլորը ընդգրկել են 2010թ. հունվարից մինչև 2012թ. դեկտեմբերն ընկած եռամյա ժամանակահատվածը: Ծրագրով նախատեսված վերահսկողական թեմաներից մի քանիսն ընդգրկել են 5 տարուց ավելի ժամանակաշրջան:

Նման իրավիճակը չի կարգավորվում ՊԾՖՀ-ի մեթոդաբանությամբ, որի համաձայն գնահատման ենթակա է նախորդ բյուջետային տարին: Այդ իսկ պատճառով, տվյալ չափումը գնահատվում է բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ եզրակացության ներկայացման ժամանակին լինելու տեսանկյունից: Այս հիմքով՝ 2008թ. ՊԾՖՀ-ում գնահատականը ևս պետք է լիներ «A»:

**(iii) Աուդիտի առաջարկությունների իրականացման նկատմամբ հետաուդիտային հսկողության փաստերը**

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ վերահսկվող օբյեկտի պաշտոնատար անձինք պարտավոր են մեկամսյա ժամկետում ՎՊ-ին գրավոր տեղեկատվություն տրամադրել աուդիտի հաշվետվություններում արտացոլված խախտումների վերացման վերաբերյալ: Որպես կանոն, վերահսկողության ավարտից հետո ՎՊ-ը վերահսկվող օբյեկտից պահանջում է արձանագրված խախտումների ու թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների ժամանակացույցը: Վերահսկվող մարմինը պարտավոր է ներկայացնել փաստեր, խնդիրների վերացման վերաբերյալ: Եթե խնդրի կարգավորման համար պահանջվում է դրամական միջոցների վերականգնում և փոխանցում պետական/համայնքային բյուջե, ապա ՎՊ-ն կարող է դա անմիջականորեն ստուգել գանձապետական էլեկտրոնային համակարգի միջոցով: Այնուհետև ՎՊ-ն գնահատում է ձեռնարկված քայլերի ամբողջականությունը և արդյունավետությունը:

ՀՀ կառավարությունը պաշտոնապես արձագանքում է ՎՊ-ի կողմից արձանագրված խնդիրներին՝ ՎՊ-ին տրամադրելով տեղեկատվություն այն միջոցառումների մասին, որ պետական մարմինները ձեռնարկել են ի պատասխան իրականացված աուդիտների: 2010թ. ստեղծված իր պաշտոնական կայքում ([www.e-gov.am](http://www.e-gov.am)) ՀՀ կառավարությունը հրապարակում է տեղեկություններ ՎՊ-ի վերահսկողական/ աուդիտորա-

կան գործունեության արդյունքների և աուդիտի ենթարկված մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների, վերահսկվող մարմիններից ստացված արձագանքի և պաշտոնական պատասխանների մասին: Չնայած դրան, առկա տեղեկատվությունից ոչ միշտ է հնարավոր հստակ եզրակացություններ անել ՎՊ-ի արձանագրած խնդիրների վերացման ուղղությամբ ՀՀ կառավարության ձեռնարկած միջոցառումների արդյունավետության մասին, քանի որ մինչ օրս հրապարակված տեղեկատվությունը չի եղել լիովին համապարփակ:

### **Ընթացիկ և պլանավորված աշխատանքները**

Համաշխարհային բանկի, ԳՄՀԸ-ի, ԵՄ-ի և ՍԻԳՄԱ-ի շարունակական աջակցությամբ մոտ ապագայում նախատեսվում է բարելավել ՎՊ-ի գործունեությունը.

- Վերապատրաստումների, համապատասխան ձեռնարկների դրամադրման և փորձնական աուդիտների միջոցով նախատեսվում է բարձրացնել «INTOSAI»-ի ստանդարտների հետ համապատասխանության մակարդակը:
- Նախատեսվում է բարելավել բյուջեի կատարման հաշվետվության մասին ՎՊ-ի եզրակացության որակը:
- Նախատեսվում է «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագծի մշակում՝ ուղղված ՎՊ-ի անկախության ապահովմանը ու պահպանմանը,
- Նախատեսվում է ուժեղացնել ՎՊ-ի կողմից իրականացվող կատարողական աուդիտի գործիքակազմը՝ հատուկ ուշադրություն դարձնելով պետական գնումների համակարգում իրականացվող վերահսկողության հացերին, որի ուղղությամբ նախատեսվում է ուսուցումների և վերապատրաստումների դասընթացների և փորձնական աուդիտների իրականացում:
- Ընդհանուր առմամբ, կարողությունների զարգացում:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-26	D+	C+▲	<p><b>Կարարողականը բարելավվել է՝ հիմնականում պայմանավորված ՀՀ Սահմանադրության և «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի վերջին փոփոխությունների արդյունքում ՎՊ-ի անկախության աճով (չափում (i)):</b> ՎՊ-ն դեռևս չունի բավարար անկախություն: Չափում (i)-ի իմաստով ՎՊ-ի կատարողականը շարունակում է բարելավվել վերջինիս շարունակական բարեփոխումների միջոցով:</p> <p>Առաջընթաց է ապահովվել աուդիտի առաջարկությունների իրականացման ուղղությամբ աուդիտի ենթարկված մարմինների ձեռնարկած քայլերի մասին վկայող փաստերի վերաբերյալ չափում (iii)-ի տեսանկյունից: ՀՀ Կառավարությունը հրապարակում է տեղեկություններ ՎՊ-ի վերահսկողական/ աուդիտորական գործունեության արդյունքների, ինչպես նաև աուդիտի բացահայտումների առնչությամբ աուդիտի ենթարկված մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների մասին: Այնուամենայնիվ, հստակ չէ, թե որքանով են արդյունավետ այդ միջոցառումները:</p>
(i)	D	C▲	<p><b>Կարարողականը բարելավվել է՝ պայմանավորված անկախության աճով և այն շարունակում է բարելավվել ՎՊ-ի ընթացիկ բարեփոխումների միջոցով:</b> 2005թ. սահմանադրական փոփոխություններից և 2006թ. վերջին «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո (նշված օրենքը ուժի մեջ է 2007թ. հունիսին) ՎՊ-ի անկախությունն աճել է, սակայն այն դեռևս բավարար չէ, անկախության վերաբերյալ «INTOSAI»-ի ստանդարտներին լիովին համապատասխանելու համար: «INTOSAI»-ի այլ ստանդարտները դեռևս լիովին չեն կիրառվում վերահսկողական աշխատանքներում, բայց գնալով ավելի մեծ ուշադրություն է դարձվում համակարգային հարցերին, և սրա մասին են վկայում վերջին տարիների ՎՊ-ի գործունեության տարեկան հաշվետվությունները:</p> <p>Այդ իսկ պատճառով գնահատականը գլխավորապես հիմնվում է տարեկան (տվյալ դեպքում՝ 2012թ.) բյուջեի կատարման հաշվետվության աուդիտի վրա:</p> <p>Գ2 (i). Ընդհանուր ծախսերի առնվազն 50 փոկոսը ներկայացնող պեղական մարմինները աուդիտի են ենթարկվում ամեն փարի: Աուդիտները գլխավորապես ուղղված են գործարքների սրուզմանը, սակայն հաշվետվություններում արդացովում են նշանակալից հարցեր: Աուդիտի սրանդարտները կարող են բացահայտվել միայն սահմանափակ չափով:</p>



ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(ii)	A (վերանայվել է «D»-ից)	A	<p><b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> Այս չափումը գնահատվում է բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ ՎՊ-ի եզրակացության ներկայացման ժամանակին լինելու տեսանկյունից:</p> <p>ՎՊ-ի կողմից կազմվող տարեկան հաշվետվությունները լույս մասամբ են հաշվի առնվում գնահատման մեջ, քանի որ դրանք արտացոլում են մեկից ավելի նախորդող տարիներին վերաբերող հարցեր և չեն կենտրոնանում կոնկրետ բյուջետային միավորիների վրա: 2012թ. ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվության մասին ՎՊ-ի եզրակացությունը ներկայացվել է Ազգային ժողով ՎՊ-ի կողմից վերը նշված հաշվետվությունը ստանալուն հաջորդող առավելագույնը 38 օրվա ընթացքում:</p> <p>Ըստ այդմ, 2008թ. ՊԾՖՀ-ում գնահատականը «D»-ից վերանայվել է «A»-ի:</p> <p><i>Գ2 (ii). Առողիտի հաշվետվությունները ներկայացվում են օրենսդիրին ժամանակաշրջանի ավարտից հետո 4 ամսվա ընթացքում, իսկ ֆինանսական հաշվետվությունները դեպքում՝ առողիտի գրասենյակի կողմից դրանց ստացման ամսաթվին հաջորդող 4 ամսվա ընթացքում:</i></p>
(iii)	B	B▲	<p><b>Կարարողականը բարելավվում է առողիտի առաջարկությունների առնչությամբ առողիտի ենթարկված մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների առումով, բայց դեռևս բավարար չի ավելի բարձր գնահատական երաշխավորելու համար:</b></p> <p>Իր պաշտոնական կայքում (<a href="http://www.e-gov.am">www.e-gov.am</a>) ՀՀ Կառավարությունը հրապարակում է տեղեկություններ ՎՊ-ի վերահսկողության/առողիտի արդյունքների և դրանց առնչությամբ առողիտի ենթարկված մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների, արձագանքի և պաշտոնական պատասխանների մասին: Հստակ չէ, թե որքանով են արդյունավետ ՎՊ-ի բացահայտած խնդիրների կարգավորման ուղղությամբ ՀՀ Կառավարության ձեռնարկված միջոցառումները:</p> <p><i>Գ2 (iii). Ֆորմալ պատասխան քայլերը ձեռնարկվում են ժամանակին, բայց պարբերական հեղափոխության հսկողության մասին վկայող ապացույցները փոքրաթիվ են:</i></p>

Գ2 = գնահատման չափանիշ

### 3.7.2. ԿՑ-27. Տարեկան բյուջեի մասին օրենքի ուսումնասիրում օրենսդիրի կողմից

#### Նախապատմություն

2008 թվականի ՊԾՖՀ գնահատումից ի վեր թե՛ իրավական և թե՛ ինստիտուցիոնալ դաշտում էական փոփոխություններ չեն կատարվել ՀՀ Ազգային ժողովի կողմից պետական բյուջեի մասին օրենքի ուսումնասիրման առումով:

#### (i) Օրենսդիրի ուսումնասիրման շրջանակը

Նախքան ՀՀ պետական բյուջեի նախագծի ներկայացումը Ազգային ժողով ՀՀ կառավարությունը հրապարակում և Ազգային ժողով է ներկայացնում (որպես կանոն, ոչ ուշ քան յուրաքանչյուր տարվա հուլիսի 20-ը) առաջիկա երեք տարիների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը: Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ներառում է մանրամասն տեղեկություններ հարկաբյուջետային քաղաքականության, միջնաժամկետ հարկաբյուջետային և ծախսային շրջանակի և միջնաժամկետ գերակայությունների վերաբերյալ:

ՀՀ պետական բյուջեի նախագիծը ներառում է ՀՀ կառավարության ուղերձը, պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը և պետական բյուջեի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացված՝ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունը:

Կառավարության ուղերձը ներառում է կառավարության զեկույցը բյուջետային տարվա սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին, հարկաբյուջետային նպատակների էական փոփոխությունների հիմնավորումները, երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրող հիմնական ցուցանիշերի կանխատեսումն առաջիկա երեք տարվա համար, տեղեկություններ բյուջեի նախագծի հիմքում ընկած միջնաժամկետ ծախսային ծրագրի գերակայությունների մասին, ինչպես նաև գնաճը, ՀՆԱ-ի իրական աճը, եկամուտները, ծախսերը, դեֆիցիտը (պակասուրդը), համախառն և զուտ պարտքը բնութագրող միջնաժամկետ ծախսային ծրագրի ցուցանիշերը:

Բյուջեի ուղերձը ներառում է նաև պետական բյուջեի մասին օրենքի նախագծի բացատրագիրը, որը պետական բյուջեի մասին նախագիծը հիմնավորող փաստաթղթերի ամբողջություն է: Բյուջեի մասին օրենքի նախագիծը ներառում է պետական բյուջեի եկամուտները և ծախսերն ինչպես ագրեգացված, այնպես էլ մանրամասն բացվածքով՝ ըստ բյուջետային եկամուտների և ծախսերի գերատեսչական, գործառական և տնտեսագիտական դասակարգման, պետական բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը) կամ հավելուրդը և այդ դեֆիցիտի կամ հավելուրդի ֆինանսավորման աղբյուրները:

Ծրագրային բյուջետավորման բարեփոխումների շրջանակներում ՀՀ կառավարությունը Ազգային ժողով է ներկայացնում բյուջեի նախագծի ծախ-

սերը նաև ըստ ծրագրային բյուջետավորման ձևաչափի և դասակարգումների, որի շնորհիվ էլ ավելի է բարելավել ԱԺ-ում բյուջետային ծախսերի վերաբերյալ քննարկումների որակը:

**(ii) Որքանով են օրենսդիրի ընթացակարգերը լավ սահմանված և պահպանվում**

ՀՀ պետական բյուջեի ներկայացման, քննարկման և հաստատման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքներով, ինչպես նաև Ազգային ժողովի նախագահի կողմից հաստատած ժամանակացույցին համապատասխան: Նշված իրավական ակտերով հստակ սահմանվում են քննարկումների շրջանակում իրականացվող միջոցառումները: Ընթացակարգերը խստորեն պահպանվում են, որպեսզի ապահովվի բյուջեի նախագծի հաստատումը նախքան բյուջետային տարվա ավարտը:

ՀՀ կառավարությունը պետական բյուջեի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն 90 օր առաջ: 2007 թվականից ԱԺ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերով մշտական հանձնաժողովն Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում պետական բյուջեի նախագծի ամփոփագիրը նախագիծը շրջանառության մեջ դնելու ամսաթվին հաջորդող 10 օրվա ընթացքում: Վերջին տարիներին նշված պահանջը խստորեն պահպանվել է: Քննարկումները սկսվում են ոչ ուշ, քան նախորդ բյուջետային տարվա նոյեմբերի առաջին քառօրյայում: Քննարկումների մանրամասն ընթացակարգերը սահմանվում են օրենքով: Ընթացակարգերը ներառում են մտքերի փոխանակության, առաջարկությունների և եզրակացությունների, դրանց պարզաբանումների, բանակցությունների և քվեարկության պարտադիր ընթացակարգերը և ժամանակացույցերը: Վերջին տարիներին բոլոր նշված ընթացակարգերը խստորեն պահպանվել են, որպեսզի ապահովվի բյուջեի նախագծի հաստատումը նախքան բյուջետային տարվա ավարտը: Նախնական քննարկումները տեղի են ունենում 12 մշտական ոլորտային հանձնաժողովներում անցկացվող համատեղ և առանձին նիստերի ժամանակ՝ ԱԺ նախագահի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն, որը հաստատվում է պետական բյուջեի նախագիծը ստանալուց հետո երկօրյա ժամկետում:

Բոլոր հանձնաժողովներն ունեն 10-18 անդամ և գործում են իրենց կանոնակարգերի համաձայն: Իրենց հետաքրքրող հարցերի մասով նրանք մասնակցում են բյուջեի շուրջ քննարկումներին: Հանձնաժողովների նիստերը արձանագրվում են: Քննարկումներին մասնակցում են կառավարության համապատասխան պաշտոնյաները:

**(iii) Բյուջեի նախագծի վերաբերյալ օրենսդիրի կողմից պատասխան/կարծիք ներկայացնելու համար հատկացված ժամանակի համարժեքությունը**

«ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի և նույն ժամանակաշրջանի համար հարկաբյուջետային քաղաքականությանն առնչվող փաստաթղթերի նախագծերի քննարկման համար Ազգային ժողովն իր տրամադրության տակ ունեցել է 60 օր (Աղյուսակ 21):

**Աղյուսակ 21. Բյուջետային առաջարկներին արձագանքելու համար ԱԺ-ին հատկացվող ժամանակը**

Փաստաթղթի անվանումը	Ազգային ժողովի քննարկմանը ներկայացման ժամկետը	Նախագծի նախնական քննարկումների արդյունքում առաջարկությունների ներկայացման ժամկետը	Կառավարության կողմից խմբագրված նախագծի ներկայացումը ԱԺ քննարկմանը	Ազգային ժողովի նիստում նախագծի քննարկումների վերակիզը	Ազգային ժողովի կողմից փաստաթղթի ընդունման ժամկետը	Փաստաթղթի ուսումնասիրման և քննարկման համար փաստացի հատկացված ժամկետը	Համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված ժամկետներին
«ՀՀ 2013 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծ	03.10.2012	11.11.2012	14.11.2012	14.11.2012 - 05.12.2012	05.12.2012	60 օր	Այո
«ՀՀ 2013-2015թթ. պետական միջնա-ժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2012թ. հունիսի 14-ի թիվ 740-Ն որոշում	28.06.2012	X	X	X	X	3 ամսից ավելի	Այո

Աղբյուրը՝ Ազգային ժողով, Ազգային ժողովի և ԱԺ Ֆինանսավարկային և բյուջեդային հարցերով մշտական հանձնաժողովի նիստերի արձանագրություններ

Թեև պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը չի հանդիսանում Ազգային ժողովի կողմից հաստատվող փաստաթուղթ, սակայն նախքան ՀՀ կառավարության կողմից պետական բյուջեի նախագծի ներկայացումը Ազգային ժողով՝ նշված փաստաթղթում արտացոլվող հարկաբյուջետային քաղաքականության, միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակի և միջնաժամկետ գերակայությունների վերաբերյալ տեղեկատվությունը ոչ ֆորմալ կարգով մանրամասնորեն ուսումնասիրվում է Ազգային ժողովի հանձնաժողովների և պատգամավորների կողմից, ինչը նպաստում է հետագայում բյուջետային քննարկումների ժամանակ նրանց կողմից առաջարկությունների ներկայացմանը և որոշումների կայացմանը: Հարկ է նշել, որ Ազգային ժողովում մեծամասնություն կազմող քաղաքական ուժերի ներկայացուցիչները ներգրավված են ՀՀ վարչապետի կողմից ստեղծված և գլխավորվող ՄԺԾԾ կազման Բարձրագույն խորհրդի աշխատանքներում:

**(iv) Տարվա ընթացքում բյուջեում առանց օրենսդիրի նախնական հավանության փոփոխություններ կատարելու կանոնները**

Բյուջետային տարվա ընթացքում բյուջեում առանց օրենսդիրի նախնական համաձայնության փոփոխություններ կատարելու ՀՀ կառավարության իրավունքը կարգավորվում է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով (1997թ., հետագա փոփոխություններով հանդերձ): Բյուջեի կատարման ընթացքում պետական կառավարման համապատասխան մարմնի ղեկավարը ՖՆ-ի համաձայնությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է կատարել այդ մարմնի կողմից իրականացվող որևէ ծրագրի համար նախատեսված հատկացումների ընդհանուր գումարի 15 տոկոսը չգերազանցող ներքին վերաբաշխումներ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների միջև): Այնուամենայնիվ, առնվազն 2002 թվականից այս սահմանաչափն, ըստ էության, անտեսվել է տարեկան բյուջեի մասին օրենքներում, դրանով իսկ ընդլայնելով գործադիր մարմնի լիազորությունները ծրագրերի ներսում բյուջետային հատկացումները փոփոխելու առումով՝ առանց այդ փոփոխությունները ներկայացնելու Ազգային ժողովի հաստատմանը (2013թ. պետական բյուջեի մասին օրենքի 11-րդ հոդվածի 12-րդ կետ):

Ճկունության նման բարձրացումը թվում է հիմնավորված արդյունավետության բարձրացման առումով և այն համահունչ է ծրագրային բյուջետավորման սկզբունքներին: Ծրագրի շրջանակում հոդվածների միջև ներքին վերաբաշխումները դժվար թե բացասաբար ազդեն ծրագրի նպատակների իրականացման վրա: Ավելին, դրանք համահունչ են ծրագրային բյուջետավորմանը, որը ծրագրերի համար պատասխանատուներին տալիս է ճկունություն ծրագրի ներսում բաշխելու ռեսուրսները՝ ելնելով արդյունավետության և էֆեկտիվության նկատառումներից:

ՀՀ կառավարությունն իրավասու է նաև կատարել վերաբաշխումներ ծրագրերի միջև՝ տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի մինչև 3 տոկոսի սահմաններ:

րում: Ծրագրերի միջև վերաբաշխումները չպետք է հանգեցնեն ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքների համար նախատեսված դոտացիաների ընդհանուր տարեկան գումարի նվազմանը: Ավելին, բյուջետային մուտքերի թերակատարման պարագայում ՀՀ կառավարությունը կարող է հաստատված բյուջեի ընդհանուր գումարի մինչև 10 տոկոսի չափով կրճատել բյուջեով հաստատված հատկացումները՝ պահպանելով այդ կրճատումների գծով օրենքով ամրագրված սահմանափակումները:

Այս երկու դրույթներն էլ թերևս հիմնավորված են ծրագրերի նպատակների իրագործման և մակրո-ֆիսկալ քաղաքականության կառավարման հարցում արդյունավետության ապահովման տեսանկյունից: Հավանական չէ, որ ծրագրերի համար սահմանված գումարների մինչև 3 տոկոս վերաբաշխումների թույլատրումը կխաթարի ծախսումների նպատակայնությունը, այն դեպքում, երբ արդյունավետ և պատասխանատու մակրո-ֆիսկալ կառավարումը ենթադրում է արագ արձագանքում չնախատեսված անբարենպաստ մակրոֆիսկալ զարգացումներին:

Կառավարությունը կարող է նաև իր պահուստային ֆոնդից միջոցներ հատկացնել բյուջետային հիմնարկներին՝ առանց նախապես ստանալու ԱԺ-ի հավանությունը: Սա օրենքով թույլատրվում է, պայմանով, որ պահպանվեն պահուստային ֆոնդերի միջոցների օգտագործման պայմանները, քանի որ բյուջեի պահուստային ֆոնդը հաստատվում է ԱԺ-ի կողմից տարեկան բյուջեի մասին օրենքի հաստատման շրջանակում:

Այնուամենայնիվ, մեկ կոնկրետ դեպքում, առանց ԱԺ-ի հավանության բյուջետային վերաբաշխումներ կատարելու հարցում ՀՀ կառավարությանը առավել մեծ ճկունության տրամադրումը, հավանաբար, թուլացնում է ԱԺ-ի դերն ու կարողությունը արդյունավետորեն ուսումնասիրելու բյուջետային ծախսերի ավելացման և/կամ զգալի ծավալներով վերաբաշխումների կատարման վերաբերյալ կառավարության այն նախաձեռնությունները, որոնք ներկայացվում են արդեն բյուջեի հաստատումից հետո: Մասնավորապես, 2002 թվականի պետական բյուջեի մասին օրենքից սկսած, ԱԺ-ն յուրաքանչյուր տարի տարեկան բյուջեի մասին օրենքով ՀՀ կառավարությանը թույլատրում է բյուջեով նախատեսված մուտքերի փաստացի գերակատարման (լրացուցիչ մուտքերի) ծավալների սահմաններում մեծացնել բյուջետային ընդհանուր ծախսերն՝ առանց նախապես ԱԺ դիմելու (օրինակի համար տես՝ «2013թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի կետ 6-ը): Նման մոտեցումը գործադիրին հնարավորություն է տալիս բյուջեի կատարման ընթացքում զգալիորեն (լրացուցիչ եկամուտների սահմաններում) ավելացնելու ընդհանուր բյուջետային ծախսերը՝ առանց նախապես ԱԺ դիմելու: Ավելին, անպայման չէ, որ ավելացված ծախսերը բյուջետային հիմնարկների միջև բաշխվեն համամասնորեն, ուստի նման իրավասությունը գործադիրին տալիս է նաև զգալի ճկունություն ոչ համամասնորեն (տոկոսային հարաբերակ-

ցույթամբ) և որոշ առումով նաև ոչ թափանցիկորեն մեծացնելու բյուջե-տային հիմնարկներին տրամադրվող հատկացումները:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-27	C+ (վերա-նայվել է «A»-ից)	C+	<b>Գնահատականների առումով կատարողականը մնացել է անփոփոխ, սակայն ՀՀ կառավարության կողմից ծրագրային բյուջեավորման ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունքում պետական բյուջեի նախագծի ուսումնասիրման աշխատանքների որակը բարձրացել է:</b> 2008թ. ՊԾՖՀ-ում չափում (iv)-ի գնահատականը վերանայվել է և դարձել «C»:
(i)	A	A	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Այնուամենայնիվ, ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքների շնորհիվ բարձրացել է օրենսդիր կողմից բյուջետային ծախսերի ուսումնասիրման որակը: <i>Գ2 (i). Աժ-ի ուսումնասիրման շրջանակը ներառում է հարկաբյուջեային քաղաքականությունները, Մժ հարկաբյուջեային շրջանակը, Մժ առաջնահերթությունները և մանրամասն հաշվարկները:</i>
(ii)	A	A	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> <i>Գ2 (ii). Բյուջեի քննարկման Աժ-ի ընթացակարգերը սահմանված են և պահպանվում են:</i>
(iii)	A	A	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> <i>Գ2 (iii). Բյուջեի նախագծի քննարկման համար Աժ-ին հարկացվում է առնվազն 2 ամիս ժամանակ:</i>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(iv)	C (վերանայվել է «A»-ից)	C	<p><b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> 2002թ. պետական բյուջեի մասին օրենքի ընդունումից ի վեր, կառավարությանը տրվել է լրացուցիչ ճկունություն բյուջեի փաստացի լրացուցիչ մուտքերի սահմաններում ավելացնելու ընդհանուր բյուջետային ծախսերն՝ առանց նախապես ստանալու Ազգային ժողովի հավանությունը: Ավելին, կառավարությունը կարող է օգտագործել լրացուցիչ մուտքերն իր հայեցողությամբ՝ դրանով իսկ ստանալով բյուջեի կառուցվածքը փոփոխելու հնարավորություն:</p> <p><i>Գ2 (iv). Գոյություն ունեն հստակ կանոններ, բայց դրանք թույլ են տրալիս ծավալուն գերափոսչական վերաբաշխումներ, ինչպես նաև ընդհանուր ծախսերի աճ:</i></p> <p>2008թ. ՊԾՖՀ գնահատականը վերանայվել է «C»-ի, քանի որ օրենսդրությունը մինչ օրս թույլատրում է Կառավարությանը տարվա ընթացքում լրացուցիչ փաստացի եկամուտների սահմաններում մեծացնել պետական բյուջեի ընդհանուր ծախսերն առանց նախապես ստանալու ԱԺ-ի հավանությունը:</p>

Գ2 = գնահատման չափանիշ

### 3.7.3. ԿՑ-28. Արտաքին աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրումն օրենսդիրի կողմից

Օրենսդիրն առանցքային դերակատարում ունի հաստատված բյուջեի կատարման մանրազնին ուսումնասիրման գործում: Այս ցուցանիշը կիրառվում է միայն կենտրոնական կառավարության մարմինների աուդիտի վերաբերյալ հաշվետվությունների նկատմամբ:

#### Նախապատմություն

Այս ցուցանիշի կիրառման շրջանակը ներառում է Ազգային ժողովին (ԱԺ) ներկայացվող Վերահսկիչ պալատի (ՎՊ) տարեկան հաշվետվությունները և ՀՀ տարեկան պետական բյուջեի կատարման հաշվետվությունների



մասին ՎՊ-ի եզրակացությունները:

Օրենսդիրի կողմից արտաքին աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրմանը վերաբերող կարգավորող և ինստիտուցիոնալ դաշտում 2008թ. ՊԾՖՀ-ի գնահատումից ի վեր էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

**(i) Օրենսդիրի կողմից աուդիտի հաշվետվությունների ժամանակին ուսումնասիրումը**

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքների համաձայն, ՀՀ կառավարությունը ՀՀ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը Ազգային ժողով է ներկայացնում մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը, որտեղ հաշվետվությունը քննարկվում և հաստատվում է ՀՀ Վերահսկիչ պալատի եզրակացության (որը գործնականում իրենից ներկայացնում է բյուջեի կատարման հաշվետվության աուդիտական եզրակացություն) առկայությամբ մինչև հաշվետվու տարվան հաջորդող տարվա հունիսի երկրորդ չորեքշաբթին:

Աղյուսակ 22-ում ներկայացվում են վերջին 3 տարիների ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ ՀՀ վերահսկիչ պալատի եզրակացությունը Ազգային ժողով ներկայացնելու և ԱԺ-ի կողմից այն ուսումնասիրելու փաստացի ժամկետները:

**Աղյուսակ 22. ԱԺ-ի կողմից աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրման կարգավիճակը**

	2010թ.	2011թ.	2012թ.
Ազգային ժողովի կողմից աուդիտի հաշվետվության ստացման ամսաթիվը	11.05.2011	07.06.2012	24.05.2013
ՀՀ պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման ամսաթիվը	26.05.2011	04.10.2012	13.06.2013
Ազգային ժողովի կողմից աուդիտի հաշվետվության ուսումնասիրման ընդհանուր տևողությունը	15 օր	4 ամիս	20 օր

*Աղբյուրը՝ Ազգային ժողով, ԱԺ ֆինանսավարկային ու բյուջեպային հարցերով մշտական հանձնաժողովի նիստերի արձանագրություններ*

Վերջին 3 տարիներից երկուսում աուդիտի հաշվետվություններն ուսումնասիրվել են օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և դրանց ուսումնասիրության ընդհանուր տևողությունը չի գերազանցել աուդիտի հաշվետվության ստացումից հետո մեկամսյա ժամկետը: 2011թ. բյուջեի կատարման հաշվետվության հաստատման հետ կապված մոտ 4 ամսով

ուշացումը պայմանավորված էր 2012թ Ազգային ժողովի ընտրություններով: Նման շեղումը ընթացակարգերից բացասաբար չի ազդում սույն ցուցանիշի ընդհանուր գնահատականի վրա:

Օրենսդիրին Վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվության ներկայացման և ԱԺ-ի կողմից նշված հաշվետվության ուսումնասիրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Վերահսկիչ պալատի մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքներով: Վերահսկիչ պալատի խորհրդի կողմից ՎՊ-ի տարեկան հաշվետվությունը և եզրակացությունները հաստատելուց հետո 10-օրյա ժամկետում դրանք ներկայացվում են Ազգային ժողով՝ այդ մասին տեղեկացնելով ՀՀ Նախագահին և Կառավարությանը: Ի լրումն, 30-օրյա ժամկետում դրանք տեղադրվում են ՎՊ-ի պաշտոնական կայքում: Վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվությունն Ազգային ժողով է ներկայացվում բյուջետային տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում: Վերահսկիչ պալատի վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվությունն Ազգային ժողովում քննարկվում է մինչև տվյալ հերթական նստաշրջանի ավարտը՝ առանց դրա վերաբերյալ որոշում ընդունելու:

Աղյուսակ 23-ում ներկայացվում են վերջին 3 տարիների ՀՀ Վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվությունը Ազգային ժողով ներկայացնելու և ԱԺ-ի կողմից այն քննարկելու փաստացի ժամկետները:

**Աղյուսակ 23. ՀՀ Վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվությունը Ազգային ժողով ներկայացնելու և ԱԺ-ի կողմից այն քննարկելու փաստացի ժամկետները**

	2010թ.	2011թ.	2012թ.
Վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվության հաստատում ՎՊ-ի խորհրդի կողմից	24.03.2011	27.03.2012	29.03.2013
ՎՊ-ի տարեկան հաշվետվության ներկայացում Ազգային ժողով	30.03.2011	29.03.2012	29.03.2013
ՎՊ-ի տարեկան հաշվետվության քննարկում Ազգային ժողովում	12.05.2011	12.09.2012	18.06.2013
Ազգային ժողովի կողմից Վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվության ուսումնասիրման ընդհանուր տևողությունը	42 օր	4.5 ամիս	78 օր

*Աղբյուրը՝ Ազգային ժողով, ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերով մշտական հանձնաժողովի նիստերի արձանագրություններ*

Վերջին 3 տարիներից երկուսում աուդիտի հաշվետվություններն ուսումնասիրվել են սահմանված ժամկետներում և դրանց ուսումնասիրության ընդհանուր տևողությունը չի գերազանցել աուդիտի հաշվետվության ստացման ամսաթվին հաջորդող եռամսյա ժամկետը: Ինչպես 2011թ. տարեկան բյուջեի կատարման հաշվետվության դեպքում, 2011թ. ՎՊ-ի տարեկան հաշվետվության քննարկման հետ կապված մոտ 5 ամսով ուշացումը պայմանավորված է 2012թ. Ազգային ժողովի ընտրություններով:

Այսպիսով, առհասարակ, ԱԺ-ն քննարկում է ՎՊ-ի հաշվետվությունները դրանց ստացմանը հաջորդող եռամսյա ժամկետում:

**(ii) Հիմնական բացահայտումների շուրջ օրենսդիրի անցկացրած լուծումների մասշտաբը**

ՎՊ-ի տարեկան հաշվետվությունները Ազգային ժողովում քննարկվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան: ՎՊ-ի հաշվետվությունները նախ քննարկվում են Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերով մշտական հանձնաժողովում, ապա Ազգային ժողովի նիստում, որն ավարտվում է եզրափակիչ ելույթներով՝ առանց որևէ փաստաթուղթ ընդունելու:

Վերոհիշյալ քննարկումներին, որպես կանոն, ներկա են գտնվում ինչպես ՀՀ Վերահսկիչ պալատի, այնպես էլ ՀՀ կառավարության ներկայացուցիչները (ներառյալ այն պետական մարմինների ներկայացուցիչները, որոնց գծով էական խնդիրներ են արձանագրվել): Աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրման ընթացքում Ազգային ժողովի մշտական հանձնաժողովը ստանում է տեխնիկական աջակցություն Ազգային ժողովի աշխատակազմից: Ազգային ժողովի նիստում քննարկման ընթացքում հիմնական զեկուցմամբ ելույթ է ունենում Վերահսկիչ պալատի նախագահը, իսկ հարակից զեկուցմամբ՝ ֆինանսավարկային և բյուջետային հարցերով մշտական հանձնաժողովի ներկայացուցիչը: Կառավարությունն իրավունք ունի հանդես գալու պատասխան ելույթով:

**(iii) Օրենսդիրի առաջարկվող գործողությունները և դրանց իրականացումը գործադիրի կողմից**

ՀՀ Սահմանադրությունը հստակորեն սահմանում է, որ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ: ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում Վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվության հիման վրա Ազգային ժողովի կողմից առաջարկությունների ներկայացման պաշտոնական ընթացակարգ: Այդուհանդերձ, քննարկումների ժամանակ Ազգային ժողովի պատգամավորների, մշտական հանձնաժողովների, խմբակցությունների ու պատգամավորական խմբերի կողմից արվում են մի շարք առաջարկություններ, թեև դրանք ենթակա չեն

պարտադիր կատարման: Վերջին 12 ամիսում Ազգային ժողովի կողմից ՀՀ վերահսկիչ պալատի հաշվետվությունների կամ եզրակացությունների քննարկման արդյունքում ՀՀ կառավարությանը պաշտոնապես չեն ներկայացվել առաջարկություններ այդ հաշվետվություններում բացահայտված խնդիրների կարգավորման վերաբերյալ:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
ԿՑ-28	D+	D+	<p><b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> Ամենաթույլ օղակը չափում (iii)-ն է, քանի որ աուդիտորական բացահայտումների ուսումնասիրությունից հետո պատգամավորների կողմից արվող առաջարկները ենթակա չեն պարտադիր կատարման:</p>
(i)	A	A	<p><b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> Վերջին 3 տարիներից 2-ում աուդիտորական հաշվետվությունները ուսումնասիրվել են սահմանված ժամկետներում, և ժամանակը չի գերազանցել հաշվետվության ստացման ամսաթիվին հաջորդող եռամսյա ժամկետը: Գ-2 (i). Աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրումը սովորաբար ավարտվում է հաշվետվությունը ստանալու օրվան հաջորդող երեք ամսվա ընթացքում:</p>
(ii)	A	A	<p><b>Կարարողականը մնացել է անփոփոխ:</b> ՎՊ-ի հաշվետվությունները նախ քննարկվում են ԱԺ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերով մշտական հանձնաժողովում, իսկ այնուհետև՝ Ազգային ժողովում: Քննարկումներին կարող են մասնակցել ներկայացուցիչներ ՎՊ-ից, ինչպես նաև այն պետական մարմիններից որտեղ էական խախտումներ են արձանագրվել: Գ-2 (ii). Հիմնական բացահայտումների շուրջ խորքային քննարկումներ են հետևողականորեն անցկացվում պարասխանաբան պաշտոնյաների մասնակցությամբ:</p>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
(iii)	D	D	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Քննարկման ընթացքում պատգամավորների կողմից արվում են առաջարկներ, բայց դրանք չունեն պարտադիր կատարման ուժ: <i>ԳՉ (iii). ԱԺ-ի կողմից որևէ առաջարկություն չի ներկայացվում:</i>

ԳՉ = գնահատման չափանիշ

### 3.8. Դոնորների գործելակերպերը

Այս բաժնում գնահատվում է դոնորների այն գործելակերպերը, որոնք ազդում են երկրի ՊՖԿ համակարգի կատարողականի վրա:

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
D-1 (Մ1). Ուղղակի բյուջետային աջակցության կանխատեսելիություն	D+	C+	<b>Կատարողականը բարելավվել է</b> տարվա ընթացքում բյուջեի աջակցմանն ուղղված հատկացումների կանխատեսելիության աճի շնորհիվ:
D-2 (Մ1). Նախագծերի ու ծրագրերի շրջանակներում տրամադրվող օգնության բյուջետավորման և հաշվետվություններում արտացոլման համար ՁԳ-ների կողմից տրամադրվող ֆինանսական տեղեկատվություն	A	A	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b>

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
D-3 (Մ1). Ազգային ընթացակարգերի կիրառմամբ տրամադրվող օգնության մասնաբաժին	D	B	<i>Կարարողականը բարելավվել է, ինչը պայմանավորված է վերջին տարիներին ազգային ընթացակարգերի կիրառմամբ կառավարվող աջակցության մասնաբաժնի զգալի աճով, իսկ մասամբ նաև որպես բյուջետային աջակցություն տրամադրվող օգնության մասնաբաժնի աճով:</i>

### 3.8.1. D -1. Ուղղակի բյուջետային աջակցության կանխատեսելիություն

**(i) Բյուջետային աջակցության տարեկան շեղումը կառավարության կողմից առաջարկվող բյուջեն օրենսդիր մարմնին (կամ բյուջեն հաստատող այլ համարժեք մարմնին) ներկայացնելուց առնվազն վեց շաբաթ առաջ ԶԳ-ների ներկայացրած կանխատեսվող գումարներից**

Ուղղակի բյուջետային աջակցության բոլոր գումարները, ըստ ԶԳ-ներից ստացված տեղեկատվության (որն առանձին դեպքերում նախնական է) արտացոլվում են պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում (որը ՀՀ կառավարության կողմից հաստատվում է մինչև հուլիսի 10-ը կամ ՀՀ կառավարության կողմից առաջիկա տարվա պետական բյուջեի նախագիծն Ազգային ժողով ներկայացնելու համար օրենքով սահմանած վերջնաժամկետից շուրջ 11 շաբաթ առաջ):

Որպես կանոն, ուղղակի բյուջետային աջակցության մասին ԶԳ-ների (հիմնականում ԵՄ-ի և Համաշխարհային բանկի) և կառավարության միջև կնքվող համաձայնագրերում նշվում են գումարների տեղաբաշխման նախնական ժամկետներ՝ դրանք պայմանավորելով նշված համաձայնագրերով բյուջետային աջակցության գումարների կամ դրանց առանձին մասնաբաժինների ստացման նախապայմանների կատարման (բարեփոխումների քաղաքականության փոխհամաձայնեցված առանձին միջոցառումների իրականացման) աստիճանով: Որոշ դեպքերում սա առաջացնում է շեղումներ ԶԳ-ներից ուղղակի բյուջետային աջակցության գումարների ստացման նախատեսված ու փաստացի ժամկետների ու ծավալների միջև: 2010-2012թթ. ուղղակի բյուջետային աջակցության փաստացի տեղաբաշխումները համապատասխանաբար կազմել են տարվա համար նախատեսվածի 53.0%, 85.1% և 180.4% (մանրամասները ներկայացվում են Հավելված Բ-ում):

**(ii) Սահմանված ժամկետում ՁԳ-ների կողմից վճարումների կատարումը (համապատասխանությունը եռամսյակային ընդհանուր գնահատականներին)**

Ուղղակի բյուջետային աջակցության տեղաբաշխումների եռամսյակային ծավալները համաձայնեցվել են ՁԳ-ների հետ մինչև բյուջետային տարվա սկիզբը: Փաստացի եռամսյակային տեղաբաշխումները (արտահայտված կշռված բաժիններով) տարբերվել են նախապես համաձայնեցված գումարներից (կշիռներն արտացոլում են ժամկետից շեղման աստիճանը) համապատասխանաբար 20.6%-ով, 11.7%-ով և 0.0%-ով 2010թ., 2011թ. և 2012թ. (մանրամասները ներկայացվում են Հավելված Բ-ում):

ԿՑ	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
D-1	D+	C+	<b>Կատարողականը բարելավվել է</b> տարվա ընթացքում բյուջետային աջակցության տեղաբաշխումների կանխատեսելիության աճի շնորհիվ:
(i)	C	C	<b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> 2010-2012թթ. բյուջետային աջակցության գծով փաստացի տեղաբաշխումները կազմել են նախատեսվածի համապատասխանաբար 53.0%-ը, 85.1%-ը և 180.4%-ը: Երեք տարիներից մեկում (2010թ.) փաստացի բյուջետային աջակցությունը 15 տոկոսով պակաս է եղել բյուջեով նախատեսվածից: <i>ԳՉ (i). Վերջին 3 տարիներից ոչ ավելի, քան 1-ում կանխատեսված ժամկետների համեմատ փաստացի ուղղակի բյուջետային աջակցության շեղումը չի գերազանցել 15%-ը:</i>
(ii)	D	B	<b>Կատարողականը բարելավվել է:</b> 2010թ., 2011թ. և 2012թ. եռամսյակային կշռված (կշիռն արտահայտում է ուշացումների տևողությունը) փաստացի տեղաբաշխումները տարբերվել են նախատեսված գումարներից համապատասխանաբար 20.6%-ով, 11.7%-ով և 0.0%-ով: <i>ԳՉ (ii). Վերջին ավարտված 3 տարիներից (2010-2012թթ.) 2-ում փաստացի եռամսյակային տեղաբաշխումների ուշացումները (կշռված) չեն գերազանցել 25%-ը:</i>

ԳՉ = գնահատման չափանիշ

### 3.8.2. D-2. Նախագծերի ու ծրագրերի շրջանակներում տրամադրվող օգնության բյուջետավորման և հաշվետվություններում արտացոլման համար ԶԳ-ների կողմից տրամադրվող ֆինանսական տեղեկատվություն

#### (i) Դոնորների կողմից ծրագրերի օժանդակության համար բյուջետային նախահաշիվների ամբողջականությունն ու ժամանակին լինելը

Բոլոր խոշոր ԶԳ-ների (ԱԶԲ, Համաշխարհային բանկ, «KfW», Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎԶԵԲ), Եվրոպական ներդրումային բանկ (ԵՆԲ), Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամ (ԳԶՄՀ), և (մինչև վերջերս), Ռուսաստանի Դաշնություն) Կենտրոնական կառավարությանն ուղղված աջակցությունը տրամադրվում է կենտրոնական կառավարության բյուջեի միջոցով:<sup>2021</sup> ԶԳ-ների ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացման խոշորագույն ոլորտներն են ջրային տնտեսությունը, ճանապարհային տնտեսությունը, էներգետիկան և գյուղատնտեսությունը: Նշված ծրագրերի մեծ մասը իրականացվում է համապատասխան պետական մարմինների կառուցվածքում գործող ծրագրերի իրականացման գրասենյակների (ԾԻԳ-եր) միջոցով: Վերջիններս հանդես են գալիս որպես կապող օղակ պետական մարմինների և ֆինանսավորող ԶԳ-ների միջև: ԾԻԳ-երը կազմում են համապատասխան պետական մարմնի հովանու ներքո իրականացվող ծրագրերի բյուջետային նախահաշիվները, որոնք բաժանվում են փուլերի և համահունչ են բյուջեի ժամանակացույցին: ԶԳ-ների կողմից կիրառվող դասակարգման վրա հիմնվող ծախսային ծածկագրերը ՀՀ պետական բյուջեի դասակարգման ծածկագրերի վերածելու համար ԾԻԳ-երը կիրառում են համապատասխան ձևաչափեր: Կարելի է ասել, որ սրա շնորհիվ որևէ խնդիր չի առաջանում՝ կապված ԶԳ-ների ֆինանսավորմամբ ծրագրեր իրականացնող պետական մարմինների և դոնորների տրամադրած տվյալների միջև համադրումներ կատարելու հետ:<sup>22</sup>

<sup>20</sup> Թեև ԶԳ-ների կողմից ֆինանսավորվող որոշ ծախսեր (օր.՝ կապված ԶԳ-ներից ուղղակի ֆինանսավորում ստացող խորհրդատուների հետ) կարող են չարտացոլվել ՀՀ կառավարության բյուջեներում, եթե նման ծախսերը ներառված են ԶԳ-ների գործառնական ծախսերում և չեն կազմում ծրագրի վերաբերյալ կառավարության և ԶԳ-ների միջև կնքված համաձայնագրերի բաղադրիչը:

<sup>21</sup> Ինչպես նշվում է «ԿՑ-7»-ի վերաբերյալ մատուցած, ԱՄՆ ԱԶԳ-ն և խոշոր ԶԳ-ի, բայց նրա կողմից ֆինանսավորվող նախագծերը/ծրագրերը (օր.՝ համայնքային ենթակառուցվածքների նախագծերը) հիմնականում իրականացվում են ՀԿ-ների կամ ավելի ցածր մակարդակի կառավարությունների կողմից:

<sup>22</sup> ՊԾՖՀ-ի «Դաշտային ուղեցույց»-ի «D2-b» հստակեցնող ծանոթագրության մեջ (էջ 176) նշվում է. «Սույն ցուցանիշի գնահատման նպատակներով կարևոր չէ, թե արդյոք դոնորները տեղեկատվությունը տրամադրում են կառավարությանը ուղղակիորեն, թե անուղղակիորեն՝ ԾԻԳ-երի, բանկերի կամ շահառու կազմակերպությունների միջոցով»:



**(ii) Ծրագրերի ֆինանսավորմանն ուղղված փաստացի դրամական հոսքերի մասին ՁԳ-ների հաշվետվությունների պարբերականությունը և ծածկույթը**

Սահմանված ընթացակարգերի համաձայն, միջոցների տեղաբաշխման հայտերը ՁԳ-ների կողմից հաստատելուց հետո համապատասխան տեղեկատվությունը (թղթային կամ էլեկտրոնային տարբերակով) ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարություն, որտեղ այն գրանցվում է օրական պարբերականությամբ և ամփոփվում ամսական կտրվածքով: Համաշխարհային Բանկի «Client Connection» և ԱԶԲ-ի «LFIS/GFIS/LAS» առցանց ծրագրերը հնարավորություն են տալիս վարկառուին առցանց հետևել տեղաբաշխումների մասին ուղարկված հայտերի հաստատման ընթացքին: Այս ՁԳ-ների կողմից տրամադրված վարկերի գծով 2010-2012թթ. կատարված տեղաբաշխումները կազմել են ընդհանուր տեղաբաշխումների համապատասխանաբար 37, 44 և 55 տոկոսը:

Բոլոր մյուս ՁԳ-ների (օր.՝ ԱՄՆ ՄԶԳ, ՆԱԵԿ, Աբու Դաբիի զարգացման հիմնադրամ) կողմից փաստացի կատարված տեղաբաշխումների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ամսական պարբերականությամբ կամ տեղաբաշխման հայտի հաստատումից հետո էլեկտրոնային փոստի միջոցով կամ թղթային տեսքով: ՁԳ-ների կողմից տրամադրվող տեղեկատվությունը համահունչ չէ կառավարության բյուջետային դասակարգմանը: Ինչևէ, սա չի առաջացնում խնդիրներ, քանի որ փաստացի տեղաբաշխումների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր է հանդիսանում նաև ԾԻԳ-երի համար բացված գանձապետական հաշիվների միջոցների շարժը և ԾԻԳ-երի գործունեության հաշվետվությունները, որոնք կազմվում են պետական բյուջեի դասակարգմանը համապատասխան (տես չափում (i)-ի նկարագրական մասը):

ԿԳ (Մ1)	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
D-2	A	A	<b>Երկու չափումների դեպքում էլ կատարողականը մնացել է անփոփոխ:</b>
(i)	A	A	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> Կենտրոնական կառավարությանն ուղղված բոլոր խոշոր ՁԳ-ների (ԵՄ, ԱԶԲ, Համաշխարհային բանկ) աջակցությունը տրամադրվում է կենտրոնական կառավարության բյուջեի միջոցով: ԾԻԳ-երը կազմում են համապատասխան պետական մարմնի հովանու ներքո իրականացվող ծրագրերի բյուջետային նախահաշիվները, որոնք բաժանվում են փուլերի և համահունչ են բյուջեի ժամանակացույցին: Դոնորների կողմից կիրառվող դասակարգման վրա հիմնվող ծախսային ծածկագրերը ՀՀ պետական բյուջեի դասակարգման ծածկագրերի վերածելու համար ԾԻԳ-երը կիրառում են համապատասխան ձևաչափեր:</p> <p>ԳՉ (i). Բոլոր ՁԳ-ները (բացառությամբ նրանց, ում տրամադրած ֆինանսավորումը նշանակալից չէ) տրամադրում են կառավարության բյուջե-տային ժամանակացույցին համահունչ փուլերով ծրագրերի գծով աջակցության գումարների փեղաբաշխման բյուջե-տային նախահաշիվներ՝ պետական բյուջեի դասակարգմանը համապատասխանող բացվածքով:</p>
(ii)	A	A	<p><b>Կատարողականը մնացել է անփոփոխ:</b> ՁԳ-ների կողմից միջոցների տեղաբաշխման հայտերի մեծ մասը հաստատելուց հետո համապատասխան տեղեկատվությունը (էլեկտրոնային կամ թղթային տարբերակով) տրամադրվում է ՖՆ-ին ամսական կտրվածքով: Որոշ ՁԳ-ներ, որոնք փոքր ծավալի աջակցություն են տրամադրում, համապատասխան տեղեկատվությունը (էլեկտրոնային կամ թղթային տարբերակով) տրամադրվում է ՖՆ-ին եռամսյակային կտրվածքով:</p> <p>ԳՉ (ii). Յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 1 ամսվա ընթացքում ՁԳ-ները տրամադրում են եռամսյակային հաշվետվություններ բյուջեում ներառված արտաքին ֆինանսավորմամբ ծրագրերի առնվազն 85 տոկոսի համար իրականացված փեղաբաշխումների վերաբերյալ՝ պետական բյուջեի դասակարգմանը համապատասխանող բացվածքով:</p>

ԳՉ = Գնահատման չափանիշ

### 3.8.3. D-3. Ազգային ընթացակարգերի կիրառմամբ կառավարվող օգնության մասնաբաժինը

Գնահատվող չափումը վերաբերում է կենտրոնական կառավարությանն ուղղված օգնության միջոցների այն ընդհանուր մասնաբաժինին, որը կառավարվում է՝ կիրառելով ազգային ընթացակարգերը (գնումներ, հաշվառում/վճարումներ, աուդիտի և հաշվետվական համակարգեր):

2005թ. Փարիզի հռչակագիրը և 2008թ. Գործողությունների Ակռայի օրակարգը պահանջում են, որ զարգացման օգնություն տրամադրելիս՝ ԶԳ-ները կիրառեն շահառու երկրի համակարգերը՝ հետևելով ազգային ռազմավարություններին: Ազգային համակարգերի և ընթացակարգերի կիրառումը նշանակում է գնումների մասին ազգային օրենսդրության և ընթացակարգերի պահպանում, միջոցների վճարում ազգային գանձապետական համակարգի միջոցով, ազգային հաշվապահական քաղաքականությունների և ընթացակարգերի կիրառմամբ այս միջոցների օգտագործման հաշվառում, հաշվետվությունների պատրաստում, որոնք համահունչ են տվյալ երկրի հաշվետվական պահանջներին, ինչպես նաև աուդիտի ազգային ստանդարտներին և ընթացակարգերին համապատասխան այդ միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողություն:

Վերջին տարիներին ԶԳ-ների կողմից ՀՀ կառավարությանը տրամադրվող ընդհանուր աջակցության կառուցվածքում (ընդհանուր և ոլորտային բյուջետային աջակցություն), ինչը ինքնին նշանակում է ազգային ընթացակարգերի կիրառում, ավելի քան 50 տոկոսով աճել է ազգային ընթացակարգերի կիրառմամբ տրամադրվող ուղղակի բյուջետային աջակցության մասնաբաժինը: 2012թ. տրամադրված 133 մլրդ դրամի ԶԳ աջակցությունից 75 մլրդ դրամը տրամադրվել է ուղղակի բյուջետային աջակցության տեսքով: Սա բացատրվում է ինչպես ԶԳ-ների վարած քաղաքականությամբ, այնպես էլ Հայաստանի ՊՖԿ ոլորտում իրականացվող բարեփոխումներով, որոնք նպաստում են այդ քաղաքականությանը: Մասնավորապես, 2008թ. ՊԾՖԿ գնահատման համեմատ երկրում տեղի են ունեցել հետևյալ զարգացումներ (որոնք մանրամասն քննարկվում են բաժին 4-ում)։

- Բյուջեի պլանավորման մեջ աստիճանաբար թափ հավաքող ծրագրային բյուջետավորման մոտեցումների կիրառումը, որտեղ ֆինանսական միջոցները կապվում են պլանավորված նպատակների հետ, որի շնորհիվ աճում է ֆինանսավորման դիմաց պլանային ու փաստացի արդյունքների թափանցիկությունը (այդ թվում ԶԳ-ների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի կամ գերակա ուղղությունների մասով),
- Ծրագրերի իրականացման գրասենյակների (ԾԻԳ-եր) հաշիվների տեղափոխումը գանձապետական համակարգ,

- Բյուջեի կատարման հաշվետվություններում լրացուցիչ (արդյունքների մասին) տեղեկատվության արտացոլումը,
- Ներքին աուդիտի բարեփոխումները
- Վերահսկիչ պալատի կողմից իրականացվող արտաքին աուդիտների որակը սկսել է բարելավվել:

Աղյուսակ 24-ում հաշվարկները կատարվել են՝ ուղղակի բյուջետային աջակցության գումարները (որոնց գծով բոլոր ազգային ՊՖԿ համակարգերը և գործընթացները ինքնաբերաբար կիրառվում են) տարանջատելով ԾԻԳ-երի կողմից ոլորտային ծրագրերի գումարներից: Հանրային հատվածում ընդունված՝ վճարային, հաշվապահական հաշվառման և գնումների համակարգերի կիրառման աստիճանը էապես ցածր է ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի համակարգերի կիրառման համեմատ: Հաշվապահական հաշվառման հետ կապված խնդիրները թույլ չեն տալիս զարգացման գործընկերներին կիրառելու ՀՀ Կառավարության վճարային և հաշվապահական հաշվառման համակարգերը (հանրային հատվածի ժամանակակից ստանդարտների բացակայության պարագայում կիրառվում են ԽՍՀՄ-ի շրջանում ընդունված իրահանգները<sup>23</sup>):

ԾԻԳ-երը գնալով ավելի լայնորեն են կիրառում պետական գնումների համակարգը, սակայն առկա տվյալները բավարար չեն ստույգ հաշվարկներ կատարելու համար: Մտաավոր հաշվարկը ներկայացվում է ստորև: Ինչ վերաբերում է ՀՀ Կառավարության ներքին և արտաքին աուդիտի համակարգերին, բյուջեի հաշվետվական համակարգերին, ապա դրանք ընդգրկում են ԶԳ-ների կողմից ֆինանսավորվող և ԾԻԳ-ի կողմից իրականացվող բոլոր ծրագրերը / նախագծերը: Ինչևէ, ԶԳ-ները կարող են ներգրավել մասնավոր աուդիտորներ և իրականացնել իրենց սեփական աուդիտները:

### Աղյուսակ 24. Երկրի համակարգերի կիրառում

	Ընդամենը օգնություն	Երկրի համակարգերի կիրառում				
		Գնումներ	Վճարումներ ու հաշվապահական հաշվառում	Ֆինանսական հաշվետվություններ	Աուդիտ	Միջին
Օգնության ծավալը (մլրդ դրամ)	133.2	75	75	133.2	133.2	104.1
Տոկոս	100%	56.3%	56.3%	100%	100%	78.2%

Աղբյուրը՝ 2012թ. ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվության տվյալներ

<sup>23</sup> Տես նաև «ԿՑ-25»-ի չափում (iii)-ի նկարագրական մասը:

Ազգային ՊՖԿ համակարգերի նկատմամբ ՋԳ-ների վստահության աճին նպաստող գործոններից մեկն այն է, որ նույն դոնորները նաև ներգրավված են ՊՖԿ բարեփոխումների մշակման և իրականացման գործում, այսինքն՝ ազգային համակարգերից գնալով ավելի շատ է օգտվում է ՋԳ-ների նույն խումբը:

ԿՑ (Մ1)	Միավոր 2008թ. ՊԾՖՀ	Միավոր 2013թ. ՊԾՖՀ	Գնահատում
D-3	D	B	<p><b>Գնահատականը զգալիորեն բարելավվել է</b>, ինչը պայմանավորված է որպես բյուջետային աջակցություն տրամադրվող օգնության մասնաբաժնի աճով (ազգային համակարգերի կիրառման մակարդակը մոտ է 80%-ին), իսկ մասամբ նաև ազգային ընթացակարգերի կիրառմամբ կառավարվող օգնության նշանակալից աճով:</p> <p>Գ2. Կենտրոնական կառավարությանն ուղղված օգնության 75%-ը կամ ավելին կառավարվում է՝ կիրառելով ազգային ընթացակարգերը (գնումներ, վճարումներ և հաշվապահական հաշվառում, ֆինանսական հաշվետվություններ, աուդիտ):</p>

Գ2 = գնահատման չափանիշ

## 4. Կառավարության բարեփոխումների գործընթացը

### 4.1. Վերջերս իրականացված և ընթացիկ բարեփոխումները

Ինչպես նշվում է Բաժին 3-ում, ՀՀ Կառավարությունը սկսել է իրականացնել ՊՖԿ ռազմավարությունը (ՊՖԿՌ)՝ 2011թ.: Ռազմավարության մշակման ժամանակ հաշվի են առնվել 2008թ. ՊԾՖՀ գնահատման բացահայտումները: «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2007թ. հունիսին) ՎՊ-ն ստացել է ավելի մեծ անկախություն, որը վերջինիս հնարավորություն է տալիս ծրագրել և իրականացնել բարեփոխումների իր սեփական ռազմավարությունը:

#### **Բարեփոխումների հիմնական ուղղությունները ներառել են հետևյալը.**

*Բյուջետավորում.* «Բյուջետային համակարգի մասին» օրենքը փոփոխվել է 2013 թվականին: Այն սահմանում է ծրագրային բյուջետավորման աստիճանական ներդրման անհրաժեշտ իրավական հիմքը՝ ամրագրելով այս ուղղությամբ իրականացված բարեփոխումների նվաճումները: Ծրագրային բյուջետավորումը կբարձրացնի 2003թ. օրենքի ուժով պարտադիր ճանաչված ՄԺԾԾ-ի օգտակարության աստիճանը: ՖՆ-ի աջակցությամբ ճյուղային նախարարությունները մշակում են յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ծախսային ծրագրերի դիտանցելի ոչ ֆինանսական կատարողական ցուցանիշները: Քայլ առ քայլ մոտեցմամբ մշակվում և ներդրվում են բյուջետային ծրագրերի անձնագրերը: Ակնկալվում է, որ ամբողջական անցումը ծրագրային բյուջեին տեղի կունենա սկսած 2018 թվականից: Այդ ընթացքում աստիճանաբար ներդրվում են նոր մեթոդի տարբեր տարրերը՝ նպատակ ունենալով աջակցել նոր համակարգերին սահուն անցմանը, ինչպիսիք են, օրինակ, կոնկրետ ծրագրերի կատարողական ցուցանիշների կատարելագործումը, ծրագրերի դասակարգման հետ գործող տեղեկատվական բազաների կապն ապահովող ավտոմատ մոդուլները, ծրագրերի ծախսերի գնահատման փորձնական աշխատանքների իրականացումը և քաղաքականությունների հիման վրա գերակայությունների որոշման մոտեցումները, ինչպես նաև կատարողականի մոնիտորինգի/հաշվետվությունների ներկայացման և կատարողականի աուդիտի ընթացակարգերի ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծում: Այս հարցերում ՏԱ ծրագրերի և ԶԳ-ների համակարգման մեխանիզմների միջոցով կառավարությանը աջակցում են տարբեր ԶԳ-ներ, օր.՝ ԳՄՀՀ-ը, ՀԲ-ն, ԱՄՀ-ն, ԱԶԲ-ն և այլն, որոնք պարբերական հանդիպում են իրենց ջանքերի ներդաշնակեցման նպատակով:

*Բյուջեի կապարում.* Ֆինանսական հսկողությունները շարունակում են մնալ ուժեղ: 2010թ. և 2013թ. «Client Treasury» ծրագրային համակարգի ներդրման շնորհիվ բարձրացել է արդյունավետությունը, երբ պետական մարմինները կարող են կատարել բյուջեները՝ անմիջականորեն կապվելով Կենտրոնական գանձապետարանի հետ, մինչդեռ նախկինում սա կի-

սա-ավտոմատ եղանակով իրականացվում էր ՏԳԲ-ների միջոցով: Արդ-իականացված վերջին տարբերակը շահագործվում է 2014թ. սկզբից՝ Բյուջեի հիմնական օգտվողներին տալով «Գանձապետական գործառ-նական օր» համակարգից առցանց օգտվելու ավելի լայն հնարավորու-թյուն: Արդիականացման արդյունքում մեծացել է համակարգի արագությու-նը և հուսալիությունը: Գանձապետական համակարգը նաև ընդլայնել է իր ծածկույթը՝ դրանում ներառելով բոլոր ԾԻԳ-երին (այդ թվում ԶԳ-ների ուղղակի վճարման գործարքների մասով):

- Բարելավվում է նաև արդյունավետությունն ու թափանցիկությունը, քանի որ ներկայումս զարգացման գործընկերները (ԾԻԳ-երի միջո-ցով) իրենց բյուջեները իրականացնում են գանձապետական համակարգի միջոցով, մինչդեռ նախկինում նրանց բյուջեների կա-տարումը դուրս էր կառավարության համակարգերից: Բարձրանում է հանրային ծառայություններ մատուցող (հատկապես կրթության ոլորտի) ՊՈԱԿ-ների գործունեության թափանցիկությունը:

*Գնումներ.* Պետական գնումների մասին նոր օրենքը ուժի մեջ է մտել 2011թվականին: Գնումների համար պատասխանատվությունը հանձնվել է ճյուղային նախարարություններին, իսկ նրանց վերահսկման և ուղղորդմ-ան գործառույթն իրականացնում է Գնումների աջակցման կենտրոնը (գն-ումների կենտրոնացված համակարգում նախկին Պետական գնումների գործակալությունը): Ինչպես Գնումների աջակցման կենտրոնում, այնպես էլ ճյուղային նախարարությունների գնումների ստորաբաժանումներում սահմանափակ կարողություններով պայմանավորված՝ արդյունավետու-թյան աճի ակնկալվող արդյունքները դեռևս չեն նյութականացվել:

- Էլ-գնումների համակարգը ներդրվել է 2010 թվականին: 2013թ. այն կատարելագործվել է՝ հնարավորություն տալով կիրառել էլ-գնումնե-րի մոդուլները: Համակարգը հասանելի է [www.armeps.am](http://www.armeps.am) կայքի միջոցով: 2014թ. համակարգի գործարկումից ի վեր աճել է իրակա-նացված էլ-գնումների թիվը, որը շահագործման առաջին 3 ամսում գերազանցել է 500-ը<sup>24</sup>:
- Գնումների համակարգի գործունեությանը օժանդակում է վերջերս ստեղծված գնումներիԳբողոքարկման խորհուրդը (ԳԲԽԲ): Խորհր-դում ընդգրկված են ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչները, և կառավարությունը խրախուսում է ԳԲԽ-ում ՀԿ-ների ավելի լայն ներկայացվածությունը: Դեռևս շատ վաղ է դատել խորհրդի արդյունավետության մասին, քա-նի որ վերջին երեք տարում ներկայացված բողոքների թիվը փոքր-ինչ ցածր է, որպեսզի արտացոլի գնումների ընդհանուր համակարգի որակը և առանձնապես ԳԲԽ-ի արդյունավետությունը (26, 38 և 49 բողոք համապատասխանաբար 2011թ., 2012թ. և 2013թ.):

<sup>24</sup> Աղբյուրը՝ ՖՆ-ի պաշտոնական կայք. <http://minfin.am/index.php?art=1528&lang=3>

- Գնումների բնագավառի ավելի քան 300 որակավորված մասնագետների ներգրավման միջոցով ուժեղացել են գնումներում ընդգրկված անձնակազմի կարողությունները:
- Մեկ աղբյուրից գնման ձևի կիրառման համար անբավարար հիմնավորումը մտահոգող խնդիր է քաղաքացիական ծառայության կազմակերպությունների համար: Նմանապես, առանձնակի դեպքերում լուրջ մտահոգության տեղիք են տալիս մրցույթների ժամանակ արդար մրցակցության մակարդակը, բացահայտված գնանշումների և սակարկությունների առանձնահատկությունները: Այս խնդիրները հստակորեն արտացոլված են ՎՊ-ի վերջին տարիների տարեկան հաշվետվություններում (այդ թվում 2014թ. ապրիլին հրապարակված 2013թ. հաշվետվությունում): Կառավարությունը արձագանքել է 2013թ. կեսերին գների դիտանցման ավելի խիստ համակարգի ներդրմամբ, ԳԲԽ-ի ստեղծմամբ, գնումների մասին տեղեկատվության թափանցիկության բարձրացմամբ և այլն:
- 2014թ. սկզբից կիրառվում է գնումների ծածկագրման նոր համակարգ (Գնումների միասնական բառարան): ԵՄ-ի ստանդարտների վրա հիմնվող և միջազգայնորեն կիրառվող ծածկագրերը թույլ են տալիս ծառայություններ մատուցող միջազգային կազմակերպություններին արդյունավետորեն կիրառել դրանք մեկից ավելի տարիների կտրվածքով:

*Ներքին աուդիտը:* Մինչ օրս հիմնականում իրականացվել է ֆինանսական աուդիտ, բայց «Ներքին աուդիտի մասին» նոր օրենքը (ընդունվել է 2010թ. դեկտեմբերի 22-դեկտեմբերի -ին) նախատեսում է նաև կատարողականության համապատասխանության աուդիտ: Կարողությունների սահմանափակության գործոնը դեռևս հանգուցային նշանակություն ունի ճյուղային նախարարություններում և պետական այլ կազմակերպություններում ներքին աուդիտի գոծառույթների շրջանակի ու բնույթի հզորացման առումով: Կառավարությունը շարունակաբար աջակցություն է տրամադրում այս ուղղությամբ՝ ինչպես ներքին ուժերով (ուսուցման, աուդիտի պլանների և գործելակերպերի ադապտացման, աուդիտի հանձնաժողովների ստեղծման, կառավարման միասնական տեղեկատվական համակարգերի մշակման և այլնի), այնպես էլ ԶԳ-ների աջակցության ծրագրերի (օր.՝ ԵՄ-ի ԹՎԻՆԻՆԳ ծրագիր) միջոցով: 2014թ. փետրվարին կառավարությունը հաստատել է ներքին աուդիտորների որակավորման նոր կարգը<sup>25</sup>, որը, ի թիվս այլոց, նախատեսում է շարունակական մասնագիտական զարգացման պարտադիր ծրագիր հանրային հատվածի ներքին աուդիտորների համար:

*Պետական ոչ առևտրային կազմակերպությունները (ՊՈԱԿ-ներ):* ԶԳ-ների աջակցությամբ մշակվել է ֆիդուցիար հսկողության նոր ռեժիմ, որը փորձնական հիմունքով իրականացվել է 2011 թվականին: Վերջինս ուղղ-

<sup>25</sup> Տե՛ս 2014թ. փետրվարի 13-ի ՀՀ Կառավարության թիվ 176 որոշումը: Աղբյուրը՝ [www.e-gov.am](http://www.e-gov.am)



ված է պետական բյուջեից զգալի ֆինանսավորում ստացող այս կիսաանկախ կազմակերպությունների<sup>26</sup> ընդհանուր ֆիսկալ ռիսկի նվազեցմանը: Մշակվել և փորձնական հիմունքով կիրառվել է նախագիծը: Իրավական ակտերի ծերը: Կառավարությունը սահմանել է ՖՆ-ի կողմից ՊՈԱԿ-ների եռամսյակային գործունեության արդյունքների մոնիտորինգի նոր պահանջներ:<sup>27</sup>

*Թափանցիկությունը:* Կառավարությունը ապահովում է ՄԺԾԾ-ի, բյուջեների (այդ թվում բոլոր կից հավելվածների) և բյուջեի կատարման հաշվետվությունների (ամսական տեղեկատուների, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների, գնումների պլանների, մրցույթների) և ՊՖԿ համակարգերի տարբեր տարրերի վերաբերյալ տեղեկատվության առցանց հասանելիությունը: Ներդրվել է էլ-կառավարման «ինտերակտիվ բյուջե» գործիքը, որը, ի թիվս այլ տեղեկությունների, օրական կտրվածքով տրամադրում է բյուջետային ծախսերի մասին տվյալներ, ներառյալ փաստացի ծախսերի մանրամասն ծավալուն տվյալները: Բացի այդ, ապահովվել է մատակարարների պայմանագրերի և հաշիվ-պարանքագրերի առցանց հասանելիությունը: ՀԲ-ի «BOOST» նախաձեռնությունը, որը պարունակում է տեղեկատվական բազա, ևս հնարավորություն է տալիս առցանց հետևելու Հայաստանի բյուջետային տեղեկատվության դինամիկային<sup>28</sup>:

*Արտաքին ուսումնասիրումը:* 2007թ. հունիսին ուժի մեջ է մտել «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը, որով ՀՀ Վերահսկիչ պալատը (ՎՊ) ձեռք է բերել ավելի մեծ անկախություն: Այսօր այն գործում է Ազգային ժողովից (ԱԺ) անջատ, մինչդեռ նախկինում ՎՊ-ն կոչվում է ՀՀ Ազգային ժողովի Վերահսկիչ պալատ: Այնուամենայնիվ, ինչպես նշվում է 3-րդ բաժնի «ԿՑ-26» ցուցանիշին նվիրված մասում, անկախության առումով այն դեռևս չի ապահովել լիարժեք համապատասխանություն «INTOSAI»-ի ստանդարտների հետ: ՎՊ-ի հզորացման աշխատանքները դեռևս ընթանում են, և այս ուղղությամբ զգալի տեխնիկական աջակցություն են ցուցաբերում ԶԳ-ները:

ՊՖԿԻ-ի շրջանակում ջանքեր են գործադրվում մնացած մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ.

- Հանրային ծառայությունների էֆեկտիվությանը և արդյունավետությանը խոչընդոտում է կենտրոնացվածության բարձր մակարդակ ունեցող վարչարարական համակարգը, որը սահմանափակ հնարավորություն է տալիս ստորին մակարդակի անձնակազմին խնայողաբար և արդյունավետորեն կառավարելու ծախսերը: Բարձր մակարդակի տեսչությունները ստուգում են բյուջեի կատարման գործընթացները, որպեսզի գնահատեն, թե արդյոք պահպանվում են օրենսդրական

<sup>26</sup> ՊՈԱԿ-ների թիվը շուրջ 1850 է, որոնց մոտ 75%-ը դպրոցներ են:

<sup>27</sup> 2013թ. նոյեմբերի 8-ի ՀՀ Կառավարության թիվ 1397-Ն որոշում:

<sup>28</sup> Հայաստանը մեկն է այն 14 երկրներից (2014թ. մարտի դրությամբ), որի մասին նշված տեղեկությունը ներառված է «BOOST»-ում: Աղբյուրը՝ <http://wbi.worldbank.org/boost/country>

պահանջները, փոխարենը պարզելու, թե արդյոք իրագործվում են քաղաքականության նպատակները և արդյոք ապահովվում է «փողի դիմաց արժեքը» (ինչը դուրս է իրենց խնդիրների շրջանակից):

- Այս խնդիրը լուծելու համար 2011 թվականին հաստատվել է Պետական ներքին և ֆինանսական հսկողության (ՊՆՖՀ) ռազմավարությունը: Ռազմավարության նպատակն է ապակենտրոնացնել կառավարման պարտականությունները և ներդնել ներքին աուդիտի ժամանակակից համակարգ, որը կփոխարինի տեսչական համակարգին և դրանով իսկ կօժանդակի պետական կազմակերպությունների ղեկավարներին՝ «փողի դիմաց արժեք»-ի ապահովման առումով ներքին հսկողության համակարգերի գործունեությունը մոնիտորինգի ենթարկելու միջոցով: Ներքին աուդիտի ժամանակակից համակարգի ստեղծման աշխատանքները սկսվել են 2012 թվականին, և այսօր ՆԱ-ի գործառույթը ներդրվել է 52 պետական մարմիններում: Այլակերպ, ՊՆՖՀ-ի ռազմավարությունը դեռևս գտնվում է իրականացման վաղ փուլում, քանի որ հիմնական համապատասխան օրենսդրությունը՝ «Ֆինանսական կառավարման հսկողության մասին» օրենքը, դեռևս չի ընդունվել:
- Ծրագրային բյուջետավորման աստիճանական ներդրումը և ՊՆՖՀ ռազմավարության իրականացումը կփոխլրացնեն միմյանց՝ պետական բյուջեի կատարման գանձապետական գործընթացներից ուշադրությունն ուղղելով քաղաքականության սահմանված նպատակների իրագործմանը և «արժեք դրամի դիմաց» սկզբունքի ապահովմանը:
- Եկամուտների վարչարարությունում որոշ առումով թափանցիկությանը դեռևս անբավարար է՝ պայմանավորված հարկային օրենքների իրականացման մեջ զգալի չափով հայեցողական մոտեցման ցուցաբերման հնարավորությամբ: Գրանցման և հայտարարագրման նկատմամբ հսկողությունները դեռևս որոշ առումներով կատարելագործման կարիք ունեն: Եկամուտների վարչարարությունում թափանցիկության անբավարար աստիճանը, մասնավոր հատվածի պոտենցիալ ներդրողների ընկալմամբ, բացասաբար է անդրադառնում գործարար միջավայրի որակի վրա: Պետական եկամուտների կոմիտեին տրամադրվում է զգալի տեխնիկական աջակցություն՝ ուղղված եկամուտների վարչարարության հզորացմանը: Թեև Հայաստանի գնահատականը դեռևս ցածր է, սակայն հարկային վարչարարության համակարգում որոշ բարելավումներ են իրականացվել: Սրանք ճանաչվել են ՀԲ-ի 2014թ. «Doing Business» զեկույցում, որտեղ, նախորդ տարվա 112-րդ տեղի համեմատ, Հայաստանը զբաղեցրել է 103-րդ տեղը<sup>29</sup>:

<sup>29</sup> <http://www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia/>

- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ժամանակակից ստանդարտների բացակայությունը հնարավորություն չի տալիս Վերահսկիչ պալատին կարծիք տրամադրել կառավարության տարեկան հաշիվների վերաբերյալ: ՖՆ-ն միայն կազմում է բյուջեի կատարման հաշվետվություններ, որոնք ներկայացվում են ՎՊ-ին բանկային հաշիվների մնացորդների և դրանց հոսքերի մասին որոշ տեղեկությունների հետ մեկտեղ: Տարեկան ֆինանսական հաշվետվությունների բացակայությունը սահմանափակում է Կառավարության ունակությունը ապացուցելու, որ այն ապահովում է լիարժեք ֆինանսական հաշվետվողականություն պետական միջոցների օգտագործման համար: ԶԳ-ների աջակցությամբ մշակվել է հաշվապահական հաշվառման ժամանակակից ստանդարտների մասին նոր օրենքի նախագիծը (Հայաստանի հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներ՝ ՀՀՀՀՀՀՄ-ներ): Ակնկալվում է, որ այն կընդունվի Ազգային ժողովի կողմից 2014թ. ընթացքում:

Պետական ֆինանսների կառավարման ռազմավարությունը (ՊՖԿՌ)

Ինչպես նշվում է Բաժին 3-ում, ՀՀ Կառավարությունը սկսել է իրականացնել Պետական ֆինանսական կառավարման ռազմավարությունը (ՊՖԿՌ) 2011թ., 2010թ. հոկտեմբերի 28-ի ՀՀ Կառավարության թիվ 42 որոշումն ընդունելուց հետո: Ռազմավարության մշակման ժամանակ հաշվի են առնվել 2008թ. ՊԾՖՀ գնահատման բացահայտումները: «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2007թ. հունիսին) ՎՊ-ն ստացել է ավելի մեծ անկախություն, որը վերջինիս հնարավորություն է տալիս ծրագրել և իրականացնել բարեփոխումների իր սեփական ռազմավարությունը:

ՊՖԿՌ-ի գլխավոր նպատակն է բարձրացնել պետական ծախսերի կառավարման էֆեկտիվությունն ու արդյունավետությունը՝ միաժամանակ ապահովելով ընթացակարգերի և մատուցվող ծառայությունների որակի բարելավումը և պետական միջոցների օգտագործման համար հաշվետվողականությունը: Այն սահմանում է պետական ֆինանսների կառավարման համակարգում (ՊՖԿՀ) 2011-2020թթ. իրականացվելիք բարեփոխումների շրջանակը, որտեղ որպես հենանիշ կիրառվում են լավագույն միջազգային փորձն ու ստանդարտները, այդ բարեփոխումների գերակա խնդիրները: Իրականացումը պետք է գնահատվի մոնիտորինգի համակարգի միջոցով: Ամբողջական փաստաթուղթը, ներառյալ գործողությունները ծրագրերը հասանելի են ՖՆ-ի պաշտոնական կայքում ([www.minfin.am](http://www.minfin.am)): Բարեփոխումները ներառում են ՊՖԿ-ի բոլոր ուղղությունները, այդ թվում պետական մարմինների և ՏԻՄ-երի մակարդակում:

ՊՖԿՀ բարեփոխումներն իրականացվում են երեք փուլով.

**Փուլ 1-ին (2010-2014թթ.). Ավարտին հասցնել հիմնական համակարգերի ու հսկողության մեխանիզմների հետ կապված աշխատանքներ-**

**որ՝ միաժամանակ կենտրոնացված վարչարարությունից աստիճանաբար անցում կատարելով դեպի ապակենտրոնացված կառավարմանը:** Պետք է ուսումնասիրվեն ՊՖԿՀ-ի բիզնես գործընթացները՝ նպատակ ունենալով ապահովել բոլոր գործընթացների փոխկապվածությունը և փոխլրացումը, ինչպես նաև դրանցում վարչարարական հաշվետվողականության, պատասխանատվության ու հսկողության համակարգերի առկայությունը.

- Ներքին հսկողական միջոցները, այդ թվում ներքին աուդիտը պետք է արդիականացվեն՝ դրանով իսկ օգնելով բարձրացնել ռեսուրսների կառավարման արդյունավետությունը: Մշակվել է Պետական ներքին ֆինանսական հսկողության ենթառազմավարությունը (որը քննության է առնվում Բաժին 3-ում և ստորև):
- ՀՀ Կառավարությունը պետք է որոշի, թե ինչպես լավագույնս հզորացնել բյուջետային համակարգը և գանձապետական գործող ՏՏ համակարգը՝ դրանով իսկ բարձրացնելով պետական միջոցների օգտագործման էֆեկտիվությունն ու արդյունավետությունը: Որպես հնարավոր տարբերակ՝ քննության է առնվում Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգ («GFMIS») ստեղծելու հարցը: 2014թ. սկզբին մեկնարկել է ՀԲ-ի կողմից ֆինանսավորվող նոր ծրագիր, որն ուղղված է այս խնդրում կառավարությանը աջակցելուն: Ծրագրային բյուջետավորման իրականացումը, ըստ էության, կհանգեցնի նրան, որ ավելի մեծ ուշադրություն կդարձվի ծախսերի խնայողությանը և արդյունավետությանը, թեև հարկ է նշել, որ նախևառաջ անհրաժեշտ կլինի մշակել էֆեկտիվության և արդյունավետության բարելավման միասնական մոտեցում:
- Շարունակաբար պետք է հզորացվեն ինստիտուցիոնալ և մարդկային ռեսուրսների կարողությունները:
- ՊՆՖՀ ռազմավարությունը ներառում է երեք հիմնական բաղադրիչ՝ կառավարչական հաշվետվողականության վրա հիմնված ֆինանսական կառավարում և հսկողություն (այսուհետ՝ ՖԿՀ), կառավարման բոլոր մակարդակներում պատշաճ հավաստիացում ապահովող ներքին աուդիտ, ստանդարտները սահմանող և ՊՆՖՀ-ի ռազմավարության իրականացումը վերահսկող կենտրոնական ներդաշնակեցման մարմին (այսուհետ՝ ԿՆՄ):

ՊՆՖՀ ռազմավարության գործողությունների ծրագրին համապատասխան մինչև օրս կատարված հիմնական աշխատանքը ներքին աուդիտի գործառույթի ստեղծումն է, որն իրականացվել է 2012թ. ներքին աուդիտի մասին օրենքի ընդունումից հետո: Ընթացիկ աշխատանքները ներառում են ներքին հսկողության միջոցառումների սահմանումների հստակեցումը, ֆինանսական կառավարման և հսկողության մասին օրենքի մշակումը, որը կսատարի ռազմավարության իրականացմանը, հաշվապահա-

կան հաշվառման ժամանակակից ստանդարտների մշակումը և հաշվառին պլանի կատարելագործումը:

ՊԾՖՀ ռազմավարության իրականացումը դժվարին կլինի: Հայաստանում երկար ժամանակ կիրառվող կենտրոնացված կառավարման համակարգի ապակենտրոնացումը, որը ենթադրում է հարացույցային փոփոխություն, կպահանջի նշանակալից փոփոխություններ կառավարման և ինստիտուցիոնալ/վարչական գործընթացներում, որոնք դուրս են ՊԾԿ համակարգերի շրջանակից:

### **Փուլ 2-րդ. Կառավարչական հաշվետվողականության կատարելագործում**

Երկրորդ փուլի միջոցառումները ուղղված են առաջին փուլի արդյունքների գործնական կիրառման ապահովմանը: Դեռևս չի սահմանվել ժամանակացույցը և գործողությունների ծրագիրը, մասամբ այն պատճառով, որ պետական ֆինանսական կառավարման և հսկողության մասին օրենքը դեռ չի ընդունվել: Արդյունքները ներառում են հետևյալը.

- Կառավարչական հաշվետվողականությանը և պատասխանատվությանը օժանդակող արդիականացված կուռ բիզնես գործընթացների առկայություն ,
- Կատարելագործված բիզնես գործընթացների և SS-ների վրա հիմնվող կատարելագործված ՊԾԿ համակարգի գործնական կիրառման համար վարչարարման բոլոր մակարդակներում անհրաժեշտ ինստիտուցիոնալ ու մարդկային կարողությունների ապահովում,
- Պետական ծախսերի կառավարման համապարփակության և թափանցիկության ամրապնդում:
- Ներքին աուդիտի գործառույթի հզորացումը նպաստում է կառավարման և հաշվետվողականության կատարելագործմանը:

### **Փուլ 3-րդ. Պետական միջոցների արդյունավետության բարձրացում (ժամկետները և գործողությունների ծրագիրը դեռ պետք է սահմանվեն)**

Երկրորդ փուլում կառավարչական հաշվետվողականության և պատասխանատվության հզորացումը կճառայի որպես հիմք պետական ծախսերի արդյունավետության առավել խորքային դիտարկման ու վերլուծության համար:

## 4.2. Բարեփոխումների պլանավորմանը և իրականացմանն աջակցող ինստիտուցիոնալ գործոնները

ՊՖԿՀ բարեփոխումները համակարգվում են Ֆինանսների նախարարի կողմից ՖՆ-ի կոլեգիայի միջոցով: Ֆինանսների նախարարը ՀՀ Կառավարությանն է ներկայացնում բարեփոխումների ընթացքի մասին տարեկան հաշվետվություն (տեղեկանք), ինչպես նաև հանդես է գալիս այս քաղաքականության վերանայման մասին առաջարկություններով:

Որոշակի ուղղությամբ բարեփոխումների իրականացումը խթանելու նպատակով անհրաժեշտության դեպքում մոբիլիզացվում են ՖՆ-ի և այլ կառույցների համապատասխան ստորաբաժանումների ջանքերը: Ֆինանսների նախարարի կողմից ձևավորվել է ՊՖԿՀ-ի բարեփոխումների քարտուղարություն, որի խնդիրն է հետևել ՊՖԿ-ի տարբեր ուղղություններում առաջընթացին և անհրաժեշտության դեպքում համակարգել բարեփոխումների աշխատանքները: Իրականում Քարտուղարության գործառույթը կատարում է Պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչությունը՝ վերջինիս պետի գլխավորությամբ, որը սույն ՊՖԿՀ գնահատման շրջանակում նաև հանդես է եկել որպես ՀՀ Կառավարությունը ներկայացնող գործընկերը:

Պետական մարմինների ղեկավարները պատասխանատու են իրենց գլխավորած կառույցներում ՊՖԿՀ բարեփոխումների ընդհանուր համակարգման համար: Յուրաքանչյուր մարմնի աշխատակազմի ղեկավարը պատասխանատու է տվյալ կառույցում բարեփոխումների իրականացման համար: Կառավարության բարեփոխումների օրակարգը և ջանքերը համաձայնեցվում են դոնոր համայնքի հետ բարեփոխումների համակարգման հանդիպումների և պարբերական քննարկումների միջոցով: Ֆորումում ներկայացված են կառավարությանը աջակցող բոլոր հիմնական ՁԳ-ները և ծրագրերը (օր.՝ ԱԶԲ-ը, ՎԶԵԲ-ը, Հայաստանում ԵՄ-ի պատվիրակությունը, ԳՄՀԸ-ը, ԱՄՆ ՄԶԳ-ն, ՀԲ-ն): Ինչևէ, գործնականում (ինչպես հայտնել են ՊՖԿՀ-ի գնահատման թիմին) ֆորմալ հանդիպումները տեղի են ունենում ոչ հաճախ:

ՊՖԿԴ-ի շրջանակում չի ներառված Վերահսկիչ պալատի բարեփոխումների ծրագիրը, քանի որ ՎՊ-ն գործում է ՀՀ Կառավարությունից անկախ: Արտաքին աուդիտի գործառույթը ՊՖԿ համակարգի անբաժանելի մասն է, և լավագույն տարբերակում ՎՊ-ի բարեփոխումների ծրագիրը պետք է սերտորեն համակարգվի ՊՖԿԴ-ի իրականացման հետ: Սա վերաբերում է հատկապես այն բաղադրիչներին, որոնք ուղղված են ներքին հսկողություններին և հաշվապահական հաշվառմանը: Մինչև օրս նման համակարգում ինչ-որ չափով չի իրականացվել:

Միաժամանակ, Հայաստանի իշխանությունները նաև ջանում են ձևավորել պահանջարկ ՊՖԿ բարեփոխումների նկատմամբ, թեև սա ան-

միջականորեն արտացոլված չէ ՊՖԿՌ-ում: Օրինակ՝ Ազգային ժողովում իրականացվում են ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որտեղ ԳՄՀԸ-ը և այլ ՋԳ-ները աջակցում են օրենսդիրի նախաձեռնությունները՝ ուղղված ինչպես բյուջետային գրասենյակի ստեղծմանը, այնպես էլ խորհրդարանի անձնակազմի կարողությունների զարգացմանը, որոնք կբավարարեն քաղաքականությունների վրա հիմնվող ծրագրային բյուջետավորման գործընթացների և եղանակների վերաբերյալ նոր պահանջները: Ակնկալվում է, որ բյուջետային գրասենյակը կսկսի գործել 2015թ. սկզբին:

## Հավելված Ա. Բյուջեի կատարողականի աղյուսակներ

Բյուջետային հիմնարկի անվանում	2010		2011		2012	
	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի
ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայություն	189,865,475.2	190,440,926.6	209,709,904.4	204,193,533.0	222,090,631.6	220,761,774.9
ՀՀ Պաշտպանության նախարարություն	132,486,721.7	146,689,688.8	142,962,557.1	143,055,017.9	150,982,211.5	151,576,511.0
ՀՀ Ֆինանսների նախարարություն	54,348,959.2	60,865,911.0	57,667,591.7	59,456,620.0	60,529,415.3	67,416,691.7
ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	53,155,579.0	54,227,092.0	59,581,015.6	51,231,896.1	59,981,858.2	54,565,445.2
ՀՀ Առողջապահության նախարարություն	52,301,209.2	51,911,479.1	60,935,920.1	60,188,672.4	61,279,671.7	60,250,546.3
ՀՀ Քաղաքաշինության նախարարություն	27,857,321.5	31,358,171.4	35,681,624.3	38,337,518.3	12,427,147.7	12,426,643.9
ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն	25,662,939.7	24,905,727.6	23,856,343.8	22,642,834.8	23,459,049.3	28,184,286.7
ՀՀ Կառավարության արդյունաբերության նախարարություն	23,565,981.9	23,582,493.5	24,666,118.6	24,679,210.2	25,666,004.2	25,511,206.1
ՀՀ Կրթության և գիտության նախարարություն	19,578,300.5	19,405,288.6	29,991,716.5	26,723,444.0	29,093,651.3	28,782,630.0
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	14,521,170.9	18,210,278.3	15,650,292.4	14,867,740.3	19,167,827.3	17,257,312.3
ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Պետական ցուցիչ կոմիտե	12,610,004.9	12,919,245.8	13,695,846.4	12,928,162.6	12,150,499.4	12,094,218.6
ՀՀ Կառավարության արդյունաբերության նախարարության ծառայություն	11,795,001.4	11,969,141.8	10,907,845.9	10,979,739.0	11,601,879.7	12,029,357.8



	2010		2011		2012	
	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի
<b>Բյուջետային հիմնարկի անվանում</b>						
ՀՀ Կառավարության առընթեր Պետական եկամուտների կոմիտե	11,746,075.6	13,749,918.8	12,748,491.2	12,839,400.6	12,943,864.6	14,368,922.9
ՀՀ Արտաքին գործերի նախարարություն	8,827,007.0	9,297,471.3	8,906,086.9	9,223,808.0	9,584,954.1	9,863,615.4
ՀՀ Արդարադատության նախարարություն	7,826,034.6	8,302,994.1	9,867,472.6	10,603,188.7	9,987,067.5	10,870,295.5
ՀՀ Սնակյոթի նախարարություն	7,661,825.1	7,893,125.4	9,005,672.4	9,008,800.2	10,349,960.0	11,107,062.2
Շիրակի մարզպետարան	7,599,968.3	7,579,241.5	7,397,590.4	10,033,006.6	6,718,677.5	9,634,710.3
ՀՀ Կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե	7,478,859.2	7,284,172.1	7,736,835.5	7,612,293.2	8,946,811.7	9,035,757.1
Գեղարքունիքի մարզպետարան	7,294,066.3	7,215,453.2	6,867,120.3	9,071,014.0	6,923,394.5	8,192,083.9
Լոռու մարզպետարան	7,015,806.4	6,985,640.4	6,652,638.3	9,275,585.9		
Արմավիրի մարզպետարան					6,363,408.8	8,267,324.5
Այլ մարմիններ	89,319,035.4	91,163,774.5	91,892,824.1	108,798,064.9	97,350,427.7	112,090,352.9
Բաշխված ծախսեր	772,517,343.0	805,957,235.8	846,381,508.5	855,749,550.7	857,598,413.6	884,286,749.0
Զբաղիված ծախսեր (չկանխատեսված իրավիճակներ)	22,348,748.7		26,251,967.9		42,399,624.4	0.0
<b>Ընդամենը ծախսեր</b>	<b>794,866,091.7</b>	<b>805,957,235.8</b>	<b>872,633,476.4</b>	<b>855,749,550.7</b>	<b>899,998,038.0</b>	<b>884,286,749.0</b>

## Հավելված Բ. Տվյալներ «D-1»-ի վերաբերյալ

2010թ., եռամսյակ	Համաձայնեցված կանխատեսում (գումար)	Փաստացի տեղաբաշխված (գումար)	Եռամսյակային փաստացի տեղաբաշխումների պլան (*)	Փաստացի հետաձգված տեղաբաշխումներ յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար	Ուշացումով իրականացված տեղաբաշխումների մասնաբաժին ընդհանուրում	Ուշացումով իրականացված կուտակային տեղաբաշխումների մասնաբաժին
Եռ.1	2,854	-	2,854	2,854	7.3%	7.3%
Եռ.2	14,455	15,161	14,455	(706)	-1.8%	5.5%
Եռ.3	14,455	13,588	14,455	867	2.2%	7.7%
Եռ.4	41,774	10,245	41,774	31,529	80.9%	
Ընդամենը	73,536	38,993	73,536	34,543	88.6%	20.6%
2011թ., եռամսյակ	Համաձայնեցված կանխատեսում (գումար)	Փաստացի տեղաբաշխված (գումար)	Եռամսյակային փաստացի տեղաբաշխումների պլան	Փաստացի հետաձգված տեղաբաշխումներ յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար	Ուշացումով իրականացված տեղաբաշխումների մասնաբաժին ընդհանուրում	Ուշացումով իրականացված կուտակային տեղաբաշխումների մասնաբաժին
Եռ.1	20,000	21,281	20,000	(1,281)	-1.8%	-1.8%
Եռ.2	10,023	20,005	10,023	(9,982)	-14.3%	-16.1%
Եռ.3	31,999	-	31,999	31,999	45.8%	29.7%
Եռ.4	20,103	28,577	20,103	(8,474)	-12.1%	
Ընդամենը	82,126	69,863	82,126	12,263	17.6%	11.7%
2012թ., եռամսյակ	Համաձայնեցված կանխատեսում (գումար)	Փաստացի տեղաբաշխված (գումար)	Եռամսյակային փաստացի տեղաբաշխումների պլան	Փաստացի հետաձգված տեղաբաշխումներ յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար	Ուշացումով իրականացված տեղաբաշխումների մասնաբաժինը ընդհանուրում	Ուշացումով իրականացված կուտակային տեղաբաշխումների մասնաբաժինը
Եռ.1	-	20,247	20,247	-	0.0%	0.0%
Եռ.2	-	37,166	37,166	-	0.0%	0.0%
Եռ.3	-	-	-	-	0.0%	0.0%
Եռ.4	41,557	17,540	17,540	-	0.0%	
Ընդամենը	41,557	74,953	74,953	-	0.0%	0.0%
<b>Արդյունքների մատրից</b>	տարի	D-1, չափում (i)		D-1, չափում (ii)		
		Փաստացի բյուջետային աջակցության շեղումը կանխատեսվածից		Տարվա ընթացքում բյուջետային աջակցության գումարների տեղաբաշխումների ուշացումներ		
		2010	-47.0%		20.6%	
		2011	-14.9%		11.7%	
		2012	80.4%		0.0%	

## Հավելված Գ. Փաստաթղթերի ցանկ

- Բյուջեի կատարման հաշվետվություններ, 2012թ. և 2013թ., ՖՆ
- Վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվություն, 2012թ.
- Բյուջեի կատարման աուդիտ անցած հաշվետվություն, 2012թ., Վերահսկիչ պալատ
- Վերահսկիչ պալատի տարեկան ծրագիր, 2011թ.
- Աուդիտորական գործունեության մասին օրենք, 2002թ. դեկտեմբեր
- Հաշվապահական հաշվառման մասին օրենք, 2003թ. հուլիս
- Բյուջետային համակարգի մասին օրենք, 1997թ.
- Ստուգումների անցկացման մասին օրենք, 2000թ. մայիս
- Ակցիզային հարկի, եկամտահարկի, շահութահարկի, ԱԱՀ-ի մասին օրենքներ, 2000թ. հուլիս, 2010թ. դեկտեմբեր, 1997թ. սեպտեմբեր, 1997թ. մայիս
- Գնումների մասին օրենք, 2013թ. հունվար
- Պետական բյուջեի մասին օրենք, 2013թ.
- Գանձապետական համակարգի մասին օրենք, 2001թ. հուլիս
- Ազգային ժողովի կանոնակարգ, 2002թ. փետրվար
- ՊՖԿ բարեփոխումների ռազմավարություն, ՊՆՖՀ ռազմավարություն, ՖՆ, 2010թ. նոյեմբեր, 2010թ. հոկտեմբեր
- Կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարություն, Իրականացման գործողությունների ծրագիր, 2009-2012թթ., 2009թ. հուլիս
- Միջնաժամկետ ծախսերի ծրագրեր, 2007-09թթ., 2011-13թթ., 2012-13թթ.
- Աղքատության կրճատման ռազմավարություն, Երևան, 20003թ.
- «Թրանսփարենսի Ինթերնեշնլ», Հայաստանի մասին կառավարման հաշվետվություն, 2011թ.
- Փաստեր Հայաստանի մասին, ԱԶԲ, 2012թ.
- ԱԶԲ-ի գործարար ծրագիր, 2012թ. նոյեմբեր
- ԱԶԲ, Հայաստանում էլ-գնումների գործնական ուսումնասիրություն, 2011թ. մայիս
- ԱԱՀ-ի ուսումնասիրումներ, Հայաստան, 2011թ. դեկտեմբեր, 2012թ. դեկտեմբեր, 2013թ. հունիս, Հոդված IV-ի վերաբերյալ հաշվետվություն, 2013թ. փետրվար
- ՄՖԿ, Գործարարության հաշվետվություն
- ՎԶԵԲ. երկրի հիմնական թիրախային հարցեր, 2012թ. և Անցումային հաշվետվություն, Հայաստան, 2012թ., ՎԶԵԲ-ի ռազմավարությունը Հայաստանում, 2013թ. նոյեմբերի 7

- ՎՋՄԲ-ի ռազմավարություն, Հայաստան
- Քաղաքականության ֆորում, Հայաստան, տարեկան հաշվետվություն, 2008-10թթ.
- Համաշխարհային բանկ, Երկրի ռազմավարության ուսումնասիրություն, 2012թ. հունիս և Երկրի ռազմավարության հաստատում, 2012թ. նոյեմբեր
- Համաշխարհային բանկ, Երկրի պատկերը, Հայաստան, 2013թ. հոկտեմբեր, և Երկրի գործընկերության ռազմավարության իրականացման ընթացք, 2011թ. հունիս
- Համաշխարհային բանկ, ԿՖԿՏՀ-ի հաշվետվություն, 2013թ. հուլիս
- Համաշխարհային բանկ, ՊՖԿ բարեփոխումների գերակայությունները, 2011թ. հոկտեմբեր
- Համաշխարհային բանկ, Հարկային ծախսերի մասին զեկույց, վերծնական նախնական տարբերակ, 2013թ. ապրիլ
- Թրանսփարենսի Ինթերնեշնլ, Կոռուպցիայի մասին զեկույց, 2013թ. հոկտեմբեր

## Փաստաթղթեր, որոնք առնչվում են ԿՑ 18-21, 26-28 ցուցանիշներին

ԿՑ-18	<p><i>Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Քաղծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Դատախազության մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենք</li> <li>• ՀՀ Նախագահի «ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» 18.07.2007թ. ՆՀ-174-Ն հրամանագիր</li> <li>• ՀՀ կառավարության 10.07.2003թ. «Հանրապետական գործադիր մարմիններում հայեցողական պաշտոններ զբաղեցնող, հանրապետական գործադիր մարմինների եվ մարզպետարանների աշխատակազմերում քաղաքացիական աշխատանք կատարող, հանրապետական գործադիր մարմինների, մարզպետարանների աշխատակազմերում, ՀՀ դատական ղեկավարամետնում, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում տեխնիկական սպասարկում իրականացնող, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում ոստիկանության (զինվորական) կոչում չունեցող աշխատողների նվազագույն պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N837-Ն որոշում</li> <li>• ՀՀ կառավարության «Ոստիկանության, զինված ուժերի, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, փրկարարական ծառայության, դատախազության պաշտոնների համապատասխանությունը սահմանելու մասին» 30.04.2009թ. N550-Ն որոշում</li> <li>• ՀՀ կառավարության «Պետական կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակ և ղեկավարների տեղակալների թվաքանակ սահմանելու մասին» 06.11.1998թ. N620-Ն որոշում</li> <li>• ՀՀ վարչապետի «Պետական կառավարման մարմիններում աշխատավարձի վճարման ժամկետների մասին» 31.01.2001թ. N72 որոշում</li> <li>• ՀՀ կառավարության «Դիվանագետին օտար լեզվի իմացության համար լրավճար սահմանելու մասին» 26.03.2009թ. N294-N որոշում</li> <li>• ՀՀ կառավարության «Դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար նվազագույն դիվանագիտական աստիճանները հաստատելու և ՀՀ կառավարության 2004թ նոյեմբերի 11-ի N 1639-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 08.09.2011թ. թիվ 1299 որոշում</li> </ul>
-------	---

- ՀՀ վարչապետի «Պետական կառավարման մարմիններում աշխատավարձի վճարման ժամկետների մասին» 31.01.2001թ. N72 որոշում
- ՀՀ կառավարության «Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետների պաշտոնային դրույքաչափերը, ինչպես նաև ծառայության հետ կապված ծախսերի ամսական փոխհատուցման առավելագույն չափը հաստատելու մասին» 13.02.2002թ. N120 որոշում
- «Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի վարման կարգը և ձևը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 25.08.2005թ. N 1471-Ն որոշում
- «ՀՀ 2014թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային ուղերձ
- ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 1-ի «Քաղաքացիական ծառայողների անձնական գործերը և գրանցամատյանը վարելու կարգը հաստատելու մասին» N 14-Ն որոշում
- ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 18-ի «Քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» N 20-Ն որոշում

*Վարձատրության համակարգի աշխատանքի վերաբերյալ աստիճանային և տեղեկանքներ*

- Առանձին պետական մարմինների ներքին աուդիտի 2010-2012թթ հաշվետվություններ
- Պետական մարմինների անձնակազմի գրանցումներ, և դրա վերաբերյալ հաշվետվություններ ներկայացված ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհուրդ և ՀՀ կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտե
- Քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի մեծության և վարձատրության համակարգի վերաբերյալ 2013թ զեկույցը
- Պետական մարմիններում աշխատանքի նշանակման, ազատման և այլ համապատասխան դիմումներ, հրամաններ, անձնական թերթիկներ
- Պետական մարմինների աշխատավարձի հաշվարկման և վճարացուցակների կազմման նպատակով կիրառվող «Հայկական ծրագրեր» համակարգի՝ դրա ընթացակարգերի և տվյալների շտեմարանի ուսումնասիրություն և քաղվածքներ
- 2011 և 2012թթ աշխատաժամանակի հաշվարկման տեղեկագրեր, ընդլայնված շախմատաձև հաշվետվություններ, հաշվարկային թերթիկներ, աշխատավարձի վճարացուցակներ, եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկներ, վարձու աշխատողի և քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություններ մատուցողի գրանցման հայտ և այլ փաստաթղթեր

	<ul style="list-style-type: none"> <li>• 2011 և 2012թթ աշխատավարձի գծով վճարման հանձնարարագրեր և LSFinance համակարգից քաղվածքներ աշխատավարձի գծով կատարված վճարումների վերաբերյալ</li> <li>• Անձնակազմի կառավարման վարչության և ֆինանսական վարչության աշխատակիցների պաշտոնների անձնագրեր</li> <li>• Անձնակազմի կառավարման բաժնի կանոնադրություն և ֆինանսական վարչության կանոնադրություն</li> </ul> <p><i>Հարցազրույցների արձանագրություններ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ ՖՆ և այլ պետական մարմինների ֆինանսական և անձնակազմի կառավարման վարչության աշխատակիցների հետ կատարված հարցազրույցներ</li> </ul> <p><i>Հղումներ ինտերնետային կայքերին</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• <a href="http://www.minfin.am">www.minfin.am</a>,</li> <li>• <a href="http://www.csc.am">www.csc.am</a></li> </ul>
<p>ԿՑ-19</p>	<p><i>Օրենսդրական և կանոնակարգային փաստաթղթեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• «Գնումների մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշում</li> <li>• Գնումների գործընթացը կանոնակարգող ՀՀ ՖՆ հրամաններ</li> </ul> <p><i>Գնումների վերաբերյալ փաստաթղթեր և տեղեկանքներ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ պետական մարմինների գնումների 2012 և 2013թթ պլաններ</li> <li>• Տեղեկանքներ պետական մարմինների 2011 և 2012թթ գնումների ծավալների վերաբերյալ տրամադրված ՀՀ ՖՆ կողմից</li> <li>• 2012թ. պետության կարիքների համար իրականացված առանձին գնումների գծով հայտարարություններ, ընթացակարգերի արձագրություններ և այլ փաստաթղթեր</li> <li>• Գնումների աջակցման կենտրոնի հաշվետվությունը 2012 թվականի ընթացքում պետական կառավարման մարմինների և պետական հիմնարկների կատարած գնումների վերաբերյալ</li> <li>• ՀՀ Վերահսկիչ պալատի 2012թ վերահսկողության արդյունքների տարեկան հաշվետվություն</li> <li>• ՀՀ ՖՆ ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից 2012թ ընթացքում իրականացված ստուգումների վերաբերյալ հաշվետվություն</li> <li>• Պետական մարմինների ներքին աուդիտների հաշվետվություններ (գնումների ոլորտում իրականացված աուդիտների մասով)</li> </ul> <p><i>Բողոքներին առնչվող փաստաթղթեր և տեղեկանքներ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Գնումների բողոքարկման խորհրդի անդամների ցուցակ (<a href="http://www.gnumner.am">www.gnumner.am</a>),</li> <li>• Պետության կարիքների համար իրականացված գնումների գծով 2012թ, ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ բողոքարկման հանձնաժողովի որոշումների արձանագրություններ (<a href="http://www.gnumner.am">www.gnumner.am</a>),</li> <li>• Տեղեկանք ԳԱԿ-ից 2011-2013թթ ընթացքում գնումների բողոքարկման խորհրդի կողմից ստացված բողոքների վերաբերյալ</li> </ul>

	<p><i>Հարցազրույցների արձանագրություններ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Գնումների աջակցման կենտրոնի, ՀՀ ՖՆ և առանձին պետական մարմինների գնումների գծով պատասխանատու պաշտոնյաների հետ հարցազրույցներ</li> <li>• Հարցազրույցներ ՀՀ ԿԳՆ, ՀՀ ՖՆ և այլ պետական մարմինների ներքին աուդիտորների հետ</li> <li>• Հարցազրույցներ ՀՀ ՖՆ ֆինանսական վերահսկողության տեսչության և ՀՀ Վերահսկիչ պալատի պաշտոնատար անձանց հետ</li> </ul> <p><i>Հղումներ ինտերնետային կայքերին</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Գնումների էլեկտրոնային տեղեկատու (<a href="http://www.gnumner.am">www.gnumner.am</a> կամ <a href="http://www.procurement.am">www.procurement.am</a>):</li> <li>• <a href="http://www.azdarar.am">www.azdarar.am</a></li> <li>• <a href="http://www.armeps.am">www.armeps.am</a></li> <li>• <a href="http://www.minfin.am">www.minfin.am</a></li> </ul>
<p>ԿՑ-20</p>	<p><i>Օրենսդրական և կանոնակարգային փաստաթղթեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Գնումների մասին» ՀՀ օրենք</li> <li>• «ՀՀ պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 12.01.2002թ. թիվ 48 որոշմամբ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշում</li> <li>• ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշում</li> <li>• ՀՀ ՖՆ 18.09.2008թ. N 730-Ն հրաման</li> <li>• ՀՀ ՖԷՆ 23.07.2007թ. N 597-Ն հրաման</li> <li>• ՀՀ ՖԷՆ 24.12.2007թ. թիվ 898-Ն հրաման</li> <li>• ՀՀ ՖՆ 24.12.2007թ. N 899-Ն հրաման</li> </ul> <p><i>Ներքին հսկողությունների վերաբերյալ փաստաթղթեր և տեղեկանքներ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• ԳԳՐ և Client Treasury համակարգերում գանձապետական ներքին հսկողության գործառույթների ուսումնասիրություն, քաղաձքներ և տեղեկանքներ տրամադրված համակարգերի, հարցազրույցներ այդ գործընթացներում ներգրավված պաշտոնատար անձանց հետ</li> <li>• ՀՀ ՖՆ, ԿԳՆ և այլ պետական մարմինների ֆինանսական և գնումների ստորաբաժանումների կողմից իրականացվող ֆինանսական և այլ ներքին հսկողության համակարգերի, կանոնակարգերի և գործառույթների ուսումնասիրություն, հարցազրույցներ այդ գործընթացներում ներգրավված պաշտոնատար անձանց հետ</li> </ul> <p><i>Հաշվետվություններ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Պետական մարմինների ներքին աուդիտի հաշվետվություններ և հարցազրույցներ ներքին աուդիտի բաժնի աշխատակիցների հետ</li> <li>• ՀՀ Վերահսկիչ պալատի 2010-2012թթ տարեկան և ընթացիկ հաշվետվություններ (<a href="http://www.coc.am">www.coc.am</a>) և հարցազրույց վերահսկիչ պալատի պաշտոնյաների հետ</li> </ul> <p><i>Հարցազրույցներ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Հարցազրույց ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարանի և գնումների գործընթացի կարգավորման համար պատասխանատու ստորաբաժանումների պաշտոնատար անձանց հետ</li> </ul>



<p>ԿՑ-21</p>	<p><i>Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Ներքին աուդիտի գործընթացի կազմակերպման, «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազոր մարմնի սահմանման և ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 15-ի N503 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 11.08.2011թ. N1233-Ն որոշում</li> <li>• «50 տոկոս եվ ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) լիազորությունները բաժնետոմսերի կառավարման լիազորություն ունեցող պետական կառավարման մարմինների ներքին աուդիտի ստորաբաժանումներին վերապահելու կամ այդ մարմինների որոշմամբ մասնավոր ընկերություններին պատվիրելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 21-ի N1923-Ն ու 2005 թվականի մայիսի 19-ի N1187-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 31.05.2012թ. թիվ 732-Ն որոշում</li> <li>• «ՀՀ ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 08.12.2011թ. N974-Ն հրաման</li> <li>• «Կազմակերպությունների ներքին աուդիտի որակի երաշխավորման նպատակով կազմակերպության գործունեության հետ չառնչվող անձանց կողմից կազմակերպության ներքին աուդիտի համակարգի գնահատումների իրականացման, ինչպես նաև ստուգում իրականացնող մարմինների և արտաքին աուդիտի մարմնի հետ ներքին աուդիտի համագործակցության կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշում</li> </ul> <p><i>Հաշվետվություններ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• «ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2012թ. տարեկան ամփոփ հաշվետվության» ՀՀ ՖՆ (<a href="http://www.minfin.am">www.minfin.am</a>)</li> </ul> <p><i>Այլ փաստաթղթեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Իրականացված աուդիտների արդյունքներով ներքին աուդիտի կողմից ներկայացված բացահայտումների, առաջարկությունների և դրանց ուղղությամբ ղեկավարության կողմից ձեռնարկված միջոցառումներին վերաբերվող նամակագրություն</li> <li>• Աուդիտի էլեկտրոնային համակարգի և առանձին փաստաթղթերի ուսումնասիրություն (քաղվածքներ ռսկերի հավանականության գնահատումների և ռիսկերի խմբերի սահմանումների վերաբերյալ և այլն)</li> <li>• Դետական մարմինների աուդիտի հաշվետվությունների և աուդիտի կոմիտեների արձանագրությունների ուսումնասիրություն</li> </ul> <p><i>Հարցազրույցներ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Հարցազրույց ՀՀ ՖՆ աշխատակազմի պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության աշխատակիցների հետ</li> <li>• Հարցազրույց ՀՀ ՖՆ, ՀՀ ԿԳՆ և այլ պետական մարմինների աուդիտի ստորաբաժանումների ղեկավարների հետ</li> </ul> <p><i>Ինտերնետային կայքեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• <a href="http://www.minfin.am">www.minfin.am</a></li> <li>• <a href="http://www.laws.am">www.laws.am</a></li> </ul>
--------------	--

<p>4Ց-26</p>	<p><i>Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• «ՀՀ Սահմանադրություն»</li> <li>• «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենք</li> <li>• «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենք</li> <li>• Վերահսկիչ պալատի կանոնակարգ</li> </ul> <p><i>Հաշվետվություններ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• «ՀՀ 2012թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ կառավարության տարեկան հաշվետվություն</li> <li>• «ՀՀ կառավարության «ՀՀ 2012թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվության մասին» ՎՊ եզրակացություն (հաստատվել է ՎՊ խորհրդի 2013թ. մայիսի 24-ի թիվ 10/1 որոշմամբ)</li> <li>• ՎՊ 2010, 2011 և 2012թթ տարեկան ծրագրերը և դրանց կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունները (<a href="http://www.coc.am">www.coc.am</a>)</li> </ul> <p><i>Այլ փաստաթղթեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• ՎՊ 2012թի տարեկան հաշվետվության վերաբերյալ ՀՀ պետական մարմինների պաշտոնական արձագանքներ հրապարակված ՀՀ կառավարության պաշտոնական կայքում (<a href="http://www.e-gov.am">www.e-gov.am</a>)</li> <li>• ՎՊ կողմից պատրաստված տեղեկանք ՎՊ 2012թ տարեկան հաշվետվումբ հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ ՀՀ պետական մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ</li> </ul> <p><i>Հարցազրույցներ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Հարցազրույց ՎՊ պալատի ներկայացուցիչների հետ</li> </ul> <p><i>Ինֆերենետային կայքեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• <a href="http://www.parliament.am">www.parliament.am</a></li> <li>• <a href="http://www.e-gov.am">www.e-gov.am</a></li> <li>• <a href="http://www.laws.am">www.laws.am</a></li> <li>• <a href="http://www.coc.am">www.coc.am</a></li> </ul>
<p>4Ց-27</p>	<p><i>Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• «ՀՀ Սահմանադրություն»</li> <li>• «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենք</li> <li>• Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կանոնակարգեր</li> <li>• ՀՀ 2002-2013թթ.պետական բյուջեների մասին ՀՀ օրենքներ</li> <li>• ՀՀ 2010-2012թթ.պետական բյուջեների կատարման եռամսյակային համամասնությունների մասին ՀՀ կառավարության որոշումներ</li> <li>• ՀՀ 2012թ. պետական բյուջեում փոփոխությունների վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներ</li> </ul> <p><i>Հաշվետվություններ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• «ՀՀ 2012թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ կառավարության տարեկան հաշվետվություն</li> <li>• «ՀՀ կառավարության «ՀՀ 2012թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվության մասին» ՀՀ Վերահսկիչ պալատի եզրակացություն (հաստատվել է ՀՀ ՎՊ խորհրդի 2013թ. մայիսի 24-ի թիվ 10/1 որոշմամբ)</li> </ul> <p><i>Այլ փաստաթղթեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• «ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկման հետ կապված փաստաթղթերի ուսումնասիրություն (ԱԺ ներկայացված փաստաթղթերի փաթեթներ, ֆինանսավարկային և բյուջետային հարցերով հանձնաժողովի նիստերի արձանագրություններ, Ազգային ժողովի նիստերի արձանագրություններ, տեղական-ամփոփաթերթեր և այլ ներքին գրագրություններ և այլն)</li> </ul>

	<p><i>Հարցազրույցներ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Հարցազրույց ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերով մշտական հանձնաժողովի նախագահի հետ</li> <li>• Հարցազրույց ՀՀ վերահսկիչ պալատի ներկայացուցիչների հետ</li> </ul> <p><i>Ինտերնետային կայքեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• <a href="http://www.parliament.am">www.parliament.am</a></li> <li>• <a href="http://www.minfin.am">www.minfin.am</a></li> <li>• <a href="http://www.laws.am">www.laws.am</a></li> <li>• <a href="http://www.coc.am">www.coc.am</a></li> </ul>
<p>ԿՑ-28</p>	<p><i>Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• «ՀՀ Սահմանադրություն»</li> <li>• «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք</li> <li>• «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենք</li> <li>• «ՀՀ Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենք</li> <li>• Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կանոնակարգեր</li> </ul> <p><i>Հաշվետվություններ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• «ՀՀ 2012թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» ՀՀ կառավարության տարեկան հաշվետվություն</li> <li>• «ՀՀ կառավարության «ՀՀ 2012թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ» տարեկան հաշվետվության մասին» ՀՀ Վերահսկիչ պալատի եզրակացություն (հաստատվել է ՀՀ ՎՊ խորհրդի 2013թ. մայիսի 24-ի թիվ 10/1 որոշմամբ)</li> <li>• «ՀՀ վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան հաշվետվություն» (հաստատվել է ՀՀ ՎՊ խորհրդի 2013թ. մարտի 29-ի թիվ 7/1 որոշմամբ)</li> <li>• ՀՀ 2010-2012թթ. պետական բյուջեների կատարման հաշվետվություններ</li> </ul> <p><i>Այլ փաստաթղթեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ 2010, 2011 և 2012թթ պետական բյուջեների կատարման հաշվետվությունների հաստատման վերաբերյալ ՀՀ ԱԺ նիստերի արձանագրություններ,</li> <li>• ՀՀ 2010-2012թթ պետական բյուջեների կատարման հաշվետվությունների վերաբերյալ ՀՀ վերահսկիչ պալատի եզրակացությունների և ՀՀ վերահսկիչ պալատի 2010-2012թթ տարեկան հաշվետվությունների ՀՀ ԱԺ տրամադրման ժամկետների վերաբերյալ քաղվածքներ գնարցամատյաններից</li> <li>• ՀՀ 2010-2012թթ պետական բյուջեների կատարման հաշվետվությունների վերաբերյալ ՀՀ վերահսկիչ պալատի եզրակացությունների և ՀՀ վերահսկիչ պալատի 2010-2012թթ տարեկան հաշվետվությունների վերաբերյալ ՀՀ ԱԺ հանձնաժողովների նիստերի արձանագրություններ</li> </ul> <p><i>Հարցազրույցներ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Հարցազրույց ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերով մշտական հանձնաժողովի նախագահի հետ</li> <li>• Հարցազրույց ՀՀ Վերահսկիչ պալատի ներկայացուցիչների հետ</li> </ul> <p><i>Ինտերնետային կայքեր</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• <a href="http://www.parliament.am">www.parliament.am</a></li> <li>• <a href="http://www.minfin.am">www.minfin.am</a></li> <li>• <a href="http://www.laws.am">www.laws.am</a></li> <li>• <a href="http://www.coc.am">www.coc.am</a></li> </ul>

## Հավելված Դ. ՖՆ-ի կազմակերպչական կառուցվածքը<sup>30</sup>



<sup>30</sup> Ի հինքնագնահատման աշխատանքների իրականացման ժամանակահատվածում  
252

## **Հավելված Ե. Որակի երաշխավորման մեխանիզմը (ՊԾՖՀ-ի ստուգում)**

### **ՊԾՖՀ-ի գնահատման կառավարման կազմակերպումը**

Հայաստանի Հանրապետության (կենտրոնական կառավարության) ՊԾՖՀ-ի գնահատման 2014թ. մայիսի վերջնական հաշվետվության պլանավորման և պատրաստման համար սահմանվել են որակի երաշխավորման հետևյալ մեխանիզմները:

#### **1. Հայեցակարգային փաստաթղթի և /կամ տեխնիկական առաջադրանքի ուսումնասիրություն**

Հայեցակարգային փաստաթղթի նախնական տարբերակը մշակվել է ՖՆ-ի կողմից և քննության առնվել 2013թ. ապրիլին և մայիսին հետևյալ ուսումնասիրողների կողմից.

1. Արման Վաթյան, Համաշխարհային բանկ
2. Դավիդ Ֆրանցրեթ, ԳՄՀԸ
3. Վարսենիկ Մնացականյան, ԳՄՀԸ
4. Ալեքսանդր Զանոտա, Հայաստանում ԵՄ-ի պատվիրակություն
5. ՖՆ

2013թ. մայիսի 30-ին այն ներկայացվել է ՊԾՖՀ-ի քարտուղարության (տկն. Հելենա Ռամոսին) ուսումնասիրմանը և մեկնաբանությունները ստացվել են 2013թ. հունիսին:

Հայեցակարգային փաստաթուղթը վերջնական տեսքի է բերվել 2013թ. հունիսի 25-ին:

#### **2. Հաշվետվության նախնական տարբերակ (ներ)ի ուսումնասիրությունը**

2014թ. հունվարի 9-ի առաջին նախնական տարբերակը նույն ամսաթվին ներկայացվել է հետևյալ անձանց ուսումնասիրմանը.

1. Արման Վաթյան, Համաշխարհային բանկ
2. Գարեգին Սերգեյան, Համաշխարհային բանկ
3. Դավիդ Ֆրանցրեթ, ԳՄՀԸ
4. Վարսենիկ Մնացականյան, ԳՄՀԸ
5. Ալեքսանդր Զանոտա, Հայաստանում ԵՄ-ի պատվիրակություն
6. DEVCO-ի 3-րդ ստորաբաժանում (բյուջետային աջակցություն և պետական ֆինանսական կառավարում)
7. Տերեսա Դաբան Սանչես, ԱՄՀ
8. Մարկ Դեյվիս, ՎՋԵԲ
9. Դեյվիդ Դոուլ, ԱՋԲ
10. Զուլա Կրոյիկ, ՍԻԳՄԱ

- 11. Վերահսկող թիմ
- 12. Գնահատող թիմեր

2014թ. մարտի 24-ի հաշվետվության երկրորդ նախնական տարբերակը ներկայացվել է ՊԾՖՀ-ի քարտուղարություն (պրն. Ֆիլ Սինեթին) 2014թ. մարտի 25-ին, իսկ մեկնաբանությունները ստացվել են 2014թ. ապրիլի 4-ին:

### 3. Հաշվետվության վերջնական տարբերակի ուսումնասիրությունը

Հաշվետվության վերանայված տարբերակը և բոլոր (այդ թվում ՊԾՖՀ-ի քարտուղարության) մեկնաբանություններին արձագանքն արտացոլող աղյուսակը ներկայացվել և քննարկվել են 29-ների, գնահատող թիմերի և վերահսկող թիմի մասնակցությամբ 2014թ. ապրիլի 9-ին տեղի ունեցած աշխատաժողովում:

Հաշվետվության 2014թ. ապրիլի 23-ի վերջնական նախնական տարբերակը ուղարկվել է ՊԾՖՀ-ի քարտուղարություն 2014թ. ապրիլի 25-ին: Այն ներառել է փորձագիտական ուսումնասիրման բոլոր խմբերի մեկնաբանություններին արձագանքն արտացոլող աղյուսակը: ՊԾՖՀ-ի քարտուղարությունը տվել է նշված արձագանքին իր մեկնաբանությունները մայիսի 1-ին՝ խնդրելով ներկայացնել որոշ լրացուցիչ պարզաբանումներ: Գնահատող թիմը ներկայացրել է դրանք մայիսի 11-ին:

### 4. Լրացուցիչ տեղեկատվություն

<p>Գնահատման վերահսկող թիմի (ՊԾՖՀ-ի առաջատրանքային խմբի) ստեղծման ամսաթիվ</p>	<p><b>2013թ. հունիսի 25-ը</b></p>
<p>Վերահսկող թիմի ղեկավար և անդամներ</p>	<p><b>Ղեկավար՝</b>  <b>Պրն. Պավել Սաֆարյան</b>          ՀՀ Ֆինանսների նախարարի առաջին տեղակալ</p> <p><b>Անդամներ՝</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1) ՀՀ Ֆինանսների նախարարություն,</li> <li>2) Հայաստանում ԵՄ-ի պատվիրակություն,</li> <li>3) ԳՄՀԸ,</li> <li>4) ՀԲ:</li> </ol>
<p>Գնահատման աշխատանքների ղեկավար</p>	<p><b>Մակար Ղամբարյան</b>          ՀՀ Ֆինանսների նախարարության Պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության պետ</p>

<p>Գնահատող թիմերի ղեկավարներ</p>	<p><b>Գայանե Զարգարյան, ՖՆ</b> Գնահատող թիմ 1-ին (պեյրական բյուջեի կատարում, գրանցումների վարում և հաշվետվություններ)</p> <p><b>Դավիթ Համբարձումյան, ՖՆ</b> Գնահատող թիմ 2-րդ (բյուջեի կառուցվածքի ամբողջականություն և թափանցիկություն, համագործակցություն դոնորների հետ)</p> <p><b>Մակար Ղամբարյան, ՖՆ</b> Գնահատող թիմ 3-րդ (պեյրական գնումներ, ներքին հսկողություն և աուդիտ)</p> <p><b>Արման Պողոսյան, ՖՆ</b> Գնահատող թիմ 4-րդ (հարկային վարչարարություն)</p> <p><b>Գագիկ Բարսեղյան, ԱԺ</b> Գնահատող թիմ 5-րդ (ԱԺ Ֆինանսավարկային և բյուջեային հարցերի մշտական հանձնաժողովի իրավասություններ)</p> <p><b>Կարեն Առուստամյան, ՎՊ</b> Գնահատող թիմ 6-րդ (Վերահսկիչ պալատի իրավասություններ)</p>
---------------------------------------	---



Հայաստանի Հանրապետության (կենտրոնական կառավարության) Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության (ՊԾՖՀ) գնահատման հաշվետվություն, Մայիս 11, 2014 թվական

Սույն հաշվետվության պատրաստման ընթացքում որակի ապահովման գործընթացը լիովին բավարարում է ՊԾՖՀ քարտուղարության բոլոր պահանջներին, ուստի արժանանում է ‘PEFA CHECK’-ի:

ՊԾՖՀ քարտուղարություն, Մայիսի 28, 2014 թվական

